Թ.Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԸ

9(47.925)
Հ-17

Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԸ

27227

Երկրորդ, լրացված հրատարակություն

ԵՐԵՎԱՆ «ԼՈՒՅՍ» 1990

ԳՄԴ 63.3 (2 Հ)
Հ 177

Հակոբյան Թ. Խ.
Հ 177 Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրերը.— 2-րդ լրաց. հրատ.— Եր.։ «Լույս», 1990.— 232 էջ։

Գիրքն ունի պատմաաշխարհագրական-հայրենագիտական բովանդակություն։ Փաստական նյութերի հիման վրա բնութագրված են Հայկական լեռնաշխարհի բնական պայմանները, վարչատարածքային ու քաղաքական բաժանումները և մեր ժողովրդի պատմության մեջ հայտնի դարձած նշանավոր վայրերը (գավառներ, քաղաքներ, ավաններ, մշակույթի կենտրոններ, հակատամարտի վայրեր, հարտաբապետական հուշարձաններ, նշանավոր մարդկանց ծննդավայրեր և այլն)։

Հատուկ բաժին է նվիրված նորհրդային Հայաստանին՝ նրա տնտեսական ու մշակութային բուռն վերելքին, վարչատարածքային բաժանումներին, բնակչությանը, քաղաքներին ու մյուս հիշարժան վայրերին։

Գիրքը նախատեսվում է ուսուցիչների, բարձր դասարանների աշակերտների և ընթերցող լայն հասարակայնության համար։

4306010100 (47)
Հ 172. 1990 ԳՄԴ 63.3 (2 Հ)
702 (01) 1990

Тадевос Хачатурович Акопян

ПАМЯТНЫЕ МЕСТА ИСТОРИИ АРМЯНСКОГО НАРОДА

(на армянском языке)
Издательство «Луйс»
Ереван—1990

ISBN 5-545-00518-8

© «Լույս» հրատարակչություն, 1978
© Հակոբյան Թ. Խ., լրացումներով, 1990

ԱՌԱՋԱԲԱՆ[1]

Մեր ժողովրդի պատմության հիշարժան վայրերը հնարավորին չափ ամբողջական ներկայացնելու համար գրքում նախ համառոտակի բնութագրված են նրա բնօրրանի՝ Հայկական լեռնաշխարհի (որ հիմնականում համընկնում է Պատմական Հայաստանի հետ) բնական պայմանները՝ մակերևույթի կառուցվածքը, կլիմայի առանձնահատկությունները, գրերը, բույսերն ու կենդանիները, բնական հումքերը։ Իսկ դրանք, ինչպես հայտնի է, բազմազան են և որոշակի ազդեցություն են ունեցել հայ ժողովրդի տնտեսական զարգացման, երկրի տարբեր վայրերում տարբեր զբաղմունքների գոյության ու առաջադիմության վրա։ Միաժամանակ բնութագրված են պատմության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող ֆիզիկաաշխարհագրական բազմաթիվ շրջաններ, լճեր, գետեր, գաշտեր, լեռնահամակարգեր ու լեռնագագաթներ, հանգավայրեր և այլն, որոնք սերտորեն առնչվել են մեր ժողովրդի անցած ուղու հետ։

Հիշարժան վայրերի մի մեծ խումբ են կազմում վարչատարածքային և քաղաքական միավորումները՝ «աշխարհ»-ներ, նահանգներ, գավառներ, մելիքություններ, թագավորություններ և այլն։ Իրար հաջորդած արտաքին նվաճողները ոչ միայն բազում անգամ աղավաղել ու իրենց ընկվին են հարմարեցրել կամ խաչաձև գործածությունից հանել են մեր երկրի աշխարհագրական անունները, այլև արմատական փոփոխություններ են ենթարկել նրա վարչատարածքային բաժանման համակարգը։ Հիշատակվում են տասնյակների հասնող տարբեր անուններով վարչատարածքային և քաղաքական միավորումների անուններ, որոնց որպիսությունը, որ այնքան անհրաժեշտ է հայ ժողովրդի պատմությունն

---

1 Սույն գրքի մամուլները տպագրված էին, երբ հրապարակվեց Հայաստանի հանրապետության անկախության մասին Հանրապետության Գերագույն խորհրդի հռչակագիրը։ Ուստի գրքի շարադրանքում Հայկական ՍՍՀ-ն կարդալ Հայաստանի Հանրապետություն։

ուսումնասիրողների համար, տրվում է երկրի վարչական վիճակին նվիրված բաժնում։

Աշխատության մեջ բնութագրված են քաղաքները, ավանները, ճակատամարտերի ու քաղաքական այլ դեպքերի վայրերը, դպրոցները, տաճարներն ու վանքերը, կամուրջներն ու քարավանատները, բերդերն ու ամրոցները, ականավոր մարդկանց ծննդավայրերը, գրչության կենտրոնները և այլն։ Հին, միջին և նոր ժամանակների այդ պատմական վայրերը նկարագրված են ըստ VII դարի «Աշխարհացույց»-ի վարչատարածքային բաժանման, նկատի ունենալով, որ դրա «աշխարհ»-ների ու գավառների ցանցը հայ հեղինակների մոտ, ավանդույթի ուժով, գործածության մեջ է եղել ընդհուպ մինչև XIX դարը։ Հուշարձանների պահպանության գործին, դպրոցներում կատարվող հայրենագիտական աշխատանքներին, ինչպես և շրջագայողներին ու տուրիստներին օգնելու նպատակով ավելի ամբողջական և համեմատաբար ավելի մանրամասն են ներկայացված Խորհրդային Հայաստանի հնությունները, պատմական ու ճարտարապետական հուշարձանները և ֆիզիկաաշխարհագրական հիշարժան վայրերը։

Խորհրդային տարիներին Հայաստանում առաջացել են տասնյակ քաղաքներ, քաղաքատիպ ավաններ, հիմնովին վերափոխվել են մյուս բոլոր բնակավայրերը, կերտվել են հիշատակության արժանի հարյուրավոր հուշարձաններ, հուշասյուներ, աղբյուր-հուշարձաններ, մոնումենտալ կառույցներ։ Դպրոցում կատարվող հայրենագիտական աշխատանքներին օգնելու նպատակով Խորհրդային Հայաստանի հիշարժան վայրերին նվիրված բաժնում ըստ բնապատմական շրջանների նշվում են նաև կարևորագույն հնությունները, որոնց մասին խոսք է եղել աշխատության նախորդ բաժիններում։ Հանրապետության վարչական բաժանման մասին խոսելիս ընդգծվում է տուրիզմի մասին, թվարկվում է տուրիստական հանգրվանները, հյուրանոցները, նոր կառուցվելիք քեմպինգները, տուրիզմի հետագա զարգացման հեռանկարները։

Աշխատությունը տարածքային առումով ընդգրկում է Պատմական Հայաստանն ու հարևան մի շարք շրջաններ, իսկ ժամանակագրական առումով՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը։ I—III գլուխների համար հիմնականում առաջնային են ծառայել տարիներ առաջ մեր հրատարակած «Հայաստանի պատմական աշխարհագրություն» աշխատության, իսկ խորհրդային ժամանակաշրջանը շարադրվել է նոր նյութերի հիման վրա։

I ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ԴԻՐՔԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՌԵԼԻԵՖԸ

Հայկական լեռնաշխարհը սահմանակից է Անատոլական սարահարթին (արևմուտքում), Միջագետքին (հարավում), Իրանական սարահարթին (արևելքում) և Կուր ու Արաքս գետերի հովիտներում տարածվող դաշտավայրերին (հյուսիսում և հյուսիս-արևելքում)։ Հայկական լեռնաշխարհի տարածքը հասնում է մոտավորապես 300 հազար քառ. կմ-ի և հիմնականում համընկնում է Պատմական Հայաստանի հետ, մի երկիր, որտեղ կազմավորվել, ապրել ու իր բազմադարյան պատմությունն է կերտել հայ ժողովուրդը։ Բնական պայմաններով՝ ռելիեֆով, կլիմայով, բուսական ու կենդանական աշխարհով, երկրաբանական պատմությամբ Հայկական լեռնաշխարհը ֆիզիկաաշխարհագրական մի առանձին շրջան է։

Հայկական լեռնաշխարհի ժամանակակից ռելիեֆը հիմնականում ձևավորվել է երկրաբանական նոր և նորագույն շրջանում՝ երրորդական ու չորրորդական ժամանակաշրջանում։ Մարդն արդեն գոյություն ուներ, երբ այնտեղ գործել են հզոր հրաբուխներ, որոնց լավաները առաջացրել են հարյուրավոր կիլոմետրեր ձգվող լեռներ, առանձին հրաբխային խոշոր զանգվածներ, լավային լճեր։ Այժմ էլ Մերձավոր Արևելքի միակ գործող հրաբուխը՝ Թոնգրակ (կամ Թոնդրակ), գտնվում է Հայկական լեռնաշխարհում։ Հայկական լեռնաշխարհում պատմության ընթացքում տեղի են ունեցել և այժմ էլ տեղի են ունենում բազմաթիվ երկրաշարժեր, որոնցից շատերը կործանիչ բնույթի են եղել և մեծ վնասներ են հասցրել երկրի բնակչությանն ու բնակավայրերին՝ պատճառ դառնալով հազարավոր մարդկային զոհերի ու ավերելով տասնյակ քաղաքներ ու հարյուրավոր այլ կարգի բնակավայրեր։

Երկրաբանական կառուցվածքի առումով Հայկական լեռնաշխարհը

բաժանվում է երկու մասի՝ ծայրաշրջանների և կենտրոնական մասի։ Ծայրաշրջանները ծալքավոր լեռների տարածման գոտիներն են, իսկ կենտրոնական շրջանը, որ գրավում է երկրի տարածքի մեծագույն մասը, հրաբխային բարձրավանդակ է, որտեղ գոյություն ունեն հրաբխային լեռնաշղթաներ ու առանձին լեռնաղանգվածներ, հրաբխային սարահարթեր, իջվածքներ և այլն։

Հայկական լեռնաշխարհի ռելիեֆը բազմազան է։ Այնտեղ մենք հանդիպում ենք տարբեր ժամանակներում առաջացած ծալքավոր լեռնաշղթաների, հրաբխային լեռնախմբերի ու առանձին գագաթների, գետերի գործունեությամբ առաջացած ձորերի ու հովիտների, սարահարթերի և ռելիեֆի այլ ձևերի։

Լեռնաշխարհի հյուսիս-արևելյան կողմում, հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ, ձգվում է Փոքր Կովկաս լեռնային համակարգը, որ սկսվում է Սև ծովի հարավ-արևելյան առափնյա շրջանից և տարածվում մինչև Արաքս։ Երրորդական ժամանակաշրջանում ձևավորված այս լեռնային համակարգը մի ամբողջ շարք լեռնաշղթաների հյուսվածք է, լեռնաշղթաներ, որոնք իրենց մեջ ամփոփում են բնական մի քանի փոքր շրջաններ։ Փոքր Կովկասի մասերն են կազմում Աճարայի (հնում Ղազդ), Սուրամի (հնում՝ Լիխի), Թրիալեթի (Թռեղքի), Վիրահայոց, Մրղուլի, Արեգունու, Սևանի, Մռավի, Ղարաբաղի (Արցախի), Խոնավ, Բազումի, Փամբակի, Վարդենիսի, Զանգեզուրի (Սյունյաց) լեռնաշղթաները՝ իրենց ենթաճյուղերով հանդերձ։ Նշված լեռնաշղթաների և դրանց ենթաճյուղերի մեջ են ամփոփված Մեղրու եռանկյունաձև գավառը, Ղափանի ձորահովիտը, Տեղի և Նուակատար սարահարթերը, Վայոց-ձորի (այժմ՝ Վայք) գեղաձորությունը, Ղարաբաղի բարձրավանդակը, Սևանա լճի ավազանը, Փամբակի ձորը, Լոռու սարահարթը (հնում՝ Տաշրատափ) և այլն։

Փոքր Կովկասի հարավ-արևմտյան կողմում գտնվում է Գեղամա հրաբխային լեռնաղանգվածը, որը բաղկացած է մոտ երկու տասնյակի հասնող հրաբխային լեռնագագաթներից և Արագած ու Արայի լեռ լեռնաղանգվածներից։ Արագածը (4095 մ) ՀԽՍՀ-ի ամենաբարձր գագաթն է։ Նրա լավաները փռված են մեծ տարածության վրա։ Ջրառատ է, լանջերը ծածկված են փարթամ արոտավայրերով։ Արայի լեռը գտնվում է Արագածից արևելք։ Նրա հյուսիսային լանջին առանձին կղզյակներով կան անտառներ։

Հայաստանի համար բոլոր ժամանակներում կենսական մեծ նշանակություն է ունեցել Արարատյան դաշտը, որը երկրի ամենաընդարձակ

հարթությունն է և փռված է Արաքսի միջին հոսանքի շրջանում։ Արարատյան դաշտը եղել է Հայաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի հիմնական կենտրոնը։ Նրա միջին բարձրությունը 800—825 մ է։ Ունի եռանկյունաձև։ Կլիմայի չորությունն պատճառով ամբողջ հարթությունը կներկայացներ կիսաանապատ, եթե Արաքսից և նրա ձախակողմյան վտակներից առուման նպատակներով հանված ջրանցքներն ու առուները չլինեին։ Հնագույն ժամանակներից ի վեր այստեղ անցկացվել են մի շարք ջրանցքներ։ Սակայն Արարատյան դաշտի մեծագույն մասի ոռոգման աշխատանքները ծավալեցին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո։ Խորհրդային իշխանության տարիներին նորոգվեցին բոլոր հին առուները, կառուցվեցին նոր ջրանցքներ (Լենինի անվան, Հոկտեմբերյանի, Ստորին Հրազդանի, Մեծամորի, Էջմիածնի, Կոտայքի, Արզնի—Շամիրամի և այլն), չորացվեց գետերի (Հրազդան, Սև ջուր) ստորին մասերում տարածված ճահիճների մեծագույն մասը։

Հսկայական տարածություն է գրավում Հյուսիսային հրաբխային բարձրավանդակը, որը պարփակված է արևմուտքից՝ Արսիան-Մեծրաց, հյուսիսից՝ Աճարայի լեռնաշղթաների, արևելքից՝ Խոնավ-Արագած գծի, իսկ հարավից՝ Արաքս-Կաղզվանի ձորի միջև։ Բարձրավանդակը լեռներով կիսված է երկու մասի՝ հյուսիսայինի և հարավայինի։ Հյուսիսային մասի մեջ են մտնում Գյոլեհը (հնում՝ Կող), Արդահանը, Ախալցխան և Ախալքալաքը (Ջավախքը), որոնք բոլորն էլ հրաբխային սարահարթեր են և ունեն արգավանդ հողեր։ Դրանցից առաջին երկուսի մեծ մասը անտառապատ է, իսկ Ախալքալաքը զուրկ է անտառներից։ Ախալքալաքը հայտնի է իր փարթամ արոտավայրերով, սառնորակ աղբյուրներով և բարձրադիր լճակներով (Փարվանա, Խանչալի և այլն), որոնք ունեն քաղցրահամ ջրեր և պատկանում են Ախալքալաք գետի ավազանին։

Հյուսիսային հրաբխային բարձրավանդակի հարավային մասը բաղկացած է Կարս և Ախուրյան գետերի ավազաններից։ Նրա մեջ մտնում են Կարսի ու Շիրակի արգավանդ դաշտերը և Տեկորի փոքրիկ տարավանդը։ Կարսի դաշտը առանձնապես աչքի է ընկնում իր բնական խոտհարքներով։ Նրա հարավ-արևմտյան մասում է գտնվում Սարիղամիշի շրջանը, որն ամբողջապես անտառապատ է։ Շիրակի դաշտը հնուց ի վեր հատկապես հայտնի է եղել հացահատիկներով։

Հայկական պարը հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռնաշղթան է։ Այն արևելքում սկսվում է Փոքր և Մեծ Մասիսներով և ձգվում

է դեպի արևմուտք՝ մինչև Եփրատի հունը։ Լեռնաշղթայի ամենաբարձր գագաթներն են Մեծ Մասիսը (կամ Արարատ), որը հնում կոչվել է նաև «Ազատ Մասիս» (5165 մ) և Փոքր Մասիսը (3925 մ)։ Մեծ Մասիսի հյուսիսային լանջին առաջացած ձորը կոչվում է Սուրբ Հակոբի ձոր (հնում՝ «Վիհք Մասյաց»), որտեղ գտնվում է համանուն վանքը։ Մեծ Մասիսի 4000 մետրից բարձր ընկած մասերը ծածկված են հավերժական ձյունով, նրա կատարին լինում են ուժեղ քամիներ։

Հայկական պարի մյուս լեռնագագաթներից հայտնի են Սինակը (Գայլատու լճի մոտ), Բարդողը (Թաքալթու՝ Կողբի աղահանքերի մոտ), Սուկավետը (Քյոսա-դաղ)՝ Դալի-բաբա լեռնանցքից հյուսիս-արևելք, Այծպտկունքը (Փալանթյոքան)՝ Էրզրումից հարավ արևելք։ Մեծ Մասիսից անմիջապես արևմուտք գտնվում են Օրկովի հովիտը (Մեծ Զինգլի լեռնանցք), որով անցել են արաբական զորքերը Կոգովիտից (Բայազետի շրջան) դեպի Այրարատյան աշխարհ կատարած իրենց առաջին արշավանքի ժամանակ (640 թ.), և Քարվանսարայի (Կուշաղի) լեռնանցքը, որը գտնվում է Գայլատու լճից մոտ 26 կմ արևելք։ Ենթադրվում է, որ դեպի Այրարատյան աշխարհ ու Արտաշատ արշավելիս այդ լեռնանցքով են անցել հռոմեական զորավարներ Պոմպեոսի և Կորբուլոնի լեգիոնները։

Հայկական պարի նման հրաբխային ծագում ունեն նաև Ծաղկանց (Ալադաղ) լեռները, որոնք գտնվում են Մեծ Մասիսից հարավ-արևմուտք և կազմում են լեռնային մի ընդարձակ գավառ։ Արևելյան Եփրատի ձախ կողմում բարձրացող այդ լեռները, որոնց բարձրությունը հասնում է 3512 մ-ի, արձակում են ճառագայթաձև լեռնաճյուղեր։ Դեպի հյուսիս տարածվող այդ լեռնաճյուղերից մեկը Արածանիի ձախ ափին վերջանում է պատմական նպատ գագաթով, որի ստորոտին փռված է Ալաշկերտի դաշտի մի փոքր հատվածը՝ Զիրավի դաշտը։

Ծաղկանց լեռներից հարավ-արևմուտք, Վանա լճի հյուսիսային ափին գտնվում է Հայկական լեռնաշխարհի հայտնի լեռնագագաթներից մեկը՝ Սիփանը (կամ Նեխ-Մասիք), որն իր բարձրությամբ (4434 մ) զիջում է միայն Մեծ Մասիսին։ Սիփանը հրաբխային լեռ է, հայտնի իր փարթամ արոտավայրերով։ Սիփանից հարավ-արևմուտք, Վանա լճի հարավ-արևմտյան անկյունում, Նեմրութ լեռնագագաթն է (3050 մ), որը նույնպես հրաբխային է և մինչև 1441 թվականը գործել է։ Նրա խառնարանը վեր է ածվել մի գեղատեսիլ լճակի։

Հայկական լեռնաշխարհի հրաբխային լեռներից հայտնի է նաև

Բյուրակն (Բինգյոլ)-Մնձուրյան լեռնաշղթան (Ներքին Տավրոս), որը սկսվում է Արաքսի ակունքի շրջանում գտնվող Բյուրակն բարձրավանդակով և ձգվում է դեպի արևմուտք՝ մինչև Մնձուր լեռնագագաթը։

Բյուրակն հրաբխային բարձրավանդակը ժամանակի ընթացքում հարթվել է և վերածվել սարահարթի, որտեղ մնացել են լեռնային երեք ցցվածքներ։ Դրանցից մեկը, որի ստորոտից սկիզբ է առնում Արաքսը, հնում կոչվում էր Սրմանց գագաթ։ Բյուրակնը Հայկական լեռնաշխարհի ամենաշրջառատ շրջանն է, այստեղ աճում են փարթամ խոտաբույսեր։

Բյուրակն բարձրավանդակից դեպի արևմուտք, մինչև Մնձուր լեռնագագաթը, ձգվում է հիմնական լեռնաշղթան, որն ունի բեկորային կառուցվածք և տարբեր հատվածներում կրում է տարբեր անուններ։

Անտիտավրոսյան լեռնաշղթան ձգվում է հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ և Պոնտական լեռների արևելյան հատվածի հետ կազմում է Հայկական լեռնաշխարհի արևմտյան սահմանը։ Դրա արևելյան շարունակությունը Անտիպոնտական լեռնաշղթան է, որի Սաղկավետ գագաթի (Դյումլի) հարավային ստորոտից սկիզբ է առնում Եփրատ գետը։ Անտիտավրոսյան լեռները ծալքավոր են, իրենց կառուցվածքով հար և նման Տավրոսին։

Հյուսիս-արևմուտքում Հայկական լեռնաշխարհի սահմանը կազմում է Պոնտական լեռների արևելյան հատվածը, որն այժմ կոչում են Լազիստանի լեռներ (հնում Պարխարյան կամ Խաղտյաց լեռներ)։

Անտիպոնտական լեռների, Պոնտական լեռների արևելյան հատվածի և Արսիան-Մեծրաց (Սողանլուղ) լեռնաշղթաների միջև գտնվում է Ճորոխ գետի ավազանը։ Ճորոխի միջին հոսանքի շրջանն ու նրա աջակողմյան վտակ Օլթի գետի ավազանը միասին հնում կազմում էին Տայոց աշխարհի տարածքը, որն ընդհանուր առմամբ լեռնոտ, անտառապատ և ճանապարհներով աղքատ երկիր է։

Եփրատի հովտում փռված են մի քանի դաշտեր, որոնք կոչվում են նաև սարահարթեր կամ բարձրավանդակներ։ Դրանք են՝ Կարնո (Էրզրում) սարահարթը, Աշկալայի դաշտը, Դերջանի (Մամախաթունի) դաշտը, Սրզնկայի դաշտը և Կամախի սարահարթը։

Կարնո դաշտը ոռոգվում է Եփրատի վերին հոսանքի ջրերով։ Գետն այստեղ առաջացրել է ճահիճներ, որոնք առանձնապես մեծ տարածում ունեն Կարին (Էրզրում) քաղաքի հյուսիս-արևելյան կողմում։ Կլիման խիստ է, ձմռանը լինում են սաստիկ ցրտեր, իսկ ամառները համեմատաբար շոգ է։ Կարնո դաշտի արևմտյան շարունակությունը կազմում է Աշկալայի դաշտը, մի նեղ հովիտ, որը սփռված է Եփրատի երկու կող-

մերում։ Աշկալայի դաշտից հարավ Դերջանի համեմատաբար ընդարձակ դաշտն է, որ առաջինից բաժանվում է Հայկական պարի լեռնաճյուղերից մեկով։ Դերջանի դաշտի տարբեր մասերում, մանավանդ նախալեռնային շրջաններում, բխում են բազմաթիվ սառնորակ և հանքային աղբյուրներ։ Երզնկայի դաշտը փոքր է Դերջանի դաշտից արևմուտք, Երզնկա քաղաքի շրջակայքում, Եփրատի աջ կողմում։ Չնայած ծովի մակարդակից ունեցած բավականին մեծ բարձրությանը, այնտեղ անգամ կարելի է բամբակ աճեցնել և ստանալ բարձր բերք։ Կամախի տարահարթը ընկած է Երզնկայի դաշտից հարավ-արևմուտք։

Արածանիի (Արևելյան Եփրատ) հովտում նույնպես փոքր են մի շարք հարթություններ։ Գետի հոսանքին համընթաց դրանք ունեն հետևյալ հաջորդականությունը՝ Ալաշկերտ, Դուքաղ, Մանազկերտ, Բուլանըղ, Մուշ, Ճաղատիր, Բալու և Խարբերդ։ Արածանիի հովիտն Արևմտյան Հայաստանի համար ունի այն նշանակությունը, ինչ Արաքսի հովիտը Արևելյան Հայաստանի համար։ Ռոդելու դեպքում նշված դաշտերից կարելի է ստանալ բամբակի, բրնձի, խաղողի, հացահատիկների, բանջարեղենի հարուստ բերք։ Սակայն Թուրքերի կողմից հայ ազգաբնակչության տեղահանումից ու բնաջնջումից հետո այդ ամբողջ տարածության վրա մինչև այժմ էլ բնակչությունը շատ նոսր է, արհեստական ոռոգումը շնչին է և գտնվում է պարզունակ աստիճանի վրա։

Հայկական լեռնաշխարհում մի առանձին ֆիզիկաաշխարհագրական շրջան է Վանա լճի ավազանը, որը սահմանագծված է հարավում՝ Հայկական Տավրոսով, արևելքում՝ Կոտուր լեռնաշղթայով, իսկ հյուսիսում և հյուսիս արևմուտքում՝ Նեմրութ, Սիփան և Թոնդրակ գագաթները միացնող լեռնաճյուղերով։ Ավազանի հյուսիսային և արևելյան հատվածները կտրտված են Ծաղկանց և Կոտուր լեռնաշղթաներից եկող լեռնաբազուկներով, որոնց շնորհիվ առաջացել են իրարից անջատ փոքրիկ գետահովիտներ։ Այդ գետահովիտներից համեմատաբար ընդարձակ տարածություն ունեն հյուսիս-արևելքում Բերկրի գետի հովիտը, որը կոչվում է Արաղայի դաշտ, արևելքում՝ Սև ջրի հովիտը, իսկ հարավ-արևելքում՝ Խոշաբ գետի ստորին հոսանքի շրջանը, որը հին ժամանակներից ի վեր հայտնի է Հայոց ձոր անունով։ Հայոց ձորից հյուսիս, Վան քաղաքից արևելք, բարձրանում է Վարագա լեռը, որի վրա դարեր շարունակ գործում էր նույնանուն վանքը, Հայաստանի մշակութային կենտրոններից մեկը։

Հայկական լեռնաշխարհում երկար ձգվող լեռնային համակարգերից, եթե նկատի չունենանք Փոքր Կովկասը, միայն Արսիան-Մեծրացի և

Վասպուրականի (Կոտուր-Զագրոշի) լեռնաշղթաներն են, որ ունեն միջօրեական ուղղություն։ Դրանցից առաջինը սկսվում է Աճարայի լեռներից և ձգվում է հարավ, մինչև Կաղզվանի ձորը։ Նրա հյուսիսային մասը կոչվում է Արսիանի շղթա, իսկ հարավայինը՝ Մեծրացը (Սողանլուղ)։ Վասպուրականի լեռնաշղթան սկսվում է Փոքր և Մեծ Մասիսներից մոտից և ընդհանուր առմամբ խիստ ժայռոտ է, հաղորդակցության համար քիչ մատչելի։ Լեռնանցքներից հատկապես հայտնի են Խանասորի, Քելիշինի և Ռևանդուզի լեռնանցքները։ Վերջիններս Միջագետքի հայտնի քաղաքները (Նինվե, Բաբելոն, Բաղդադ) կապում էին Ուրմիա (Կապուտան) լճի ավազանի հետ։ Իսկ Խանասորի լեռնանցքով անցնում է Վանա լճի ավազանից Սալմաստ և Դիլման տանող ճանապարհը։

Հայկական լեռնաշխարհի հարավային մասով, արևմուտքից արևելք ուղղությամբ, Կիլիկիայի արևելյան ծայրաշրջանից մինչև Ուրմիա լճի մոտերքը ձգվում է Հայկական Տավրոս լեռնաշղթան, որը երբեմն կոչվում է նաև Արևելյան Տավրոս։ Հայկական Տավրոսը մի հսկայական պատվար է և հին ու միջին դարերում ունեցել է ստրատեգիական կարևոր նշանակություն։ Նրա լեռնանցքների մոտակայքում մինչև օրս էլ պահպանվել են հին բերդերի ու ամրոցների մնացորդներ։ Լեռնաշղթայի կենտրոնական մասում են գտնվում Սասուն և Խութ գավառները, որոնք խիստ լեռնային են և ամփոփված են գլխավոր լեռնաշղթայի ու նրան զուգահեռ հարավից ձգվող մի այլ լեռնագոտու միջև։ Լեռնաշղթայի այդ հատվածի նշանավոր գագաթը Անդոկն (Անդովկ) է, որը գտնվում է Մուշի հարավային սահմանագլխին։

Բաղեշ (Բիթլիս) գետի հովտից արևելք լեռնաշղթան ձգվում է Վանա լճի հարավային ափերին զուգահեռ և երկու տեղ ընդհուպ մոտենում է լճի հայելուն։ Դրանցից արևմտյանը լճափին վերջանում է Կապուտկող լեռնագագաթով, իսկ արևելյանը՝ Արտոսով, որից հարավ գտնվում է լեռնաշղթայի ավելի բարձր մի այլ նշանավոր գագաթը՝ Առնոսը։

Հայկական Տավրոսի հյուսիսային լանջերը զառիթափ են, իսկ հարավայինը՝ մեղմաթեք։ Դեպի հարավ այն արձակում է մի շարք լեռնաճյուղեր, որոնցից շատերը ընդհուպ հասնում են Արևմտյան և Արևելյան Տիգրիսին։ Լեռնաշղթան հարուստ է օգտակար հանածոներով (գունավոր մետաղներ, երկաթ, կապար և այլն)։

2. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Լեռնային ռելիեֆը, օվկիանոսներից ունեցած մեծ հեռավորությունը, շրջապատում չոր տափաստանների առկայությունը և Սև ու Կասպից ծովերի մերձավորությունը Հայկական լեռնաշխարհի կլիմայի վրա թողել են իրենց առանձնահատուկ ազդեցությունը, առաջացնելով կլիմայական ուրույն պայմաններ։ Նրա կլիմայի վրա մեծ ազդեցություն են թողնում հատկապես հյուսիսից ու հարավից պարբերաբար մուտք գործող ցուրտ ու տաք օդային զանգվածները։

Երկրի կլիմայական պայմանների ձևավորման մեջ ամենից կարևոր դերը պատկանում է ռելիեֆին, ծովի մակերևույթից ունեցած մեծ բարձրությանը։ Նրա զանազան մասերը ծովի մակերևույթից ունեն 450—800 մետրից մինչև 4434 (Սիփան), 5165 (Մեծ Մասիս) մետր բարձրություն։ Իսկ հայտնի է, որ լեռնային երկրներում յուրաքանչյուր 200 մետր բարձրանալիս օդի տարեկան միջին ջերմությունը իջնում է 3ելսիուսի մեկ աստիճանով։

Տեղի բարձրության հետ կապված ավելանում են նաև մթնոլորտային տեղումները, սակայն մինչև որոշ բարձրություն, որից հետո դրանք նորից նվազում են։

Բարձրությունից բացի, կլիմայական տարբերություններ են առաջանում նաև ռելիեֆի ուրիշ առանձնահատկություններից՝ լեռնաշղթաների ուղղություններից, դրանց լանջերի դիրքադրությունից և այլն։ Դեպի հարավ ուղղված լեռնալանջերը համեմատաբար ավելի շատ ջերմություն են ստանում, քան դեպի հյուսիս ուղղվածները, որովհետև առաջինները ենթարկված են արևի համեմատաբար ուղղահայաց ճառագայթների ներգործությանը։ Այդ հանգամանքն իր հերթին ազդում է նաև բուսածածկի վրա. սովորաբար անտառներն ավելի շատ տարածություն են գրավում և ավելի փարթամ են լինում դեպի հյուսիս թեքված լանջերի վրա։

Երկրում ջրային և անտառային տարածությունները քիչ են և էական ազդեցություն չեն թողնում կլիմայի մեղմացման ու խոնավացման վրա։ Խոնավությամբ աղքատ են մանավանդ Արածանիի հովիտը, Վանա լճի ավազանը և Արարատյան դաշտը։

Հայկական լեռնաշխարհի կլիմայի վրա մեղմացուցիչ ազդեցություն են թողնում Սև, Կասպից և մասամբ Միջերկրական ծովերը։ Սև ծովի ազդեցությունը ուժեղ կերպով զգացվում է լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան և հյուսիսային շրջաններում։ Տեղումների քանակն այդ վայրերում տարեկան հասնում է 600—1000 մմ, այն դեպքում, երբ Սև ծովի խոնավ գոլորշիներից Արարատյան դաշտն ստանում է աննշան քանակություն։ Հոկտեմբերյանում տարեկան տեղումների քանակը 266 մմ է, Երևանում՝ 312 մմ, Կողբում՝ 237 մմ և այլն։ Սև ծովի համեմատությամբ, Կասպից ծովի ազդեցությունն ավելի սահմանափակ է։

Հայկական լեռնաշխարհն ունի ցամաքային կլիմա, որն արտահայտվում է օդի ամառվա ու ձմեռվա, գիշերվա ու ցերեկվա բարեխառնությունների մեծ տատանումներով և սակավ խոնավությամբ։

Խստաշունչ են Հայկական լեռնաշխարհի ձմեռները։ Որոշ տարիներ մի քանի վայրերում նրա օդի նվազագույն բարեխառնությունը ընդհուպ մոտեցել է —41°-ի։ Հայկական լեռնաշխարհի ամենացուրտ վայրը Կարսի շրջանն է։

Ամառվա ընթացքում, ընդհակառակը, լինում է շոգ, մանավանդ Արևմտյան Տիգրիսի հովտում, Արարատյան դաշտում և Արածանիի ափամերձ շրջաններում։ Այդ շրջաններում օդի բարեխառնությունը երբեմն 41°-ից անցնում է։

Հայկական լեռնաշխարհում մթնոլորտային տեղումները խիստ անհամաչափ են տեղաբաշխված։ Ամենից շատ տեղումներ ստանում են Բյուրակն-Մնձուրյան լեռների շրջանը, Արևմտյան Եփրատի հովիտը, Ճորոխ գետի ավազանը, Կուրի վերնագավառը և Լոռին։ Համեմատաբար առատ են մթնոլորտային տեղումները Մրզուզի, Սևանի, Զանգեզուրի և Տավրոսյան լեռների բարձրադիր լանջերին։

Իսկ լեռնաշխարհի ցածրադիր շրջաններում՝ գետահովիտներում և դաշտերում (Արարատյան դաշտ, Արածանիի հովիտ, Վանա լճի ավազան և այլն), որոնք կազմում են երկրի տարածքի մեծ մասը, ստանում են շատ քիչ տեղումներ։ Այդ վայրերում, առանց արհեստական ոռոգման, հնարավոր չէ կանոնավոր աճեցնել գյուղատնտեսական որևէ մշակույթ։ Նկատի ունենալով այդ, դեռևս հնագույն ժամանակներից մարդիկ իրենց հնարավորության սահմաններում աշխատել են արգավանդ հող ունեցող նշված շրջաններում ստեղծել արհեստական ոռոգման ցանց։

Մեր նախնիները տարբեր ժամանակներում Հայկական լեռնաշխարհում հանել են բազմաթիվ առուներ ու ջրանցքներ, կառուցել արհեստական լճակներ ու ամբարտակներ։ Երկրի զանազան մասերում առայսօր նշմարվում են դրանց հետքերը, իսկ ոմանք նույնիսկ պահպանվել են ամբողջությամբ։

Արհեստական ոռոգումը Հայաստանում ունի հազարամյակների

պատմություն։ Այդ բնագավառում մեծ հաջողությունների են հասել Վանի թագավորության շրջանում։ Մենուա թագավորի օրոք (810—778 թթ. մ. թ. ա.) կառուցվել է նրա անվան հայտնի ջրանցքը՝ պետության մայրաքաղաք Տուշպայի (Վան) բնակչությանը խմելու ջուր և մայրաքաղաքի շուրջն ընկած տարածությունները ոռոգելու համար։ Այն ունի 80 կմ երկարություն և վայրկյանում տալիս է ավելի քան 1500 լիտր ջուր։ Մենուայի այդ ջրանցքը կարելի է համարել հին աշխարհի հայտնի կառույցներից։ Նա այժմ էլ հիացմունք է պատճառում մասնագետներին։

Ջրանցքներ են անցկացվել նաև Մանազկերտում, Ալաշկերտում, Արմավիրի (Արգիշտիխինիլի) և Մեծամորի մոտակայքում, Գեղամա լեռների հարավ-արևմտյան լանջերին, Երևանի շրջակայքում և այլուր։

Հետագա ժամանակներում ոռոգման նպատակով ջրանցքներ են կառուցվել Արարատյան դաշտում, Վանա լճի ավազանում, Արածանիի հովտում, Սյունիքի հարավային մասում և այլ տեղերում։

Հնագույն ժամանակներից ի վեր Հայկական լեռնաշխարհում ոռոգման նպատակներով ստեղծվել են արհեստական լճակներ ու ամբարտակներ։ Այդպիսի մի ամբողջ շարք լճակներ են կառուցվել Գեղամա լճի հարավային հատվածում։ Արհեստական լճակներ են նաև այժմյան Երևանի Կոմսոմոլի լիճը, որը հավանաբար գոյություն ունի VIII դարից (մ. թ. ա.) և պարսկական տիրապետության շրջանում կոչվել է Թոխմախգյոլ (Երևանի Թոխմախ խանի անունով), Վան քաղաքից արևելք գտնվող բավական ընդարձակ լճակը, որ Թուրքերը կոչում են Քեշիշգյոլ՝ («Տերտերի լիճ»), Էջմիածնի վանքի լճակը և այլն։

Ոռոգման, հանգստի և այլ նպատակներով բազմաթիվ լճակներ են ստեղծվել մեր օրերում՝ Խորհրդային Հայաստանում՝ Երևանում, Լենինականում, Դիլիջանում, Ապարանի, Արթիկի, Թալինի, Հրազդանի և այլ շրջաններում։

Մարդիկ իրենց գործունեությամբ մեծ փոփոխություններ են առաջացրել կլիմայական և առհասարակ երկրի բնական պայմանների մեջ։ Մի դեպքում նրանք անխնա կտրատելով անտառները՝ որոշ շրջաններ դարձրել են լերկ ու անպտուղ, իսկ մյուս դեպքում փորել են ջրանցքներ, կառուցել արհեստական ջրամբարներ, տնկել են անտառ-պուրակներ, որոնց շնորհիվ ավելի բարենպաստ են դարձրել երկրի այս կամ այն փոքրիկ շրջանի բնական պայմանները։ Մոնղոլական և թուրքմենական ցեղերի տիրապետության շրջանում (XIII—XV դդ.) չոր ու անպտուղ դարձավ Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի զգալի մասը։ Հետագա դարերում՝ թուրքական և պարսկական դաժան լծի տակ գտնվող հայ

ժողովուրդը հնարավորություն չունեցավ գոնե նվազագույն չափով ստեղծելու ոռոգման ցանց, որի հետևանքով էր նաև, որ անբերրիությունն ու սովը այդ դարերում դարձան մեր ժողովրդի մշտական ուղեկիցները։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միակցվելուց հետո, մանավանդ XIX դ. 60-ական թվականներից, որոշ ուշադրություն է դարձվում ոռոգման գործին։ Սակայն Հայաստանում արհեստական ոռոգման կայուն և լայն ցանց ստեղծելու համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին միայն խորհրդային ժամանակաշրջանում։ Խորհրդային իշխանության հենց առաջին տարիներից կուսակցությունն ու կառավարությունը հատուկ ուշադրություն դարձրին ոռոգման ցանցին։ Հանրապետությունում այժմ գործում են ոռոգիչ տասնյակ ջրանցքներ ու առուներ (Շիրակի, Արզնի-Շամիրամի, Լենինի անվան, Հոկտեմբերյանի, Ստորին Հրազդանի, Թալինի, Կարճևանի և այլն), բազմաթիվ հզոր ջրհան կայաններ (Մխչյանի, Արփայի, Որոտանի և այլն), կառուցված են մի շարք ջրամբարներ ու լճեր (Ապարանի, Մանթաշի, Վերին Բազմաբերդի, Աղատի, Ջողազի և այլն)։

3. ՋՐԱԳՐԱՖԻԱՅՈՒՆԸ

Հայկական լեռնաշխարհն ունի գետային բավական խիտ ցանց, հազարավոր սառնորակ և հանքային աղբյուրներ, մի քանի խոշոր և բազմաթիվ մանր լճեր։ Սառնորակ աղբյուրներով առանձնապես հայտնի են Արևմտյան Եփրատի ակունքի շրջանը, Շիրակի դաշտի հյուսիսային մասը, Ախալքալաքի բարձրավանդակը, Գեղամա լեռները, Արագածը, Ապարանի սարահարթը, Աղատ գետի ավազանը, Արաքսի վերնագավառը և այլ շրջաններ։

Հայկական լեռնաշխարհի խոշորագույն լիճը Ուրմիան է (Կապուտան ծով, այժմ Ռիզայե), որը գտնվում է նրա հարավ-արևելյան սահմանագլխին։ Փակ լիճ է, ջուրը՝ սաստիկ աղի։ Ծովի մակարդակից գտնվում է 1275 մ բարձրության վրա։ Ծանծաղ է, խորությունը 4—5 մ է, իսկ առավելագույնը՝ 15 մ։ Ավելի քան 4 անգամ մեծ է Սևանա լճից (նրա մակերեսը մոտ 5775 քառ. կմ է)։ Լճի մեջ թափվող գետերից են Թավրիզի (կամ Աշիշայ), Սալմաստի (կամ Ջուբաչայ) և նաղլուչայ գետերը։ Լիճը գլաուբերյան աղի մեծ պարունակության պատճառով ձկներից զուրկ է։ Հնում մեծ է եղել նրա ստրատեգիական նշանակությունը՝ լինելով մեծ պատվար պարբերաբար Հայկական լեռնաշխարհ արշավող օտար նվաճողների ճանապարհին։

Վանա լիճն իր մեծությամբ երկրորդն է (հնում՝ Տոսպի լիճ, Բզնունյաց ծով, Խլաթի լիճ և այլն)։ Նրա բարձրությունը ծովի մակերևույթից 1720 մ է, մակերեսը՝ 3765 քառ. կմ, առավելագույն խորությունը՝ 95 մ։ Նրա մեջ թափվող համեմատաբար շրատաք ու երկար գետերից են հոսում՝ Մարմեռը, Բերկրին (կամ Բանդիմահի) և Արճեշը։

Վանա լիճը ևս փակ լիճ է, նրանից սկիզբ չի առնում ոչ մի գետ, ջուրը աղի է, այն պարունակում է մեծ քանակությամբ բորակ։ Լճի մակարդակն ունի դարավոր տատանումներ։ Անցյալ դարից առայսօր նրա մակարդակը բարձրանում է։ Լճի ընդարձակման պատճառով նրա հյուսիսային ափին գտնվող հին Արճեշ քաղաքը անցել է ջրի տակ, ջրով ծածկվել են նաև Վան քաղաքի շրջակայքի շատ այգիներ, հին Ավանց գյուղը (Վանի մոտ) և այլն։

Վանա լիճը շատ հարուստ է տառեխ ձկով։ Հին և միջին դարերում տառեխը որսվում և, աղ դնելուց կամ չորացնելուց հետո, արտահանվում էր օտար երկրներ։ Լճի հյուսիսային ափին, Առնստավանի մոտ, Արշակունիների թագավորության շրջանում (I—V դդ. մ. թ.) գոյություն ուներ արքայական հատուկ ձկնորսարան։ Լճի շրջակայքի քաղաքները՝ Վանը, Ոստանը, Խլաթը, Արճեշը, Բերկրին նավագնացությամբ կապված էին իրար հետ։

Հայ ժողովրդի պատմության մեջ զգալի դեր են խաղացել լճի չորս կղզիները՝ Աղթամարը, Առտերը (որոնք գտնվում են հարավային ափի մոտ), Լիմը և Կտուցը (հյուսիսային մասում)։

Սևանա լիճը (հնում՝ Գեղամա լիճ, Գեղարքունյաց ծով) աշխարհի լեռնային ամենամեծ ու ամենաբարձր լճերից է։ Իր մեծությամբ Հայկական լեռնաշխարհի լճերի մեջ գրավում է 3-րդ տեղը՝ առաջին ու երկրորդ տեղերը զիջելով Ուրմիա և Վանա լճերին։ Սևանա լճի բացարձակ բարձրությունը մինչև լճի մակարդակի իջեցումը 1916 մետր էր, մակերեսը՝ 1416 քառ. կմ, առավելագույն խորությունը՝ 95 մ։ Լիճը հազվագեպ էր ամբողջովին սառչում։ Գարնանն ու աշնանը քամիների պատճառով հաճախ ալեկոծվում է, իսկ ամռանը հանգիստ է լինում։ Սևանա լճի մեջ թափվում են մոտ երեք տասնյակ գետեր, որոնցից նշանավոր են Գավառագետը, Բախտակը, Արգիճին, Վարդենիսը և Զկնագետը։ Սևանա լճից է դուրս գալիս Հրազդան գետը, որը սնունդ է տալիս Սևան-

---

1 Նորագույն աղբյուրների համաձայն Վանա լճի խորությունը հասնում է շուրջ 200 մ-ի։

Հրազդան կասկադի ՀԷԿ-երին և ոռոգում է Արարատյան դաշտի զգալի մասը։ Այժմ Սևանա լճի ջրերը հիդրոէներգետիկ նպատակներով օգտագործվում է նվազագույն չափերով և լճի մակարդակը հնարավոր բարձր սահմանագծում պահպանելու համար ձեռնարկվում են անհրաժեշտ բոլոր միջոցառումները։ Այդ նպատակով է կառուցված Արփա—Սևան մոտ 50 կմ երկարություն ունեցող թունել-ջրատարը։

Սևանա լճի ջուրը քաղցրահամ է և զարմանալի կայուտակ։ Լճում աճում են բազմատեսակ ձկներ, որոնց մեջ առանձնապես հայտնի է իշխանը։ Լճի հյուսիս-արևմտյան մասում գտնվում է Սևանա թերակղզին, որը մինչև 50-ական թվականների սկիզբը կղզի էր։ Այստեղ պահպանված է Սևանի միջնադարյան վանքը։ Թերակղզում տեղադրված են հանգրստի տներ։ Լճի վրա այժմ հաստատված է շոգենավային կանոնավոր երթևեկություն։ Հոգ է տարվում նրա ձկնային հարստությունները պահպանելու և ճիշտ օգտագործելու համար։ Սևանա լճի շուրջը տեղադրված են տուրիստական հանգրվաններ, հանգստավայրեր, պիոներական ճամբարներ, հասարակական սննդի բազմաթիվ կետեր, հյուրանոցներ։ Երկաթուղին լճի հյուսիսային ափով հասել է մինչև Զոդ ավանը։ Եվ հեռու չէ այն ժամանակը, երբ Սևանի շուրջը «մանյակ» կկազմեն բնակչության (առաջին հերթին մայրաքաղաք Երևանի բնակչության) հանգստի գիշերօթևանները, հյուրանոցները, քեմպինգները, ռեստորաններն ու ճաշարանները, տուրիստական հանգրվանները։

Հայկական լեռնաշխարհի մյուս, անհամեմատ փոքր լճերից են Սովակ Հյուսիսոն (Զըլդրի լիճ)՝ Զըլդր լեռների շրջանում, Փարվանան՝ Ախալքալաք գետի ակունքում, Արփի լիճը՝ Ախուրյան գետի ակունքում, Մեծամորի լիճը՝ Սև ջուր գետի ակունքում, Մեծ և Փոքր Ալլեները՝ Վարդենիս և Զանգեզուր լեռնաշղթաների ստորոտին, Գայլատուն (Բալըդգյոլ)՝ Մեծ Մասիսից արևմուտք, Արճակի լիճը՝ Վանա լճից արևելք, Նազիկ լիճը՝ Վանա լճից արևմուտք, Սով լիճը (Գյոլջիկ)՝ Հայկական Տավրոս լեռնաշղթայի արևմտյան մասում և հարյուրավոր այլ ավելի փոքր լճակներ, որոնք ցրված են Զանգեզուրի, Գեղամա, Հայկական Պարի, Արագածի, Բյուրակնի, Հայկական Տավրոսի, Նեմրութի և այլ լեռնային շրջաններում։ Դարերի ընթացքում Հայկական լեռնաշխարհում կառուցվել են մի շարք արհեստական լճակներ ու ջրամբարներ՝ Արագածի փեշերին, Երևանի մոտ, Վան քաղաքից արևելք և այլուր։ Արհեստական ջրամբարները մեծ թիվ են կազմում Խորհրդային Հայաստանում։ Գոյություն ունեն նաև հանգստի նպատակներով կառուցված ջրամբարներ՝ հատկապես քաղաքներում։ Այդպիսի մի շարք լճակներ կան

մայրաքաղաք Երևանում և հանրապետության մյուս քաղաքներում։

Հայկական լեռնաշխարհի գետերը պատկանում են 4 ավազանների՝ Սև ծովի, Պարսից ծոցի, Կասպից ծովի և ներքին լճերի։ Դեպի Սև ծով հոսող գետերից են Ճորոխը (երկարությունը 345 կմ, հնում Վոհ, Ակամսիս) իր Օլթի վտակով, Գյումուշխանեի գետը (Խարշոտ, Խորշատ), որի վերին հոսանքի հովտում գտնվում են Գյումուշխանեի (հնում Արգիրոկաստրոն) արծաթի հանքերը, Գայլը (այժմ՝ Կելկիդ, հունարեն՝ Լիկոս), որը միանալով Իրիս հորդառատ գետին, թափվում է Սև ծով, Ալիս կամ Հալիս (այժմ՝ Կըզըլ-Իրմակ), որը Հայկական լեռնաշխարհից դեպի Սև ծով հոսող գետերի մեջ ամենից երկարն ու ջրառատն է։

Դեպի Սև ծով հոսող գետերը ընդհանրապես ջրառատ են և ունեն համեմատաբար մեղմ ռեժիմ. դրանց հոսքի ծավալը տարվա ընթացքում քիչ տատանումներ է տալիս։

Դեպի Պարսից ծոց Հայկական լեռնաշխարհից հոսում են Եփրատն ու Տիգրիսը։ Եփրատը (երկ. 2700 կմ) կազմվում է երկու ճյուղերի՝ Արևմտյան (Ֆրատ, Կարասու) և Արևելյան (Արածանի, Մուրադչայ) Եփրատների միախառնվելուց։ Արևմտյան Եփրատը (երկ. 500 կմ) սկսվում է Ծաղկավետ (Դյումլու) լեռների հարավային լանջերից և խարբերդի դաշտում իր մեջ ընդունում է Արևելյան Եփրատը։ Արևմտյան Եփրատի վտակներից են Դերջանը (Դուզլու) և Տելֆրիկը (Դիվրիգի)։ Մնձուրյան լեռների շրջանում Արևմտյան Եփրատը հոսում է նեղ ու խոր ձորերով։ Նրա կիրճը ահավոր խորության է հասնում Ակն քաղաքի մոտ։ Այստեղ կիրճը կազմող բարձրությունները հասնում են ձյան գծին և, մինչդեռ կիրճի հատակին ծաղկում է նշենին, վերևում, բարձրությունների վրա դեռ խոր ձմեռ է լինում։ Արևելյան Եփրատը սկիզբ է առնում Ծաղկանց լեռների հյուսիս-արևելյան լանջերից և, հաջորդաբար հոսելով Ալաշկերտի, Դուքթաղի, Բուլանըղի, Մշո, Ճապաղջրի, Բալուի դաշտերով, խարբերդի դաշտում միանում է Արևմտյան Եփրատին։ Արևելյան Եփրատի աջակողմյան վտակներից են՝ Խնուսի (Վարաժնունիքի), Բյուրակնի, Ճապաղջրի և Փերի գետերը, իսկ ձախակողմյան վտակներից կարելի է հիշատակել Մանազկերտի (Պատնոց) և Մշո (Մեղրագետ) գետերը։ Արածանին ավելի ջրառատ է, քան Արևմտյան Եփրատը, չնայած մայր գետ համարում են վերջինիս։

Արածանին և Արևմտյան Եփրատը միանալուց հետո կազմում են Եփրատ գետը, որը կտրում է Տավրոսյան լեռները և դուրս գալիս Վերին Միջագետք։ Տավրոսյան լեռների շրջանում Եփրատը հոսում է սրընթաց՝

առաջացնելով մոտ 300 մանր ջրվեժներ։ Հարավային Միջագետքում Եփրատը միանում է Տիգրիսին և կազմում Շատ-էլ-Արաբ գետը (Արաբիայի գետ), որը և թափվում է Պարսից ծոցը։

Դեպի Պարսից ծոց հոսող մյուս խոշոր գետը Տիգրիսն է (Դգղաթ, երկարությունը 1950 կմ), որը Հայկական լեռնաշխարհից սկսվող գետերից ամենաջրառատն է։ Եփրատի նման Տիգրիսը նույնպես կազմվում է 2 ճյուղից՝ Արևմտյան և Արևելյան։ Արևմտյան Տիգրիսը, որ ուղղակի կոչվում է նաև Տիգրիս, ունի մի քանի ակունք։ Նրա գլխավոր ակունքը Ծովք լճից սկիզբ առնող Արզանա գետն է։ Սղերդ քաղաքից ոչ հեռու իր մեջ Արևելյան Տիգրիսն ընդունելուց հետո մայր Տիգրիսը հասնում է դեպի Հարավային Միջագետք, որտեղ, ինչպես ասվեց, միանում է Եփրատի հետ և կազմում Շատ-էլ-Արաբ գետը։ Արևմտյան Տիգրիսի ձախակողմյան վտակներից հայտնի են Զիբենե և Բաթման (Սասունի գետ, հնում՝ Քաղրիդ, Նիմֆիոս) գետերը, որոնցից առաջինը սկիզբ է առնում Հայկական Տավրոսի Մեծ և Փոքր Կլեսուրի լեռանցքների մոտից, իսկ երկրորդը, որն իր միջին հոսանքի շրջանում բավական տարածության վրա հոսում է գետնի տակով և դրանից էլ ստացել է իր Բաթման («Թաղված») անունը, սկիզբ է առնում Սասունից՝ մի քանի ակունքներով։ Արևելյան Տիգրիսը (Բոհտանսու, հնում ավելի հաճախ կոչվում էր Ջերմ) սկիզբ է առնում Հայկական Տավրոսի և Կորդվաց (Քրդստանի) լեռների կազմած անկյունից և, հոսելով դեպի արևմուտք, Արևմտյան Տիգրիսին է միանում Սղերդ քաղաքից հարավ-արևմուտք։ Արևելյան Տիգրիսի ավազանը լեռնոտ է ու անտառապատ։ Նրա վտակներից առանձնապես հայտնի են Մոկսը (Մոկուս) և Բիթլիսը (Բաղեշ), որոնք մայր գետին միանում են աջ կողմից։

Հայկական լեռնաշխարհից երկու խոշոր գետ՝ Կուրը և Արաքսը հոսում են դեպի Կասպից ծով։ Կուրն Անդրկովկասի ամենախոշոր գետն է։ Սկիզբ է առնում Գյոլեհի ճահիճներից (Արդահանից հարավ-արևմուտք) և իր վերին հոսանքով պատկանում է Հայկական լեռնաշխարհի գետային ցանցին։ Վրաստանի սահմաններում Կուրի մեջ թափվում են բազմաթիվ վտակներ՝ Փոցխով, Խրամ (Քցիա) և այլ գետեր։ Վերջինս նախքան Կուրի մեջ թափվելը իր մեջ է ընդունում Դեբեդը, որը կազմվում է Զորագետ և Փամբակ գետերից։ Բազմաթիվ են Փոքր Կովկասի լեռնային համակարգից սկսվող նրա մեծ ու փոքր վտակները՝ Աղստև (ադրբեջաներեն՝ Աղստաֆա), Հախում, Տավուշ, Շամքորշայ, Գյանջաչայ (Գանձակի գետ), Թարթառ (հնում՝ Տրտու) և այլն։ Մինչև Կասպից ծով հասնելը Կուրը և Արաքսը միանում են իրար։

Արաքսը (հնում՝ Երասխ) սկիզբ է առնում Բյուրակն բարձրավանդակի Սրմանց լեռնագագաթի (այժմ՝ Բինգյոլդաղ) ստորոտից։ Այն հոսում է Տվարածատափի դաշտով, կտրում է Հայկական պար լեռնաշղթան և դուրս գալիս Բասենի դաշտը, ապա հաջորդաբար անցնում Կաղզվանի ձորով, Արարատյան, Շարուրի, Նախիջևանի դաշտերով, Մեղրու կիրճով և դուրս գալիս Մելիի ու Մուղանի տափաստանները, ապա միանում Կուր գետին ու թափվում Կասպից ծով։ Նրա ձախակողմյան վտակներից են Մուրցը (Հասանկալա), Ախուրյանը՝ կարս վտակով, Սև ջուրը (հնում Մեծամոր), Հրազդանը, Ազատը, Արփան, Նախիջևանչայը, Ալինջաչայը (Երնջակ), Ողջին, Որոտանը և Հագարին (հնում՝ Աղավնո գետ)։ Արաքսի աջակողմյան վտակներից հայտնի են հատկապես երկուսը՝ Դեղին գետը (Զանգիմար), որ սկիզբ է առնում Գայլատու լճից և Կարմիր գետը, որի վերին հոսանքը կոչվում է Կոտուրի գետ։

Արաքսի երկարությունը 914 կմ է։ Նրա ավազանը կազմում է Հայկական լեռնաշխարհի գրեթե կեսը։ Ջրերը խիստ տղմուտ են, հունը անկայուն։ Դարերի ընթացքում Արաքսը մի քանի անգամ փոխել է իր հունը։ Նրա հունը անկայուն է եղել հատկապես Արարատյան դաշտում, որտեղ մինչև օրս էլ նշմարվում է Արաքսի հին հուներից մեկը։ Խիստ վարարումների և հունի անկայունության պատճառով Արաքսի վրա կառուցված կամուրջները երկար չեն դիմացել։ Այդ երևույթը իր բանաստեղծական արտահայտությունն է գտել հռոմեական բանաստեղծ Վերգիլիոսի մոտ (70—19 թթ. մ. թ. ա.)։ Նա Հռոմի ստրկացնող լծի դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարն արտահայտել է Հայաստանի մայր գետին՝ Արաքսին ուղղված հետևյալ արտահայտությամբ՝ «կամուրջ չհանդուրժող Արաքս»։

Հայկական լեռնաշխարհի գետերը լեռնային են, արագընթաց ու փրփրալից։ Երկրի գետերը նավարկության համար պիտանի չեն (բացառությամբ Եփրատի որոշ մասերի)։ Մի քանի համեմատաբար դանդաղահոս ու մեծ գետերում (օրինակ՝ Արաքսի միջին հոսանքում) կարող են կատարվել լաստարկումներ։ Մեծ է եղել և այժմ էլ մեծ է դրանց նշանակությունը ոռոգման գործում։ Եփրատը, Արաքսը և Կուրը ձկնառատ են։

4. ԲՈՒՅՍԵՐՆ ՈՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Կլիմայական պայմաններին համապատասխան Հայկական լեռնաշխարհի բուսականությունը նույնպես բազմազան է։ Ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության բուսականությունն այստեղ առաջացնում է ուղղաձիգ մի շարք գոտիներ՝ սկսած կիսաանապատային բարձր ալպիականը ներառյալ։

Հայկական լեռնաշխարհի հողը ընդհանուր առմամբ բերրի է։ Երկիրը միանգամայն նպաստավոր է գյուղատնտեսության երկու կարևորագույն ճյուղերի՝ երկրագործության և անասնապահության համար։ Այստեղ կան լեռնային սեահողային ընդարձակ դաշտեր (Շիրակ, Այաշ-կերտ, Լոռի, Սևանա լճի ավազան, Մուշ և այլն), արևավառ շրջաններ (Արարատյան դաշտ, Վանա լճի ավազան և այլն), խոտհարքներ և փարթամ արոտավայրեր, որոնք կազմում են գյուղատնտեսության բնական հիմքը։

Հայկական լեռնաշխարհի ցածրադիր մասերում՝ 500—1000 մետր բարձրություն ունեցող հարթություններում (Արարատյան դաշտ, Արածանիի հովիտ, Մեղրու, Ղափանի հովիտներ, Արևմտյան Տիգրիսի հովիտ և այլն), արհեստական ոռոգման դեպքում, հաջող կերպով աճում են մերձարևադարձային տեխնիկական մշակույթներ (բամբակ, ծխախոտ և այլն)։ Այս գոտում ընդարձակ տարածություններ են գրավում հացահատիկային կուլտուրաները, մրգատու և խաղողի այգիները։ Հնագույն ժամանակներից ի վեր Հայաստանը հայտնի է եղել խաղողով, ծիրանով, դեղձով և բազմաթիվ այլ պտուղներով, որոնց առանձին՝ տեղական տեսակներ իրենց տեսքով, համով և քաղցրությամբ գերազանցում են աշխարհի շատ երկրների պտուղներին ու խաղողին։

Ցածրադիր այս գոտում բավականին ընդարձակ տարածություններ էին գրավում ճահիճները։ Հնկայական ճահիճներ կային Արմավիրի, Վաղարշապատի, Արտաշատի, Մանազկերտի, Նախիջևանի շրջակայքում, ինչպես նաև ավելի բարձրադիր վայրերում՝ Կարինի (Էրզրում) շրջանում, Մուշում, Մանազկերտում։ Ջոր ու շոգ կլիմայի պատճառով ցածրադիր այս գոտին, արհեստական ոռոգման բացակայության հետևանքով, պատած է չորասեր բուսատեսակներով։ Այստեղ տարածված կիսաանապատների բնորոշ բույսը օշինդրն է, որն իր աճման ու զարգացման պայմաններով միանգամայն հարմարվել է ցամաքային կլիմային։

Ցածրադիր դաշտային գոտուն հաջորդում է նախալեռնային գոտին, որը ծովի մակարդակից ունի 1100—1500 մ բարձրություն։ Նախալեռնային այս գոտուն բնորոշ մշակություններից են հացահատիկները՝ ցորենը, գարին, տարեկանը, հաճարը, կորեկը և այլն։ Հնագույն ժամանակներից սկսած հացահատիկներով աշքի են ընկել Շիրակը, Ալաշկերտը, Բուլանըղը, Մուշը և մի քանի գետահովիտներ, սարահարթեր։ Սրանք հին Հայաստանում համարվում էին հացի շտեմարաններ։ Հենց այս գոտում են հիմնականում տարածված վայրի ցորենները, որոնցով այնքան հարուստ է Հայկական լեռնաշխարհը։ Վերջինս Իրանական սարահարթի և Մերձավոր Արևելքի մի քանի այլ երկրների հետ միասին համարվում է վայրի ցորենների նախահայրենիքը։

Եվ պատահական չէ, որ ԽՍՀՄ-ում վայրի ցորենների առայժմ միակ արգելոցը կազմակերպվել է ՀԽՍՀ-ում՝ Էրեբունիի մոտ։

Նախալեռներից վեր՝ 1500—2000 մ բարձրությունների վրա տարածվում է լեռնային գոտին։ Այս գոտու վերին շերտում, մինչև 1900 և նույնիսկ 2000 մ բարձրության վրա, գլխավորապես լեռնադաշտերում, դեռևս տարածվում են հացահատիկները, իսկ ավելի բարձր՝ ալպյան մարգագետինները, որոնք գրավում են ընդարձակ տարածություններ։ Ալպյան մարգագետիններով առանձնապես հարուստ են Բյուրակն-բարձրավանդակը, Հայկական Տավրոս, Խոնավ, Մրղուզի, Սևանի, Գեղամա, Զանգեզուրի լեռների բարձրադիր լանջերը։ Ալպյան մարգագետիններից անմիջապես ցած մերձալպյան բուսականության գոտին է։

Հայկական լեռնաշխարհը անտառներով, ընդհանուր առմամբ, աղքատ է։ Նրա կենտրոնական մասերում անտառները միայն լեռնային շրջաններում են՝ առանձին բծերի ու կղզյակների ձևով։ Անտառները մեծ զանգվածներ են կազմում երկրի հյուսիսային և հարավ-արևմտյան մասերում։ Անտառներով հայտնի են եղել Պատմական Հայաստանի Արցախ, Գուգարք, Տայք, Մոկք նահանգները, ինչպես նաև Սյունիքի, Չորրորդ Հայքի, Աղձնիքի և Այրարատի որոշ մասերը։

Հայկական լեռնաշխարհի ծառատեսակների մեծ մասը լայնատերև է. առանձնապես տարածված են կաղնին, հաճարենին, բոխին, հացենին, կեչին, իսկ Սյունիքի, Գուգարքի և Արցախի անտառներում՝ մեծ քանակությամբ վայրի պտղատու ծառեր և թփեր (առավելապես տանձենի, խնձորենի, սալորենի, հոն, մոշ, մոռ և այլն)։

Որոշ շրջաններում (Մեղրի, Ղափան, Վանա լճի ավազան, Սասուն և այլուր) անտառային պուրակներ են կազմում ընկուզենիները։ Փշատերև խեժատու համեմատաբար ընդարձակ անտառներ կան Սարիղամիշի շրջանում (Կարսից հարավ-արևմուտք, Կարս գետի վերնագավառում)։

Հին Հայաստանում տնկվել են մի քանի անտառ-պուրակներ։ Դրանցից համեմատաբար նշանավոր են եղել Արմավիր մայրաքաղաքի մոտ գտնվող սոսիների պուրակը («Սունյաց անտառը», III դ. մ. թ. ա.), Բագարանի շրջանում «Ծննդոց անտառը» (III դ. մ. թ. ա.) և Արտաշատ—Դվինի մոտ գտնվող արհեստական անտառը, որ տնկվել էր Արշակունի Խոսրով Կոտակի օրոք (330—338 թթ.), կոչվում էր «Խոսրովակերպ անտառ» և տարածվում էր Ազատ ու Վեդի գետերի ջրբաժանի վրա՝ Գառնիի բերդի մոտակայքից մինչև Արաքս։ Վերջինիս մնացորդները պահպանվել են մինչև մեր օրերը։ Դրա տեղում այժմ ստեղծված է ՀԽՍՀ-ի արգելանոցներից մեկը։

Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից ընտանի կենդանիներից տարածված են եղել ոչխարը, այծը, կովն ու եզը, ձին, ոմեշը, ջորին, էշը և թռչուններ։ Վայրի կենդանիներից այստեղ ամենուրեք հանդիպում են աղվեսը, նապաստակը, գայլը, արջը, բորենին, ծայր հարավային շրջաններում պատահել են առյուծ ու վագր։ Առանձնապես հայտնի են քարայծը, վայրի ոչխարը, այծյամը, եղնիկը, վարազը, կաքավը, լորը, բադը, փասյանը, լորամարգին, վայրի հավը և այլն։

Հին և միջին դարերում տնտեսական տեսակետից մեծ նշանակություն էր ձեռք բերել որդի մի փոքրիկ տեսակ, որ ապրում էր Արարատյան դաշտի ճահճուտներում։ Դրանից պատրաստում էին մեր մատենագրության մեջ «որդան կարմիր» կոչված լավագույն որակի կարմիր ներկ, որն այնքան մեծ համբավ ուներ Մերձավոր Արևելքի երկրների շուկաներում։ «Որդան կարմիր»-ի մասին մեծ գովեստով են խոսում նաև արաբ հեղինակները, որոնք այն կոչում են «ալ-կրմզի» («վառ կարմիր»)։ Ներկայումս ՀԽՍՀ-ում բավական քանակությամբ որդան կարմիր են ստանում սննդարդյունաբերության համար։

5. ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհը բնական հարստություններով աշքի ընկնող երկրներից է։ Այստեղ կան հանքային և ոչ հանքային բնական շատ հարստություններ։

Հայաստանը ամենից առաջ հայտնի է եղել իր ոսկեղանի աղով։ Երկրի կեսրակրի աղի 3 հանքավայրերը՝ Կողբը, Կաղզվանը և Նախիջևանը

մարդկությանը հայտնի են հնագույն ժամանակներից։ Կերակրի աղի հանքավայրեր կան նաև Եփրատի ու Վանա լճի ավազաններում։ Մեր օրերում, Ավանի շրջակայքում նույնպես հայտնաբերված են կերակրի աղի պաշարներ։

Հայկական լեռնաշխարհի մի շարք վայրերում տարածված են գունավոր մետաղների՝ պղնձի ու նրան ուղեկցող կապարի ու ցինկի բավական մեծ պաշարներ։ Պղնձի հանքավայրերով առանձնապես նշանավոր են եղել Գուգարքի Տաշիր գավառը, Սյունիքի մի քանի գավառները (Վայոց ձորը, Բաղքը, Զորքը), Այրարատի Վարաժնունիք գավառը (այժմյան Հանքավանի ձորը), Զորրորդ Հայքի հարավային շրջանները, որտեղ մինչև այսօր էլ իրենց նշանակությունը պահպանել են Արղնիի (Արղանամադան) հայտնի պղնձահանքերը։ Խորհրդային իշխանության օրոք ձեռնարկված երկրաբանական լայն թափի հետազոտությունների շնորհիվ Հայկական լեռնաշխարհի մասը կազմող Խորհրդային Հայաստանում հայտնաբերվել են պղնձի, կապարի, ցինկի և այլ մետաղների նոր, մեծ պաշարներ, մոլիբդենի հանքավայրեր (Քաջարան, Ագարակ, Դաստակերտ)։

Հայաստանը երկաթի մշակման հնագույն երկրներից է։ Նրա մեծ ու փոքր հանքավայրերը հարյուրների են հասնում։ Երկաթով հարուստ են եղել Աղձնիք և Տուրուբերան «աշխարհ»-ները։ Առանձնապես նշանավոր էին Աղձնիք և Վասպուրական նահանգների սահմանագլխին գտնվող «Երկաթահատ» կամ «Երկաթահանք» կոչվող հանքերը Վանա լճի հարավային ափին։ Արևմտյան Հայաստանում երկաթի հարուստ հանքավայրեր կան նաև Կարինի (Էրզրում) շրջանում և այլ տեղերում։ Խորհրդային իշխանության տարիներին ՀԽՍՀ-ում հայտնաբերվել են երկաթի մի քանի հանքավայրեր, որոնցից տեխնիկատնտեսական տեսակետից առայժմ ուշադրության արժանի են հատկապես Սվարանցի (Գորիսի շրջանում) և Կապուտանի (Արովյանի շրջանում) հանքավայրերը։

Ներկայումս Հայկական լեռնաշխարհում նշմարվում են ամենատարբեր ժամանակաշրջաններին վերաբերող հին «ձուլարաններ»-ի հետքեր։ Առանձնապես նշանավոր է Մեծամորի հին ձուլարանը, որ գտնվում է Մեծամոր լճի մոտ և գրավում է մի ամբողջ լեռնաճյուղ։ Այստեղ կատարվում են հնագիտական պեղումներ և տեղում ստեղծված էր մի գեղեցիկ ու հարուստ թանգարան, որի նյութերը լույս են սփռում մեր ժողովրդի տնտեսական կյանքի զարգացման հնագույն շրջանի շատ հարցերի վրա։

Նավթ դարձյալ հիշատակվում է Աղձնիք և Տուրուբերան «աշխարհ»-ներում։ Նավթային ավազաններ կան նաև Վան քաղաքից հարավ, Վանա լճի հյուսիս-արևելյան կողմում՝ Բերկրի քաղաքի շրջանում, Կարինում։

Հայկական լեռնաշխարհում քարածխով առանձնապես աչքի են ընկնում Արևմտյան Տիգրիսի և Եփրատի ավազանները։

Ազնիվ մետաղներից Հայաստանում հիշատակվում է ոսկու և արծաթի հանքերի մասին։ Արծաթի հայտնի հանքավայրը գտնվում էր Փոքր Հայքում՝ Գումուշխանեում (համանուն գետի ափին), իսկ ոսկու հանքեր և ոսկեբեր հողեր հիշատակվում են Հայկական լեռնաշխարհի 5 մասերում՝ Սպեր գավառում (Ճորոխ գետի վերնագավառում), Այրարատյան «աշխարհ»-ում, Զորրորդ Հայքի Պաղնատուն գավառում, Հայկական Տավրոսի Վանա լճից հարավ տարածվող հատվածում և Սյունիքի Սոթք գավառում (Սևանա լճի հարավ-արևելյան կողմում)։ Դրանցից առանձնապես հռչակված են եղել Սպերի ոսկու հանքերը։ Այս հանքավայրերը քաջ հայտնի էին դեռևս Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակներում (336—323 թթ. մ. թ. ա.)։

Պակաս նշանավոր չէր նաև Սոտքի (Զոդ) հանքավայրը, որը նույնպես շահագործվել է հին ժամանակներից։ Ոսկին և արծաթը դրպես ուղեկցող մետաղներ հանդես են գալիս նաև գունավոր մետաղների գրեթե բոլոր հանքավայրերում։

Հայկական լեռնաշխարհի զանազան մասերում, հատկապես հրաբխային շրջաններում և գունավոր մետաղների հանքավայրերում, տարածված են մեծ քանակությամբ ծծումբ, քրոմիտ, բնական ներկեր և այլն։ Վանա լճի հարավային մասում կային կապարի հարուստ հանքեր, իսկ Վան քաղաքից հարավ երկրի անագի ամենահայտնի հանքավայրն էր։

Հին և միջին դարերում շահագործման են ենթարկվել միայն մի քանի տեսակի հանքանյութեր (պղնձի, երկաթի, արծաթի, ոսկու, կապարի, անագի, բնական ներկանյութեր և այլն), որոշ հանքանյութեր էլ (նավթ, քարածուխ, տորֆ) քիչ քանակությամբ օգտագործվել են միայն կենցաղում։

Բնական մյուս հարստություններից են հանքային ջրերը և շինանյութերը։ Հրաբուխների տարածվածության շնորհիվ Հայկական լեռնաշխարհի գրեթե բոլոր կողմերում բխում են հանքային բազմատեսակ և բազմաթիվ տաք ու սառը աղբյուրներ։ Դրանք հիմնականում ունեն

ածխաթթվային, երկաթային, ծծմբային և ածխաթթվա-ալկալիական բաղադրություն։ Հատկապես նշանավոր են Արզնիի հանքային ջուրը, որի բման վայրում կառուցված է ՀԽՍՀ-ի հայտնի առողջարաններից մեկը, Դիադին քաղաքի շրջակայքի (Մասիսից հարավ-արևմուտք) ծծմբային տաք աղբյուրները, որոնք հնում կոչվում էին Վարշակի ջերմուկներ, ՀԽՍՀ-ի Ջերմուկ քաղաքի տաք աղբյուրները, Երզնկայի ու Էրզրումի հորդաբուխ տաք աղբյուրները և այլն։ Միայն Խորհրդային Հայաստանում ներկայումս հայտնի են տարբեր բաղադրություն և ջերմություն ունեցող հարյուրավոր հանքային աղբյուրներ։ Դիլիջանի, Կիրովականի անտառապատ ձորերում, Սևանա լճի ափերին, Զանգեզուրում, Արփա ու Մարմարիկ գետերի ավազաններում, տասնյակ այլ տեղերում ցրված են բազմաթիվ նվազ ու հորդաբուխ ածխաթթվա-ալկալիական աղբյուրներ։ Հին և միջին դարերում ժողովուրդը այդ աղբյուրների մի մասից օգտվել է բուժվելու նպատակներով։

Հայկական լեռնաշխարհը կարելի է համարել բնական շինանյութերի հսկայական ու անսպառ պահեստ։ Ավազը, կավը և կրաքարերը տարածված են գրեթե ամենուրեք։ Կան տարբեր տեսակի ու գույնի մարմարներ (Երևանի մոտ, Արզականում, Խորվիրապում և այլուր), որոնք իրենց որակով աշխարհի լավագույն մարմարների թվին են պատկանում։ Հրաբխային վայրերում տարածված են տարբեր գույնի տուֆեր, որոնց պաշարները համարում են անսպառ։ Տուֆերից ամենից հայտնին Արթիկի վարդագույն տուֆն է։ Պակաս տարածում չունեն նաև գրանիտը, բազալտը, գիպսը, պեռլիտները։ Պեմզայի հարուստ պաշարներ կան այժմյան Անիի և Արթիկի շրջաններում։ Շինանյութերի բարձր որակն ու առատությունը՝ նպաստել են Հայկական լեռնաշխարհի բնակիչների շինարարական արվեստի զարգացմանը։

Ինչպես տեսնում ենք Հայկական լեռնաշխարհի բնական պայմանները նպաստավոր են տնտեսական կյանքի բազմակողմանի զարգացման համար։ Նա ունի արգավանդ հողերով ընդարձակ դաշտեր, խոտհարքներ, ալպյան փարթամ արոտավայրեր, ձկնառատ գետեր ու լճեր, հանքային ու ոչ հանքային բազմապիսի հարստություններ։

II ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ

(հնագույն ժամանակներից մինչև 1920 թ.)

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ VI—I ԴԴ. (մ. թ. ա.)

Հայաստան ասելով հասկանում ենք այն տարածքը, որտեղ կազմավորվել, ապրել ու իր պատմությունն է կերտել հայ ժողովուրդը։

Դեռևս վաղ ժամանակներում հայկական պետական միավորումներն ընկնում են աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ (VI—IV դդ. մ. թ. ա.)։ VI դարում (մ. թ. ա.) Դարեհ I-ը պարսկական պետությունը բաժանել էր վարչական մի շարք խոշոր միավորների՝ սատրապությունների, որոնց կառավարիչները կոչվում էին սատրապներ («աշխարհապահ»)։ Վերջիններս ենթարկվում էին Դարեհի բարձրագույն իշխանությանը և իրենց սատրապություններում ունեին վարչական ու դատական իշխանություն։ Հայաստանի նախկին իշխանավորները ստորադրված էին սատրապներին, բայց պահպանում էին իրենց ներքին իրավունքները։

Հայկական ցեղախմբերի բնակության շրջանները, որոնք հույն պատմագիր Հերոդոտը (V դ. մ. թ. ա.) մի ընդհանուր անունով կոչում է Արմենիա, կազմում էին աքեմենյան Պարսկաստանի XIII և XVIII սատրապությունները։ Դրանցից առաջինի մեջ մտնում էին Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանները, այն ժամանակվա բուն Արմենիան (արմենների երկիրը), Հայասա-Ազզին և նրանց հարևան մի քանի գավառներ։ XIII սատրապության հարավային սահմանը հասնում էր Արևմտյան և Արևելյան Տիգրիս գետերը, հյուսիսայինը՝ Սև ծով, արևմտյանը՝ Եփրատ, իսկ արևելյանը՝ հավանաբար Արածանիի միջին հոսանքն ու Բասենի դաշտը։ Դրա հարավային մասը կազմում էր Արմենիան, որ Եփրատից սկսած դեպի հարավ-արևելք և արևելք ձգվում էր 56,5 փարսախ (մոտ 320 կմ), իսկ հյուսիսայինը Հայասա-Ազզին էր, որը տարածվում էր Արևմտյան Եփրատի հովտում ու Ճորոխ գետի վերնագավառում։ Սև ծովի հարավ-արևելյան առափնյա լեռնային շրջանները նույնպես մտնում էին այդ սատրապության մեջ։

Իսկ XVIII սատրապությունը, ինչպես վկայում է Հերոդոտը, կազմված էր մատիենների, սասպեյրների և ալարոդների երկրներից։ Ընդհանուր ձևով կարելի է ասել, որ մատիենները բնակվում էին Վանա և Ուրմիա լճերի միջև, ալարոդները՝ Վանա լճի ավազանում, Արարատյան դաշտում և դրանից արևելք, իսկ սասպեյրները՝ Սպերի և Տայքի կողմերում։

Քսենոփոնի հիշատակության համաձայն Արմենիան իր ժամանակներում՝ V դ. վերջերին (մ. թ. ա.) բաժանվում էր 2 սատրապության՝ Արևելյան Արմենիայի և Արևմտյան Արմենիայի։ Ուսումնասիրողները գտնում են, որ Քսենոփոնի հիշատակած Արևելյան Արմենիան համապատասխանում է նախկին XVIII սատրապությանը, իսկ Արևմտյան Արմենիան՝ XIII-ին։

Սելևկյանների տիրապետության ժամանակներում (մ. թ. ա. IV դարի վերջերից մինչև II դ. սկզբները) Հայաստանը բաղկացած էր 3 հիմնական մասերից՝ Փոքր Հայք, Տոպք և Մեծ Հայք։ Սրանցից Փոքր Հայքը և Մեծ Հայքի հյուսիսային մասը ինքնուրույն էին և կառավարվում էին տեղական թագավորների կողմից։ Մեծ Հայքի Արարատյան թագավորությունում իշխում էին Երվանդունի թագավորները, որոնք Արարատյան դաշտում կառուցել էին մի քանի բերդեր և քաղաքներ (Երվանդաշատ, Երվանդակերտ, Բագարան և այլն)։ Այդ նույն ժամանակներում Տոպքը կազմված էր Արևմտյան Տիգրիսի վերին հոսանքի և ստորին Արածանիի մերձակա շրջաններից։

Մեծ Հայքն իր մեջ ընդգրկում էր հետագայում Աղձնիք, Տուրուբերան, Այրարատ, Մոկք կոչված «աշխարհ»-ները, Վասպուրականի Ռըշտունիք գավառը, ինչպես և Վանա լճից հարավ-արևելք ընկած բազմաթիվ շրջաններ։ Բավական մեծ տարածք ուներ նաև Փոքր Հայքը։ Այն կազմված էր Ալիս գետի վերնադավառից, Գայլ գետի ավազանից և հետագայում Բարձր Հայք կոչված աշխարհի արևմտյան ու հյուսիս-արևմտյան մեծ մասից, որն ընդմիշտ Մեծ Հայքին միացվեց Արտաշես I-ի (II դ. մ. թ. ա.) և Տիգրան II-ի (95—56) օրոք։

Սելևկյանների տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսական, մշակութային, հասարակական կյանքը բավական առաջադիմում է։ Հայ ժողովուրդն սկսում է ամեն մի առիթ օգտագործել միանգամայն ինքնուրույն պետականության հասնելու համար։

190 թ. (մ. թ. ա.) Մագնեզիայի մոտ Հռոմի կողմից սելևկյան թագավոր Անտիոքոսի կրած ծանր պարտությունից օգտվելով, իրենց անկախ հայտարարեցին Մեծ Հայքի Արտաշես և Տոպքի Զարեհ կառավարիչները։ Կազմվեցին Մեծ Հայքի և Տոպքի թագավորությունները։ Իսկ Փոքր Հայքը դրանից տասնամյակներ առաջ էր ձեռք բերել ինքնուրույն պետականություն։

Հայկական այդ 3 թագավորությունների մեջ ամենաընդարձակն ու զորեղը Մեծ Հայքն էր, որն իր հզորության գագաթնակետին հասավ Տիգրան II-ի (95—56 թթ. մ. թ. ա.) ժամանակ։ Տիգրան II-ն իր պետությանը միացրեց Տոպքի թագավորությունը, 70 հովիտներ Պարսկաստանից (հետագայում այդ 70 հովիտները կոչվեցին Պարսկահայք «աշխարհ»), Կորդված «աշխարհ»-ը (հարավային կողմում) և Փոքր Հայքի արևելյան մի քանի գավառները, որոնք հետագայում կազմեցին Կարնո «աշխարհ»-ի (Բարձր Հայք) մասերը։ Տիգրան II-ի ժամանակ բուն հայկական պետության սահմանները հյուսիսում ձգվում էին մինչև Կուր գետը, հարավում՝ Կորդված և Մասիուս լեռները, արևմուտքում՝ Եփրատ գետը, իսկ արևելքում՝ Կասպից ծով և Ուրմիա լիճն ու նրանից հյուսիս-արևելք ձգվող լեռնաշղթան։ Տիգրան II-ի ժամանակներից ի վեր, նշված սահմաններում ամփոփված երկիրը հայտնի է դարձել Մեծ Հայք կամ Հայաստան (հետագայում՝ Պատմական Հայաստան) անունով։

Արտաշեսյանների թագավորության շրջանում (II դ. մ. թ. ա., I դ. մ. թ.) Հայկական պետությունը վարչականորեն բաժանված էր երկու խոշոր մասերի՝ ներքին գավառների և արտաքին երկրների։ Արտաքինի մեջ մտնում էին Արվաստանի (Մծբին քաղաքի շրջակայքը), Կորդուքի, Նոր Շիրականի, Գուգարքի, Տոպքի և Աղձնիքի բդեշխությունները, որոնք վասալական կախում ունեին հայոց թագավորներից և պարտավոր էին պաշտպանել Հայկական պետության սահմանները։ Բդեշխի պաշտոնը սովորաբար ժառանգական էր։ Իսկ պետության կենտրոնական շրջանների վարչական վիճակն այլ էր։ Այստեղ կառավարիչներ էին նշանակվում հայոց թագավորի կողմից։ Կառավարիչները սովորաբար նշանակում էին բանակի բարձր հրամանատարական կազմի ներկայացուցիչներից և ամենաազդեցիկ հողատիրական տոհմերի ավագանուց։ Ենթադրվում է, որ Արտաշեսյանների ժամանակաշրջանի վարչական բաժանման հիմքում հիմնականում ընկած էր ռազմական գործը, երկրի պաշտպանության հոգսը և այդ պատճառով էլ նրա վարչական շրջանները համապատասխանում ու համընկնում էին ռազմական շրջաններին։

Արտաշեսյանների ժամանակ Հայաստանն ուներ երկու մայրաքաղաք՝ Արտաշատը, որ կառուցվել էր Արտաշես I-ի օրոք (մոտավորապես

մ. թ. ա. 166 թ.) և Տիգրանակերտը՝ հիմնադրված Տիգրան II-ի ժամանակ (մ. թ. ա. 77 թ.)։

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ I—VII ԴԴ.

Հայկական պետության սահմանները Արշակունիների թագավորության շրջանում (I—V դդ. մ. թ.) հարավ-արևելքում հասնում էին Զինթա ամրոցը (Քելիշինի լեռնանցքի շրջանում) և Ատրպատականի Գանձակ քաղաք (Մարաղայից հարավ), հարավում՝ Կորդվաց լեռներ և Արևմտյան Տիգրիս, հյուսիսում՝ Կուր գետ, իսկ արևմուտքում՝ Եփրատ։ Այդ սահմանները գրեթե անփոփոխ մնացին մինչև Հայաստանի առաջին բաժանումը (387 թ.)։

Պետության մայրաքաղաքներն այդ դարերում Արտաշատն ու Վաղարշապատն էին, շհաշված շատ կարճատև գոյություն ունեցած Արշակավանը, որ մի քանի տարի մայրաքաղաքի դեր էր կատարում Արշակ II-ի ժամանակ, և ժամանակավոր աթոռանիստները, որոնք փաստորեն սոսկ ամառանոցներ էին հայոց թագավորների համար։

Երկարաձիգ պատերազմներից հետո Հռոմն ու Սասանյան Պարսկաստանը 387 թ. Հայաստանը բաժանում են իրար մեջ։ Այդ բաժանմամբ, որ պատմության մեջ հայտնի է առաջին քաղաքական բաժանում անունով, երկրի $^4/_5$-ը անցավ պարսիկներին, իսկ $^1/_5$-ը Հռոմեացիներին։ Սահմանը երկու պետությունների միջև անցնում էր Մծբին—Կարին (այժմ Էրզրում) գծով։ Այդ գծի ուղղությամբ թե՛ հռոմեական և թե՛ պարսկական մասում կային և կառուցվեցին մի շարք բերդաքաղաքներ ու բերդեր։ Այսպես, պարսկական մասում էին գտնվում Մծբին ու Արզն ամրացված քաղաքները, Ակբա, Ամիտ, Խլոմար, Բոլ (կամ Բող) բերդերը և այլն, իսկ հռոմեական մասում՝ Մարտիրուպոլիս (Տիգրանակերտ), Դարա կամ Անաստասուպոլիս ու Կարին քաղաքները, Աթթախ, Փիս, Կթառիճ, Արտալես (կամ Արտալեսոն) բերդերը և այլն։

Հայաստանի 387 թ. բաժանման գծից արևմուտք ընկած հատվածը հայտնի դարձավ Արևմտյան Հայաստան (հաճախ սխալմամբ կոչել են նաև Հռոմեական, Բյուզանդական Հայաստան), իսկ արևելյանը՝ Արևելյան Հայաստան (որը դարձյալ սխալմամբ կոչել են Մարզպանական Հայաստան, Պարսկահայաստան) անուններով։

Արևմտյան Հայաստանը Հռոմեական կայսրության կողմից գրավվելու ժամանակի և նրանից ունեցած կախվածության աստիճանով բաժանված էր երեք կարգի վարչատարածքային միավորների՝ ինքնավար նախարարությունների (կամ Սատրապական Հայաստան), Ներքին Հայքի և Փոքր Հայքի։ Թվով 6 ինքնավար նախարարությունները (մեծ Սոփք, Անգեղտուն, Անձիտ և այլն) միասին վերցրած իրենց տարածքով համապատասխանում էին Սոփքին, դրանք կայսրության կողմից զավթվել էին մոտավորապես 374 թվականին, Պապ թագավորի շրջանենգ սպանությունից հետո, և ներքին կյանքում կատարյալ ինքնուրույն էին։ Ներքին Հայքը, որ հռոմեացի ու բյուզանդացի հեղինակները կոչել են նաև «Մեծ Հայք» և համապատասխանում էր հետագայի Բարձր Հայք «աշխարհ»-ին, Հռոմի կողմից զավթվել էր 387 թվականին։ Սա նույնպես ուներ ներքին ինքնուրույնություն։ Իսկ Փոքր Հայքը վաղուց էր միացված կայսրությանը և կորցրել էր բոլոր կարգի ինքնուրույնությունները։ Այն եթե III դարի վերջերին (մ. թ. ա.) ձեռք էր բերել անկախություն, ապա 112 թ. (մ. թ. ա.) գրավվել էր Միհրդատ Եվպատորի կողմից, իսկ 66 թ. (մ. թ. ա.) Պոմպեոսի հետ միասին գրավեց հռոմեական զորավար Պոմպեոսը։ Սկզբնական շրջանում Փոքր Հայքը Հռոմի ձեռքին դարձավ պարզևանքի առարկա, ապա միացվեց կայսրության Կապադովկիա պրովինցիային, III դարի վերջերից դարձավ կայսրության մեջ մտնող առանձին պրովինցիա, իսկ Թեոդոս կայսեր օրոք (379—395) բաժանվեց երկու պրովինցիայի՝ Առաջին Հայքի՝ Սեբաստիա կենտրոնով և Երկրորդ Հայքի՝ Մալաթիա (Մելիտինե) կենտրոնով։

Այդպիսի դրությամբ բուն Արևմտյան Հայաստանի ու Փոքր Հայքի վարչական վիճակը մնաց մինչև բյուզանդական Հուստինիանոս կայսեր (527—565) ժամանակները։ Բռնակալ Հուստինիանոսը, որ կայսրության հիմքը համարում էր զենքն ու օրենքը, կատարեց օրենսդրական, դատական, ռազմական և վարչական վերափոխումներ։ 529 թ. հրովարտակով բյուզանդական կայսրության ենթակա հայկական բոլոր երկրները՝ Առաջին Հայքը, Երկրորդ Հայքը, Ներքին Հայքը և Նախարարական Հայաստանը ռազմական առումով միացվեցին և դարձվեցին ռազմական մի շրջան՝ ստրատեգի (կամ մագիստրոս) գլխավորությամբ։ Ստրատեգի աթոռանիստը Թեոդոսուպոլիս (Կարին) բերդաքաղաքն էր։ Նրան էին ենթարկվում բյուզանդական Հայաստանի մնացած բոլոր պաշտոնյաները։ Բոլոր տեղերում վերացվեցին հայկական նախարարական զորքերը և դրանց փոխարեն երկրի բերդերում ու բերդաքաղաքներում (Թեոդոսուպոլիս, Մարտիրուպոլիս, Սատաղ, Մելիտինե) զետեղվեցին կայսերական լեգիոններ։

Ռազմական վերակազմությունից 7—8 տարի անց Հուստինիանոսը կատարեց վարչական վերափոխություն, որը առաջինից շատ ավելի վատ հետևանքներ ունեցավ Արևմտյան Հայաստանի բնակչության կյանքում։ Վարչական վերափոխության մասին եղած հրովարտակով բյուզանդական կայսրությանը ենթակա հայկական նշված չորս երկրները դարձվեցին վարչական չորս շրջաններ՝ պրովինցիաներ՝ Առաջին Հայք (Հուստինիանուպոլիս կենտրոնով), Երկրորդ Հայք (Սեբաստիա կենտրոնով), Երրորդ Հայք (Մալաթիա կենտրոնով) և Չորրորդ Հայք (Մարտիրուպոլիս կենտրոնով)։ Առաջին Հայքը հիմնականում կազմվեց նախկին Ներքին Հայքից, Երկրորդ Հայքը՝ նախկին Փոքր Հայքի Առաջին Հայքից, Երրորդ Հայքը՝ նախկին Փոքր Հայքի Երկրորդ Հայքից, իսկ Չորրորդը՝ նախարարական (կամ Սատրապական) Հայաստանից։

Ստեղծված չորս պրովինցիաների կառավարիչները նշանակվում էին կայսրի կողմից, իսկ 536 թ. մարտի 18-ի հրովարտակով, որ վերաբերում էր ամուսնության ու ժառանգական կարգին, հայ նախարարները զրկվեցին քաղաքական իշխանությունից, հայկական իշխանությունները տրոհվեցին, փոշիացան ու կորցրեցին իրենց դերն ու նշանակությունը։

591 թ. կատարվում է Հայաստանի երկրորդ բաժանումը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև։ Դրանով Հայաստանի մեծագույն մասն անցավ Բյուզանդիային, բայց շուտով վրա հասած արաբական արշավանքները խանգարեցին կայսրությանը նոր տիրապետած հայկական հողերում հօգուտ իրեն էական փոփոխություններ կատարելու։

Եթե Արևմտյան Հայաստանում 387 թ. բաժանումից երկու տարի անց վերացվեց հայկական ինքնուրույն թագավորությունն, ապա Արևելյան Հայաստանում հայկական ինքնուրույն թագավորությունն իր գոյությունը պահպանեց մինչև 429 թվականը։ Ավելին, Արևելյան Հայաստանում, հայկական թագավորության վերացումից հետո, սասանյան արքայից արքաների կիրառած պարսկացման քաղաքականությունը գլխովին տապալվեց։ Հայ ժողովուրդն ազատագրական հուժկու պատերազմներով կարողացավ մինչև վերջ պահպանել իր ներքին ինքնուրույնությունը։

VII դարում սասանյան ամբողջ պետությունը բաժանված էր չորս երկրամասի (քուստակի)՝ արևելյան, արևմտյան, հյուսիսային և հարավային։ Յուրաքանչյուր քուստակ ուներ երկու բարձրաստիճան պաշտոնյաներ, դրանք էին՝ «պատգոսպան»-ը վարչական գծով, և «սպայապետ»-ը՝ զորքերի գլխավոր հրամանատարը։ Հայաստանը, Ատրպատականը, Վրաց աշխարհն ու Աղվանքը մտնում էին Հյուսիսային կամ

Կապկոհ (Կովկասյան) քուստակի մեջ, որի կենտրոնը Ատրպատականի Գանձակ քաղաքն էր (Ուրմիա լճից հարավ-արևելք)։ Հայաստանի գլխավոր կառավարիչը՝ մարզպանը, նշանակվում էր սասանյան արքունիքի կողմից։ Մարզպանից հետո բարձր պաշտոններ էին համարվում նաև զորքերի գլխավոր հրամանատարությունը՝ սպարապետությունը և հազարապետությունը, որը զբաղվում էր երկրի տնտեսական, մշակութային և շինարարական աշխատանքներով։ Թե՛ սպարապետը և թե՛ հազարապետը ստորադրված էին մարզպանին և ենթարկվում էին վերջինիս։ Մարզպանների նստավայրը մինչև V դարի կեսը Արտաշատն էր, իսկ դրանից հետո դարձավ Դվինը։

484 թ. Նվարսակում Վահան Մամիկոնյանի և պարսից արքունիքի միջև կնքված պայմանագրից սկսած, Հայաստանի մարզպանությունը կոչվեց «Տանուտիրական երկիր», իսկ մարզպանը՝ «Հայոց տանուտեր»։ Այդ պայմանագրով փաստորեն երկիրը ձեռք բերեց կիսանկախ վիճակ։

Հայ նախարարները պարսկական արքունիքում ունեին իրենց զահերը, իրենց համապատասխան աստիճանները, որ Արշակունիների նախկին արքունիքում ունեցած զահերի համեմատությամբ ցածր էին։

Արևելյան Հայաստանի տարածքը մարզպանների տիրապետության շրջանում (429—640) զգալի չափով փոքր էր հայ Արշակունիների տիրապետության շրջանում եղած տարածքից։ Հայաստանը տնտեսապես և քաղաքականապես թուլացնելու նպատակով սասանյանները նրա ծայրամասային նահանգները միացրին այլ մարզպանությունների։

Հայաստանի առաջին բաժանման սահմանը ուժի մեջ մնաց մինչև 591 թվականը, երբ կատարվեց երկրորդ բաժանումը, ըստ որի Բյուզանդիան կարողացավ պարսիկներից խլել Հայաստանի մարզպանության մեծ մասը՝ կենտրոնական նահանգները՝ Այրարատյան աշխարհի խոշորագույն մասը մինչև Դվին, Տուրուբերանը և Տայքը։ Սակայն 591 թվականի բաժանումից հետո, մինչև արաբական արշավանքներն ընկած տասնամյակներում, Արևելյան Հայաստանի ներքին կյանքի և վարչական վիճակի մեջ շոշափելի փոփոխություններ տեղի չունեցան։

Ֆեոդալական Հայաստանը, IV—VII դարերի նախարարական (ֆեոդալական) տներին համապատասխան, մասնատված էր տասնյակների հասնող մանր և համեմատաբար խոշոր վարչատարածքային միավորների։ Ամեն մի ֆեոդալական-նախարարական տուն ուներ իր «աշխարհ»-ը, «գավառ»-ը (կամ գավառները)։ Նրանք համարվում էին իրենց «աշխարհի» կամ գավառի տերերը։ Հայաստանի IV—V դարերի կարևոր նախարարական տներից էին՝ Բագրատունիները, որոնք իշխում էին

Սպեր, Բագրևանդ և ապա Կոգովիտ գավառներում, Մամիկոնյանները՝ Տայք աշխարհում և Տարոն գավառում, Կամսարականները՝ Արշարունիք և Շիրակ գավառներում, Ամատունիները՝ Արտազ գավառում, Մարդպետունի նախարարները՝ Մարդպետական աշխարհում (Վասպուրականի հյուսիսային և հյուսիս-արևմտյան մի քանի գավառները միասին վերցրած), Ռշտունիները՝ Ռշտունիք և Տոսպ գավառներում, Սյունյաց նախարարները՝ Սյունիք աշխարհում, Արծրունիները՝ Աղբակ գավառում։ Մոկաց նախարարները՝ Մոկք աշխարհում, Խոռխոռունիները՝ Խոռխոռունիք գավառում, Աբեղյանները՝ Աբեղյանք գավառում։ Գաբեղյանները՝ Գաբեղյանքում, Հավնունիները՝ Հավնունիքում և այլն։ Գուգարքի բդեշխները իշխում էին Գուգարք աշխարհում, Նոշիրականի (կամ Նոր Շիրական) բդեշխները՝ Նոշիրականում (հետագայում՝ Պարսկահայք), Աղձնիքի բդեշխները՝ Աղձնիք աշխարհում, Ծուփքի բդեշխները՝ Ծուփաց աշխարհում, իսկ Արշակունիների արքայական տունը տիրում էր Այրարատյան աշխարհի մեծագույն մասին (Ճակատք, Մասյացոտն, Արագածոտն, Ոստան, Շարուր, Կոտայք, Նիգ և մի քանի այլ գավառների)։

Մարզպանների տիրապետության շրջանում (V—VII դդ.) հին նախարարական տների ճյուղավորման և նորերի առաջացման հետևանքով ավելի է մասնատվում երկրի տարածքը։ Արաբների տիրապետության ժամանակ, բացի հայկական ֆեոդալական տներից, Հայաստանի տարբեր մասերում հանդես են գալիս նաև արաբա-պարսկական վարչաքաղաքական միավորումներ՝ էմիրություններ, բայց դրա հետ միաժամանակ վերանում են (հատկապես VIII դ. վերջին քառորդից սկսած) հայկական իշխանական բազմաթիվ տներ։

Հին Հայաստանի գավառաբաժանման մասին ամբողջական տեղեկություններ է հաղորդում VII դարի հեղինակ Անանիա Շիրակացին իր «Աշխարհացույց»-ում, որտեղ Մեծ Հայքը նկարագրված է Արշակունիների թագավորության սահմաններով։ Ըստ «Աշխարհացույց»-ի Մեծ Հայքը բաղկացած էր 15 փոքր «աշխարհ»-ներից, որոնք բոլորը միասին ունեին 187—193 գավառ։ Երկրի «աշխարհաբաժանման» ու գավառաբաժանման համար հիմք են ծառայել և՛ նրա քաղաքական ու պատմական իրավիճակը, և՛ բնական պայմանները։ «Աշխարհացույց»-ի համաձայն, Մեծ Հայքը բաղկացած էր հետևյալ 15 «աշխարհներից»՝ Բարձր Հայք կամ Կարնո աշխարհ, Ցորոդ Հայք, Տայք, Տուրուբերան կամ Տարոնի աշխարհ, Աղձնիք, Գուգարք, Այրարատ, Վասպուրական, Մոկք, Կորնեք կամ Կորդվաց աշխարհ, Ուտիք, Արցախ, Սյունիք, Պարսկահայք և Փայտակարան։

«Աշխարհացույց»-ի «աշխարհաբաժանումը» հայ հեղինակների մոտ գործածության մեջ է մնացել մինչև XVIII—XIX դարերը, չնայած այդ ընթացքում երկրի վարչատարածքային բաժանումը բազմիցս արմատական փոփոխության է ենթարկվել։ Այդ նկատի ունենալով, պատմական Հայաստանի նշանավոր գավառներն ու հայոց պատմության հիշարժան մյուս վայրերը ընթերցողին պիտի ներկայացնենք «Աշխարհացույց»-ի աշխարհաբաժանման հիմքի վրա։

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ VII—IX ԴԴ.

VII դարի առաջին քառորդում կազմավորված Արաբական խալիֆայությունը մի շարք ավերիչ արշավանքներից հետո VIII դ. սկզբին իր ծանր լուծն է հաստատում Հայաստանում։ Շուտով նա հիմնովին փոփոխում է Հայաստանի վարչաքաղաքական համակարգը։ Ըստ այդ նոր վարչակարգի խալիֆայության տիրապետության տակ ընկած Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը միասին կազմեցին մեկ փոխարքայություն, որը կոչվեց «էրմենիա» (Արմենիա)։ էրմենիա փոխարքայության կենտրոնը Դվինն էր։ Այստեղ էին նստում խալիֆի նշանակած փոխարքաները՝ էմիրները (ըստ հայ պատմագիրների «ոստիկաններ»)։ էրմենիա փոխարքայությունը բաժանված էր չորս մեծ մարզերի։ Դրանցից մեկը Աղվանքն էր, երկրորդը՝ Վրաստանը, իսկ III և IV մարզերը կազմված էին Հայաստանի տարածքից, ընդ որում III-ն իր մեջ ընդգրկում էր նախկին Այրարատյան աշխարհն ու Վասպուրական աշխարհի մեծ մասը, իսկ IV մարզը՝ Վան քաղաքի շրջակայքը, Ռշտունիք գավառն ու նախկին Տուրուբերան «աշխարհ»-ը։ Սյունիքը (Սիսական) մտցրել էին առաջին մարզի (Աղվանքի) մեջ, իսկ Տուրուբերան աշխարհի Տարոն գավառը միացվեց այլ միավորի։

էրմենիայի այդ չորս մարզերի կառավարիչները ստորադրված էին ոստիկան-փոխարքային։ Մարզերն իրենց հերթին մասնատված էին վարչական ավելի փոքր միավորների, որոնք նույնպես ունեին իրենց կառավարիչները։

Խալիֆայությունը ամեն կերպ ձգտում էր վերացնել տեղական իշխանությունները։ Այդ քաղաքականության հետևանքով VIII դ. երկրորդ կեսին ասպարեզից վերանում են հայկական մի շարք իշխանական տներ՝ Մամիկոնյան, Կամսարական, Ամատունի և այլն։ Դրա հետ միասին, իր համար հուսալի հենարան ստեղծելու նպատակով խալիֆայությունը

արաբական մի քանի ցեղեր է փոխադրում և բնակեցնում Հայաստանի տարածքում։ Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում հզորանում և մեծաթիվ գավառների տեր են դառնում հայկական իշխանական երեք տներ՝ Բագրատունիները, Արծրունիները և Սյունյաց իշխանները։

IX դարի վերջերին Բագրատունիները փաստորեն դարձել էին Արևելյան Հայաստանի մեծ մասի և դրան հարակից մի շարք գավառների տերերը։ Արծրունիները իշխում էին ամբողջ Վասպուրականում և Մոկաց ու Պարսկահայք աշխարհների մեծ մասում, իսկ Սյունյաց իշխանները՝ ամբողջ Սյունիքում։ Հայաստանում կազմված արաբական էմիրություններից (իշխանություններից) նշանավոր էին միայն Աղձնիքի (որ գրավում էր նախկին Աղձնիք աշխարհը առանց նրա Սասուն գավառի), Կայսիկների (Վանա լճի հյուսիս-արևմտյան կողմում) և Ութմանիկների (Վանա լճի հյուսիս-արևելյան կողմում) էմիրությունները։ Իսկ Արևմտյան Հայաստանը առաջվա նման գտնվում էր Բյուզանդիայի տիրապետության տակ, միայն արաբաբյուզանդական սահմանը Հայաստանի հարավ-արևմտյան շրջաններում մշտական պատերազմների հետևանքով հաճախակի ենթարկվում էր փոփոխությունների։ Արևմտյան Հայաստանը ստրատեգիական տեսակետից Բյուզանդիայի համար ուներ առանձնահատուկ նշանակություն։ Արևմտյան Հայաստանի (որի կազմի մեջ մտնում էին նախկին Առաջին Հայքը, Երկրորդ Հայքը և Չորրորդ Հայքի մեծագույն մասը), Պոնտոսի և Կապադովկիայի (Գամիրք) տարածքներից կազմվեց մի ռազմական շրջան՝ թեմ, որը կրում էր «Հայկական թեմ» («Արմենիակոն») անունը։

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ IX Դ. ԿԵՍԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 1045 Թ.

Արաբական խալիֆայության ընդհանուր թուլացման պայմաններում Հայաստանի ժողովրդաազատագրական պատերազմները IX դարի երկրորդ կեսին ավարտվում են հաղթանակով։ Հայաստանը ձեռք է բերում վաղուց կորցրած քաղաքական անկախությունը և թևակոխում զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանը (IX—XIII դդ.)։ Երկրի տնտեսական ու մշակութային կյանքում կատարվում են հսկայական տեղաշարժեր՝ զարգանում են գյուղատնտեսությունը, արհեստները, քաղաքները, առևտուրը։ Առաջընթաց է կատարվում գրականության, գիտության, ճարտարապետության բնագավառում։

Այնուամենայնիվ, IX—XI դարերում չհաջողվեց ստեղծել մի միաձույլ պետություն։ Այդ ուղղությամբ Բագրատունի առաջին թագավորների ձեռք բերած հաջողությունները տևական չեղան և ֆեոդալական վերնախավին հաջողվեց երկիրը մասնատել առանձին թագավորությունների ու իշխանությունների։ Դրանց մեջ կենտրոնականը և իր նշանակությամբ ամենից բարձրը Անի—Շիրակի թագավորությունն էր, որին և ձևականորեն ենթարկվում էին մյուս թագավորություններն ու իշխանությունները։ Եթե Բագրատունիների թագավորության առաջին տասնամյակներում ամբողջ երկիրը միավորվում էր մի պետության մեջ, ապա X դարում նրանից անջատվեցին և առանձին թագավորություններ դարձան Վասպուրականը (908 թ.), Վանանդը (963 թ.), Սյունիքը (970 թ.) և Տաշիր—Զորագետը (972 թ.)։

Անի—Շիրակի թագավորությունն իր տարածքի առավելագույն չափին և հզորության գագաթնակետին է հասնում Դավիթ I-ի օրոք (990—1020)։ Նրա ժամանակ թագավորության սահմանները արևմուտքում ձգվում էին մինչև Բասենի գավառը, հարավում՝ Մանազկերտ քաղաքը, իսկ հյուսիսում՝ մինչև Շամքոր քաղաքը։ Բացի դրանից, Անի—Շիրակի թագավորությանն էին ենթարկվում և նրա վասալներն էին մի քանի մանր թագավորություններ ու իշխանություններ։ Դրանց մի մասը՝ Խաչենի (1003 թվականից), Կոգովիտի (1001 թվականից), Բագրևանդի ու Գարդմանի իշխանությունները, Գողթնի էմիրությունը մտնում էին անմիջապես Անի—Շիրակի թագավորության մեջ, իսկ մի քանիսը (Վանանդի թագավորություն, Տաշիր—Զորագետի թագավորություն, Կայսիկների էմիրություն, Տարոնի իշխանություն) համարվում էին նրա վասալները։ Ձևականորեն Անի—Շիրակի Բագրատունի թագավորները սյուզերեն էին համարվում նաև Վասպուրականի ու Սյունիքի թագավորների համար։

Պետության գլուխ կանգնած էր Բագրատունի թագավորը, որն օժտված էր ինքնակալի բոլոր իրավունքներով և թագադրվում էր ժառանգական կարգով։ Երկրի մյուս ամենաբարձր պաշտոններն էին՝ իշխանաց-իշխանի, սպարապետի, մութսիրի և մարզպանի պաշտոնները։ Դրանցից առաջինի գործունեության շրջանակների մեջ էին մտնում հարկերի նշանակումն ու հավաքել տալը, արքայական ընտանիքի կալվածքների և արքունի գանձարանի հսկողությունը, «բերդապահներ»-ի, քաղաքապետների (բացառությամբ մայրաքաղաքի քաղաքապետի) նշանակումն ու նրանց գործունեությանը հսկելը։ Սպարապետը, որ սովորաբար կոչվել է «Հայոց սպարապետ», ամբողջ երկրի ռազմական

ուժերի գերագույն հրամանատարն էր, թեպետ հաճախ պատերազմների ժամանակ գլխավոր հրամանատարի պաշտոնով հանդես էին գալիս նաև Անի—Շիրակի թագավորները։

Իրենց ներքին կյանքում Բագրատունի թագավորների վասալներն ունեին տիրակալական լայն իրավունքներ։ Իշխանները նույնպես ունեին իրենց ենթակաները, որոնք ևս խոշոր հողատերեր էին։

Վարչական կարգը այդպիսին էր նաև մյուս ֆեոդալական թագավորություններում։

Օգտվելով Հայաստանի մասնատված դրությունից և ֆեոդալական իշխանությունների երկպառակություններից, Բյուզանդական կայսրությունն աստիճանաբար գրավում է նրա մասերը և XI դ. 40-ական թվականների սկզբներին ուղղակի սպառնում է Անի մայրաքաղաքին։ 1041—1043 թթ. բյուզանդական մեծաթիվ զորքերը երեք արշավանք են կատարում Անին գրավելու և Հայաստանի անկախությանը վերջ տալու համար։ Պետական անկախությունն ու հարազատ մայրաքաղաքը պաշտպանելու համար ոտքի են կանգնում Անիի և նրա շրջակայքի բազմահազար բնակիչներ։ Զինված ժողովուրդը, սպարապետ Վահրամ Պահլավունու գլխավորությամբ, երեք անգամ ջարդում և ետ է շպրտում բյուզանդական նվաճողական բանակները։ Ժողովուրդը հերոսաբար ետ է մղում նաև 1045 թ. ձեռնարկված նոր գրոհները, սակայն վերջ ի վերջո Բյուզանդիային հաջողվում է գրավել Անի քաղաքն ու ամբողջ Շիրակի թագավորությունը։

V դարից ի վեր Արծրունիները Վասպուրականում քայլ առ քայլ ընդարձակում են իրենց իշխանության սահմանները։ Նրանք մեծ թվով գավառների տիրացան մանավանդ արաբական տիրապետության շրջանում (VII—IX դդ.)։ IX դ. առաջին կեսում Արծրունիների իշխանության սահմաններն արդեն հասնում էին հյուսիսում Արաքս գետին, հարավում՝ Մեծ Զաբ գետին, արևելքում Ուրմիա լճին, իսկ արևմուտքում՝ Վանա լճին։ Պատրվակ դարձնելով Նախիջևան քաղաքի շուրջը Սյունյաց իշխանության հետ ունեցած հակասությունները՝ Դավիթ Արծրունի իշխանը 908 թ. ապստամբում է Բագրատունիների կենտրոնական թագավորության դեմ և Ատրպատականի էմիր Յուսուֆի օժանդակությամբ իրեն հռչակում Վասպուրականի անկախ թագավոր։ Բայց Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը կենտրոնական թագավորությունից անկախ մնաց միայն 14 տարի (908—922)։ Դրանից հետո այն մինչև իր անկումը կենտրոնական թագավորության վասալն էր և ենթարկվում էր վերջինիս։

Բագրատունիների օրոք Հայաստանում 922 թվականից հաստատված և մոտ մեկ դար տևած խաղաղությունը վերաբերում էր նաև Վասպուրականի թագավորությանը։ Այդ ժամանակաընթացքում զարգացան նրա գյուղատնտեսությունը, արհեստները, առևտուրը, ծաղկեցին քաղաքները (Վան, Ոստան, Բերկրի, Արճեշ և այլն) բացվեցին մի շարք դպրոցներ (Վարագում, Ախթամարում և այլուր), որոնցից մի քանիսը դարձան միջնադարյան հայկական մշակույթի հայտնի կենտրոններ։

Սակայն XI դ. առաջին տասնամյակներում Հայաստանի մյուս մասերի պես, Վասպուրականի համար ևս անբարենպաստ քաղաքական պայմաններ ստեղծվեցին։ 1021 թ. վերացավ Վասպուրականի թագավորությունը, երկիրը միացվեց Բյուզանդիային, որպես նրա արևելյան պրովինցիաներից (թեմերից) մեկը։

Վանանդի կամ Կարսի թագավորությունը (963—1065) իր տարածքով Վասպուրականի թագավորությունից շատ փոքր էր։ Նրա տարածքը առավելագույն չափի հասավ Աբաս թագավորի օրոք (984—1029)։ Այդ ժամանակ Վանանդ գավառից բացի թագավորության մեջ էր մտնում նաև Արշարունիք գավառը և Բասեն ու Աշոցք գավառների մի մասը։ Վանանդում իշխում էր Բագրատունիների մի ճյուղը։ Թագավորության հիմնադիրը Մուշեղ Բագրատունին էր, որը լինելով Կարսի կառավարիչ, 963 թ. իրեն հռչակել է թագավոր։ Վանանդի թագավորությունը գրեթե միշտ եղել է Անի—Շիրակի թագավորության ենթական։ Այն իր գոյությունը պահպանել է մինչև 1065 թ.։

Սյունիքի կամ Կապանի թագավորությունը (970—1170) սկզբնական շրջանում իր մեջ ընդգրկում էր Սյունյաց աշխարհի մեծագույն մասը՝ բացառյալ Դեղամա երկրի (Սևանա լճի ավազանը) և Երնջակ գավառի։ XI դ. սկզբներին նրա տարածքի զգալի մասը միացվում է Բագրատունիների Անի—Շիրակի թագավորությանը, որից հետո Սյունիքի թագավորության կազմում մնում են Բաղք, Կապան կամ Զորք, Արևիք, Կովսական ու Հաբանդ գավառները և Սղուկք գավառի հարավային մասը։ Թագավորության մայրաքաղաքը սկզբում Շաղատ գյուղաքաղաքն էր (այժմյան Սիսիանի շրջանում), իսկ հետո՝ Կապան քաղաքն ու Բաղաբերդ բերդը (այժմյան Ղափանի շրջանում)։ Սյունիքի թագավորությունը ,որը նույնպես, ընդհանուր առմամբ, համարվում էր Անի—Շիրակի թագավորության ենթական, իր հզորությամբ գագաթնակետին հասավ XI դ. երկրորդ կեսին։ Սակայն նրա տնտեսական վերելքը երկար չի տևում։ Նույն դարի վերջերից աննպաստ են դառնում նրա քա-

ղաքական պայմանները։ XII դ. սկզբից Սյունիքի թագավորությունը համառ մարտեր էր մղում սելջուկյան նվաճողների դեմ, որոնք օղակել էին նրան։ Սելջուկներին, այնուամենայնիվ, նախ 1103 թ. հաջողվում է ավերել թագավորության մայրաքաղաք Կապանը, իսկ 1170 թ. գրավել նրա վերջին հանգրվան Բաղաբերդը և վերջ տալ այդ թագավորությանը։

Տաշիր—Զորագետի կամ Լոռու թագավորությունը հիմնվել է 972 թ. Աշոտ III-ի որդու՝ Տաշիրի կառավարիչ Գուրգենի կողմից։ Այն իր հզորության գագաթնակետին է հասնում X դարի վերջերին և XI դ. առաջին կեսին, երբ թագավորության սահմաններն արևմուտքում ձգվում էին մինչև Խոնավ լեռնէր, արևելքում՝ մինչև Շամքոր քաղաքը, հյուսիսում՝ Ալգետ, իսկ հարավում՝ Փամբակի լեռներ։ Նրա մայրաքաղաքը Լոռին էր։

Նշված թագավորություններից բացի երկրում կարևոր դեր էր խաղում նաև Տարոնի իշխանությունը (826—966)։ Տարոնում մինչև արաբական լծի դեմ ուղղված 773—775 թթ. ապստամբությունը իշխում էին Մամիկոնյանները, որոնք նույն դարի երկրորդ կեսից դադարեցին Հայաստանի քաղաքական կյանքում խոշոր դեր խաղալուց։ Դրանից հետո իշխանական դինաստիան Տարոնում անցնում է Բագրատունիներին։ Բագարատ Բագրատունու օրոք (824—851) Տարոնի իշխանությունը Տարոն ընդարձակ գավառից բացի, ընդգրկում էր նաև Սասունը, Խութը և Խլաթ քաղաքն իր շրջակայքով։ Իշխանության կենտրոնը Մուշն էր, որը X—XI դարերում դարձել էր բարեկարգ քաղաք։ Հայաստանում քաղաքական անկախության վերականգնումից հետո Տարոնի իշխանությունը պայքարի առարկա էր դարձել Շիրակի Բագրատունիների և Վասպուրականի Արծրունիների միջև։ Սակայն, ընդհանուր առմամբ, Տարոնի իշխանությունը մտնում էր Անի—Շիրակի թագավորության մեջ, ունենալով բավական լայն իրավունքներ։

966 թ. Բյուզանդական կայսրությունը գրավում է Տարոնի իշխանությունը և վերջ տալիս նրա ինքնավարությանը։ Սակայն դրանից հետո էլ Սասունն ու Խութը շարունակում են պահպանել իրենց ներքին ինքնուրույն կարգերը։

IX—XI դարերում Արևելյան Հայաստանում կային նաև արաբական մի քանի իշխանություններ՝ էմիրություններ։ Դրանք էին՝ Դվինի, Գողթնի, Ամյուկի և Վարագի (Վանա լճի արևելյան կողմում), Հեր և Զարևանդի (Ուրմիա լճի հյուսիս-արևմտյան կողմում), Կայսիկների (Վանա լճից հյուսիս-արևմուտք) և Արզնի կամ Աղձնիքի էմիրությունները։ Դրանցից առաջին երկուսը անմիջապես միացված էին Անի—Շիրակի թագավորությանը և կազմում էին նրա բաղկացուցիչ մասը։ Ընդ

որում, Դվինի էմիրությունը X դարում ընդհանրապես վերացվեց և Դվին քաղաքն իր շրջակայքով դարձավ Անի—Շիրակի թագավորության գավառներից մեկը։ Ամյուկի ու Վարագի և Հեր ու Զարևանդի էմիրությունները մտնում էին Վասպուրականի թագավորության մեջ և օգտվում էին այնպիսի արտոնություններից, ինչպիսիք ունեին նրա կազմի մեջ մտնող հայկական իշխանությունները։ Կայսիկների էմիրությունը Անի—Շիրակի թագավորության վասալն էր, իսկ Արզնի էմիրությունը ձևականորեն ենթարկվում էր արաբական խալիֆայությանը, սակայն, փաստորեն կիսանկախ պետություն էր։

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ XI ԴԱՐԻ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XVI ԴԱՐԸ

XI—XVI դարերում մեկը մյուսին փոխարինող արտաքին նվաճողները բազմաթիվ անգամ արմատական փոփոխության են ենթարկել Հայաստանի վարչաքաղաքական համակարգը՝ այն հարմարեցնելով իրենց ռազմաքաղաքական և վարչաֆինանսական շահերին։

Բյուզանդիայի կարճատև տիրապետության շրջանում (1045—1071 թթ.), Տաշիր—Զորագետի և Սյունիքի թագավորություններից բացի, որոնք շարունակում էին պահպանել իրենց գոյությունը, Հայաստանից կայսրության նոր կցված նահանգներում մտցվեց բյուզանդական վարչաքաղաքական և հարկային կարգը։ Դրանցից կազմվեց երեք կուսակալություն (կամ կատապանություն)՝ Տարոնի, Վասպուրականի կամ Արևելքի և Անիի։ Կուսակալությունների գերագույն կառավարիչները (փոխարքաները) կոչվում էին կատապաններ։ Նրանք նշանակվում էին կայսրի կողմից։ Կատապանի ձեռքին էին գտնվում իր կուսակալության վարչական կառավարումը և զորքերի գլխավոր հրամանատարությունը։

Տարոնի կուսակալությունը, որ ստեղծվել էր 966 թ., բացի Բագրատունիների նախկին իշխանությունից, ընդգրկում էր նաև Դերջան, Մանանաղի, Հաշտյանք (Ճապաղջրի շրջանը) և Պաղնատուն գավառները։ Սելջուկյան առաջին արշավանքներից հետո Տարոնի կուսակալության տեղական իշխաններին երկրի կառավարման գործում տրվեցին բավական մեծ արտոնություններ, իսկ Սասունի իշխանությունը օգտվեով սելջուկյան արշավանքների հետևանքով ստեղծված դրությունից՝ XI դ. 50-ական թվականների կեսերից դառնում է կատարյալ ինքնուրույն։

Տարոնի իշխանությունը սելջուկների կողմից գրավվեց Մանազկերտի ճակատամարտից (1071 թ.) անմիջապես հետո, իսկ Սասունի իշխանությունը շարունակեց իր ինքնուրույն գոյությունը։

Վասպուրականի (կամ Արևելքի) կուսակալությունը ստեղծվեց Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը Բյուզանդիային կցելուց անմիջապես հետո (1021) և ընդգրկում էր նախկին Վասպուրականի թագավորության մեծ մասը։ Սելջուկյան արշավանքները կատարվում էին հիմնականում Վասպուրականի վրայով։ Դրանց առաջն առնելու համար կայսրությունը ձգտում էր Վասպուրականը դարձնել մի ամրացված շրջան։ Այդ նպատակով նա հայ իշխանական տների նկատմամբ սկսում է վարել սիրաշահելու քաղաքականություն և նրանց տալիս է բավական լայն արտոնություններ։

Վասպուրականի կուսակալությունը նույնպես սելջուկների կողմից գրավվեց 1071 թ.։

Անիի կուսակալությունը, որ կոչվել է նաև «Տանն Հայոց իշխանություն», ընդգրկում էր Անի—Շիրակի թագավորության մեծ մասը։ Կատապանի ամիրա-նիստը Անին էր։ Նրա տրամադրության տակ կար մեծ մասամբ հայերից կազմված բավական բազմամարդ բանակ։ Սկզբնական շրջանում Անիում բյուզանդացի կառավարիչների հալածանքները չափ չունեին։ Սակայն սելջուկյան արշավանքները նրանց հարկադրեց ժամանակավորապես դադարեցնել հայ իշխանների, նրանց զորքերի և հարկատու բնակիչների հալածանքն ու արտաքսումը հայրենի երկրից, հույս տածելով, որ նրանց արյան գնով կկասեցնեն սելջուկյան արշավանքները։ Բայց արդեն ուշ էր։ 1064 թ. սելջուկյան սուլթան Ալփ-Արսլանին հաջողվում է գրավել Անին, իսկ 1071 թ. Մանազկերտում կայսերական ահռելի բանակի խայտառակ պարտությունից հետո բյուզանդացիները վերջնականապես դուրս մղվեցին Հայաստանից։ Վերջին։ ընկավ սելջուկյան ծանր լծի տակ։

Բյուզանդական կարճատև տիրապետության շրջանում Արևմտյան Հայաստանում՝ գլխավորապես Ջորրոդ Հայքում, Բարձր Հայքում և Տուրուբերանում նույնպես կային հայկական մի շարք մանր իշխանություններ։ Դրանցից ամենախոշորը, հզորը և ներքին լայն իրավունքներով օժտվածը, ինչպես նշվեց, Սասունի ու Խութի իշխանությունն էր։

XI դարում հայկական մի շարք իշխանություններ էին առաջացել նաև Փոքր Հայքում, Փոքր Ասիայի արևելյան շրջաններում, Կիլիկիայում, Միջագետքում։ Դրանցից նշանավոր էին Սեբաստիայի (Փոքր Հայքում),

Պիզուի (Պիզու քաղաքն իր շրջակայքով), Միջագետքի Պահլավունիների, Փիլարտոս Վարաժնունու (Փոքր Ասիայի արևելյան շրջանում և հարակից տերիտորիաներում) իշխանությունները և այլն։

Սելջուկյան տիրապետությունը Հայաստանում նույնպես երկարատև եղավ։ Մելիք շահ սուլթանի մահից հետո (1092 թ.) սելջուկյան պետությունը սկսում է քայքայվել և մասնատվել մի շարք էմիրությունների։ Հայաստանում հաստատված էմիրություններից էին Անիի, Դվինի, Կարսի, Խլաթի, Կարինի և այլ էմիրությունները։ Դրանք իրարից անկախ էին և գտնվում էին մշտատև պայքարի մեջ։

Սելջուկյան տիրապետության շրջանում պատմական ասպարեզից վերացան նախկինից գոյություն ունեցող Վանանդի, Սյունիքի և Տաշիր—Զորագետի թագավորությունները։

XI—XII դարերում Վրաստանի հզորացմամբ պայմաններ են ստեղծվում Հյուսիս-արևելյան Հայաստանը սելջուկյան էմիրների լծից ազատագրելու համար։ XII դ. երրորդ տասնամյակում ազատագրվում են Տաշիր—Զորագետը և Անին՝ իր շրջակայքով։ Սակայն Հյուսիս-արևելյան Հայաստանի ազատագրումը հիմնականում կատարվեց Թամար թագուհու օրոք (1184—1213), երբ վրացական պետությունը հասել էր իր հզորության գագաթնակետին և երբ այդ պետության քաղաքական կյանքում կարևոր դեր էին խաղում հայազգի Զաքարյանները՝ Սարգսի որդի Զաքարեն, որը ժառանգական կարգով իշխելու իրավունքով ստացել էր Տաշիր—Զորագետի տարածքը և վարում էր պետության սպասալարի՝ զորքերի հրամանատարի պաշտոնը, և նրա եղբայր Իվանեն, որը նույնպես թագուհուց ստացել էր բարձր պաշտոն և մեծ շնորհումներ։ Վրացական և հայկական միացյալ բանակը, Զաքարեի հրամանատարությամբ, մեկը մյուսի ետևից սելջուկներից մաքրում է Ամբերդը, Բջնին, Արարատյան և Շիրակի դաշտերը, Անին (1199 թ.), Դվինը (1203 թ.), Կարսը, Սյունիքը, Սուրմառին, Բագրևանդը, Կոգովիտը, Ծաղկոտնը, ապա շարունակելով իր առաջխաղացումը, հասնում է մինչև Մանազկերտ, Արճեշ և Խլաթ քաղաքները՝ հարկադրելով Շահարմենների ընդմիշտ հրաժարվել Բագրևանդ, Ծաղկոտն և Կոգովիտ գավառներից։

Այսպիսի կազմով ազատագրված Հյուսիս-արևելյան Հայաստանի սահմանները ձգվում էին Արցախի (Ղարաբաղի) լեռների արևելյան լանջերից մինչև այժմյան Հասանկալա ու Արաքս գետերի խառնարանի մոտերքը և Կուր գետից մինչև Ծաղկանց լեռների հարավային վերջավորությունները։

Զաքարյանների իշխանության ներքո գտնվող Հյուսիս-արևելյան

Հայաստանը բաժանված էր երկու մասի, որոնցից մեկը ենթարկվում էր Զաքարեին, իսկ նրա մահից հետո անցավ նրա որդի Շահանշահին։ Երկրորդ մասը կազմում էր Զաքարեի եղբայր Իվանեի գերիշխանության շրջանը, որը նրա մահից հետո ժառանգեց նրա որդին՝ Ավագը։ Առաջինների իշխանության տակ էր գտնվում երկրի արևմտյան մասը՝ Լոռու և Անիի շրջանները, Արագածոտն, Բագրևանդ, Ծաղկոտն և Կոգովիտ գավառները, Սուրմառիի շրջանը և այլն։ Այս ճյուղի իշխանների աթոռանիստներն էին Լոռին և Անին։ Իսկ Իվանեի և նրա որդու տիրակալության և գերիշխանության տակ էր գտնվում Հյուսիս-արևելյան Հայաստանի արևելյան մասը՝ Բջնին, Գեղարքունիքը, Վայոց ձորը, Արցախի մեծ մասը, Սյունիքը, ինչպես նաև Նախիջևան, Դվին ու Երևան քաղաքներն իրենց շրջակայքով։ Այս ճյուղի աթոռանիստը Կայան բերդն էր (այժմյան Իջևան քաղաքից հարավ)։

Զաքարյանների հովանավորությամբ կազմված նոր իշխանություններից էին Վաչուտյանների (Ամբերդ կենտրոնով), Դուփյանների (Թարթառ գետի վերնագավառում և Սյունիքի Սոդք գավառում), Օրբելյանների (Վայոց ձորում, Գեղարքունիքում, Կոտայքում և Կայանում), Պռոշյանների (կամ Խաղբակյանների), Սյունիքի Շահապոնք, Ճահուկ, Վայոց ձոր գավառներում, ինչպես նաև Կեչառուք վանքի շրջակայքում), Վահրամյանների (Գարդման, Փառիսոս և Տավուշ գավառներում, կենտրոն ունենալով Դաղ ամրոցը) իշխանությունները։

Հնից իրենց գոյությունը պահպանել և Զաքարյանների կողմից հովանավորվելով, բավական զորացել էին Հաթերքի կամ Վերին Խաչենի, Խոխանաբերդի կամ Ներքին Խաչենի, Մեծնաբերդի, Մահկանաբերդի և Պահլավունիների իշխանությունները։

XIII դ. 30—40-ական թվականներից մինչև XV դարի վերջերն ընկած ժամանակաշրջանում Հայաստանում նախ իրենց տիրապետությունը հաստատեցին մոնղոլ նվաճողները, ապա թուրքմենական կարակոյունլու և ակկոյունլու ցեղերին պատկանող ավարառուները։

Մոնղոլները 1236 և 1242—1243 թթ. արշավանքների ընթացքում ավերեցին ու գրավեցին ամբողջ Հայաստանը։ Նրանց նվաճումներն ամենուրեք ուղեկցվում էին հայրենի երկիրը պաշտպանող բնակչության զանգվածային ոչնչացմամբ, գերեվարությամբ, կողոպուտով, բռնություններով։

XIII դ. կեսերին մոնղոլական պետությունը տարածվում էր Խաղաղ օվկիանոսից մինչև Միջերկրական ծովի ափերը։ Այն բաժանված էր չորս խոշոր երկրամասերի, որոնք կոչվում էին ուլուսներ։ Դրանցից

երեքը գտնվում էր Չինգիզխանի տան անդամների, իսկ մեկը՝ մոնղոլական զորապետների տիրապետության տակ։ Վերջինս չորրորդ ուլուսն էր, որն իր մեջ ընդգրկում էր Միջին Ասիայի արևմտյան մի փոքր մասը, Պարսկաստանը, Հարավային և Հյուսիսային Ադրբեջանը, Հայաստանը, Վրաստանը, Փոքր Ասիայի մեծ մասը, իսկ 1258 թվականից՝ նաև Միջագետքը։ Մանգու խանի ժամանակ այս զորապետությունը նույնպես դարձվեց ժառանգական տիրապետություն և հանձնվեց նրա եղբորը՝ Հուլավուին։ Վերջինս աստիճանաբար կտրվեց մեծ խաների եղբորը՝ Հուլավուին։ Վերջինս աստիճանաբար կտրվեց մեծ խաների ազդեցությունից և դարձավ անկախ իշխող։ Նրա հիմնադրած այդ պետությունն էլ կոչվեց Արևմտյան իլխանություն (կամ էլխանություն)։

Մոնղոլների կատարած վարչական բաժանումը ելնում էր պետության ռազմական և ֆինանսական ու հարկահանության շահերից։ Նրանք Հայաստանի ու Վրաստանի տարածքներից կազմեցին ռազմավարչական երկու միավոր՝ վիլայեթ։ Դրանցից մեկը կոչվում էր Գյուրջիստանի վիլայեթ, իսկ մյուսը՝ Մեծ Հայքի վիլայեթ։

Գյուրջիստանի վիլայեթը կազմված էր Վրաստանից ու Հյուսիս-արևելյան Հայաստանից (Զաքարյան Հայաստանից)։ Վիլայեթի կենտրոնը Թբիլիսին էր։

Վիլայեթներն իրենց հերթին բաժանվում էին ռազմավարչական ավելի փոքր միավորների՝ «թուման»-ների, այսինքն այնպիսի վարչատարածքային միավորների, որոնցից յուրաքանչյուրը կարող էր տալ մեկ «թուման» (10000) զինվոր։ Գյուրջիստանի վիլայեթի 9 թումաններից երեքը (չհաշված Կարսի շրջանը) կազմված էին Հյուսիս-արևելյան Հայաստանի տարածքից։ Շուտով այստեղ կազմվեց չորրորդ թումանը, որն իր մեջ ընդգրկում էր Սյունիքի իշխանությունը։ Սակայն Սյունիքը շուտով անջատվեց Գյուրջիստանի վիլայեթից և դարձավ անմիջականորեն մոնղոլական խաներին ենթակա թուման։ Թումանում տեղական կառավարիչի կողքին գործում էր վիլայեթի «մեծ բասկակի» գործակալը՝ թումանի բասկակը։

Մեծ Հայք վիլայեթը կազմված էր Հարավային և Արևմտյան Հայաստանի տարածքներից՝ Խլաթ կենտրոնով։ Այս վիլայեթը բաժանված էր 5 թումանի, սակայն կային նաև առանձին մանր շրջաններ, որոնք վարչական տեսակետից չէին մտնում թումանների մեջ և պահպանում էին իրենց ինքնուրույնությունը։ Դրանց մեջ ամենից ընդարձակը և նշանավորը Սասունն էր, որ մինչև Լենկթեմուրի ավերիչ արշավանքները պահպանեց իր ներքին ինքնուրույնությունը։

Այսպիսով մոնղոլներն սկզբնական շրջանում Հայաստանի ներքին վարչաքաղաքական կառուցվածքում գրեթե ոչ մի փոփոխություն չմըտցրին։ Նրանք բավարարվեցին միայն երկրում գոյություն ունեցող ֆեոդալական վարչաձևը իրենց տիրապետության շահերին հարմարեցնելով։ Սկզբնական շրջանում պահպանելով հայ և օտարազգի ֆեոդալների իրավունքները՝ մոնղոլները նրանցից յուրաքանչյուրին ճանաչեցին իբրև իր իշխանության տերը և մոնղոլական մեծ խաների ենթակա կառավարիչ, իսկ եկեղեցին և հոգևորականությունը կատարյալ արտոնյալ վիճակում մնացին մոնղոլական տիրապետության գրեթե ամբողջ ժամանակաշրջանում։

Սակայն այդ վիճակը երկար չտևեց։ Էլխանության ժամանակ (1256—1344 թթ.) հայկական իշխանությունները աստիճանաբար թուլացան և դադարեցին քաղաքական լուրջ դեր խաղալուց։ Մոնղոլները համեմատաբար ուժեղ իշխանությունների նկատմամբ խիստ հալածանքներ և ճնշում գործադրելու հետ միասին, նրանց լարում էին իրար դեմ ու թուլացնում։ Հայկական իշխանությունների մեջ Իլխանության տիրապետության շրջանում ամենից նշանավորը Սյունիքի Օրբելյանների իշխանությունն էր, որին մոնղոլները հովանավորում էին ընդդեմ Զաքարյանների։ Սյունիքից հետո որոշ չափով իրենց նշանակությունը պահպանեցին Մահկանաբերդի Արծրունիները և Սասունի ու Ախթամարի փոքրիկ իշխանությունները։ Հայկական մյուս իշխանական տները՝ Զաքարյանները, Վաշուտյանները, Վահրամյանները, Դոփյանները, Պռոշյանները, Ջալալյանները XIII դ. երկրորդ կեսում կորցրեցին իրենց նախկին նշանակությունը։ Հայկական քայքայված իշխանական տների անդամներից այս կամ այն գավառում նշանակվում էին կառավարիչներ՝ «մելիք»-ներ, որոնք հետագա շրջանում ձեռք բերեցին ֆեոդալական իրավունքներ։

1344 թ. Էլխանությունը վերջնականապես քայքայվում և վերածվում է առանձին խանությունների ու էմիրությունների, որոնք անընդմեջ պայքար էին մղում իրար դեմ։ 80-ական թվականներից դրանց գումարվեց նաև Լենկթեմուրի ավերիչ արշավանքները, ապա կարակոյունլու և ակկոյունլու ցեղերի մռայլ տիրապետության ժամանակաշրջանը։

Հայաստանը Լենկթեմուրի և թուրքմենական այդ քոչվոր ցեղերի տիրապետության ժամանակներում (XIV դ. վերջերից մինչև XV դ. վերջը) շատ թե քիչ կայուն վարչաքաղաքական վիճակ չի ունեցել։ Այս ժամանակաշրջանում ընդհանուր առմամբ պահպանվեցին հայկական

իշխանությունների մնացորդները, ինչպես և տիրապետողների կողմից գավառներում նշանակված հայ տանուտեր-կառավարիչները՝ մելիքները, որոնք ժամանակի ընթացքում դարձան իրենց գավառի (կամ գավառների) իշխանները՝ հիմք դնելով հայկական մի շարք մանր իշխանությունների՝ մելիքությունների։ Այդպիսի մանր իշխանություններ կային Գեղամա երկրում, Վայոց ձորում, բուն Սյունիքում, Արցախում, Գուգարքում, Վասպուրականում, Ռշտունիքում, Մոկքում, Աղթամարում և այլուր։

Կարակոյունլու Ջհանշահի ժամանակ Արևելյան Հայաստանի կենտրոնական տարածքից կազմվեց բավական ընդարձակ մի կուսակալություն (սա հետագայում կոչվեց Երևանի խանություն կամ բեյլերբեյություն), որն իր մեջ ընդգրկում էր նախկին Այրարատյան աշխարհի մեծագույն մասը և որոշ շրջաններ Սյունիքից։ Դրա կենտրոնը Երևանն էր։

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ XVI—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

XVI դարի սկզբին Հայաստանի երկու կողմերում կազմակերպվել էին երկու խոշոր պետություններ՝ արևմուտքում Օսմանյան Թուրքիան, իսկ արևելքում՝ Սեֆեյան Պարսկաստանը, պետություններ, որոնց միջև մղվում էր մշտական պայքար ու պատերազմներ։

Թուրք-պարսկական առաջին պատերազմները, որոնք հիմնականում մղվում էին Հայաստանի տարածքում, սկսվեցին հենց XVI դարի սկզբին և ավարտվեցին 1555 թվականին կնքված մի հաշտությամբ, ըստ որի երկու պետությունների միջև սահմանային գիծը Հայաստանում անցնում էր Ախուրյան գետով (Արևմտյան Արփաչայ) և Հայկական պարլեռնաշղթայով։ Այլ կերպ ասած, երկրի մեծագույն մասը՝ Արևմտյան Հայաստանը, անցավ Թուրքիային, իսկ Արևելյան Հայաստանը՝ Պարսկաստանին։

Սակայն այդ հաշտությունը երկարատև չեղավ։ Նույն դարի 70-ական թվականներին նորից բորբոքվեցին պատերազմները և փոքր ընդհատումներով ու փոփոխակի հաջողություններով շարունակվեցին մինչև 1639 թվականը։

1639 թ. Պարսկաստանի և Թուրքիայի միջև կնքված նոր հաշտությամբ Հայաստանը վերջնականապես բաժանեցին իրար մեջ։ Մոտ 80 տարի իր գոյությունը պահպանած այդ պայմանագրով Հայաստանում

Թուրքիայի և Պարսկաստանի միջև սահմանն անցնում էր Ախուրյան գետով և Հայկական պար, Կոտուր և Զագրոշյան լեռներով։

Հայաստանի նշված սահմանագծից արևմուտք ընկած մասը, որն ավելի քան երկու անգամ մեծ էր արևելյանից, կոչվում էր Արևմտյան Հայաստան, իսկ արևելք ընկած մասը՝ Արևելյան Հայաստան։

Թե՛ Օսմանյան Թուրքիան և թե՛ Պարսկաստանը տիպիկ ֆեոդալական ապակենտրոնացված պետություններ էին և առհասարակ չկարողացան ստեղծել կանոնավոր վարչական կարգեր։

Հայաստանը երկու պետությունների համար էլ ծայրամասային երկրամաս էր։ Հայերի ինքնուրույնության վերջին հետքերը չնայած ջնջված էին, սակայն հայաբնակ մի քանի լեռնային գավառներում մնացել էին առանձին շրջաններ, որոնք ունեին տեղական որոշ առանձնաշնորհումներ և կառավարվում էին ժառանգական բնիկ իշխողների կողմից։ Այսպես, օրինակ, Արևելյան Հայաստանում հայկական մելիքություններն ունեին որոշ ինքնավարություն, սակայն իրենց նշանակությամբ երկրորդական էին, իսկ գրաված տարածքով՝ շատ փոքր։ Օսմանյան կայսրության մեջ ևս կային ինքնավար շրջաններ։ Մասնավորապես ասիական մասում գոյություն ունեին գերեբեյություններ (ցեղապետություններ)։

Ինչպես ասվեց, Արևելյան Հայաստանը գտնվում էր սեֆևյան Պարսկաստանի տիրապետության տակ։ Հյուսիսային Ադրբեջանում և Արևելյան Հայաստանում կազմվել էին մի քանի բեյլերբեյություններ կամ խանություններ։ Դրանք էին՝ Շաքիի, Շիրվանի, Ղուբայի, Գյանջայի, Նախիջևանի և Երևանի խանությունները։ Հետագայում կազմվեցին ևս երկուսը՝ Բաքվի և Ղարաբաղի խանությունները, որոնցից առաջինը կազմվեց Շիրվանի խանության մի մասից, իսկ երկրորդը՝ Ղարաբաղի հայկական մելիքություններից և դրանցից արևելք ընկած Մելիքի տափաստանից։

Խանությունները բաժանվում էին մահալների, որոնց կառավարիչները նշանակվում էին խանի կողմից և կրում էին սուլթան, բեկ, մելիք, նայիբ, միրբոլուկ և այլ տիտղոսներ։ Խանություններում քաղաքական, վարչական և դատական ամբողջ իշխանությունը գտնվում էր խանի ձեռքում։ Նա մի բռնակալ էր իր խանության սահմաններում։

Արևելյան Հայաստանի զգալի մասը ամփոփված էր Երևանի խանության մեջ, որը XVI դ. և XVII դ. առաջին կեսին, մինչև 1639 թ. հաշտությամբ, պարսկաթուրքական պատերազմների հետևանքով մի շարք անգամ ավերվել և ձեռքից ձեռք էր անցել, բայց, ընդհանուր առ-

մամբ մնում էր՝ Պարսկաստանի տիրապետության տակ՝ մինչև Արևելյան Հայաստանի միակցումը Ռուսաստանին։ XIX դ. առաջին քառորդում Երևանի խանության սահմանները ձգվում էին Ախուրյանից (Արևմտյան Արփաչայ) մինչև Սևանի (Շահդաղ) լեռները և Արագածի հյուսիսային լանջերից մինչև Հայկական պար լեռնաշղթան։

Երևանի բեյլերբեյը (կամ խանը) համարվում էր պարսկական պետության ամենագլխավոր պաշտոնյաներից մեկը։ Պատերազմի ժամանակ սովորաբար նրան էին ենթարկվում Անդրկովկասում եղած խաները՝ բացառությամբ Շիրվանի խանի։ Ինչպես մյուս խանություններում, այնպես էլ Երևանի խանության մեջ բեյլերբեյից բացի կային նաև նրան ստորադրված մի շարք խաներ, բեկեր, մելիքներ։ Խանն ուներ իր շքեղ պալատը, բազմաթիվ հարճերից բաղկացած հարեմը, ընդարձակ կալվածքներ։ Նրա եկամուտները հասնում էին հսկայական չափերի։ Միայն ուղղակի հարկերից ստացվող խանական տարեկան եկամուտները հասնում էին 32000 թումանի[1], չհաշված անուղղակի հարկերն ու տուրքերը, կաշառքը, տուգանքները և այլ եկամուտներ։ Երևանի խանության մահալաբաժանությունը կատարված էր հիմնականում ըստ ոռոգման հարմարությունների, ամեն մի մահալ իրենից ներկայացնում էր ջրային մի առանձին համակարգով ոռոգվող շրջան կամ գետահովիտ։ Խանությունը բաժանված էր 15 մահալների՝ Կրխբուլաղի (Ծաղկաձորի և Երևանի միջև), Զանգիբասարի (Հրազդանի ստորին հոսանքում), Գառնիբասարի (Աղատ գետի ավազանում), Վեդիբասարի (Վեդի գետի ավազանում), Շարուրի (Արփա գետի ստորին հոսանքում), Սուրմալուի (այժմյան Հոկտեմբերյանի դիմաց, Արաքսի աջ կողմում), Թալինի (Արագած լեռան և Ախուրյան գետի միջև), Սարդարապատի (այժմյան Հոկտեմբերյանի շրջանն իր շրջակայքով), Կարբիբասարի (Քասախ գետի միջին և Սև ջուր գետի վերին հոսանքների ավազաններում), Գյոգչայի (Սևանա լճի ավազանում) և այլն։ Մահալների կառավարիչները նշանակվում էին խանի (սարդարի) կողմից։ Հայաբնակ մահալների կառավարիչները նշանակվում էին հայերից և կոչվում էին մելիքներ, իսկ մյուս մահալների կառավարիչները կրում էին միրբոլուկ կամ նայիբ տիտղոսները։

Երևանի խանության բնակչությունն ուներ ազգային խառը կազմ. հայերից բացի բնակվում էին նաև ադրբեջանցիներ, քրդեր և որոշ թվով թուրքեր ու պարսիկներ։ Վերջիններիս ձեռքին էին գտնվում խանական բարձր պաշտոնները և զինվորական գործը։

---

1 Երևանի մեկ թումանն այդ ժամանակ հավասար էր 4 ռուբլու։

Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններ մտնում էին վրացական պետության և Նախիջևանի, Մակուի ու Ղարաբաղի (կամ Շուշիի) խանությունների կազմի մեջ։

Դեռևս XV դ. հզորացող թուրքական պետության առաջն առնելու համար կարակոյունլու Ջհանշահը իր պետության ծայրամասում գտնվող Հայաստանում, մասնավորապես Այրարատում, Սյունիքում, ինչպես և Արցախում կազմակերպեց հայկական մանր իշխանություններ՝ մելիքություններ, որոնց համար կառավարիչ-մելիքներ նշանակեց հայկական իշխանական տների մնացորդներից։ Սեֆևյանները XVI դարում գրավելով Արևելյան Հայաստանը, սկզբնական շրջանում ոչ միայն անտեսեցին մելիքությունների ուժերը, այլև մեծ հարված հասցրին նրանց։ Սակայն XVIII դ. երկրորդ տասնամյակից պարսկական շահերը հայկական մելիքությունների նկատմամբ նույնպես սկսեցին վարել որոշ սիրաշահող քաղաքականություն։

Մելիքները համարվում էին իրենց գավառի (մելիքության) տերերը, օժտված էին ներքին ինքնուրույնությամբ և մեկը մյուսին հաջորդում էին ժառանգական կարգով, բայց յուրաքանչյուր դեպքում այն հաստատվում էր շահի, իսկ երբեմն էլ Երևանի սարդարի կողմից։ Մելիքներն ունեին իրենց զինվորական ուժերը՝ բաղկացած 1000—2000 զինվորներից։ Նրանք խոշոր դեր խաղացին թուրքական և պարսկական ծանր լծի դեմ ուղղված XVII—XVIII դարերի ազատագրական շարժման մեջ։

Արևելյան Հայաստանի տարբեր մասերում գոյություն ունեին մի շարք մեծ ու փոքր մելիքություններ։ Հայկական մելիքություններից առանձնապես հայտնի էին Ղարաբաղի հինգ մելիքությունները՝ Խամսայի մելիքությունները, որոնք ռազմական և տնտեսական առումով զգալի ուժ էին ներկայացնում։ Խամսայի մելիքությունները հյուսիսից հարավ ունեին հետևյալ հաջորդականությունը՝ Գյուլիստան (Կյուրակչայ և Թարթառ գետերի միջև, Գյուլիստան գլխավոր ամրոցով), Ջրաբերդ (Թարթառ գետի հովտում), Խաչեն (Խաչեն գետի հովտում, Թարխանաբերդ և Կաշաղակաբերդ բերդերով), Վարանդա և Դիզակ (Արաքս գետի ձախ կողմում, Տող կենտրոնով)։

Խամսայի մելիքությունները մեկմյանց դեմ մղած ֆեոդալական կռիվների և պարսկական շահերի ու խանների բռնությունների հետևանքով XVIII դ. երկրորդ կեսին աստիճանաբար թուլանալով՝ վերացան պատմական ասպարեզից։

Երևանի խանության սահմաններում եղած մելիքություններից շատ

թե քիչ հայտնի էր Մելիք-Շահնազարյանների մելիքությունը (Մազրա կամ Մեծ Մազրա կենտրոնով), որին ենթարկվում էին Սևանա լճի ավազանի մյուս, ավելի փոքր մելիքությունները։ Մելիք-Շահնազարյանների մելիքությունն արևելքից հարևան էր Ծարի մելիքությանը, որի կենտրոնը Ծար ավանն էր։ Այդ երկու մելիքությունը Ռուսաստանին միացվեց Ցիցիանովի արշավանքի ժամանակ՝ 1804 թվականին։ Իսկ Գարդմանի մելիքությունը գտնվում էր Սևանա լճի հյուսիսային կողմում։ Նրա կենտրոնը Ոսկանապատ գյուղն էր։ Այստեղ իշխում էր Մելիք-Շահնազարյանների մի ճյուղը, որը ցարական տիրապետության շրջանում նույնպես կարողացավ պահպանել իր կալվածատիրական իրավունքները։

Դրանցից բացի, փոքր մելիքություններ կային Մեծ Ղափանում։ Դրանք էին՝ Անգեղակոթի (Անգեղակոթ կենտրոնով), Տաթևի (Տաթև կենտրոնով), Քաշաթաղի (Խանածախ կենտրոնով) և Բեխի (Բեխ կենտրոնով) մելիքությունները։

Արևելյան Հայաստանում պարսկական լծից ազատագրվելու համար մղվող պայքարը XVIII դ. առաջին քառորդում վեր է ածվում ազատագրական պատերազմների՝ ուղղված ինչպես պարսկական լծի, այնպես էլ թուրքական նվաճման դեմ։ Ղափանում ժողովրդաազատագրական պատերազմը ղեկավարում էր Դավիթ-Բեկը, որը կարճ ժամանակամիջոցում կարողանում է պարսկական խաներից նախ ազատագրել Սիսիանը, ապա Զանգեզուրը (Գորիսի շրջան) ու Փոքր Ղափանը։ Դավիթ-Բեկն այդտեղի մելիքություններից (Անգեղակոթի, Քաշաթաղի, Տաթևի և Բեխի) կազմում է մի իշխանություն՝ Ղափանի անկախ իշխանությունը, որը գոյություն ունեցավ մոտ 9 տարի (1722—1730)։ Թուրքական զորքերին ջարդելուց և դուրս շպրտելուց հետո 1728 թ. Դավիթ-Բեկի իշխանության մեջ մտան Փոքր Ղափանն ու նրա հարևան գավառները, որոնց թվում և Մեղրին։ Նրա աթոռանիստը Հալիձոր բերդն էր, որը գտնվում էր այժմյան Ղափան քաղաքի մոտ։ 1729 թ. Ղարաբաղը նվաճելուց հետո թուրքերն ուժեղացնում են իրենց գրոհները Ղափանի իշխանության վրա։ Դավիթ-Բեկին փոխարինած Մխիթար սպարապետը գերմարդկային ճիգեր է թափում մելիքներին համախմբելու և թուրքական նվաճումներին դիմադրելու համար, սակայն նրա ջանքերը վերջիվերջո ապարդյուն են անցնում։ Թուրքական զորքերը մեկը մյուսի ետևից գրավում են Ղափանի իշխանության գավառները և 1730 թվականին վերջ տալիս նրա գոյությանը։

Թուրքական տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաս-

տանի վարչաձևը Արևելյանից էապես չէր տարբերվում։ Տարբերությունը միայն այն էր, որ պարսկական կուսակալները՝ խաները, սովորաբար ժառանգական կարգով էին իշխում իրենց խանություններում, իսկ Թուրքական նահանգների (վիլայեթների) գերագույն կառավարիչները՝ փաշաները, սոսկ զինվորական նահանգապետներ էին։

Թուրքիայի կողմից զավթված Արևմտյան Հայաստանի տարածքի մեծագույն մասից սկզբնական շրջանում կազմվեց մի կուսակալություն, որը կոչվում էր Էրմենիստան։ Նրա կենտրոնը Էրզրում քաղաքն էր, որի անունով էլ շուտով Էրմենիստան էյալեթը կոչվեց Էրզրումի էյալեթ։ Հետագայում Օսմանյան կայսրության վարչական բաժանումը ենթարկվեց նոր փոփոխությունների, որոնց հիման վրա Էրզրումի էյալեթը մասնատվեց մի քանի էյալեթների՝ Կարսի, Վանի, Էրզրումի և այլն։

Էյալեթները, որոնք հետագայում կոչվեցին վիլայեթներ, անմիջապես սուլթանին ենթակա նահանգներ էին, որոնց գերագույն կառավարիչները կոչվում էին փաշաներ։ Այդ պատճառով պատմական և աշխարհագրական գրականության մեջ էյալեթի կամ վիլայեթի փոխարեն հաճախ գործ է ածվում նաև փաշայություն։

Արևմտյան Հայաստանը XVIII դարում հիմնականում բաժանված էր հինգ վիլայեթների, դրանք էին՝ Վանի, Էրզրումի, Կարսի, Դիարբեքիրի և Սվազի (Սեբաստիայի) վիլայեթները։ Բացի դրանից, մի շարք հայաբնակ շրջաններ մտնում էին Զլդրի, Ադանայի, Տրապիզոնի վիլայեթների մեջ։ Արևմտյան Հայաստանի վիլայեթների տարածքում կային նաև քրդական ինքնավար իշխանություններ՝ հյուրմեթություններ։

Վիլայեթները (նահանգներ) մասնատված էին սանջակների (գավառների), որոնց կառավարիչները սկզբում կոչվում էին բեյեր (բեկեր), իսկ հետագայում՝ կայմակամներ (տեղապահ)։ Սանջակներն իրենց հերթին բաժանված էին գադըլգաների կամ կազաների (թեմ, գավառակ), իսկ գադըլգաները՝ նահիեների (գյուղախմբերի)։

Վիլայեթի սահմաններում ռազմական և վարչական ամբողջ իշխանությունը գտնվում էր կուսակալ փաշայի ձեռքին։ Փաշան ուներ զինված ուժեր։ Նա ինքն էր նշանակում սանջակների կառավարիչներին, հարկը բաժանում սանջակների վրա և այն գանձել տալիս սանջակների կառավարիչների ու կապալառու հարկահավաքների միջոցով։

Օսմանյան կայսրության մեջ գրեթե բոլոր պաշտոնները տրվում էին կաշառքով և կապալով։ Պաշտոնները վաճառվում էին բացարձակ, հրապարակորեն։ Ինչպես սուլթանն էր աճուրդի և կաշառքի կարգով վաճառում վիլայեթների կառավարչության և առհասարակ մյուս պաշտոնները, այնպես էլ կուսակալ-կառավարիչն էր վարվում իրեն ստորադրված պաշտոնների հետ։

Էրզրումի վիլայեթը Արևմտյան Հայաստանում կազմված վիլայեթներից ամենաընդարձակն էր։ Նրա սահմանները ձգվում էին Պոնտական լեռներից մինչև Բյուրակն (Բինգյոլ) բարձրավանդակի հարավային ստորոտները և Գարահիսար քաղաքից մինչև Մասիս։ Կենտրոնը Էրզրում քաղաքն էր։ Մյուս քաղաքներից էին Երզնկան, Կամախը, Մանազկերտը, Բաբերդը և այլն։ Այս վիլայեթը XVII դ. մասնատված էր 12 սանջակի՝ Քղի, Բասեն, Խնուս, Մանազկերտ և այլն։

Կարսի վիլայեթը XVIII դ. կեսերին իր մեջ ընդգրկում էր Կարսի, Սարիղամիշի, Կաղզվանի շրջանները։ Կուսակալ փաշայի աթոռանիստը Կարս քաղաքն էր, որ հռչակված էր իր ամուր բերդով։

Իր մեծությամբ Վանի վիլայեթը առաջնությունը զիջում էր միայն Էրզրումի վիլայեթին։ Նրա մեջ էին մտնում ամբողջ Վանա լճի ավազանը, Արևելյան Տիգրիսի ու նրա Մեծ Զաբ վտակի վերին հոսանքների ավազաններում ընկած շրջանները, Սասունը, Մուշը, Բիթլիսը և այլն։ Սահմանները ձգվում էին Թոնդրակ լեռնագագաթից մինչև Քրդստանի լեռների հարավային լանջերը, Զագրոշ լեռնաշղթայից մինչև Դերսիմ։ Փաշայի աթոռանիստը Վան քաղաքն էր, որտեղ ընդդեմ Պարսկաստանի պահվում էր ենիչերիներից բաղկացած մի մեծ բանակ։ Այս վիլայեթը XVII դ. մասնատված էր 12 սանջակի՝ Արճեշ, Մուշ, Բերկրի և այլն։ Վիլայեթի քաղաքներից էին՝ Խլաթը, Արճեշը, Բիթլիսը, Մուշը և այլն։

Դիարբեքիրի վիլայեթն իր մեջ ընդգրկում էր Հյուսիսային Միջագետքի մի շարք շրջանները և պատմական Աղձնիք աշխարհի արևմտյան մեծ մասը։ Վիլայեթի կենտրոնը Դիարբեքիր քաղաքն էր։ Մյուս քաղաքներից էին Ֆարկինը (Մուֆարկին), Մարդինը և այլն։ Դիարբեքիրի վիլայեթը XVII դ. բաղկացած էր 21 սանջակներից, որոնցից 8-ը քրդական հյուրմեթություններ էին։

Սվազի վիլայեթը սկզբում իր մեջ էր ընդգրկում պատմական Փոքր Հայքն ու Զորրորդ Հայքը։ Կենտրոնը Սվազն էր (Սեբաստիա)՝ Կզըլ-Իրմակ գետի աջ ափին։ Մյուս քաղաքներից նշանավոր էին Մալաթիան, Խարբերդը, Ամասիան և Արաբկիրը։ Հետագայում այս վիլայեթը բաժանվեց երկու մասի՝ Սվազի և Մալաթիայի վիլայեթների, որոնցից առաջինը գրավում էր նախկին Սվազի վիլայեթի հյուսիս-արևմտյան մասը, իսկ երկրորդը՝ հարավ-արևելյան։

XVIII դարում Արևմտյան Հայաստանում և նրա հարավային հարե-

վան Քրդստանում ու հարակից շրջաններում կային քրդական հինգ մեծ իշխանություններ, որոնցից յուրաքանչյուրի մեջ մտնում էին մի քանի հյուքմեթություններ։ Դրանցից երեքը՝ Բիթլիսը, Ջուլամերիկը (կամ Հեքյար) և Բայազետը ամբողջապես գտնվում էին Արևմտյան Հայաստանի տարածքում։ XIX դ. 40—60-ական թվականներից Օսմանյան Թուրքիան քրդական այդ իշխանությունները աստիճանաբար վերացրեց և դրանք ամբողջապես միացրեց համապատասխան վիլայեթներին։

Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում ընդհուպ մինչև XIX դ. վերջերը կարողացան իրենց ներքին որոշ իրավունքները պահպանել նաև հայկական իշխանությունների մնացորդները։ Այդպիսի մանր իշխանություններ կային Սասունում, Մոկսում, Խիզանում (Բիթլիսից հարավ-արևելք), Շատախում (Վանա լճից հարավ) և Զեյթունում (Կիլիկիայում)։

Արևմտյան Հայաստանի վարչական բաժանման մեջ փոփոխություններ տեղի ունեցան XIX դ. երկրորդ կեսում, որի հետևանքով խապառ վերացվեցին քրդական հյուքմեթություններն ու հայկական իշխանությունների մնացորդները։ Այդ փոփոխությունները վերաբերում էին նաև վարչատարածքային միավորներին՝ վիլայեթներին ու սանջակներին։ Ներկայումս Արևմտյան Հայաստանի տարածքում կազմվել են մի քանի տասնյակ վիլայեթներ։

7. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԸ 1828—1920 ԹԹ.

Արևելյան Հայաստանի պատմական կյանքում 1801—1920 թթ. ընթացքում կատարվում են արմատական փոփոխություններ։ XIX դ. առաջին տասնամյակներում Անդրկովկասի երկրները՝ Վրաստանը, Ադրբեջանը և Արևելյան Հայաստանը միացվում են Ռուսաստանին, Անդրկովկասի ժողովուրդների ու երկրների պատմական բախտը կապվում է ռուս ժողովրդի և Ռուսաստանի հետ։ Չհաշված հայաբնակ մի շարք շրջաններ (Լոռի, Ղարաբաղ, Զանգեզուր և այլն)՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին է միակցվում Թուրքմենչայի պայմանագրով (1828 թ.)։

Բարձրագույն հրամանագրով Թուրքմենչայի պայմանագիրը վավերացնելուց մեկ օր անց, 1828 թ. մարտի 21-ին, կազմվում է Հայկական մարզը։

Ցարական կառավարությունը ձգտում էր Անդրկովկասը լիովին և վերջնականորեն ենթարկել ռուսական պետության վարչաձևին, այնտեղ

ոչնչացնել տեղական և պարսկական տիրապետության շրջանի մնացած բոլոր ձևերն ու հաստատել ռուսական միասնական վարչաձև։

Հայկական մարզը կազմված էր Երևանի ու Նախիջևանի նախկին խանություններից և Օրդուբադի (նախկինում Ազաջիրան) շրջանից։ Հաշվի առնելով նախկինում գոյություն ունեցող վարչակարգը, Հայկական մարզն էլ, դրան համապատասխան, բաժանվեց վարչական երկու միավորի՝ Երևանի և Նախիջևանի պրովինցիաների, որոնք մասնատված էին օկրուգների։ Երևանի պրովինցիան մասնատված էր չորս օկրուգի՝ Երևանի, Շարուրի, Սուրմալուի և Սարդարապատի, իսկ Նախիջևանի պրովինցիան կազմված էր Նախիջևանի և Օրդուբադի օկրուգներից։

Երևանի պրովինցիայի օկրուգները կառավարում էին օկրուգային պետերը, իսկ Նախիջևանի և Օրդուբադի օկրուգներում ուժի մեջ մնաց նախկին նայիբների իշխանությունը։ Թե՛ օկրուգային պետերը և թե՛ նայիբները ենթարկվում էին Հայկական մարզի վարչությանը։ Երկու պրովինցիաներում էլ մահալների և գյուղական համայնքների վարչաձևը մնաց հինը՝ պարսկականը։

Հայկական մարզում կային 3 քաղաքներ՝ Երևան, Նախիջևան և Օրդուբադ։ Հետագայում, երբ կազմակերպվեց Երևանի նահանգը, նրա քաղաքների թիվը հասավ հինգի, որովհետև վերջինիս մեջ մտան նաև Ալեքսանդրապոլը և նոր կազմավորված Նոր Բայազետը։

30-ական թվականներին Անդրկովկասում գոյություն ունեին վեց կարգի վարչական միավորներ՝ դիստանցիա, բուն Վրաստան, պրովինցիաներ, մարզեր և այլն, որոնք իրարից տարբերվում էին և՛ Ռուսաստանին միացվելու ժամանակով, և՛ իրենց վարչաձևով։ Ցարական կառավարությունը չէր հանդուրժելու այդպիսի զանազանակերպ վարչաձևեր, նրան անհրաժեշտ էր ամենուրեք կիրառել կայսրության ընդհանուր օրենքներն ու վարչական կառավարման կարգը։

Ուստի 1840 թ. ապրիլի 10-ին հրապարակվեց հատուկ օրենք, ապա բարձրագույն հրամանագիր Անդրկովկասում նոր վարչական կառուցվածք մտցնելու մասին։ Անդրկովկասն այդ, այսպես կոչված, գանյան (սենատոր Գանի անունով) վարչաձևի հիման վրա կազմեց մի նահանգ՝ Վիրահմերեթյան նահանգ անունով և մեկ մարզ՝ Կասպիական մարզը, հատուկ ռազմա-օկրուգային կառավարչությամբ։ Վերացվեցին վարչական նախկին բոլոր միավորները, որոնց թվում և Հայկական մարզը։

Վիրահմերեթյան նահանգը ընդգրկում էր Անդրկովկասի մեծ մասը և բաժանված էր 11 գավառի՝ Թիֆլիսի, Գորիի, Թելավի, Բելոկանի, Քութայիսի, Ելիզավետպոլի, Ալեքսանդրապոլի, Երևանի, Նախիջևանի,

Ախալցխայի և Գուրիայի։ Երևանը դարձավ սոսկ համանուն գավառի կենտրոն։

Գանի նախապատրաստած այդ օրենքի նպատակն էր վարչականորեն Անդրկովկասը ձուլել կայսրության մեջ՝ ոտնահարելով տեղական բոլոր առանձնահատկությունները։ Այդ օրենքով երկրի կառավարման գործից հեռացվեցին տեղացի բարձր խավի ներկայացուցիչները, դրանք ամբողջապես փոխարինվեցին ռուս աստիճանավորներով։ Օրենքի կիրառումը, բնականաբար, չէր կարող տեղիք չտալ դժգոհությունների. տեղական վերնախավի մի մասը, փաստորեն, դուրս եկավ նոր վարչաձևի դեմ։ Հետագա բարդություններից խուսափելու համար Նիկոլայ I-ը ստիպված է լինում նահանջել օրենքի որոշ դրույթներից կամ դրանք կիրառել կրճատված ձևով։ Ամենանշանակալի զիջումն այն էր, որ ցարի կարգադրությամբ իրավունք տրվեց աղալարներին, բեկերին և մելիքներին գրավել վարչական պաշտոններ։

1844 թ. Կովկասը վեր է ածվում փոխարքայության, փոխարքա է նշանակվում Մ. Ս. Վորոնցովը, որը ցարական ինքնակալության շահերը պաշտպանելու և փոխարքայությունում դեռևս շարունակվող դժգոհությունները կանխելու համար 1840 թ. օրենքով սահմանված միօրինակ վարչաձևը փոխարինում է Կովկասի տարբեր մասերում տարբեր վարչաձևեր հաստատելով։ Նրա ներկայացրած նախագծի հիման վրա 1846 թ. դեկտեմբերի 14-ին հրապարակվում է օրենք, որով ամբողջ Անդրկովկասը բաժանվում է չորս նահանգի՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախիի և Դերբենդի։ Նախկին Հայկական մարզի տարածքը, որ 1840 թ. մասնատվել էր երկու գավառի և մտել Վիրահայերեթյան նահանգի մեջ, այժմ էլ փաստորեն վարչականորեն մնաց նույնը, այսինքն՝ իբրև երկու գավառներ (Երևանի և Նախիջևանի) մտավ Թիֆլիսի նահանգի մեջ։ Նույն նահանգի կազմում էր նաև Ալեքսանդրապոլի գավառը, որը բաղկացած է նախկին Շորագյալի, Փամբակի և Ախալքալաքի շրջաններից։

1849 թ. հունիսի 9-ին բարձրագույն հրամանագրով կազմվում է Երևանի նահանգը։ Այդ օրենքը ուժի մեջ է մտնում 1850 թ. հունվարի 1-ից։ Նահանգի կենտրոնը Երևանն էր։ Նորաստեղծ այդ նահանգն իր կազմում ուներ Երևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Նախիջևանի և Օրդուբադի գավառները։ 1862 թ. Ալեքսանդրապոլի գավառից անջատվում և Թիֆլիսի նահանգին է միացվում Լոռին, որ նախկինում կազմում էր այդ գավառի Փամբակ ոստիկանական շրջանի հյուսիսային մեծագույն մասը, իսկ մինչ այդ անջատվել էր Ախալքալաքի ոստիկանական շրջանը։ 1867թ. Երևանի նահանգի գավառաբաժանումը ենթարկվում է փոփոխության։ Օրդուբադի գավառը վերացվում է, նրա տարածքը միացվում է Նախիջևանի գավառին, իսկ Օրդուբադ քաղաքը դառնում է արտաշատային։ Այդ նույն օրենքով կազմվում է մի նոր գավառ՝ Էջմիածնի գավառը։ Այսպիսով, 1867 թ. փոփոխությամբ ևս Երևանի նահանգը կազմված էր հինգ գավառից՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Նոր Բայազետի, Էջմիածնի։ 1874 թ. Երևանի նահանգի գավառների կազմում նոր փոփոխություն է մտցվում։ Այժմ արդեն այն մասնատվում է յոթ գավառի՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Նախիջևանի, Նոր Բայազետի, Շարուր-Դարալագյազի, Սուրմալուի։

Այդպիսի կազմով Երևանի նահանգը, գրեթե առանց փոփոխության, մնաց մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Նրա տարածքը կազմում էր մոտ 24,5 հազ. քառ. վերստ, բնակչությունը 1871 թ.՝ 425 հազար էր, իսկ 1913 թ.՝ ավելի քան 800 հազար։

Երևանի նահանգը կազմելիս նրա համար սահմանվեց ավելի պարզեցված կառավարման ձև, սակայն հետագայում նրա հիմնարկությունների ու կառավարող բյուրոկրատիայի թիվը գնալով բազմացավ ու բարդացավ։ Նահանգի գլուխ իբրև գերագույն կառավարիչ կանգնած էր գեներալ նահանգապետը, որը նշանակվում էր ցարական բարձրաստիճան զինվորականներից և համարվում էր նահանգի և՛ քաղաքացիական գլխավոր կառավարիչը, և՛ ռազմական ամենաբարձր պետը։ Գեներալ նահանգապետը ենթարկվում էր Կովկասի փոխարքային, իսկ քաղաքացիական գործերի գծով նրա անմիջական պետը համարվում էր Կովկասի փոխարքայության քաղաքացիական մասի գլխավոր կառավարիչը։ Նրա օգնականը կոչվում էր փոխնահանգապետ, որը դարձյալ նշանակվում էր ցարական աստիճանավորներից։

Նահանգն ուներ մի շարք հիմնարկներ, որոնք բոլորն էլ ենթակա էին գեներալ նահանգապետին։

Յուրաքանչյուր նահանգ ուներ իր նահանգական դատարանը, որը փոխարինում էր նախկին գավառական դատարաններին և մյուս դատական հիմնարկներին։

Ռազմական առումով Երևանի նահանգը մտնում էր Կովկասի զինվորական շրջանի մեջ և ուներ տեղական ղեկավարման իր ապարատը։ Բազմամարդ ապարատ ունեին ռուսական ու հայկական եկեղեցիներն ու մահմեդական մզկիթները։

Գավառական վարչական ապարատն ավելի պարզ կառուցվածք ուներ։ Գավառի կառավարման գլուխ կանգնած էր գավառապետը, որը

նույնպես, առանց բացառության, նշանակվում էր ռուսական աստիճանավորներից։ Գավառը բաժանված էր ոստիկանական շրջանների, որոնցում կառավարում էին ոստիկանական շրջանի պետերը։ Սրանք իրենց տեղամասերում ունեին դատական ու ոստիկանական իրավունքներ։

Նահանգի վարչական ցածրագույն մարմինները գյուղական համայնքները կառավարող օրգաններն էին։ Գյուղական համայնքների գլուխ կանգնած էին հայկական համայնքներում՝ մելիքները, իսկ ադրբեջանականում՝ քեթխուդաները, քյոխվաները և յուզբաշիները։

Ինչ խոսք, որ պարսկական տիրապետության շրջանի համեմատությամբ Ռուսաստանին միացվելուց հետո Անդրկովկասում, այդ թվում և Արևելյան Հայաստանում, ստեղծվեցին կարգ ու կանոն, մշտական գործող օրենքներ։ Սակայն ցարական վարչաձևի պայմաններում ևս չէին բացառված կամայականություններն ու կաշառքը։

Արևելյան Հայաստանի բաղկացուցիչ մասերը կազմող տարածքները՝ Զանգեզուրը, Լոռին, Շամշադինը և այլն, մտնում էին վարչական այլ միավորների՝ Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգների մեջ։

Արևմտյան Հայաստանի վարչական կառուցվածքը նշված ժամանակամիջոցում էական որևէ փոփոխություն չի կրում։ Ուժի մեջ են մնում նախորդ շրջանի վարչական կառուցվածքն ու կառավարման ձևերը։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Կարսի, Սարիղամիշի, Կաղզվանի, Օլթիի և այլ շրջաններ միացվում են Ռուսաստանին։ Այդ շրջանների տարածքից ցարական կառավարությունը կազմում է մի ընդարձակ վարչական միավոր՝ Կարսի մարզը, որի վարչաձևը նահանգների վարչաձևերի համեմատությամբ, էլ ավելի ռազմական բնույթ ուներ։ Կարսի մարզը մասնատված էր չորս օկրուգի՝ Կարսի, Կաղզվանի, Արդահանի և Օլթիի։ Մարզի գլուխ, որպես գերագույն կառավարիչ և ռազմական պետ կանգնած էր մարզային պետը, իսկ օկրուգներում՝ նրա ստորադրյալները՝ օկրուգային պետերը։ Մարզն ուներ մարզային կառավարություն՝ բաղկացած մի քանի վարչություններից։ Մարզի կենտրոնը Կարսն էր։ Մյուս քաղաքներից էին՝ Սարիղամիշը, Կաղզվանը, Արդահանը և Օլթին։ Մարզի տարածքը ավելի քան 22 հազ. քառ. վերստ էր։

Հայկական հանրապետության կարճատև շրջանում (1918—1920 թթ.) նախորդ ժամանակների համեմատությամբ երկրի վարչական վիճակի մեջ էական փոփոխություններ չկատարվեցին։ Փաստորեն ուժի մեջ մնաց ցարական վարչաձևի համակարգը՝ նահանգաբաժանումն ու գավառաբաժանումը։

Սարդարապատի ճակատամարտից հետո (1918 թ. մայիսի 22—26) վերականգնված երկրի 1914 թ. սահմանները շուտով խիստ կերպով փոփոխվեցին։ Թուրքական նվաճման հետևանքով երկրի մեծագույն մասն անցավ թուրքերին։ Փաստորեն թուրքական նվաճումներից ազատ մնաց միայն Երևան քաղաքն իր շրջակայքով՝ 10 հազ. քառ. կմ-ի հասնող մի տարածք։

III ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԱՇԽԱՐՀ»-ՆԵՐԸ, ՆՇԱՆԱՎՈՐ ԳԱՎԱՌՆԵՐՆ ՈՒ ՄՅՈՒՍ ՀԻՇԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԸ

1. ԱՅՐԱՐԱՏՅԱՆ ԱՇԽԱՐՀ

Այրարատյան անունը ամենայն հավանականությամբ կապված է Արմենիայի անվան հետ։ Այն տարածվում էր Երասխի (Արաքսի) միջին հոսանքի ավազանում և Արածանի գետի վերնագավառում՝ շրջապատված լինելով Տայք ու Բարձր Հայք (արևմուտքում), Տուրուբերան ու Վասպուրական (հարավում), Սյունիք (արևելքում) և Գուգարք (հյուսիսում) «աշխարհ»-ներով։ Այրարատը Մեծ Հայքի ամենաընդարձակ «աշխարհ»-ներից էր։ Այն գտնվում էր երկրի կենտրոնում և հայտնի էր իր արգավանդությամբ, նեղանի աղով (Կողբ և Կաղզվան), ուներ ոսկի, պղինձ, երկաթ, բազմատեսակ շինանյութեր (տուֆ, մարմար, գրանիտ, բազալտ), ջերմուկներ և այլն։

Այրարատյան աշխարհը հայ ժողովրդի քաղաքական միավորման, տնտեսական ու մշակութային կյանքի հիմնական կենտրոնն էր։ Մեր մատենագիրները մեծ գովեստով են խոսում նրա մասին՝ համարելով այն «դրախտ», «ամենաբույս», «ամենաբերրի», «գլուխ Հայոց Մեծաց», «Միջնաշխարհ Հայոց» և այլն։ Պատմության ընթացքում հայկական պետության ունեցած 13 մայրաքաղաքներից 11-ը գտնվում էին Այրարատյան աշխարհում։ Դրանք էին՝ Արմավիրը, Երվանդաշատը, Արտաշատը, Վաղարշապատը, Արշակավանը, Դվինը, Բագարանը, Երազգավորսը, Կարսը, Անին և Երևանը։

Հնագույն ժամանակներից ի վեր այստեղով անցնում էին կարևոր նշանակություն ունեցող տարանցիկ ճանապարհներ՝ Արտաշատ-Սատաղ, Արտաշատ-Տիգրանակերտ, Դվին-Պարտավ, Դվին-Բյուզանդիոն, Դվին-

Դամասկոս, Անի-Տրապիզոն, Անի-Ամասիա, Անի-Դվին, Անի-Տփղիս և այլն։

Այրարատյան աշխարհում տարբեր ժամանակներում հիշատակվում են մի քանի տասնյակ քաղաքներ ու բազմաթիվ ուրիշ վայրեր՝ վանքեր, բերդեր, ավաններ, ճանապարհային կայաններ, ճակատամարտի վայրեր։

Այրարատյան աշխարհը բաղկացած էր 20 գավառներից՝ Բասեն, Արշարունիք, Բագրևանդ, Ծաղկոտն, Վանանդ, Շիրակ, Կոգովիտ, Կոտայք և այլն։

ԲԱՍԵՆ

Հնում Բասենը սովորաբար կոչվել է Բասյանք, որը կապված է Քսենոփոնի հիշատակած բասեններ կամ բասյաններ ժողովրդի (ցեղախմբի) անվան հետ։ Բասենը տարածվում էր Կարինի (Էրզրումի) շրջանից արևելք, Արաքսի ձախ կողմում, նոր ժամանակների Բասեն (Բասինլար) սանջակի տեղում։ Բասենը հարթավայրային է և երկրագործության համար ունի նպաստավոր հողակլիմայական պայմաններ։ Սակայն բավական ընդարձակ տարածություններ են գրավում նաև ճահճուտները։

IV դարում Բասենում իշխում էին Որդունի նախարարները, որոնք Ապահունիք և Հարք գավառներում իշխող Մանավազյանների հետ ֆեոդալական կռիվներ մղելու պատճառով սրի են քաշվում Խոսրով Կոտակի օրոք (330—338), իսկ նրանց կալվածքներն ամբողջությամբ տրվում են Բասենի եպիսկոպոսական թեմին։ Բասեն անունը պահպանվել է։

Բասենի հիշարժան վայրերից կարելի է նշել հետևյալները.

Որդորու և Դու.— Երկուսն էլ սովորական գյուղեր էին։ Դրանցից առաջինը Որդունի նախարարական տան աթոռանիստն էր՝ ոստանը։ Այստեղ էր նստում նաև Բասենի եպիսկոպոսը։ Վերը նշված կռիվներից հետո Որդորու գյուղը նույնպես անցնում է Բասենի եպիսկոպոսական թեմին։ Որդորուն գտնվում էր Բասենի արևմտյան մասում՝ բարձրագիր վայրում, և Հայաստանի 387 թ. բաժանման գծի վրա գտնվող բնակավայրերից էր։ Որպես նախարարական աթոռանիստ Որդորուն ուներ իր ամրոցը։ Դու գյուղը գտնվում էր Որդորուի մոտակայքում։ Այն նույնպես 387 թ. սահմանագծի վրա էր։ Հավանական են համարում, որ այդ գյուղերը համապատասխանում են Բասենի սանջակի, այժմ գրեթե ավերակ դարձած, Փոքր և Մեծ Թու գյուղերին։

Վաղարշավան.— Ավան, հիմնադրվել է հայոց Վաղարշակ I (117—140) կամ Վաղարշակ II (198—215) թագավորների կողմից։ Գտնվել է կամ Մուրց (Հասանկալա) և Արաքս գետերի խառնարանի շրջանում, կամ այժմյան Հասանկալա քաղաքի տեղում։ Վաղարշավանի տեղում հնում գոյություն է ունեցել ուրարտական բերդ կամ ամրոց։

Օկումի.— Ավան, գտնվում էր Բասեն գավառի հյուսիս-արևմտյան մասում, Ծիրանաց լեռների լանջին։ Առաջին անգամ հիշատակվում է IX դարում։ Արիստակես Լաստիվերտցի պատմիչը գրում է, որ Օկումը վերջնականապես ավերել են սելջուկներն իրենց առաջին արշավանքի ժամանակ՝ 1048 թվականին, բնաջնջելով նրա բնակիչներին, որոնց թիվը պատմիչի ասելով հասնում էր 30 հազար մարդու։

Բողբերդ.— Բերդ, հայտնի էր IV դարից։ Շապուհ II-ը դեպի Հայաստան կատարած իր արշավանքի ընթացքում հայերի դիմադրությունը չլատելու նպատակով Կամսարական նախարարների կանանց գերելով փակում է այս բերդում, որպեսզի նրանց ամուսիններն իրենց զորքերով լքեն հայկական միացյալ բանակը։ Սակայն Պարսից արքայից արքան իր նպատակին չի հասնում։ Հայկական զորքերը երկրի սահմաններից դավթիչներին դուրս են շպրտում։ Բողբերդը գտնվում էր Հայաստանի 387 թվականի բաժանման գծի վրա, պարսկական մասում, Բասենի հյուսիս-արևմտյան կողմում։ Կոչվել է նաև Բոլբերդ։ Ենթադրվում է, որ այն Սպերի ոսկու հանքավայրերի պաշտպանության համար կառուցված բերդերից էր և գտնվում էր դրանց հարավ-արևելյան մատույցներում։

Ավնիկ.— Ամուր բերդ էր և հավանաբար գտնվում էր նույնպես Բասենի արևմտյան մասում, Կարին գավառի սահմանից ոչ հեռու։ Ավնիկը ևս գրավել և ավերել են սելջուկները՝ 1054 թ. արշավանքների ժամանակ։

Արշարունիք

Տարածվում էր Արաքս և Ախուրյան գետերի կազմած արևմտյան անկյունում։ Ավելի հնում կոչվում էր Երասխաձոր։ Սկզբում պատկանում էր Արշակունիների արքայական տանը, իսկ հետագայում տրվել է Կամսարական նախարարությանը, որի առաջին նախարարի՝ Արշավիրի անունով էլ հավանաբար կոչվել է Արշարունիք։ Արշարունիքում էին գտնվում Կաղզվանի հայտնի աղահանքերը։

VIII դ. վերջերին Կամսարականները կորցնում են իրենց քաղաքական ազդեցությունը և ստիպված են լինում Շիրակի ու Արշարունիքի

իրենց կալվածքները վաճառել Բագրատունիներին։ Արշարունիքը Այրարատի առավել նշանավոր գավառներից էր։

Գավառի պատմական վայրերից կարելի է հիշատակել հետևյալները.

Երվանդաշատ.— Հին Հայաստանի մայրաքաղաքներից է։ Գտնվում էր Արաքս և Ախուրյան գետերի խառնարանում, այժմյան Բաղրամյանի շրջանի Երվանդաշատ գյուղի տեղում։ Քաղաքը հիմնադրվել է Երվանդ II-ի օրոք մ. թ. ա. III դարում։ Մովսես Խորենացին վկայում է, որ Հայաստանի նախկին մայրաքաղաք Արմավիրի օդն ու կլիման վատառողջ լինելու, Արաքսն իր հունը փոխելու և քաղաքի վրա արևելյան ցեղերի հաճախակի հարձակումների պատճառով Երվանդը արևմուտքում կառուցում է մի քաղաք, որը դարձնում է մայրաքաղաք և իր անունով կոչում Երվանդաշատ։ Բնականից ամուր էր Երվանդաշատի դիրքը։ Մայրաքաղաքն արտաքին վտանգներից ազատ պահելու համար Երվանդն այն պատում է ամրակուռ պարիսպներով։ Երվանդաշատը հելլենիստական տիպի քաղաք էր, և չնայած Արտաշես I-ի օրոք դադարում է մայրաքաղաք լինելուց, բայց և այնպես դարեր շարունակ մնում էր որպես Հայաստանի խոշոր քաղաքներից մեկը։ IV դարում Երվանդաշատն ուներ մի քանի տասնյակ հազար բնակիչ, որոնց զգալի մասն զբաղվում էր արհեստագործությամբ ու առևտրով։ Քաղաքը մեծ հարված է ստանում Արշակ II-ի օրոք Պարսկաստանի կատարած հարձակումներից։ IV դարի վերջերից կորցնելով իր նախկին նշանակությունը՝ Երվանդաշատը վերածվում է սովորական բերդաքաղաքի, իսկ հետագայում ընդհանրապես վերանում պատմական ասպարեզից։ Այժմ վաղեմի քաղաքից քիչ բան է պահպանված։ Նշմարվում են պարիսպների առանձին հատվածների ավերակները և մի քանի կառույցների հետքեր։

Երվանդակերտ.— Ամուր բերդ էր և նույնպես կառուցվել էր Երվանդ II-ի օրոք, Երվանդաշատ քաղաքի մատույցները պաշտպանելու համար։ Հիշատակություններից երևում է, որ այն եղել է շատ գեղեցիկ։ Խորենացին Երվանդակերտը նկարագրում է իրեն հատուկ պատկերավոր ոճով. «Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, գրում է նա,— զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք։ Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբք և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիբ. իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբովն զայլ բոլորակութիւն ական»։ Երվանդակերտի պաշտպանական կառույցների ավերակները և այլ կառույցների հետքերը պահպանվում են առայսօր։

Բագարան.— Այս քաղաքը ևս կառուցվել է Երվանդ II-ի օրոք (III դ. մ. թ. ա.)։ Գտնվում էր Ախուրյանի աջ ափին, Երվանդաշատից 4—5 կմ հյուսիս։ Խորենացին վկայում է, որ Բագարանի կառուցումից հետո Արմավիրից այստեղ են տեղափոխում հեթանոսական կուռքերը, այդ պատճառով էլ քաղաքը կոչվում է Բագարան («աստվածարան», «կուռքարան»)։ Բագարանի մոտ տնկված անտառը, որ կոչվում էր «Մենդոց» անտառ, հավանաբար փոխարինել է Արմավիրի «Սոսյաց» պուրակին և ունեցել է կրոնական նշանակություն։ Բագարանն իր զարգացման նոր շրջանն է ապրում հիմնադրումից ավելի քան 1100 տարի անց՝ IX դարի երկրորդ կեսից, երբ դառնում է Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքը։ Սակայն շատ շուտով Բագարանը մայրաքաղաքի իր դերը զիջում է Երազգավորսին։ Այն մայրաքաղաք է եղել միայն Աշոտ I-ի օրոք՝ 885—890 թվականներին։ X—XIII դարերում Բագարանը մի քանի տասնյակ հազար բնակիչ ունեցող քաղաք էր, որը բանուկ ճանապարհով կապված էր հռչակավոր Անիի հետ։ Բագարանի ավերակները, հատկապես գերեզմանոցն ու պաշտպանական պարսպի հետքերը, «Մենդոց» անտառի մնացորդները մինչև օրս էլ նշմարվում են։ Վաղեմի Բագարանի տեղում այժմ կա մի փոքրիկ գյուղ, որի դիմաց, Ախուրյանի մեջ ցցված ժայռի կատարին բավական լավ պահպանվել է հավանաբար IX կամ X դարում կառուցված մի գեղեցիկ մատուռ։ Պահպանվել են նաև հոյակապ մայր տաճարի ավերակները։

Արտագերս կամ Արտագերս.— Հին Հայաստանի անառիկ բերդերից էր, որ հիշատակված է հայ և օտար հեղինակների երկերում։ IV դարում Արշակ II-ը Կամսարականների կալվածքների և մյուս բերդերի հետ միասին գրավում է նաև Արտագերսը՝ վերակառուցելով և դարձնելով արքունի բերդ-գանձարաններից մեկը։ Երբ 368 թ. Շապուհ II-ը Արշակ II-ին Տիզբոն է կանչում և նենգորեն Անհուշ բերդում բանտարկելուց հետո մի ստվարաթիվ բանակ է ուղարկում Հայաստանն ավերելու ու նվաճելու, Փառանձեմ թագուհին և թագաժառանգ Պապը արքունական գանձերով և 11000 բերդապահ զորքով ամրանում են Արտագերսում։ Բերդապահ զորքը թագուհու գլխավորությամբ ավելի քան մեկ տարի (368—369) հերոսաբար դիմադրում են թշնամուն, որը Հայաստանի բազմաթիվ գավառներ ավերելուց հետո եկել պաշարել էր Արտագերսը։ Պապին հաջողվում է պաշարումից դուրս գալ և փախչել հռոմեացիների մոտ, իսկ թագուհին, իշխանները և բերդապահ զորքը սովի, համաճարակի և զի-

նամթերքի սպառման պատճառով ստիպված են լինում 369 թ. հանձնվել։ Պարսիկները գրավելով Արտագերսը, կողոպտում են արքունական գանձերը, գերի վերցնում Փառանձեմին և տանջամահ անում։ Դրանից հետո Արտագերսը դադարում է բերդ լինելուց։ Մինչ այժմ նրա աշխարհագրական դիրքը չի ճշտված։ Ոմանք այն նույնացնում են հետագայի Կապույտ բերդի հետ։

Կապույտ բերդ.— Իր անառիկությամբ հռչակված այս բերդը գտնվում էր այժմյան Կաղզվանի մոտ, Արաքսի հովտում։ Այն հայտնի է նաև էական նշանակություն ունեցող քաղաքական մի շարք դեպքերով։ Դրանցից առանձնապես հիշատակության արժանի է Բագրատունի Սմբատ I-ի օրոք տեղի ունեցածը։ Ատրպատականի արաբ էմիր Յուսուֆը Հայաստանը գրավելու և իր էմիրությանը ենթարկելու նպատակով մի քանի արշավանքներ է կատարում։ Նա 909 թ. մեծ բանակով մտնում է Հայաստան և ավերում նրա հյուսիսային ու հյուսիս-արևելյան շրջանները։ Հայոց թագավոր Սմբատ I-ը ստիպված է լինում իր ունեցած փոքրաթիվ զորքով ամրանալ Կապույտ բերդում։ Թշնամին շրջապատում է բերդը։ Սակայն պաշարվածները մեկ տարի հերոսաբար դիմադրում են։ Միայն սովը ու ջրի պակասությունն է հարկադրում նրանց անձնատուր լինել։ Յուսուֆը գերում է Սմբատին և 914 թ. տանջամահ անելով՝ դիակը գամում է խաչի վրա։

Արշարունիքում եղած վանքերից նշանավոր էին X դ. կառուցված Կապույտ քարը և Կամրջաձորը։ Կամրջաձորի վանքը կարևոր դեր է խաղացել հայ միջնադարյան մշակույթի պատմության մեջ։ Կամրջաձորի մասին առաջին անգամ հիշատակել է Ասողիկը։ Կիրակոս Գանձակեցու ասելով այն կառուցվել է Փոքր Հայքի Լիկանդոն գավառի Կամրջաձոր վանքից եկած կրոնավորների կողմից՝ Աբաս թագավորի հովանավորությամբ 939 թվականին։ Վանքը կարճ ժամանակամիջոցում ձեռք է բերում մեծ հեղինակություն։ Սակայն, ինչպես գրում է Ասողիկը, Աբասի հաջորդ Աշոտի ժամանակ այն հիմնահատակ կործանվում է երկրաշարժից։ Աշխարհագրական դիրքը չի ճշտված։ Ոմանք նրա ավերակները նույնիսկ տեղադրում են Սուրմալուի կողմերում։

Բագրևանդ

Բագրևանդ գավառը տարածվում էր Արածանի գետի վերնագավառում։ Իր տարածքով մոտավորապես համապատասխանում է Ալաշկերտի դաշտին, որը հայտնի է իր բերրի հողերով և հացահատիկային կուլտուրաներով։ Ենթադրվում է, որ այն եղել է Բագրատունի նախարարների տոհմական գավառը, և Բագրևանդ ու Բագրատունի անունները կապ ունեն իրար հետ։

Գավառն ուշադրության արժանի վայրեր շատ ունի։

Վաղարշակերտ.— Իբրև բերդ գոյություն է ունեցել դեռևս ուրարտական ժամանակաշրջանում։ Հետագայում դրա շուրջը ծավալվել է համանուն քաղաքը, որի կառուցումը վերագրում են Հայոց Վաղարշակ թագավորին։ Վաղարշակերտ անունը հետագայում ձևափոխվելով դարձել է Ալաշկերտ։ Այստեղի ուրարտական բերդի ավերակների զգալի մասը թաղված է հողի տակ։ Այլ բերդերի ավերակների պես թուրքերն այն կոչել են Թուփրախկալա («հողե բերդ»)։ Հին Վաղարշակերտի և նրա ուրարտական բերդի ավերակները գտնվում են Արածանիի աջակողմյան վտակ Շարիանի գետակներից մեկի ափին։

Բագավան.— Բառացի նշանակում է դիցավան, կուռքավան։ Առաջին հիշատակություններում կոչված է քաղաքագյուղ (կամ գյուղաքաղաք) և ավան, իսկ հետագայում՝ գյուղ։ Գտնվում է Արածանիի վերնագավառում, Նպատ լեռան հյուսիս-արևմտյան ստորոտում։ Այժմ էլ գոյություն ունի և օտարացած անունով կոչվում է Ուչքիլիսե (երեք եկեղեցի)։ Այստեղ է գտնվում ս. Հովհաննես վանքը։ Ըստ ավանդության այստեղ է առաջին անգամ տոնվել հայոց նոր տարին՝ Նավասարդի տոնը։ Մի այլ ավանդության համաձայն, իբր, այստեղ է մկրտվել Տրդատ III-ն իր զորքով, որից հետո քրիստոնեությունը տարածվել է ամբողջ Հայաստանում։

Ձիրավ.— Փոքրիկ դաշտ է, Ալաշկերտի հարավ-արևելյան մի փոքրիկ հատվածը, որ տարածվում էր Արածանի գետի վերին հոսանքում, նրա ձախ կողմում, Նպատ լեռան հյուսիսային ստորոտին։ Այստեղ 371 թ. տեղի է ունեցել արյունահեղ ճակատամարտ հայկական զորքի (որին օժանդակում էր նաև հռոմեական մի զորամաս) և պարսկական մեծաթիվ բանակի միջև։ Ճակատամարտը վերջանում է հայրենի երկրի անկախության համար մարտնչող հայերի հաղթանակով։ Պարսկական զորքերը դուրս են շպրտվում մեր երկրի սահմաններից և Պապ թագավորը վերջնականապես հաստատվում է Հայաստանի գահի վրա։

Ծաղկոտն

Այս գավառը տարածվում էր Ծաղկանց լեռների շրջանում և դրա համար էլ ստացել էր Ծաղկոտն անունը։ Սկզբում պատկանում էր Գնու-

նիների նախարարական տանը, իսկ հետագայում, հավանաբար IV դարի կեսերին, անցնում է Արշակունիների արքունիքին։ V—VII դդ. հայոց զորքերն այստեղ էին համբարում ամառան ամիսներին։ Ծաղկոտն գավառը հայտնի է հիշարժան մի շարք վայրերով։

Զարեհավան.— Հին Հայաստանի հելլենիստական տիպի նշանավոր քաղաքներից մեկն էր։ Հիմնադրվել էր մինչ Արտաշեսյան հարստության հաստատումը։ Հավանաբար գտնվում էր վերը նշված Բագավանից ոչ հեռու՝ Թավրիզ—Կարին—Տրապիզոն քարավանային ճանապարհի վրա։ Զարեհավանը IV դարում փարթամ քաղաք էր։ Այստեղ հայերից բացի բնակվում էին նաև հրեա արհեստավորներ ու առևտրականներ, որոնք բերված էին դեռևս Տիգրան II-ի (95—56 թթ. մ. թ. ա.) և նրա որդի Արտավազդ II-ի օրոք։ Սակայն IV դարի (մ. թ.) 60-ական թվականներին պարսկական զորքերը Հայաստանի մի շարք քաղաքների հետ միասին ավերում են նաև Զարեհավանը և քաղաքի բնակչության մեծ մասին, հատկապես արհեստավորներին ու առևտրականներին, գերելով քշում են Պարսկաստանի խորքերը։ Դրանից հետո Զարեհավանը դադարում է քաղաք լինելուց և վերածվում է սովորական գյուղի։ Զարեհավանում է ծնվել Թոնդրակյան շարժման հիմնադիրն ու առաջին ղեկավարը՝ Սմբատը, որն իր ծննդավայրի անունով կոչվել է Սմբատ Զարեհավանցի։

Շահապիվան.— Վանք և բնակավայր։ Հավանաբար գտնվում էր Բագավանից ոչ հեռու։ Այստեղ 443 թ. գումարվել է եկեղեցական ժողով, որը հաստատել է մի շարք օրենքներ ու կանոններ։ Այդ օրենքներն ուղղված էին V դարում տարածված աղանդավորական-սոցիալական շարժման՝ մծղնեության դեմ։

Շահապիվանը միաժամանակ ավան էր և հավանաբար գտնվում էր Դիադին քաղաքից ոչ հեռու։ Շահապիվանում հին ժամանակներից տեղի էին ունենում մարդաշատ տոնահանդեսներ և խաղեր, որոնք հիմնականում կազմակերպվում էին Նավասարդի կամ Ամանորի տոներին։

Անգղ.— Բերդ և գյուղաքաղաք, որը հայ ժողովրդի պատմության մեջ նշանավոր է դարձել 449 թ. տեղի ունեցած դեպքերով։ Այդ թվականի աշնանը պարսից Հազկերտ II արքան Տիզբոն կանչված հայ նախարարների հետ Հայաստան է ուղարկում պարսկական հատուկ զորագունդ և բազմաթիվ մոգեր հայերին կրոնափոխելու համար։ Նրանց մուտքը Հայաստան առաջացնում է դիմադրական շարժում։ Առաջինը ոտքի են կանգնում Անգղ գյուղաքաղաքի և նրա շրջակայքի բնակիչները։ Անգղում տեղի է ունենում զինված ընդհարում։ Ապստամբ ռամիկ ժողովուրդը Ղևոնդ երեցի գլխավորությամբ ոչնչացնում է պարսկական

մոգերի կանգնեցրած կրակապաշտական ատրուշանը և հարձակվելով պարսիկ զորագնդի ու մոգերի վրա, նրանց դուրս է քշում գյուղաքաղաքից։ Անգղում տեղի ունեցած այս դեպքով սկսվում է հայ ժողովրդի ազատագրական այն հոյակապ պայքարը, որ ուղղված էր սասանյան Պարսկաստանի դեմ և հայտնի է Վարդանանց պատերազմ անունով։

Վարշակի ջերմուկներ.— Հանքային տաք աղբյուրներ Ծաղկանց լեռների հյուսիսային ստորոտներին, այժմյան Դիադին գյուղաքաղաքի մոտակայքում։ Բաղադրությունը ծծմբային է, բարձր ջերմությամբ։ Պատմական հիշատակություններից երևում է, որ այս հանքային տաք աղբյուրները դեռևս հնագույն ժամանակներից տեղացիներն օգտագործել են բուժման նպատակներով։ Ժողովուրդն այդ տաք ու բուժիչ հատկություններ ունեցող ջրերի մասին ստեղծել է մի քանի ավանդություններ։

Վանանդ

Վանանդ գավառը գրավում էր այժմյան Կարսի և Մարիղամիշի շրջանները։ Ունի առողջարար օդ և զով կլիմա։ Մարիղամիշի շրջանն ամբողջապես անտառապատ է, իսկ մյուս մասն ունի փարթամ արոտավայ-



Նկ. 1.

Կարս քաղաքի համայնապատկերը XIX դ. առաջին քառորդի դրությամբ։



Նկ. 2

Կարս. Առաքելոց եկեղեցին, X դ.

բեր, խոտհարքներ և արգավանդ հողեր։ Ցմռանն այստեղ լինում են սաստիկ ցրտեր։ Վանանդում իշխում էին նույնանուն նախարարները, իսկ VIII դ. վերջերից այս գավառի տեր են դառնում Բագրատունիները։

Աշոտ III-ի կողմից Կարսում կառավարիչ նշանակված նրա եղբայր Մուշեղ Բագրատունին 961 թվականին իրեն հռչակում է Բագավոր։ Այսպիսով հիմնադրվում է Կարսի կամ Վանանդի Թագավորությունը, որը



Նկ. 3

Կարս. Հին քաղաքի թաղամասը.

ենթակա էր Անի—Շիրակի թագավորությանը։ Վերջինիս անկման շրջանում Վանանդի թագավորությունը նախ ենթարկվում է Բյուզանդիային, իսկ 1065 թ. գրավվում սելջուկ Թուրքերի կողմից։

Կարս.— *Այս քաղաքը Վանանդի ամենանշանավոր բնակավայրն է։ Գտնվում է Կարս գետի միջին հոսանքում։ Նրա անունը աղավաղելով դարձրել են Ղարս։ Կարս անունը (ինչպես և Կարինը) կապված է հնագույն ժամանակներում այս կողմերում բնակվող կարինիտներ ցեղախմբի անվան հետ, որի մասին առաջին անգամ հիշատակել է Քսենոփոնը։ Մեր առաջին մատենագիրները Կարսը կոչել են բերդ («Կարուց բերդ»), իսկ X դ. երկրորդ քառորդից ի վեր այն հիշատակվում է իբրև ամուր բերդաքաղաք։ Հենց այդ ժամանակներում էլ Կարսը մի քանի տասնյակ տարի (928—961) դառնում է Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքը և իբրև այդպիսին արագ թափով բարեկարգվում է։ Կառուցվում է Կարսի Կաթողիկե եկեղեցին, որը մինչև օրս էլ կանգուն է ու համարվում է հայկական միջնադարյան ճարտարապետության հայտնի հուշարձաններից, էլ ավելի ամրացվում Կարսի հռչակավոր բերդը։ Կարսը միջնադարյան Հայաստանի առևտրի ու արհեստագործության խոշոր կենտրոններից էր։*



Նկ. 4

Կարսի «ջրի» թաղը.

բանուկ ճանապարհներով կապված էր Սև ծովի հարավային ափի նավահանգիստների, Անիի, Դվինի և այլ քաղաքների հետ։ Նրա բնակչության թիվը XI—XII դարերում 50 հազարից անցնում էր։ Սակայն մոնղոլական տիրապետության հենց սկզբից Կարսն աստիճանաբար կորցնում է իր առևտրաարհեստավորական նշանակությունը, նվազում է բնակչության թիվը։ Բայց և այնպես շարունակում է առայսօր գոյություն ունենալ իբրև գավառական տիպի քաղաք։

Շիրակ

Ավանդաբար Շիրակ անունը կապել են Հայկ նահապետի սերնդին պատկանող շատակեր Շարայի անվան հետ։ Շիրակը փռված էր Ախուրյան գետի երկու ափերին։ Դաշտային գավառ էր, առանձնապես հայտնի էր հացահատիկներով, արգավանդ սեահողերով ու զով կլիմայով։



Նկ. 5

Անի. Սմբատյան պարիսպները և Ավագ դուռը

Արշակունիների թագավորության շրջանում Շիրակի մեծագույն մասը պատկանում էր Կամսարականների նախարարությանը։ Այստեղ կալվածքներ ունեին նաև Դիմաքսյաններն ու Աշհառունիները։ Արաբական տիրապետության շրջանում ուշնշյման վտանգի առաջ կանգնած Կամսարականները VIII դ. վերջերին ստիպված են լինում իրենց կալվածքները, որոնց թվում և Շիրակը, վաճառել Բագրատունիներին։ IX դ. երկրորդ կեսից ի վեր Շիրակը դառնում է Հայաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի կենտրոնը։ Այստեղ էին գտնվում Երազգավորս ու Անի մայրաքաղաքները, մշակույթի շատ օջախներ։

Անի.— Միջնադարյան Հայաստանի այս մեծահռչակ քաղաքը, որ գտնվում էր Ախուրյան գետի աջ ափին, մինչև X դ. երկրորդ կեսը ավոր-յական բերդ էր։ Նրա մասին առաջին անգամ հիշատակվում է V դարում։ Նրա արագ զարգացումը սկսվում է հատկապես այն ժամանակներից, երբ դառնում է Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք (961 թ.)։ Ընդամենը 40—50 տարվա ընթացքում Անին դառնում է Մերձավոր Արևելքի խոշորագույն քաղաքներից մեկը։



Նկ. 6

Անիի մայր տաճարը, X—XI դդ.

Անիի արագ զարգացումը պետք է բացատրել ոչ միայն այդ ժամանակվա Հայաստանի ընդհանուր տնտեսական վերելքով, քաղաքական նպաստավոր պայմաններով և մայրաքաղաք լինելու հանգամանքով, այլև նրա աշխարհագրական նպաստավոր դիրքով։ Այն գտնվում էր Բագրատունիների թագավորության գրեթե կենտրոնում և մի շարք հարմար ու բանուկ ճանապարհներով կապված էր ինչպես Հայաստանի տարբեր մասերի, այնպես էլ հարևան երկրների խոշոր քաղաքների հետ։ Անիի առևտրատնտեսական հարաբերությունները չէին սահմանափակվում երկրի ներսում, նա այդպիսի կապեր ուներ նաև Վրաստանի, Աղվանքի, Ատրպատականի, Պարսկաստանի, Արևմտյան Հայաստանի, Սև ծովի առափնյա շրջանների, Գալիցիայի, Լեհաստանի, Հարավային Ռուսիայի և, նույնիսկ, հեռավոր Չինաստանի հետ։



Նկ. 7

Անի. Փրկչի եկեղեցին, XI դար

Անին ունեցել է միջնադարյան քաղաքներին հատուկ կառուցվածք։ Բաղկացած էր միջնաբերդից, շահաստանից (կամ բուն քաղաք) և արվարձաններից։ Միջնաբերդը գտնվում էր քաղաքի հարավ-արևմտյան մասում, ժայռոտ բլրի վրա։ Այստեղ էին գտնվում թագավորի, նրա ընտանիքի ու շքախմբի պալատները ու ապարանքները, ինչպես նաև պա-

լատի եկեղեցին։ Միջնաբերդից հյուսիս-արևելք փռված սարահարթի վրա էր գտնվում բուն քաղաքը, որը նույնպես պատած էր պաշտպանական աշտարակավոր պարսպով։ Միջնաբերդի պարիսպը կոչվում էր Ներքին կամ Փոքր պարիսպ, իսկ շահաստանինը՝ Արտաքին կամ Մեծ պարիսպ։ Շահաստանի բնակիչների մեծագույն մասը կազմում էին արհեստավորներն ու առևտրականները։ Անին ուներ իր շքեղ հյուրանոցներն ու իջևանները։ Այն առևտրական խոշոր կենտրոն էր։ Նրա առևտուրը նշանակալի մասով մեծածախ էր և կրում էր տարանցիկ առևտրի բնույթ։ Քաղաքի XIII դ. խոշոր կապիտալներ ունեցող մեծահարուստ վաճառականներից էին Տիգրան Հոնենցը և Ավետենց Սահմադինը։ Նրանք ունեին հսկայական կալվածքներ, դրամական միջոցներ, հյուրանոցներ, իջևաններ, բաղնիքներ, ջրաղացներ, ձիթհանքեր և այլն։

Անիում XIII դարում գոյություն ունեին ավելի քան 40 տեսակի արհեստներ, որոնք տեղաբաշխված էին ըստ ճյուղերի և յուրաքանչյուրը քաղաքում զբաղեցնում էր առանձին շարք, փողոց կամ թաղամաս։ Առավել տարածված արհեստներից էին զինագործությունը, դարբնությունը, ոսկերչությունը, մանածագործությունը, կաշեգործությունը, որմնադրությունը, քարտաշությունը, կավագործությունը, թամբագործությունը։ Անիի արհեստավորները XII—XIII դդ. համախմբված էին արհեստակցական «եղբայրությունների» համքարությունների մեջ։

Քաղաքի արվարձաններում բնակվում էին աղքատներն ու ընչազուրկները, որոնց գերակշռող մասը զբաղվում էր գյուղատնտեսությամբ և սեզոնային աշխատանքով։ Նրանք ապրում էին խղճուկ խրճիթներում և գետնափոր հյուղերում։

XI դ. սկզբից Անիում արդեն գոյություն ուներ քաղաքային ինքնավարություն, որի գլուխ էր կանգնած քաղաքի ավագների խորհուրդը՝ «երիցանին»։ Քաղաքի կառավարմանը մասնակցում էին բարձր ազնվականությունն ու եպիսկոպոսը։ Բագրատունիների թագավորության շրջանում Անիի քաղաքագլուխը նշանակվում է Բագրատունի թագավորի, իսկ Զաքարյանների իշխանության օրոք՝ Զաքարյան իշխանների կողմից։

Անիի բնակչության թիվը XI—XIII դդ. հասել էր մոտ 100 հազար մարդու, գուցեև ավելի։

Անիի քաղաքական պատմությունը լեցուն է ելևէջներով։ Բագրատունիների թագավորության անկումից հետո (1045 թ.) նա արտաքին նվաճողների կողմից մի շարք անգամ ենթարկվել է ավերման և մի քանի անգամ անցել է ձեռքից ձեռք։ Սակայն մինչև մոնղոլական ծանր

լծի հաստատումը Հայաստանում Անիի զարգացումը, ընդհանուր առմամբ, շարունակվում էր։ Մոնղոլական տիրապետության շրջանում երկրի տնտեսական ընդհանուր անկման հետ միասին, Անին արագ կերպով կորցնում է իր նշանակությունը, անկում են ապրում արհեստագործությունն ու առևտուրը, բնակչությունը հոծ զանգվածներով բռնում է արտագաղթի ուղին։ Այդ բոլորին ավելանում է 1319 թ. կործանիչ երկրաշարժը, որի հետևանքով փլատակների են վերածվում քաղաքի հիասքանչ կառույցները։ Իր նշանակությունը կորցրած Անին երկրաշարժից հետո աստիճանաբար վեր է ածվում սովորական գյուղի։

Անիով միջնադարյան հայ ճարտարապետության մեջ բացվեց նոր ժամանակաշրջան՝ անիական ճարտարապետության շրջանը։ Հայոց այդ հռչակավոր մայրաքաղաքի հիասքանչ կառույցների՝ Ներքին և Արտաքին պարիսպների, ջրմուղու, Ախուրյանի կամուրջների, արքայական և իշխանական պալատների, շքեղ տաճարների (Մայր տաճար, Գագկաշեն եկեղեցի, Տ. Հոնենցի եկեղեցի, Հովվի եկեղեցի և այլն) և այլ գլուխգործոցների ավերակները մինչև օրս էլ հիացմունք ու զարմանք են պատճառում մասնագետներին։ Անիի ավերակներն իրենց վրա են գրավել պատմաբանների, հնագետների, ճարտարապետների, արվեստագետների ուշադրությունը։ Անիի ուսումնասիրությամբ զբաղվել են Ն. Մառը, Թ. Թորամանյանը, Հ. Օրբելին, Հ. Աբիխը, Բրոսսեն, Լինչը, Ղ. Ալիշանը, տողերիս հեղինակը և շատ ուրիշներ։

Երազգավորս.— Գյուղաքաղաք էր։ Գտնվում էր այժմյան Լենինական քաղաքից հարավ-արևմուտք, Ախուրյան գետի աջ ափին։ Առաջին անգամ հիշատակվում է X դարում։ Սկզբում կոչվում էր Երազգավորս, հետագայում՝ Շիրակավան (իսկ Թուրքերը կոչեցին Բաշ-Շորագյալ)։ 890—928 թթ. Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքն էր։ Սակայն առանձին զարգացում չունեցավ և մնաց իբրև փոքրիկ քաղաք։ Այստեղ Բագրատունի Սմբատ I-ին թագավորը IX դ. վերջին կառուցել է Ամենափրկիչ կոչված հոյակապ եկեղեցին։ Ասողիկը գրում է, որ այն ուներ բարձր գմբեթ և կառուցված էր սրբատաշ քարերով։ Այժմ պատմական Երազգավորս գյուղաքաղաքի տեղում մի փոքրիկ գյուղ կա, իսկ նրա տաճարը փլված է։

Կումայրի.— Եղել է գյուղ։ Ենթադրվում է, որ Կումայրի անունը կապված է հնագույն կիմեր ցեղի անվան հետ։ Այս գյուղը նշանավոր է դառնում արաբական խալիֆայության դեմ ուղղված 774—775 թթ. աղատագրական պատերազմների ժամանակ։ Ժողովրդաազատագրական



Նկ. 8

Երերույթի պատճառ, V դար

այս շարժման ազդանշանը տրվում է Կումայրում՝ Արտավազդ Մամիկոնյանի գլխավորությամբ։ Կումայրի անունը հետագայում աղավաղվելով դարձել է Գյումրի, իսկ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միակցելուց հետո այստեղ կառուցվեց բերդ, և բնակավայրը կոչվեց Ալեքսանդրապոլ (այժմ Լենինական), որը ստիպողաբար վերածվեց քաղաքի։

Շիրակում կառուցվել էին բավական շքեղ վանքեր ու տաճարներ։ Այստեղ էին գտնվում Մարմաշենի (Կումայրիից հյուսիս-արևմուտք, Ախուրյանի ձախ ափին), Արգինայի (Նրազգավորսի մոտ, նրանից արևմուտք), Հոռոմոսի (Անիի մոտ, նրանից հյուսիս-արևելք՝ Ախուրյանի աջ ափին), Տեկորի, Մրենի (Ախուրյանի ստորին շրջանում, գետի աջ ափին), Հառիճի (Արթիկի մոտ, նրանից հարավ-արևելք), Արթիկի, Երերույքի (Անիպեմզայում), Թալինի (Վերին Թալինում) և Դպրևանքի վանքերը։ Դրանք խոշոր դեր են խաղացել միջնադարյան Հայաստանի մշակույթի պատմության մեջ։ Այդ վանքերի ու տաճարների մեծագույն մասը կառուցվել է X—XI դարերում և ճարտարապետական կարևոր հու-

Նկ. 9

Մարմաշեն, X—XI դար

շարձաններ են, որոնք կանգուն կամ ավերակների ձևով պահպանվել են մինչև մեր օրերը։

Մարմաշենի հռչակավոր եկեղեցին գտնվում է այժմյան Ախուրյանի շրջանի Մարմաշեն (նախկինում՝ Վերին Ղանլիջա) գյուղի մոտ։ Կառուցվել է զորավար Վահրամ Պահլավունու կողմից 986—1029 թթ., այդ մասին եկեղեցու հարավային պատի արտաքին երեսին թողնելով հատուկ մատնանշան արձանագրություն։ Եկեղեցին կառուցված է սրբատաշ կարմրավուն քարից, գմբեթավոր է, արտաքինից սյունազարդ։ Գլխավոր տաճարին կից եղել են երկու փոքր եկեղեցիներ և ժամատուն։ Այստեղ է թաղված վերջին Բագրատունիների շրջանի հայտնի զորավար Վահրամ Պահլավունին։ Եկեղեցիների վրա կան մի շարք արձանագրություններ։ Դրանցից մեկի հիմքում հայտնաբերվել են հեթանոսական տաճարի

մնացորդներ։ Մարմաշենից ոչ հեռու գտնվում են Վահրամաբերդի (այժմյան Վահրամաբերդ գյուղի մոտ) ավերակները, որոնք հաղիվ են նշմարվում։

Մարմաշենի նման Հառիճը ևս վանք էր։ Գտնվում է Արթիկ քաղաքից մոտ 3 կմ արևելք, Հառիճ գյուղում։ Այն ճարտարապետական ամբողջական համալիր է, բաղկացած երկու եկեղեցիներից՝ ս. Աստվածածին և ս. Գրիգոր։ Վերջինս կառուցվել է XIII դ. սկզբին՝ Զաքարե ամիրսպասալարի նախաձեռնությամբ։ Ս. Աստվածածին եկեղեցու պատերին կան XII—XIV դդ. մի շարք արձանագրություններ։ Վանքի ամբողջ համալիրը կառուցվել է VII—XIII դարերում։ Մեծ եկեղեցու (Աստվածածին) ճակատին պահպանվում են Զաքարե և Իվանե եղբայրների հասակով մեկ քանդակները։ Իր կառուցվածքով այս եկեղեցին շատ նման է Գեղարդին։ Կենտրոնագմբեթ է, պատերը շարված են գորշ կարմրավուն և սև քարով։ Եկեղեցու առաստաղի զգալի մասը ստալակտիտային քանդակներ են և, ընդհանրապես, հայտնի է իր նրբաճաշակ քանդակներով։ Համալիրը բավական լավ է պահպանված։

Արթիկի վանքը, որ սովորաբար կոչվում է Լմբատավանք, գտնվում է Արթիկ քաղաքից մոտ 2 կմ հարավ-արևմուտք, կառուցված է XII—XIII դարերում՝ կարմիր տուֆից, և այժմ բավական լավ պահպանված է։ Նրա եկեղեցիներից մեկը կոչվում է ս. Ստեփանոս, որի պատերի վրա կան XII—XIII դարերի արձանագրություններ։ Իսկ անմիջապես Արթիկ քաղաքում գտնվող ս. Աստվածածին կոչվող եկեղեցին, որը նույնպես կանգուն է, ավելի հին է՝ կառուցվել է V—VII դդ.։

Երերույթը V դարի գործ է, ճարտարապետական ինքնատիպ մի համալիր, որ մեր օրերն է հասել կիսաքանդ վիճակում։ Նրա տաճարը բազիլիկա է և կառուցված է բնական ժայռի աստիճանավոր պատվանդանի վրա, խոշոր քարերով։ Տաճարն ունեցել է սյունազարդ սրահներ։ Այժմ դրանք քանդված են. պահպանված են միայն դրանց մնացորդները, որոնց վրա կան V դարին հատուկ քանդակներ։ Եկեղեցու հարավային դռան վրա կա արձանագրություն (1036 թ.)։ Եկեղեցուց ոչ հեռու, Ախուրյանի ափին կան գերեզմաններ, խաչքարեր և բնակավայրի ավերակներ։ Եկեղեցու մոտակայքում հավանաբար եղել է արհեստական լճակ, որի հետքերն անգամ չեն նշմարվում։

Թալինում (Վերին Թալին) գտնվում են ճարտարապետական երկու կարևոր հուշարձաններ՝ մեծ և փոքր երկու եկեղեցիներ, որոնցից երրորդը վատ է պահպանվել, իսկ առաջինը հիմնովին վերականգնվել է Հայրենական մեծ պատերազմից հետո (1947 թ.) և գտնվում է բարվոք



Նկ. 10

Լմբատավանքի ս. Ստեփանոս եկեղեցին, VII դ.

վիճակում։ Կաթողիկե մեծ եկեղեցին կառուցել է Ներսեհ Կամսարականը VII դարում։ Այն կենտրոնագմբեթ տաճար է, էջմիածին տաճարից ավելի մեծ չափերի և համարվում է իր ժամանակաշրջանի ճարտարապետական հայտնի կոթողներից մեկը։ Ունի բազմաթիվ քանդակներ, արձանագրություններ, որոնց մի մասը եղծված է, շրջակայքում կա ընդարձակ գերեզմանոց։ Թալինում նշմարվում են նաև միջնադարյան բերդի մնացորդներ։ Իսկ Վերին ու Ներքին Թալինների միջև գտնվում են Թալինի հայտնի քարավանատան ավերակները, որոնք մեզ են հասել բավական լավ վիճակում։ Վերին Թալինից հյուսիս Մաստարա հայտնի գյուղն է, իր VII դարի ոչ պակաս հայտնի եկեղեցիով, որը Ավանի եկեղեցու նման հնամարվում է առաջին կենտրոնագմբեթ տաճարներից։

Դպրեանքը միջնադարյան Հայաստանի հայտնի վանքերից է, մշա-

կուլթի նշանավոր կենտրոն։ Ենթադրվում է, որ այստեղ է իր նախնական կրթությունը ստացել Անանիա Շիրակացին։ Հավանաբար հիմնադրվել է VII դարում, իսկ X դարում այն հիմնովին վերանորոգվել է Աշոտ II-ի եղբայր Աբաս թագավորի կողմից։ Վանքը գտնվում էր Անի քաղաքից հյուսիս, համանուն գյուղում և կոչվել է նաև Կարմիր վանք։ Ոմանք գտնում են, որ Դպրևանքի ավերակները պետք է փնտրել այժմյան Լենինականի մոտ՝ Ջերքեզի ձորում, որտեղ հին վանքը, թմբի վրա կանգուն է եղել մինչև 1837 թվականը, երբ նախկին Գյումրի գյուղը համարվեց քաղաք, վանքն իր շրջակայքով ընկավ բերդի շինության շրջանակների մեջ և 1852 թ. զինվորականների կողմից քանդվեց ու տեղում կառուցվեց զինանոց։ Պատմագիրների հիշատակություններից երևվում է, որ Դպրևանքը կառուցված է եղել սրբատաշ սև քարով և նման է եղել Կարսի Առաքելոց եկեղեցուն։

Արագածոտն

Ընդարձակ դավառ էր և ընդգրկում էր Ապարան գետի ակունքներից մինչև Ախաքս ընկած տարածքները։ Պատկանում էր Արշակունի թագավորներին, իսկ մարզպանների տիրապետության շրջանում (V—VII դդ.) մասնատվում է առանձին նախարարական տների և էջմիածնի վանքի միջև։ Արաբական տիրապետության անկումից հետո Արագածոտնը ամբողջությամբ մտնում է Բագրատունիների Անի—Շիրակի թագավորության մեջ։

Արագածոտնումն էին գտնվում Արմավիր ու Վաղարշապատ քաղաքները և պատմական բազմաթիվ այլ վայրեր։

Արմավիր.— Աշխարհի հնագույն քաղաքներից է։ Գտնվում էր այժմյան Հոկտեմբերյանի շրջանի Արմավիր գյուղի (Ղուրդուղուլի) մոտ։ Կառուցվել է ուրարտական Արգիշտի I թագավորի օրոք՝ VIII դարի առաջին կեսում (մ. թ. ա.) և նրա անունով կոչվել է Արգիշտիխինիլի («Արգիշտիի քաղաք»)։ Արգիշտիխինիլին փաստորեն հնագույն հայկական՝ Ուրարտական պետության երկրորդ մայրաքաղաքն էր, նրա հյուսիսային երկրների ամենանշանավոր կենտրոնը։ Ուրարտական պետության անկման շրջանում՝ VII դարից ի վեր (մ. թ. ա.), սկյութական արշավանքների հետևանքով Արգիշտիխինիլին ավերվում և կորցնում է իր նախկին նշանակությունը։ V կամ IV դարում (մ. թ. ա.) այն վերաշինվում է Երվանդյան թագավորների կողմից և դառնում նրանց Արարատյան թագավորության մայրաքաղաքը։ Դրա հետ միասին Արմավիրն այդ ժամանակներում

Հայաստանի հեթանոսական կրոնի գլխավոր կենտրոնն էր։ III դ. վերջերին (մ. թ. ա.) Երվանդյան վերջին թագավորը, որ նախորդել է Արտաշեսյան հարստության հիմնադիր Արտաշես I-ին, երկրի մայրաքաղաք է դարձնում իր նոր կառուցած Երվանդաշատ քաղաքը։ Այն ժամանակից ի վեր մեր պատմագիրները Արմավիրը հիշատակում են իբրև «լքված մայրաքաղաք»։ Այնուամենայնիվ, մինչև III—IV դարերը (մ. թ.) Արմավիրը Հայաստանի խոշոր քաղաքներից էր, իսկ հետագայում այն աստիճանաբար վերածվում է խղճուկ բնակավայրի։

Բլրի վրա գտնվելու պատճառով Արմավիրը երբեմն կոչվել է Բլուր։ Նրա ավերակները հազիվ են նշմարվում։ Այստեղ հայտնաբերվել են ուրարտական և հետագա շրջանի արձանագրություններ, նյութական մշակույթի զանազան մնացորդներ։ Բավական հարուստ նյութեր են հայտնաբերվում ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից պարբերաբար կատարվող պեղումների ընթացքում։

Վաղարշապատ.— Գտնվում էր այժմյան Էջմիածնի տեղում, բայց գրավում էր ավելի մեծ տարածք։ Հայաստանի վաղ շրջանի բնակավայրերից է և հնում կոչվում էր Վարդգեսավան։ Արշակունի Վաղարշակ I-ը և դարձնում է մայրաքաղաք՝ իր անունով կոչելով Վաղարշապատ։ Վաղարշապատը կոչվել է նաև Նոր քաղաք (Կայնոպոլիս), Քաղաքամայր, Արտեմիդա։ Արշակունիների թագավորության շրջանում, II դարից սկսած, Արտաշատի հետ միասին մայրաքաղաքի դեր էր կատարում նաև Վաղարշապատը։ Քաղաքը պարսպապատ էր։ Պաշտպանական պարսպի շուրջը փորված էր բավականաչափ լայն ու խոր փոս, որը քաղաքական վտանգավոր պահերին լցնում էին Քասախի ջրով։ Արշակունիների թագավորության անկումից հետո, մինչև X դարը Վաղարշապատը կորցնում է իր երբեմնի նշանակությունը։ Սակայն X—XIII դարերում այն նորից զարգանալով դառնում է Հայաստանի նշանավոր քաղաքներից մեկը։

Հին Վաղարշապատի քաղաքացիական բնույթի կառույցներից՝ արքունական ու իշխանական պալատներից ու ապարանքներից, հյուրանոցքունական ու իշխանական պալատներից, կամուրջներից ու այլ կառույցներից ոչինչ չի մնացել։ Հակառակ դրան, լիովին պահպանվել են եկեղեցիներն ու պահպանվել։ Հակառակ դրան, լիովին պահպանվել են եկեղեցիներն ու տաճարները՝ Մայր տաճարը, որ հետագայում կոչվեց Էջմիածին, Հռիփսիմեի, Գայանեի և Շողակաթի շքեղ եկեղեցիները։ Դրանցից առաջինը, ըստ հիշատակության, կառուցվել է IV դ. սկզբներին, իսկ Գայանեն, Հռիփսիմեն և Շողակաթը՝ VII դարում։ Հետագայում դրանք ենթարկվել են վերանորոգման։ Էջմիածինը մինչև XI դարը Հայաստանի քրիստոնեա-



Բնակելի տներ Մյասնիկյան փողոցում, XIX դ.

կան կրոնի կենտրոնն էր։ IX—XIII դդ. այն որոշ չափով կորցնում է համահայաստանյան նշանակությունը։ Այդ հարյուրամյակներում կաթողիկոսական աթոռը հաճախ փոխադրվում էր այլ վանքեր և, բացի դրանից, ի հակակշիռ էջմիածնի կաթողիկոսության, երկրի այլ մասերում ևս կազմավորվում են առանձին կաթողիկոսություններ, իրրև արդյունք ֆեոդալական մասնատվածության։ Էջմիածնի դերը մեծապես բարձրանում է XV դարից, երբ 1441 թ. այն դառնում է ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռանիստը։ Էջմիածնի և Հռիփսիմեի տաճարները հայ ճարտարապետության պատմության մեջ ունեն իրենց ուրույն տեղը։ Դրանցից առաջինը համարվում է քրիստոնեական հնագույն կառույցներից մեկն ամբողջ աշխարհում։

Զվարթնոց.— Այս հոյակապ տաճարը, որ կառուցվել է ներսես Տայեցի կաթողիկոսի կողմից (641—661), համարվում է VII դարի հայ ճարտարապետության գլուխգործոցը։ Հոյակապ սյունաշարքը և ճոխ քանդակները մեծ հմայք են տվել այդ եզակի կառուցվածքին։ Զվարթնոցը (որ բառացի նշանակում է հրեշտականոց) եղել է եռահարկ, խաչաձև հատակագծով և ներկայացրել է ճարտարապետական մի ամբողջ համալիր։ Զվարթնոցի ավերակները գտնվում են այժմյան էջմիածին քաղաքից մոտ 2 կմ արևելք։ Ավերակներին կից կառուցված է թանգարան։ Տաճարը ճարտարապետական առումով հիմնովին ուսումնասիրել է հայ ճարտարապետության պատմության խոշորագույն մասնագետ Թորոս Թորամանյանը։

Օշական և Փարպի.— Երկուսն էլ գյուղեր են, հիշատակվում են V դարից, այժմ էլ գոյություն ունեն և գտնվում են Աշտարակի շրջանում։ Օշականում է թաղվել (440 թ.) հայ մեծ լուսավորիչ, հայկական տառերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցը, որի գերեզմանի վրա հետագայում կառուցվել է եկեղեցի-մատուռ։ Օշականը նշանավոր է դարձել նաև XIX դարում՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միակցելու համար մղվող պատերազմների ընթացքում։ Գյուղի մոտ 1827 թ. օգոստոսի 17-ին տեղի է ունեցել արյունալի ճակատամարտ Կրասովսկու ռուսական ջոկատի և պարսկական մեծաթիվ բանակի միջև, որը օգտվելով ռուսական հիմնական զորքերի բացակայությունից (ռուսական զորքերն այդ ժամանակ Պասկևիչի գլխավորությամբ գտնվում էին Ատրպատականում և շարունակում էին իրենց հարձակումը դեպի Իրան) փորձում էր գրավել էջմիածինը։ Անհավասար մարտն այնուամենայնիվ ավարտվում է ռուսական չափազանց հաղթանակով։ Էջմիածինը փրկվում է պարսկական



Նկ. 12

Զվարթնոց տաճարը, VII դ. (վերակազմությունը Թ. Թորամանյանի)

ավերածություններից։ Մարտում զոհված զինվորների հիշատակը հավերժացնելու համար 1833 թ. էջմիածնից մի քանի կիլոմետր հեռավորության վրա կանգնեցվում է հուշասյուն։

Փարպի գյուղում է ծնվել V դարի պատմագիր Ղազար Փարպեցին, որը Վահան Մամիկոնյանի պատվերով գրել է այդ նույն դարի ազատագրական պատերազմների պատմությունը։

Հնությունների ու հուշարձանների մի կարևոր հանգույց է այժմյան Աշտարակի շրջանի պատմական Արուճ (մինչև 1970 թվականը՝ Թալիշ) գյուղը, որը գտնվում է Աշտարակ քաղաքից 22—23 կմ արևմուտք, Լենինական տանող խճուղու վրա, քարքարոտ, բայց այգեվետ հարթավայրում։ Այստեղ նշմարվում են նախնադարյան ժամանակների նյութական մշակույթի մնացորդներ։ Արուճը արաբական տիրապետության շրջանում եղել է հայկական զորքերի զորակայան։ Մինչև օրս էլ պահպանվում են նրա բերդի մնացորդները։ Նրա այդ հին բերդի տեղում XVII—XVIII դարերում կառուցվել է նորը, որն ավելի լավ է պահպանված։ Մյուս կարևոր հուշարձանը Թալիշի կամ Արուճի տաճարն է, որ կառուցվել է VII դարում Գրիգոր Մամիկոնյանի նախաձեռնությամբ։ Ըստ Սամվել Անեցու ժամանակագրության Արուճի այդ հոյակապ կաթողիկեն կառուցվել է 672 թվականին։ Արուճի տաճարը կենտրոնագմբեթ է, պատերը շարված են սրբատաշ կարմրավուն քարերով, քանդակազարդ է, պատերին կան արձանագրություններ։ Կանգուն է և հիմնովին վերանորոգման է ենթարկվել մեր օրերում։ Տաճարից ոչ հեռու, ձորի եզերքին պահպանվում են նույն Գրիգոր Մամիկոնյանի կառուցած ապարանքի մնացորդները, իսկ Երևան—Լենինական խճուղու աջ կողմում գտնվում են Արուճի քարավանատան ավերակները։ Դրա կառուցման ճշգրիտ ժամանակը հայտնի չէ (հավանաբար հիմնադրվել է XIII դ.)։ Այդ քարավանատունը միադահլիճ-քառանավ շինվածք է, որի լայնությունը 15 մետր է։ Պահպանվել են միայն դրա մի մասի ավերակները։ Վերջինս անգամ վերանորոգվել է 1954 և 1956—57 թթ.։

Արագածոտն գավառի Կվաշ ավանը (այժմ՝ Կոշ գյուղ Աշտարակի շրջանում) նույնպես հարուստ է պատմական հուշարձաններով։ Այստեղ կառուցված են երկու եկեղեցի, որոնցից մեկը VII դարի կառույց է (ս. Ստեփանոս անունով) և կիսականգուն խարխլված վիճակում հասել է մինչև մեր օրերը, իսկ մյուսը՝ XIII դարի։ Գյուղի սահմաններում, խճուղու եզրին բարձրանում է մի գեղաքանդակ մահարձան-կոթող մոտ 7 մետր բարձրությամբ, որը կառուցված է սրբատաշ տուֆով և կրաշաղախով, վրան կա ընդարձակ արձանագրություն։ Դրանցից բացի,

գյուղի հարավային կողմում, բարձունքի վրա մինչև օրս պահպանվում են նրա միջնադարյան բերդի պարիսպները։ Ըստ պատմական աղբյուրների, Կվաշ ավանը Արշակ II-ի հոր՝ կուրացած Տիրան թագավորի ժամանակավոր աթոռանիստն էր։

Դողս.— Այս գյուղը նույնպես այժմ գոյություն ունի և գտնվում է Էջմիածնի շրջանում, Էջմիածին քաղաքից հյուսիս։ Դողսում 895 կամ 896 թ. տեղի է ունեցել խոշոր ճակատամարտ Բագրատունի Սմբատ I թագավորի և Ատրպատականի արաբ էմիր Ափշինի զորքերի միջև։ Այս ճակատամարտում, որտեղ Սմբատ I-ի զորքերի շարքում կռվում էր նաև հյուսիսային ցեղերի կողմից ուղարկված զորագունդը, հայերը տանում են փայլուն հաղթանակ։ Հայաստանի այդ ժամանակվա ոխերիմ թշնամի Ափշինը հարկադրված է լինում դիմել խաղաղ բանակցությունների։

Ամբերդ և Հովհաննավանք.— Ամբերդ բերդը հայտնի դարձավ հատկապես Զաքարյանների իշխանության օրոք, երբ այն Վաչուտյանների իշխանանիստ բերդն էր։ IX—XIII դարերում Ամբերդը բավական խոշոր բնակավայր էր։ Բերդի և նրա մոտ եղած բնակավայրերի ավերակները



Նկ. 13

Ամբերդ. XI—XIII դդ., եկեղեցին և դղյակը

պահպանվում են Արագածի լանջին, Ամբերդ գետակի բարձրադիր ափին, նրա և Արխաշեն գետի ջրբաժանի վրա։ Լեռնալանջի վրա փրոված է եղել բնակավայրը, որի ավերակները նշմարվում են մինչև այսօր։ Ամբերդը Գագիկ I թագավորը ժառանգել էր իր հաջորդ Հովհաննես-Սմբատին։ Այստեղ Վահրամ Պահլավունին կառուցել է բերդի փառահեղ եկեղեցին, որն իր կառուցվածքով նման է Մարմաշենի Վահրամաշեն եկեղեցին, որն իր կառուցվածքով նման է Մարմաշենի Վահրամաշեն եկեղեցին։ Բերդն ունեցել է գաղտնի ելք դեպի Ամբերդի գետակը՝ պաշարման ժամանակ ջուր վերցնելու համար։

Համեմատաբար լավ են պահպանվել բերդի հյուսիսային պարիսպները, եկեղեցին (որն այժմ վերանորոգված է) և բաղնիքը։ Այստեղ կառուցվել են հնագիտական որոշ պեղումներ։ Հովհաննավանքի տարբեր տարվել են հնագիտական որոշ պեղումներ։ Հովհաննավանքի տարբեր բաժինները կառուցվել են տարբեր ժամանակներում։ Նրա ամենահին կառույցը վերաբերում է V կամ նույնիսկ IV դարին։ Մյուս մասը կառուցվել է Վաչե իշխանի նախաձեռնությամբ 1217 թվականին և համարվում է XIII դ. հայ ճարտարապետության նշանավոր կոթողներից։ Հայտնի է հատկապես իր նրբաճաշակ քանդակներով։ Եղել է մշակույթի կենտրոն։ Այստեղ ընդօրինակել են բազմաթիվ ձեռագրեր։ Հենց այստեղ ընդօրինակել են բազմաթիվ ձեռագրեր։ Հենց տագա դարերում նույնպես այն պահպանեց իր նշանակությունը, բայց մի քանի անգամ վերանորոգվել է։ Հովհաննա վանքում որոշ ժամանակ Նաքեռցին և ուրիշներ։ V դարի կառույցն այժմ խարխլված է, իսկ XIII դ. շքեղ եկեղեցին կանգուն է ու բարեկարգ։ Գտնվում է Աշտարակի շրջանի Օհանավանք գյուղում, Քասախի բարձրադիր աջ ափին։

Դրանցով չեն ավարտվում Արագածոտն գավառի պատմական վայրերն ու ճարտարապետական հուշարձանները։ Այստեղ էին գտնվում Աշտարակ ու Կարբի գյուղերը, Մուղնի, Սաղմոսավանք, Տեղեր և այլ եկեղեցիներ ու վանքեր։

Աշտարակում հնություններ ու պատմական հուշարձաններ շատ կան։ Այստեղ է գտնվում Քասախի քարակոփ մեկ թռիչքանի հին կամուրջը (XVII դ.), միջնադարյան բերդի հետքեր (Քասախ գետի բարձրադիր ձախ ափին), հին գերեզմանոց՝ տարբեր ժամանակների խաչքարերով ու տապանաքարերով, չորս եկեղեցի՝ Կարմրավոր, Թիրանավոր, Սպիտակավոր և ս. Աստվածածին, որոնք իրենց պատերին ունեն տարբեր բովանդակությամբ մի շարք արձանագրություններ։ Դրանցից Թիրանավորը, Կարմրավորը և Սպիտակավորը մատուռներ են։ Առաջինը և երրորդը կառուցվել են V դարում, իսկ երկրորդը՝ VII։ Կարմրավոր

եկեղեցին ճարտարապետական առումով հատուկ հետաքրքրություն է ներկայացնում գլխավորապես այն պատճառով, որ մինչև օրս պահպանվել է դրա կղմինդրե ծածկը։ Քասախի ձորում կան այրեր, որոնք հարմարեցված են եղել պաշտպանության համար։

Կարբին Հայաստանի հին բնակավայրերից է, XIII դարից հաճախ է հիշատակվում մեր պատմագիրների երկերում։ XVII—XVIII դդ. հաճախ կոչվել է գյուղաքաղաք և եղել է առևտրի նշանակալի կենտրոն։ Կարբիի բնակիչները մեծ հերոսություն են կատարել XVIII դ. առաջին քառորդի ազատագրական պատերազմների ժամանակ։ Նրանք 1724 թ. 40 օր շարունակ պաշտպանվեցին թուրքական մեծ բանակի հարձակումներից և հարկադրեցին թուրք փաշային հրաժարվել ամանը ավերելուց ու երաշխիք տալ բնակիչների անվտանգությունը ապահովելու համար։ Հրաշալի կառույց է Կարբիի XVII դարի Մայր Աստվածածին եկեղեցին, որը կանգուն է և շրջակայքում ունի օժանդակ շինություններ։ Եկեղեցու մոտ է գտնվում մի ինքնուրույն, հոյակապ զանգակատուն, կառուցված XIII—XIV դարերում։ Գյուղի տարածքում կան հին բնակավայրի հետքեր, խաչքարեր, եկեղեցու ավերակներ։

Մուղնիի ս. Գևորգ վանքը, որ կառուցվել է 1664—1670 թվականներին, գտնվում է Աշտարակի շրջանի Մուղնի գյուղում, Աշտարակ քաղաքից մոտ 2 կմ հեռավորության վրա։ Կառուցված է չորս մույթերի վրա, ունի գավիթ։ Ճարտարապետական այս համալիրը նույնպես բավական լավ վիճակում պահպանվել է մինչև մեր օրերը։

Սաղմոսավանքը ևս գտնվում է Աշտարակի շրջանում, Քասախ գետի աջակողմյան բարձրադիր գեղատեսիլ սարահարթի վրա, Սաղմոսավան գյուղի ծայրում։ Կառուցվել է XIII դ. Զաքարե սպասալարի գործակալ Վաչե իշխանի կողմից։ Գլխավոր տաճարը կենտրոնագմբեթ է։ Վանքն ունի ընդարձակ գավիթ՝ չորս կամակարապ սյուներով։ Գավթին կից կառուցված է մի փոքր մատուռ, որը եղել է գրատուն։ Սաղմոսավանքը միջնադարյան Հայաստանի մշակույթի կենտրոններից է։ Այստեղ ընդօրինակվել են մի շարք ձեռագրեր։ Համալիրի գլխավոր տաճարը կանգուն վիճակում հասել է մինչև մեր օրերը։

Աշտարակի շրջանի Տեղեր գյուղն այժմ լքյալ է։ Բնակավայրերի խոշորացման հետևանքով նրա բնակիչները տեղափոխվել են շրջանի այլ գյուղեր։ Գտնվում է Բյուրականից ոչ հեռու, Արագածի բարձրադիր լանջին։ Գյուղում պահպանվել է միջնադարյան Հայաստանի նշանավոր վանքերից մեկը՝ Տեղերը, որը կառուցվել է 1207—1232 թվականներին,

իշխան Վաչեի կին Մամախաթունի նախաձեռնությամբ։ Ճարտարապետը եղել է Աղքայրիկը։ Կանգուն մնացած գլխավոր տաճարից բացի, ճարտարապետական այս համալիրը բաղկացած է նաև գավիթից ու երկու փոքրիկ մատուռներից։ Տաճարի վրա կան արձանագրություններ։

Ճակատ

Այս գավառը տարածվում էր Արաքսի աջ կողմում, այժմյան Հոկտեմբերյանի շրջանի դիմաց և ընդգրկում էր Սուրմալուի դաշտը իր հարակից հարավային լեռնային տարածքների հետ միասին։ Այգեվետ գավառ է, արգավանդ հողերով։ Այստեղ էին գտնվում Կողբը և Սուրմառին։

Կողբը նշանավոր է իր աղահանքերով, որ մարդկությանը հայտնի է վաղ անցյալից՝ տակավին քարեդարյան ժամանակաշրջանից։ IX—X դարերում Կողբը վերածվում է գյուղաքաղաքի։ Այժմ էլ նրա աղահանքերը շահագործվում են, որոնց կից շարունակվում է գոյություն ունենալ և Կողբ բնակավայրը։ Սուրմառիի (այժմ Սուրմալու) մասին եղած նյութերը վերաբերում է XI դարին, ըստ որի այդ ժամանակներում՝ փոքրիկ բերդաքաղաք էր։ Պատմագիրներից ոմանք այն մատնանշում՝ հիշատակում են Սուրբ Մարի անվամբ։ Ճակատքում էր նաև Իգդիր փոքրիկ քաղաքը, որը նույնպես այժմ գոյություն ունի և գտնվում է Մարդարա-Բայազետ ճանապարհի վրա։

Կոգովիտ

Իր տարածքով Կոգովիտ գավառը համապատասխանում է այժմյան Հին Բայազետի շրջանին, որը մի գոգավորություն է։ Արշակունիների թագավորության շրջանում պատկանում էր արքունիքին, իսկ նրա անկման շրջանում անցնում է Բագրատունիներին։ Կոգովիտում էին գտնվում Արշակավան քաղաքը և Դարոյնք ու Արծափ բերդերը։

Արշակավանը հիմնադրել է Արշակ II-ը՝ կենտրոնախույզ նախարարների դեմ մղվող պայքարում հուսալի հենարան ստեղծելու նպատակով։ Արքայական հատուկ հրովարտակով հայոց թագավորը մի շարք արտոնություններ է տալիս Արշակավանում բնակվել ցանկացողներին։ Կարճ ժամանակամիջոցում նորահիմն քաղաքը դառնում է բազմամարդ։ Բավական մեծանում է նրա առևտրատնտեսական նշանակությունը, որովհետև գտնվում էր Թավրիզ—Դարոյնք—Կարին—Տրապիզոն տարանցիկ

ճանապարհի վրա։ Սակայն շուտով Բագավորից դժգոհ նախարարները իրենց միացյալ զորքերով հարձակվում են Արշակավանի վրա, կատարում նրա բնակիչներին և քաղաքը հիմնահատակ ավերում։

Դարոյնքը Կոգովիտի ամենանշանավոր բերդն էր, որ V դարում անցել էր Բագրատունիներին։ Այն գտնվում էր այժմյան Հին Բայազետի տեղում՝ Թավրիզ—Կարին ճանապարհի վրա։ Մի քանի հարյուրամյակ Դարոյնքը Բագրատունիների աթոռանիստն էր։ Այժմ գավառական քաղաք է, Բայազետի գավառի (սանջակի) կենտրոնը։

Արծափ բերդը գտնվում էր Դարոյնքից հյուսիս-արևմուտք։ Այս բերդի մոտ 650 թ. սպարապետ Թեոդորոս Ռշտունին հայկական մի փոքրիկ զորագնդով ոչնչացրել է արաբական 3000 հոգուց բաղկացած բանակը, որը կազմում էր Հայաստան ներխուժած արաբական զորքերի մի մասը։ Ըստ հիշատակությունների, Արծափի ավերակները դեռևս նկատվում են։

Մասյացոտն

Իր անունը ստացել է Մեծ և Փոքր Մասիսներից։ Տարածվում էր դրանց լեռնալանջերին ու ստորոտներին։ Այս գավառում էր գտնվում Ակռի գյուղը, որտեղ 481 թ. հայկական մի փոքրիկ զորամաս ճակատամարտ տալով մի քանի հազար զինվորներից բաղկացած պարսկական խոշոր զորագնդի դեմ փայլուն հաղթանակ է տանում։ Այս գյուղը, որ գտնվում էր Մեծ Մասիսի հյուսիս-արևմտյան լանջին, հիմնովին կործանվել է 1840 թ. երկրաշարժից։ Երկրաշարժի ցնցման պատճառով լեռան գագաթից դեպի ստորոտ սահող ցեխի հսկայական զանգվածը առհավետ ծածկում է և՛ գյուղը, և՛ նրա եկեղեցին։

Ոստան

«Ոստան»-ն բառն ունի «իշխանանիստ»-ի կամ «թագավորանիստ»-ի նշանակություն։ Այրարատյան աշխարհի այս նշանավոր գավառը գրավում էր Ազատ գետի միջին և ստորին հոսանքների հովիտը։ Այստեղ էին գտնվում Արտաշատ և Դվին մայրաքաղաքները։

Արտաշատ.— Հին Հայաստանի այս հայտնի մայրաքաղաքը կառուցվել է 170—160-ական թվականներին Արտաշես I-ի օրոք (189—160 թթ. մ. թ. ա.) և նրա անունով էլ կոչվել է Արտաշատ։ Այն գտնվում էր այժմյան Արարատի շրջանում՝ Խորվիրապ վանքի շրջակայքում, Արևելքն Արևմուտքի հետ կապող տարանցիկ ճանապարհի վրա։ Քաղաքից դուրս եկող երկու բարեկարգ ուղիները այն կապում էին Սատաղի (այժմյան Երզնկայի շրջանում) և Տիգրանակերտի հետ։ Որոշ ընդհատումներով Արտաշատը Հայաստանի մայրաքաղաք մնաց մինչև 451 թ. ապրստամբությունը։ Հելլենիստական տիպի բազմամարդ քաղաք էր, բնակչության մեծ մասը զբաղվում էր արհեստագործությամբ և առևտրով։ Արտաշատը դեռևս I դարում (մ. թ. ա.) ուներ իր մշտական թատրոնը, որտեղ ներկայացվում էին և՛ հույն, և՛ հայ հեղինակների ողբերգությունները։ 59 թ. Արտաշատը կրակի մատնվեց հռոմեացի զորավար Կորբուլոնի կողմից, սակայն այն վերականգնվում է Արշակունյաց թագավորության հիմնադիր Տրդատ I-ի օրոք (66—100), որը թագադրման համար Հռոմում եղած ժամանակ կարողացել էր հենց այդ նույն նպատակով Ներոն կայսրից ստանալ 50 միլիոն դրախմա (մոտ 20 մլն. ռուբլի ոսկով)։

V դ. կեսերից Արտաշատն իր դիրքերը աստիճանաբար զիջում է առավել նպաստավոր պայմաններում գտնվող Դվինին։ Արտաշատի շրջակայքում առաջացած ճահճուտները նրա օդը դարձնում էին վատառողջ։ Բնակչությունը աստիճանաբար լքում է վաղեմի ծաղկուն քաղաքը և բնակություն հաստատում արագ զարգացող Դվինում։ Արտաշատ մայրաքաղաքից գրեթե ոչինչ չի պահպանվել։ Սակայն վերջին տարիներին Խորվիրապ վանքի մոտ կատարվող հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերվել են վիմագիր արձանագրություններ, զարդեր, գեղարվեստական իրեր և նյութական մշակույթի այլ մնացորդներ, պաշտպանական կառույցների հետքեր։ Հնագիտական հետազոտությունները շարունակվում են և ամենայն հավանականությամբ կպսակվեն հաջողությամբ, լույս սփռելով վաղեմի մայրաքաղաքի պատմության շատ հարցերի վրա։

Դվին.— Հիմնադրվել է Խոսրով Կոտակի (330—338) օրոք, իսկ V դ. երկրորդ կեսից դարձել Հայաստանի մայրաքաղաք։ VII—IX դարերում Դվինը Հայաստանի խոշորագույն քաղաքն էր, արաբների ստեղծած Էրմենիա փոխարքայության կենտրոնը։ Արաբական արշավանքների ընթացքում մի քանի անգամ ենթարկվել է ավերման։ Քաղաքն առանձնապես շատ է տուժել արաբական 640 թ. արշավանքից, երբ ավարառու զորքը գրավելով Դվինը, կողոպտում է այն, ավերում, ոչնչացնում 35 հազար բնակիչ և գերեվարում 12 հազար մարդ։ IX դարում (862—893 թթ.) երկու աղետաբեր երկրաշարժեր են տեղի ունենում Դվի-

նում, որոնք հսկայական վնասներ են պատճառում քաղաքին և նրա բնակչությանը։ X—XI դդ. Դվինը ենթարկվում էր Բագրատունիների թագավորությանը, այստեղ նստող արաբ էմիրները Բագրատունիների տորադրյալներն էին։ Բագրատունիների թագավորության անկումից հետո Դվինը ենթարկվում է սելջուկներին, իսկ սրանց պետության քայքայման շրջանում ազատագրվում է Զաքարյանների կողմից։

Դվինն ուներ առևտրական լայն կապեր հարևան ու հեռավոր երկրների հետ։ Քաղաքից դուրս էին գալիս քարավանային 6 ճանապարհներ, որոնք ձգվում էին տարբեր ուղղությամբ։ Դվինը արհեստագործության մեծ կենտրոն էր։ Առանձնապես զարգացած էին մանածագործությունն ու ջուլհակությունը, բրուտագործությունը, մետաղամշակությունը, ներկարարությունը, կաշեգործությունը, շինարարության հետ կապված արհեստները։

Ծաղկման շրջանում Դվինի բնակչության թիվը հասել է մինչև 100 հազար մարդու։ Միջնադարյան մյուս քաղաքների նման Դվինը ևս բաղկացած էր երեք մասից՝ միջնաբերդից, որ տեղադրված էր բլրի վրա, շահաստանից, որ գրավում էր ընդարձակ տարածություն, և արվարձաններից։ Մոնղոլների տիրապետության շրջանում Դվինը ևս աստիճանաբար կորցնում է իր նշանակությունը՝ վերածվելով սովորական բնակավայրի, ապա իսպառ վերանում պատմական ասպարեզից։

Դվինի ճարտարապետական կոթողներից են եղել պաշտպանական պարիսպներն իրենց բուրգերով, ս. Գրիգոր եկեղեցին, արքունական ապարանքները և այլն։ Դվինում տեղի են ունեցել եկեղեցական մի շարք ժողովներ, որոնցից առանձնապես նշանավոր է 554 թ. տեղի ունեցածը։ Այս ժողովի որոշմամբ ընդունվեց հայոց նոր տոմարը, ըստ որի 552 թ. համարվեց հայոց նոր տոմարի սկիզբը՝ հայոց մեկ թվականը։

Դվինի ավերակները գտնվում են այժմյան Արտաշատի շրջանում՝ Աղատ գետի ստորին հոսանքի մոտ։ Այստեղ խորհրդային տարիներին պարբերաբար կատարվում են հնագիտական պեղումներ։ Արդեն հիմնական գծերով վերականգնված է վաղեմի քաղաքի հատակագիծը, հայտնաբերված են նյութական մշակույթի մեծաքանակ և բազմատեսակ իրեր՝ մետաղե, կավե ու հախճապակե իրեր ու ամանեղեն, զարդիրներ ու զենքեր, զանազան երկրների դրամներ և այլն, որոնք լույս են սփռում Դվինի և միջնադարյան Հայաստանի մյուս քաղաքների պատմության շատ հարցերի վրա։ Հայտնաբերված իրերի մի մասը կենտրոնացված է ավերակների վայրում ստեղծված թանգարանում։

Խորվիրապ վանքը, ինչպես ասվեց, գտնվում է այժմյան Արարատի



Նկ. 14.

Խորվիրապ վանքը

շրջանում, Փոքր Վեդի գյուղի մոտակայքում, ոչ բարձրադիր լեռան վրա, որը հարուստ է դեկորատիվ մարմարի շերտերով։ Գլխավոր տաճարը, որ կենտրոնագմբեթ է և կառուցվել է XVII դարում, կանգուն է, բարվոք վիճակում։ Այստեղ, մեր օրերում փոխարարների սահքը կանգնեցրել է համար կառուցել են բետոնակուռ հենապատեր։ Վանքի համալիրը պարսպապատ է։ Կաթողիկե եկեղեցուց բացի նրա համալիրի մեջ են մտնում խուցեր, օժանդակ զանազան սենյակներ և Գրիգոր Լուսավորիչ անունով մի մատուռ, որի սկզբնական տարբերակը կառուցվել է VII դարում՝ Ներսես Տայեցի կաթողիկոսի օրոք։ Հետագայում այն փլվել է և տեղում կառուցվել է այժմ կանգուն՝ համեմատաբար նոր մատուռը։ Այդ մատուռը կառուցված է այն խոր փոսի (Խորվիրապ) վրա, որտեղ, ըստ ավանդության, Գրիգոր Լուսավորիչը 13 տարի բանտարկված է եղել Տրդատ III-ի հրամանով։



Նկ. 15

Գառնիի հեթանոսական տաճարը, I դ.

Մազազ

Մազազ գավառն ընդգրկում էր Ազատ գետի վերին հոսանքի շրջանները։ Այս գավառում էին գտնվում Գառնին և Գեղարդը։

Գառնի բերդը և հեթանոսական տաճարը, որոնց ավերակները գտնվում են այժմյան Աբովյանի շրջանի Գառնի գյուղում, անտիկ շրջանի հայկական շինարարական արվեստի դասական կոթողներն են։ Գառնին հռչակված էր իր անառիկությամբ։ Այն Արշակունի թագավորների ամուր դաստակերտներից և արքունական գանձարաններից էր։

Պահպանվել են Գառնիի հսկա պարիսպների և հեթանոսական տաճարի ավերակները։ Բերդը հիմնադրվել է հնագույն ժամանակներում, իսկ տաճարը, որ մեր պատմիչները հաճախ հիշատակում են «Տրդատի թախտ» և «Սարավույթ Տրդատայ» անուններով, կառուցվել է I դարում՝ Արշակունի Տրդատ I-ի օրոք։ Տաճարը չորս կողմերում ունեցել է 24 շքեղ սյուներ։ Ամբողջապես կառուցված է բազալտե հսկա քարերից, որոնք զարդարված են հիացմունք պատճառող բազմաբովանդակ քանդակներով։ Այդ եզակի տաճարը, որ փլատակների էր վերածվել 1679 թ. կործանիչ երկրաշարժից, այժմ ամբողջովին վերականգնված է (Ճարտարապետ Ա. Սահակյանի ղեկավարությամբ)։

ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը տարիներ շարունակ պեղումներ է կատարում ավերակների շրջանում։ Դրան ընդհանրապես բացված է հզոր պաշտպանական համակարգը, մշակույթի մի քանի շերտեր, հայտնաբերված են զանազան իրեր, զարդեր, գործիքներ, բազնիքի շենքի խճանկարային հատակը և այլն։ Գառնիի բերդը կառուցված է 5—6 տոննա և ավելի քաշ ունեցող բազալտե քարերից, որոնք իրար մեջացված են երկաթե կապերով։ Պարիսպների աշտարակների թիվը հասնում է 14-ի, որոնք գտնվում են իրարից 10—12 մ հեռավորության վրա։ Գառնիի բերդը այն ժամանակվա ռազմական տեխնիկայի համար անմատչելի մի հանգույց էր համարվում։ Բերդ շրջակայքում ժամանակի ընթացքում առաջացել էր բավական խոշոր գյուղաքաղաք, բերդաքաղաք, կամ մեծ ավան։ Այժմ այդ ամբողջ տարածքը հնագիտական կարևոր հանգույց է։ Պեղումների հետ միասին այդտեղ շարունակվում են վերականգնման ու բարեկարգման աշխատանքները։ Արևելյան Հայաստանը պարսկական լծից ազատագրելու համար մղված արյունահեղ ճակատամարտերից մեկը տեղի է ունեցել Գառնիի մոտ։

Գեղարդա վանքը (կամ Այրիվանք) գտնվում է Գառնիից հյուսիս-արևելք և մինչև օրս էլ գոյություն ունի։ Վանքի կաթողիկե եկեղեցին կառուցվել է X—XI դարերում, իսկ ամբողջովին ժայռափոր երկու տաճարները՝ XIII դարում, Զաքարյան իշխանների նախաձեռնությամբ։

Այստեղ ժայռափոր հուշարձանները՝ խուցեր, խաչքարեր, խորաններ, մատուռներ և այլն մի քանի տասնյակի են հասնում։ Այն միջնադարյան Հայաստանի ժայռափոր արվեստի գլուխգործոցն է։ Եկեղեցիներից բացի, վանքի համալիրի մեջ մտնում են ընդարձակ գավիթ-տապանատունը, սրահանման փլված մի մեծ շենք, որը բացվել է պեղումների ընթացքում, բայց որի բնույթը հայտնի չէ, խուցեր, գրատուն, պաշտպանական պարիսպ և այլն։ Ըստ ավանդության, վանքը կառուցվել է Գրիգոր Լուսավորչի նախաձեռնությամբ և սկզբում կոչվում էր Այրիվանք (խոր ձորում լինելու կամ ժայռափոր կառուցվածքներ ունենալու պատճառով), իսկ հետագայում Գեղարդ, իբր այստեղ պահվող այն գեղարդի պատճառով, որով, ըստ ավանդության, խոցել են Քրիստոսին։ Տաճարների պատերին կան բազմաթիվ արձանագրություններ։



Նկ. 16

Գեղարդավանք, XIII դ.։ Ժամատան կենտրոնական ծածկի ներքին տեսք

որոնք ունեն տարբեր բովանդակություն։ Վանքը միջնադարյան Հայաստանի մշակույթի կենտրոններից էր, ուներ ձեռագրերի բավական հարուստ հավաքածու։ Գեղարդում տարբեր ժամանակներում ընդօրինակվել են տասնյակ ձեռագրեր։ Այս վանքի հետ է կապված XIII դարի պատմագիր Մխիթար Այրիվանեցու գործունեությունը։ Մեր օրերում Գեղարդում կատարվել են բարեկարգման և վերանորոգման հսկայական աշխատանքներ։ Վանքից ասֆալտապատ բարեկարգ ճանապարհը ձգվում է մինչև Երևան, և Գառնիի հետ միասին զբոսաշրջիկների աչքի ընկնող վայրերից մեկն է։

Մազաղ դավառի միջնադարյան մյուս հիշարժան վայրերից են՝ ս. Ստեփանոսի վանքը Գիլան գետի (հնում՝ Գեղաձոր) միջին հոսանքում, գետի աջ կողմում, լեռնալանջի վրա, և Գեղաձորի բերդը (այժմ այս ավերակները տեղացիները կոչում են Կալաղիբի)՝ նույն գետի ակունքի շրջանում։ Այս բերդն ու Գեղաձորի գավառակը հայտնի դարձան հատկապես X դ. սկզբներին, Աշոտ II-ի ժամանակներում արաբական նվաճողական զորքերի դեմ մղված պատերազմների ընթացքում։ Ըստ հիշատակության, Գեղաձորի կողմերում արաբական զորքերի դեմ մարտնչում էր Գևորգ իշխանը, որը որպես նախատիպ դարձել է Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» հայտնի վեպի գլխավոր հերոսը։ Գեղաձորի գավառակը երբեմն մտցնում են Գեղարքունիք գավառի մեջ։

Կոտայք

Կոտայք անունը հնագույն ծագում ունի և կապված է նույնանուն ցեղանվան հետ։ Կոտայքում էին գտնվում Երևանը, Ավանը, որի կենտրոնագմբեթ նկեղեցին կառուցվել է VI դարում և իր տեսակի մեջ համարվում է ամենահինը, Պտղնիի վանքը, որի ավերակները գտնվում են այժմյան Աբովյանի շրջանի Պտղնի գյուղում և այլ վայրեր։ Պտղնիի վանքի տաճարը կառուցվել է VI—VII դարերում, սրբատաշ տուֆով։ Գմբեթն այժմ փլված է, իսկ պատերը կիսականգուն են։ Ունի մի շարք արձանագրություններ։ Քանդակազարդ է, բարձր և վեհաշուք։

Երևանը իբրև Էրեբունի կամ Էրեվունի անունով բերդ հիմնադրվել է ուրարտական Արգիշտի I թագավորի օրոք, 782 թ. մ. թ. ա. և գտնվում էր այժմյան Արին բերդ բլրի վրա, քաղաքի հարավ-արևելյան ծայրամասում, Էրեբունիի տեղում կատարված պեղումների շնորհիվ հայտնաբերվել են ուրարտական բազմաթիվ արձանագրություններ, անոթներ,

տնային գործածության իրեր, զենքեր, գյուղատնտեսական մշակույթների մնացորդներ, զարդարանքներ և այլն։ Երևանի տեղում էր գտնվում նաև ուրարտական Թեյշեբաինի բերդը (այժմյան Կարմիր բլուրի վրա, Հրազդանի ափին)։ Այստեղ կատարված պեղումների շնորհիվ նույնպես հայտնաբերված են նյութական մշակույթի շատ մնացորդներ՝ ամենատարբեր տեսակի ու մեծության հարյուրավոր կավե ամաններ, զենքեր, գործիքներ, տնային գործածության իրեր, արհեստանոցների մնացորդներ և այլն։

Մեր մատենագրության մեջ Երևանի մասին առաջին գրավոր հիշատակությունը վերաբերում է VII դարի սկզբներին՝ Դվինի եկեղեցական մի ժողովի առնչությամբ, երկրորդ հիշատակությունը՝ նույն դարի 40-ական թվականներին։ Այս վերջին վկայությունից պարզվում է, որ Երևանն այդ ժամանակ ունեցել է ամուր բերդ։ VII—VIII դարերում Երևանը եղել է մեծ ավան, իսկ հետագա դարերում արդեն հիշատակվում է իբրև գյուղաքաղաք։

Երևանի դերը մեծանում է XIII դարից, երբ նրա հարևան Դվինն աստիճանաբար կորցնում է իր նշանակությունը։ 1440 թ. Երևանը փաստորեն դառնում է Արևելյան Հայաստանի գլխավոր կենտրոնը, այդ



Նկ. 17

Էրեբունի, մ. թ. ա. VIII դ., միջնաբերդի վերականգնված պարիսպները

ժամանակից ի վեր այն հիշատակվում է իբրև «Այրարատյան աշխարհի մայրաքաղաք», թեպետև ոչ Հայաստանը և ոչ էլ նրա մի մասը կազմող Այրարատյան աշխարհը ինքնուրույն պետություն չէր, այլ սոսկ նվաճողների հաստատած կուսակալություն, որը XVI դարից սկսած կոչվեց խանություն։ Թուրք-պարսկական տիրապետության մռայլ ժամանակաշրջանում (XVI—XVIII դդ.) Երևանը բազմաթիվ անգամ անցել է ձեռքից ձեռք և ավերվել։ Այդ հարյուրամյակների ընթացքում Երևանը շատ թե քիչ բարվոք վիճակ է ունեցել միայն պարսկական վերջին խանի՝ Հուսեյնի օրոք, XIX դարի առաջին քառորդում։ Այդ ժամանակ Երևանում կային մի քանի տասնյակ արհեստներ, ներքին, արտաքին ու տարանցիկ բավական աշխույժ առևտուր, ավելի քան 2000 հեկտարի հասնող պտղատու և խաղողի այգիներ։ Բայց և այնպես Երևանը դեռևս մնում էր որպես ասիական խղճուկ քաղաք, առանց որոշակի հատակագծի, զուրկ սանիտարական նվազագույն պայմաններից։ Բնակչության թիվը հազիվ 11—12 հազար էր։ Մի քանի եկեղեցիներից, մզկիթներից, Հրազդանի կարմիր կամուրջից և խանի պալատից բացի ճարտարապետական այլ կոթողներ չուներ։

Արևելյան Հայաստանի հետ միասին Երևանի համար նույնպես փրկություն էր նրա միացումը Ռուսաստանին։ XIX դ. 50-ական թվականներից, երբ Երևանն արդեն դարձել էր նահանգական կենտրոն, կազմվում և գործողության մեջ է դրվում Երևանի առաջին հեռանկարային հատակագիծը, որի հիման վրա 60-ական թվականներից բացվում են մի քանի համեմատաբար ուղիղ ու լայն փողոցներ, կառուցվում են վարչական ու դպրոցական շենքեր։ Զարգացում են ապրում արհեստները, առևտուրը, գյուղատնտեսության ճյուղերը։ 90-ական թվականների վերջերին Երևանում արդեն կային արդյունաբերական մի քանի համեմատաբար կատարելագործված ու խոշոր գործարաններ՝ գինու-կոնյակի, պահածոյի, մեխանիկական, բամբակազտիչ և այլն։ Երևանի համար մեծ նշանակություն ունեցան XX դ. սկզբներին երկաթուղու և ջրմուղու կառուցումը, երկու փոքրիկ հիդրոէլեկտրակայանների գործարկվելը։ Քաղաքի բնակչության թիվը XIX դ. վերջերին հասել էր մոտ 30 հազարի։ Սակայն Երևանը տնտեսական, մշակութային տեսակետից մեծ հարված է ստանում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Այնպես որ, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման ժամանակ Երևանը սոսկ գավառական քաղաք էր, սակավ բնակչությամբ և քայքայված տնտեսությամբ։

Նիգ

Պատմական Նիգ գավառն իր տարածքով համապատասխանում էր այժմյան Ապարանի շրջանին և Նախիջևանի ու Հրազդանի շրջանների մի մասին։ Բագրատունիների թագավորության շրջանում Նիգում իշխում էին Պահլավունիները, իսկ ավելի ուշ այստեղ կալվածքներ ձեռք բերեցին Վաչուտյաններն ու Պռոշյանները։

Գավառի հիշարժան վայրերից են.

Բջնի.— Միջնադարյան Հայաստանի նշանավոր բերդերից է. հիշատակվում է V դարից։ X դարում գառնում է Պահլավունի իշխանների ոստանը։ Սակայն XI դ. կեսերից Պահլավունիները Բջնիի փոխարեն կալվածքներ են ստանում Միջագետքում և տեղափոխվում այնտեղ։ Սելջուկյան կարճատև տիրապետությունից հետո Բջնիի տեր են դառնում Իվանե Զաքարյանը և նրա ժառանգները։ X դարից ի վեր Բջնին հիշատակվում է որպես բերդաքաղաք։ Գրիգոր Մագիստրոսը, որը Բջնիի անունով կոչվում է նաև Գրիգոր Բջնեցի, 1031 թ. այստեղ կառուցում է հոյակապ եկեղեցի, պատի վրա թողնելով մի ընդարձակ արձանագրություն։ Այդ եկեղեցին բարեկարգ վիճակում հասել է մինչև մեր օրերը և գտնվում է այժմյան Բջնի գյուղում։ Բջնին երբեմն հիշատակվում է նաև իբրև բերդաքաղաք։ Բջնի բերդի և վաղեմի քաղաքի ավերակները գրաված են Հրազդանի բարձրագիր աջ ափին՝ զառիթափ լանջերով սարահարթի վրա։ Կիսավեր վիճակում մեզ են հասել նրա պաշտպանական պարիսպներն ու բուրգերը և մյուս շինությունների մնացորդները։

Զկնավանք.— Այստեղ 910 թ. ճակատամարտ տեղի ունեցավ հայկական զորքերի ու Ատրպատականի Յուսուֆ էմիրի մեծ բանակի միջև, որին միացել էին Վասպուրականի իշխանները։ Հայկական զորքը այս ճակատամարտում պարտություն է կրում, և Յուսուֆի հրոսակները նրանից հետո մի քանի տարի շարունակում են ասպատակել Հայաստանի հյուսիսային շրջանները։

Վարաժնունիք

Պատմական Հայաստանում կար Վարաժնունիք անվամբ երեք գավառ՝ մեկը Տուրուբերանում, մյուսը՝ Վասպուրականում, իսկ երրորդը՝ Այրարատում։ Վերջինիս Վարաժնունիք գավառը գրավում էր Մարմարիկ գետի միջին և վերին հոսանքների շրջանը և Հրազդանի վերնագավառը։

Զգալի մասով անտառապատ է։ Ունի հանքային հորդաբուխ աղբյուրներ։ Հնում արդյունահանվում և մշակվում էին այստեղի պղնձահանքերը։ Գավառի հիշարժան վայրերից են.

Կեչառուք կամ Կեչառիս.— Գյուղ և վանք։ Գտնվում է այժմյան Մարկաձորում։ Վանքը կառուցվել է XI—XIII դարերում, Պահլավունի իշխանների կողմից։ Գլխավոր եկեղեցին կոչվում է ս. Գևորգ։ Այն քառակուսի հատակագծով հոյակապ շինություն է, որ կանգուն վիճակում հասել է մեզ։ Դրան կից կառուցված են այլ եկեղեցիներ և օժանդակ շենքեր։ Վանքի պատերին կան բազմաթիվ արձանագրություններ։ Տաճարները շարված են սրբատաշ քարերով, ունեն նրբաճաշակ քանդակներ։ Վանքը պարապապատ է։ Կեչառուքը միջնադարյան Հայաստանի նշանավոր դպրոցներից էր։ Սրա հետ է կապված XIII դարի վերջի և XIV դարի սկզբների մատենագիր Խաչատուր Կեչառեցու գործունեությունը։ Ենթադրվում է, որ այստեղի դպրոցում ավարտել է նաև միջնադարյան հայտնի փիլիսոփա Գրիգոր Մագիստրոսը։ Վանքը տեր էր ընդարձակ կալվածքների։ Միայն սեփական գյուղերի թիվը XIII դ. հասնում էր 25-ի։ Այստեղ է գտնվում Պռոշյանների տոհմական դամբարանը։

Մաքրավանք վանքը գտնվում է Հրազդանի շրջանի Մաքրավան գյուղում, որն այժմ միացված է Հրազդան քաղաքին և կազմում է վերջինիս թաղամասերից մեկը։ Այս վանքը կառուցվել է երկու շրջանում։ Վանքի հարավային կառույցը IX դարի է և այժմ կիսավեր է, իսկ բուն վանքի հոյակապ տաճարը կառուցվել է XIII դարում և այժմ կանգուն է, շրջապատված բազում խաչքարերով։ Կեչառուքն ու Մաքրավանքը երբեմն հիշատակվում են իբրև Նիգ գավառի վայրեր։

2. ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ ԿԱՄ ՏԱՐՈՆԻ ԱՇԽԱՐՀ

Ավելի գործածական է եղել «Տարոնի աշխարհ» անունը։ Մասնատված էր մի քանի նախարարությունների միջև (Մամիկոնյաններ, Բզնունիներ, Խոռխոռունիներ և այլն)։ Մեծ Հայքի կենտրոնական աշխարհներից էր և շրջապատված էր Այրարատով, Վասպուրականով, Մոկքով, Աղձնիքով, Ծորորդ Հայքով և Բարձր Հայքով, իր մեջ ընդգրկելով Արածանիի միջին հոսանքի ավազանը և Արաքսի վերնագավառը։ Երկիրն ընդհանուր առմամբ հարթավայրային է և ունի մի քանի արգավանդ դաշտեր։ Անտառներով աղքատ է։ Այստեղ հիշատակվում են նավթ և

երկաթ։ Ունի նաև սեղանի աղ, ծծումբ և բնական այլ հարստություններ։

Արաբական խալիֆայության դաժան քաղաքականության հետևանքով VIII դարում Տուրուբերանի նախկին իշխանական տներից շատերը, որոնք մասնակցել էին ազատագրական պատերազմներին, վերանում են պատմական ասպարեզից։ Դրանց գրաված շրջաններն անցնում են հզորացող Բագրատունիներին և այդ նույն դարում խալիֆայության նախաձեռնությամբ Տուրուբերանի հյուսիս-արևելյան շրջաններում հաստատված արաբական կայսիկ ցեղին։ IX դարում Տուրուբերանը բաժանված էր վարչաքաղաքական երեք միավորի՝ Կայսիկների էմիրության, որի բնակչության ճնշող մասը կազմում էին հայերը, Տարոնի Բագրատունյաց իշխանության և Խութի, որը մտնում էր Սասունի իշխանության մեջ։ Դրանցից առաջին երկուսը Բագրատունյաց կենտրոնական թագավորության ենթականերն էին։ X դ. կեսերին Տուրուբերանի մեծ մասը նվաճվում է Բյուզանդական կայսրության, իսկ Ալփ-Արսլանի 1064 թ. արշավանքից հետո՝ սելջուկների կողմից։ Վեցչիններիս պետության տրոհումից հետո Հարավային Հայաստանում կազմավորվում է մի խոշոր էմիրություն, որը XI դ. վերջից մինչև մոնղոլական առաջին արշավանքներն իր մեջ ընդգրկում էր ամբողջ Տուրուբերանը, Վասպուրականի մեծագույն մասը և մասամբ Բարձր Հայքը։ Բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էին հայերը, իշխանությունը կոչվում էր Շահարմենների սուլթանություն։

Տուրուբերանը Հայաստանի խիտ բնակեցված մասերից էր։ Այստեղ տարբեր ժամանակներում հիշատակվում են մի շարք խոշոր քաղաքներ՝ Մանազկերտ, Արճեշ, Խլաթ, Մուշ և այլն։ X—XIII դդ. Տուրուբերանի բնակչության թիվը հավանաբար մեկ միլիոնից պակաս չէր։

Տուրուբերանով անցնող քարավանային ճանապարհներից առանձնապես կարևոր նշանակություն են ունեցել երկուսը՝ ա) Կարին—Մանազկերտ—Խլաթ—Բաղեշ—Մծբին և բ) Արտաշատ—Մանազկերտ—Տիգրանակերտ։ Սրանք երկուսն էլ գործում էին հնագույն ժամանակներից և իրենց նշանակությունը պահպանել էին գրեթե մինչև XIV դարը։ XIV դարից Տուրուբերանի համար մեծ կարևորություն է ստանում Թավրիզից և Վանից եկող ճանապարհը, որն անցնում էր Վանա լճի ափով։ Նրա մի քանի գավառները առափնյա նավարկություն ունեին Վանա լճում։

Ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ի Տուրուբերանը մասնատված էր 16 գավառների։

Խութ

Խութը (Խոյթ) գտնվում է Սասունի արևելյան կողմում, Տարոն գավառից հարավ-արևելք։ Ինքստ լեռնային գավառ է, ցուրտ կլիմայով և ժլատ բնությամբ։ IV դ. երկրորդ կեսից Խութը միացված էր Տարոնի Մամիկոնյանների նախարարությանը, իսկ արաբական տիրապետության շրջանում և ավելի ուշ Սասունի հետ կազմում էր մի իշխանություն։ Սասունի բնակիչների նման Խութի բնակիչները նույնպես դարեր շարունակ պայքարել են իրենց ինքնուրույնության համար։ Խութեցի էր Հովնանը, որ IX դ. կեսերին Հայաստանում արաբական լծի դեմ ծավալված ժողովրդաազատագրական պատերազմի նշանավոր ղեկավարներից մեկն էր։

Տարոն

Տարոնը Հայաստանի նշանավոր գավառներից էր, Տուրուբերանի ամենանշանավոր գավառը։ Բարեբեր երկիր է, երկրագործության հնագույն հայտնի կենտրոն։ Տարածվում էր Մեղրագետի (Մշո գետ) ավազանում և Արածանիի երկու ափին։ Այժմյան Մուշի շրջանը կազմում էր նրա միայն մի մասը։ Ավելի հին ժամանակներում Տարոնի արևելյան մեծ մասում իշխում էր Սլկունի նախարարական տունը, իսկ արևմտյան փոքր մասում՝ Վահունի քրմական տունը։ IV դարում Սլկունիներին ենթակա շրջաններն անցնում են Մամիկոնյաններին, իսկ արևմտյան մասը՝ Աշտիշատն իր շրջակայքով, Հայաստանում քրիստոնեությունը պաշտոնական կրոն հաստատվելուց հետո, տրվում է կաթողիկոսական տանը՝ Գրիգոր Լուսավորչի տոհմին։ V դարում Լուսավորչի տոհմը վերանում է պատմական ասպարեզից, իսկ նրա կալվածքները (բացառյալ ծայր արևմտյան մասի, որ գրավում են Պալունիները) տրվում են Մամիկոնյաններին։ VIII դարում, ինչպես նշվեց, Մամիկոնյանների Տարոնի իշխանությանն ամբողջությամբ տեր են դառնում Բագրատունիները։

Տարոնում կային պատմաաշխարհագրական բազմաթիվ վայրեր, որոնք զգալի դեր են խաղացել մեր ժողովրդի պատմության մեջ։

Աշտիշատ (կամ Հաշտիշատ)։— Գտնվում էր Արածանիի աջ ափին և Հայաստանի հեթանոսական կրոնի գլխավոր կենտրոնն էր։ Աշտիշատում կառուցվել էին երեք նշանավոր մեհյաններ (հեթանոսական տաճարներ), որոնցից մեկը նվիրված էր Վահագն աստծուն և կոչվում էր

Վահեվահյան մեհյան, երկրորդը նվիրված էր նրա տաբփածուին՝ Աստղիկ աստվածուհուն, և կոչվում էր Սենյակ Վահագնի, իսկ երրորդը կրում էր Անահիտ աստվածուհու անունը։ Քրիստոնեությունը պետական կրոն ինգունելու ժամանակ Աշտիշատի այդ մեհյանները կործանվեցին, դրանց տեղում հիմնվեց վանք, որը դարձավ Հուսավորչի տան կաթողիկոսների աթոռանիստը։ Այստեղ տեղի ունեցած եկեղեցական ժողովներից առանձնապես նշանավոր է Ներսես կաթողիկոսի 354 թ. գումարածը, որ քննարկել է թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ հարցեր։ Եգեգի աշխարհիկ կյանքին վերաբերող նրա քննարկած հարցերը հետագայում ունեցան առաջադիմական նշանակություն։ Ըստ դրանց բացվեցին մի շարք դպրոցներ, ծերանոցներ, արգելվեցին հեթանոսական ձևով մեռելների վրա սգալը, սատկած անասունի միս ուտելը, մերձամուսնությունը և այլն։

Գլակա վանք.— Գտնվում էր Աշտիշատից ոչ հեռու, եղել է հեթանոսական մեհենատեղի, վանքի է վերածվել քրիստոնեությունն ընդունելու ժամանակ։ Կոչվել է նաև Իննակնյան։ Սակայն ամենից գործնականը նրա ս. Կարապետ անունն է։ Վանքի հին անունը կապված է վարդապետ-պատմագիր Զենոբ Գլակի անվան հետ։ Ավանդությունը այս



Նկ. 18

Մուշ քաղաքի համայնապատկերը



Նկ. 19

Մշո ս. Կարապետ վանքը

վանքին վերագրել է մեծ զորություններ։ Միջին դարերում եղել է մեծ ուխտատեղի։ Այժմ էլ նրա ավերակները պահպանվել են։

Մուշ.— Հին բնակավայր է, բայց հայտնի է դարձել X դարից, երբ այն հիշատակվում է իբրև քաղաք կամ մեծ ավան։ Այժմ էլ գոյություն ունի և գտնվում է Արևելյան Եփրատի ձախ ափից ոչ հեռու, Մուշի շրջանում։ Քաղաքում է գտնվում Առաքելոց եկեղեցին, որը նշանավոր դեր է խաղացել արաբական լծի դեմ բռնկված IX դ. կեսերի ժողովրդազատագրական պատերազմների և առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ։ Այստեղ 1901 թ. հայդուկային մի փոքրիկ խումբ զորավար Անդրանիկի գլխավորությամբ հերոսական դիմադրություն է ցույց տվել թուրքական զորքերին՝ նրան պատճառելով մեծ կորուստներ։

Ողական.— Ամրոց, Տարոնի Մամիկոնյանների ոստանը, գտնվում էր Արածանիի բարձրադիր ափին, այն մասում, որտեղ գետը մտնում է Մշո դաշտը։ Բերդի պարիսպների, աշտարակների և պաշտպանական այլ կառույցների հետքերը, որ հասել են մինչև մեր օրերը, սքանչելի

նկարագրել է Բաֆֆին։ Ողական ամրոցը Մամիկոնյան սպարապետների աթոռանիստն էր։

Հացեկաց.— Գյուղ։ Այստեղ է ծնվել Մեսրոպ Մաշտոցը։ Ըստ վկայությունների, այս գյուղը մինչև առաջին համաշխարհային պատերազմը գոյություն ուներ և գտնվում էր Հացիկ (Խասիկ) փոքրիկ գյուղից ոչ հեռու։ Տեղացիները պատմում են, որ մեծ լուսավորչի ծննդավայրի շրջանը դարեր շարունակ եղել է սրբավայր և տարվա բոլոր եղանակներին հարյուրավոր ուխտավորներ են այցելել այնտեղ։

Խորնի.— Երբեմն համարված է գյուղ, երբեմն էլ «ավանագյուղ»։ Աշխարհագրական դիրքը հայտնի չէ։ Շատերն այս գյուղը համարում են պատմահայր Մովսես Խորենացու ծննդավայրը։ Ոմանք ենթադրել են, որ Խորենացու ծննդավայրը ոչ թե Խորնին է եղել, այլ Սյունիքի Խորեան գյուղը։ Սակայն այդ տեսակետը ամենևին չի հիմնավորված ուղղակի փաստերով և անընդունելի է։

Հարք

Դաշտային գավառ էր և իր տարածքով հիմնականում համապատասխանում էր այժմյան Մանազկերտի շրջանին։ Հնում գավառը պատկանում էր Մանավազյանների նախարարական տանը, իսկ IV դարի 30-ական թվականներին անցնում է նույն գավառի եպիսկոպոսական թեմին։

Հարքի պատմաաշխարհագրական վայրերից ամենանշանավորը **Մանազկերտ** քաղաքն էր, որը հավանաբար հիմնադրվել էր մ. թ. ա. IX դ. վերջերին կամ VIII դ. սկզբներին՝ ուրարտական Մենուա թագավորի օրոք։ Այն մինչև օրս էլ իբրև սովորական բնակավայր գոյություն ունի և գտնվում է Արածանիի ձախ ափին, Վանա լճից հյուսիս-արևմուտք։ Քաղաքն ուներ ամուր բերդ և IX դ. կազմավորված կայսրիկների էմիրության կենտրոնն էր։ Մանազկերտում տեղի են ունեցել քաղաքական հիշարժան մի քանի դեպքեր, որոնք հիմնականում կապված են սելջուկյան արշավանքների հետ։ Առանձնապես նշելի է 1071 թ. օգոստոսին Մանազկերտի մոտ տեղի ունեցած մեծ ճակատամարտը սելջուկյան զորքի (որը գլխավորում էր Արփ-Արսլան սուլթանը) և բյուզանդական 100000-անոց բանակի միջև, որը գլխավորում էր Ռոմանոս Դիոգենես կայսրը։ Բյուզանդական բանակը խայտառակ պարտություն է կրում։ Սելջուկները գրավում են հայկական հարուստ ու բազմամարդ Մանազկերտ քաղաքը, կողոպտում և սրի քաշում բնակչության զգալի մասին։

XI—XIII դարերում Մանազկերտը նշանակալի քաղաք էր՝ արհեստագործության ու առևտրի կենտրոն։ Սակայն հետագայում այն աստիճանաբար կորցնում էր իր նախկին նշանակությունը և վերածվում սովորական բնակավայրի, ինչպիսին որ այժմ է։

Հարքում էր գտնվում Ձերեան գյուղը, որտեղ ծնվել է VI դարի հայ փիլիսոփա Դավիթ Անհաղթը։

Ապահունիք

Այս գավառը տարածվում էր Հարքից հյուսիս-արևելք՝ Արածանիի ափերին։ Գավառի պատմաաշխարհագրական նշանավոր վայրը Թոնդուրակ կամ Թոնդուրակս գյուղն էր (կամ ավան), որը IX—XI դարերում լայն ծավալ ընդունած Թոնդրակյան աղանդավորական-սոցիալական շարժման առաջին ու գլխավոր կենտրոնն էր։ Թոնդուրակում է սկսել իր գործունեությունը շարժման հիմնադիր Սմբատ Զարեհավանցին։ Գյուղը չնայած ավերվում է Թոնդրակյան շարժման դեմ ուղղված պատժիչ զորքերի հարձակումների ժամանակ (1051 կամ 1052 թվականին), սակայն հետագայում այն շարունակում է իր գոյությունը։ XIX դ. երկրորդ կեսին ուներ մոտ 150 հայ ու քուրդ բնակիչ և մտնում էր Բիթլիսի նահանգի, Մուշի գավառի, Մանազկերտի գավառակի մեջ։ Նրա հայ բնակչության մեծագույն մասը զոհ գնաց 1915 թ. մեծ եղեռնի ժամանակ, իսկ թուրքական յաթաղանից մի կերպ փրկվածները գաղթեցին զանազան տեղեր։ Ականատեսները պատմում են, որ գյուղի շրջակայքում կային քարե բազմաթիվ «թոնիրներ» (փոսեր) և իբր դրանցից էլ այն ստացել է իր անունը։

Աղիովիտ

Տարածվում էր Վանա լճի հյուսիսային ափին։ Այստեղ կալվածքներ ունեին Արշակունի արքայական տան կրտսեր արու ժառանգները և Գնունի նախարարական տունը։ Գավառում հիշատակվող պատմական վայրերից են.

Զարիշատ.— Հայաստանի հին շրջանի հելլենիստական տիպի քաղաքներից էր և գտնվում էր Արտաշատ—Տիգրանակերտ Հայկական արքայական ճանապարհի վրա։ IV դարում շրջակայքի հետ միասին դարձել էր արքունական սեփականություն՝ «թագավորական քաղաք»։

նույն դարի 60-ական թվականներին Զարիշատը ավերվում է պարսիկների կողմից։ Ըստ հիշատակության, նրանք այստեղ գերել են հազարավոր հայ, ինչպես նաև հրեա ընտանիքներ։ Դրանից հետո երկար ժամանակ այն մնաց որպես խղճուկ մի բնակավայր։ Ուշ միջնադարում Զարիշատը մի փոքր աշխուժանում է, սակայն դա մասնակի բնույթ ուներ և երբեք չհասավ իր նախկին փառքին։ Այժմ այդ վաղեմի քաղաքի ավերակներից գրեթե ոչինչ չի պահպանվել։ Գտնվում էր Վանա լճից հյուսիս, հավանաբար XIX դարում հիշատակվող Երիշատ գյուղի տեղում, որը XIX դարի սկզբներին ուներ միայն 15 տուն և հիմնովին ավերվեց 1915 թվականին։ Օտար հեղինակները նշում են, որ այս գյուղն ունեցել է կանոնավոր Գատակադիծ՝ ուղղանկյուն տակ իրար հետ հատվող ուղիղ փողոցներ։

Արճեշ.— Ենթադրվում է, որ այս քաղաքը հիմնադրվել է ուրարտական ժամանակաշրջանում և նրա անունը կապում են Արգիշտի II թագավորի անվան հետ։ Արճեշի մասին մեզ են հասել բազմաթիվ վկայություններ։ VII դ. Արճեշը, որ ժամանակավարապես դարձել էին պարսիկները, ավերման է ենթարկվում Բյուզանդիայի Հերակլ կայսեր կողմից։ Սակայն հետագայում քաղաքը վերականգնվեց և XI—XIII դարերում ապրեց բուռն զարգացման շրջան։ Հին Արճեշի ավերակները Վանա լճի մակարդակի բարձրացման պատճառով անցել են ջրի տակ։ Այժմ նրանից հյուսիս գտնվում է նոր Արճեշը, որը թուրքերը կոչում են Էրջիշ։ Արճեշում տեղի են ունեցել քաղաքական մի շարք իրադարձություններ, որոնք հիշատակվում են մեր ժողովրդի պատմության ամենադարերի շատ աղբյուրներում։ 1021 թ. Վասպուրականի վերջին թագավոր Սենեքերիմը իր ամբողջ թագավորության հետ միասին Բյուզանդիային է հանձնում նաև Արճեշը։ XIII դ. սկզբներին Զաքարե և Իվանե եղբայրները այս քաղաքը նույնպես կարճ ժամանակով ազատագրում են սելջուկներից, իսկ XIII դ. 40-ական թվականներին այն գրավում են թաթար մոնղոլները։ 1276 թվականին Արճեշում տեղի է ունենում կործանիչ երկրաշարժ, որը քարուքանդ է անում ամբողջ քաղաքը։ Այժմ ջրի տակ անցած այդ հին քաղաքի միայն պաշտպանական պարիսպների մնացորդներն են նշմարվում, այն էլ Վանա լճի ալեկոծության ժամանակ։

Մեծորա.— Վանք։ Գտնվում էր Արճեշ քաղաքի մոտ, Ծաղկանց լեռների հարավային փեշերին, երկու կիրճերի միջև ցցված քարանձավի վրա, կից ունենալով համանուն գյուղն ու լճակը, որը հետագայում իսպառ ցամաքել է։ Այստեղ եկեղեցի էր կառուցված դեռևս XIII դարում, սակայն վանքի համալիրը ստեղծվել է XV դարի սկզբներին՝ 1402—1409 թվականներին։ Մեծորա վանքը ծաղկման է հասնում հենց նույն՝ XV դարում։ Այստեղ ապրել ու ստեղծագործել է գիտուն հոգևորականների մի քանի սերունդ՝ Հովհաննես Մեծորեցին, Գրիգոր Տաթևացին, Թովմա Մեծորեցին և ուրիշներ։ Վանքն ունեցել է բարձր տիպի դպրոց, հարուստ ձեռագրատուն։ Տարբեր բռնակալությամբ տասնյակ ձեռագրեր են ընդօրինակվել այս վանքում։ Հետագա դարերում այն շարունակում էր իր գոյությունը և համանուն գյուղի հետ միասին վերջնականապես ավերվել է 1895 ու 1914—1915 թվականների ընթացքում։

Բզնունիք

Տարածվում էր Վանա լճի արևմտյան առափնյա շրջաններում։ Գտնվում էր Բզնունի նախարարական տանը, որը դավաճանության ուղին բռնելու համար ոչնչացվեց դեռևս IV դարում՝ Դատաբեն Բզնունուն Առեստավանում գրեպատելուց հետո։

Բզնունիքում էին գտնվում Խլաթ և Արծկե քաղաքները։

Խլաթը բազմաբնակ քաղաք էր, արհեստագործության և քարավանային առևտրի կենտրոն, Վանա լճի արևմտյան ափի ամենանշանավոր նավահանգիստը։ Առանձնապես մեծ զարգացում է ունեցել XI—XIII դարերում։ Սակայն թշնամական հարձակումների և մասամբ երկրաշարժերի հետևանքով Խլաթն ընդհանրապես մղվեց Հայաստանի երկրորդական-երրորդական քաղաքների շարքը։ Ըստ հիշատակության, Խլաթի հին բերդը կառուցել է Սմբատ I Բագրատունի թագավորը՝ X դ. սկզբներին։ Եղել է պարսպապատ ամուր քաղաք, որը սերտորեն առնչվել է դարեր շարունակ Հայաստանում տեղի ունեցող քաղաքական դեպքերին։ 997 թ. Խլաթի վրա հարձակվում է Տայքի տիրակալ Դավիթ Գյուրգենը։ 997 թ. Խլաթի վրա հարձակվում է Տայքի տիրակալ Դավիթ Գյուրգենը։ 1110 թ. այն գրավել են Շահարմանները, իսկ 1210 թ. Զարոպաղատը, 1110 թ. այն գրավել են Շահարմանները, իսկ 1210 թ. Զարոպաղատը, 1110 թ. այն գրավել են Շահարմանները, իսկ 1210 թ. Զարոպաղատը։ Խլաթի վրա հարձակվում է Տայքի տիրակալ Դավիթ Գյուրգենը։ Հետագայում այն գրավում են մոնղոլներից։ Բայց չի հաջողվում։ Հետագայում այն գրավում են մոնղոլներից։ Բայց չի հաջողվում։ Հետագայում այն գրավում են մոնղոլներից։ Բայց չի հաջողվում։ 1246 թ. երկրաշարժից։ XVI դարի սկզբերը։ Քաղաքը շատ է տուժում

կան։ Այժմ էլ գոյություն ունեցող այդ փոքրիկ գյուղաքաղաք-նավահանգիստը թուրքերը կոչում են Ախլաթ։

Արծկե.— Այս քաղաքը երբեմն կոչված է նաև գյուղ։ Գտնվում է Վանա լճի հյուսիսային ափին, Խլաթ և Արճեշ քաղաքների միջև, իսկ XI դ., երբ Վանա լճի մակարդակը բավական բարձրացել էր, քաղաքի որոշ մասերն ուղղակի գտնվում էին ջրի մեջ։ Բերդը տեղադրված էր զառիթափ լեռնալանջի վրա, կառուցված որձաքարի հսկա կոշտերով, ունեցել է ամրակուռ պաշտպանական պարիսպ։ Հիշատակվում է դեռևս V դարից։ Զարգացման շրջան էր ապրում X—XIII դարերում, սակայն սելջուկների (1054 թ.), մոնղոլների (1242—43 թթ.) արշավանքների և հետագա նվաճումների հետևանքով Արծկեն աստիճանաբար հետադիմում է։ XV—XVIII դարերը Արծկեի պատմության ամենամռայլ շրջանն է։ XIX դ. սկզբներին ուներ միայն 500 տուն՝ հայ ու քուրդ բնակչությամբ։ Քաղաքի հայ բնակչությունը թուրք ջարդարարների կողմից ոչնչացվեց և ցիրուցան արվեց առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում։ Իրև սովորական բնակավայր Արծկեն այժմ էլ գոյություն ունի, որին թուրքերը կոչում են Ադելջևազ։

3. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Վասպուրական նշանակում է աղնվական երդիք։ Այս ընդարձակ «աշխարհը» գտնվում էր Վանա և Ուրմիա լճերի միջև՝ հյուսիս-արևելքում ձգվելով մինչև Արաքս և ավելի հեռու, իսկ հարավ-արևմուտքում՝ մինչև Արևելյան Տիգրիսի վերին հոսանքի հովիտը։ Այն ընդգրկում է մի քանի ընդարձակ դաշտեր (Հայոց ձորի, Աբաղայի, Մակուի և այլն), որոնք ոռոգվում են Արաքսի, Տիգրիսի և Վանա լճի ավազաններին պատկանող գետերով ու գետակներով։ Անտառներով աղքատ է։ Ունի նավթ, պղինձ, կապար, երկաթ, սեղանի աղ և այլ հանածոներ։ Նրա լճերը (հատկապես Վանա լիճը) և գետերը հարուստ են ձկներով։

Հնագույն ժամանակներում Վասպուրականն ամբողջապես մտնում էր Ուրարտական պետության մեջ։ Արտաշեսյանների թագավորության շրջանում նրա հարավային շրջանները Պարսկահայքի հետ միասին կազմում էին Նոշիրական կամ Շիրական դրեշխությունը։ III դ. վերջերից Վասպուրականը մասնատվում է մի շարք նախարարությունների, որոնցից առանձնապես զորեղ էին Մարդպետունի, Արծրունի, Ամատունի և Ռշտունի նախարարական տները։ Դրանցից առաջինը իշխում էր Վասպուրականի հյուսիս-արևմտյան մասում (առանց Արտազ գավառի)՝ Մարդպետական աշխարհում, երկրորդը՝ Մեծ Աղբակ գավառում, իսկ V դարից, երբ Արշակունիների հետ միասին քաղաքական ասպարեզից վերացան Մարդպետունիները, նաև Մարդպետական աշխարհի մեծ մասում։ Ամատունիներն իշխում էին Արտազում (Մակուի շրջան), իսկ Ռշտունիները՝ Վանա լճի հարավային կողմում և Տոսպում (Վան քաղաքի շրջակայքում)։ VIII դ. երկրորդ կեսից Վասպուրականի նախարարական տների մեծ մասը արաբական խալիֆայության դաժան քաղաքականության հետևանքով կորցնում է իր նշանակությունը։ Դրանց փոխարեն ավելի են հզորանում Արծրունիները, որոնք IX դ. երկրորդ կեսին իրենց ձեռքն էին վերցրել ոչ միայն ամբողջ Վասպուրականը, այլև Մոկաց աշխարհը և Կորճեքի ու Պարսկահայքի մի շարք գավառներ։ X դ. սկզբին Արծրունիների իշխանության սահմանները ավելի են ընդարձակվում։ Այս անգամ արդեն Այրարատյան և Տուրուբերան աշխարհների մի քանի գավառների հաշվին։ Տարածքային այդպիսի կազմով Վասպուրականի թագավորությունը, որն իր գոյությունը պահպանեց մինչև 1021 թ., երբ այն միացվեց Բյուզանդական կայսրությանը, իսկ նրա վերջին թագավոր Սենեքերիմն իր զորքերի, բազմաթիվ ազնվականների ու հազարավոր բնակիչների հետ միասին տեղափոխվեց Սեբաստիայի շրջանը։

Վասպուրականի թագավորությունը ենթակա էր Անի—Շիրակին։ Ըստ աղբյուրների հաղորդած տեղեկությունների, IX դ. սկզբներին այստեղ եղել է 72 բերդ ու ամրոց, 10 քաղաք, 4000 գյուղ և 115 վանք։ Այդ ժամանակներում Վասպուրականի բնակչության թիվը, ամենայն հավանականությամբ, մեկ միլիոնից ավելի էր։

Ուրարտական ժամանակաշրջանում մայրաքաղաք Տուշպան (Վան) կարևորագույն ճանապարհների հանգույց էր։ Նա այդ ճանապարհներով կապված էր Ասորեստանի, Մարաստանի, ինչպես և Արաքսի ավազանների հետ։ Այդ ճանապարհները Ուրարտական պետության անկումից հետո կորցնում են իրենց նշանակությունը։ Դրանց փոխարեն երկրի տնտեսական կյանքի համար կարևոր նշանակություն է ստանում Թավրիզ—Վան—Արճեշ—Մանազկերտ ճանապարհը, որը մնացել է ընդհուպ մինչև XVII դարը։ Կային նաև տեղական մի շարք ճանապարհներ։

Վասպուրականը ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ի մասնատված էր 35 գավառի։ Դրանցից առավել նշանավորներն էին՝ Ռշտունաստան, Գ

նիքը, Տոսպը, Անձևացիքը, Արտազը, Անձախիձորը, Թոնրավանը, Գողթնը, Նախճավանը և Առբերանին։

Ռշտունիք

Ռշտունիք անունը Ուրարտու անվան հայկական ձևերից մեկն է։ Լեռնային է ու անտառապատ։ Տարածվում էր Վանա լճի հարավային առափնյա շրջանում։ Նրա մեջ էին մտնում նաև Աղթամար ու Արտեր կղզիները։ Մինչև VIII դարը պատկանում էր Ռշտունի նախարարներին, իսկ IX դարում անցնում է Արծրունիներին։ Ռշտունիքի պատմական վայրերից ուշադրության արժանի են հետևյալները.

Ոստան.— Ավան։ Երբեմն կոչվել է քաղաք։ Գտնվում էր Արտոս լեռան հյուսիս-արևմտյան ստորոտին, այժմյան Ոստան գյուղի մոտ։ Ռշտունյաց աթոռանիստն էր և պատված էր ամուր պարիսպներով։ Այստեղ մեծ կառուցումներ են կատարվել Գագիկ I Արծրունի թագավորի օրոք (908—943)։ Նա, պատմիչի վկայությամբ, այստեղ կառուցել է տվել տաճար, ամառանոց և բերդ։ Ոստանը փոքրիկ էր, բայց աշխույժ առևտուր ուներ և կապված էր շրջակա գավառների հետ։ Այն ամբողջապես թաղված էր մրգատու այգիների մեջ։ Ոստանի հին բերդը XV դարում գրավել ու հիմնահատակ ավերել են թուրքերը։ Հին Ոստանի ավերակները, որոնք այժմյան քրդարնակ գյուղից գտնվում են բավական հեռու, նշմարվում են ծովափնյա ժայռերի գառիթափ լանջերին։

Նարեկա վանք.— Գտնվում էր Ոստանից արևմուտք, լճից 5—6 կմ հեռավորության վրա։ Վանքն ըստ երևույթին գոյություն է ունեցել V—VI դարերից, սակայն արմատական վերակառուցման է ենթարկվել X դարում և դարձել Հայաստանի մշակութային կենտրոններից մեկը։ Այստեղ է ապրել և ստեղծագործել միջնադարյան հայ խոշորագույն բանաստեղծ Գրիգոր Նարեկացին (951—1003)։ Վանքն ունեցել է բարձր տիպի դպրոց, երաժշտական դասարան և այլն։ Այս դպրոցում ժամանակին ուսանել են նաև VII դարի մեծ գիտնական Անանիա Շիրակացին, պատմագիր Ուխտանեսը։

Աղթամար.— Այս փոքրիկ ժայռային կղզին գտնվում է Վանա լճի հարավային ափի մոտ և միշտ ծառայել է իբրև ամրոց Ռշտունյաց նախարարների համար։ Նրանք քաղաքական աննպաստ պահերին թողնում էին իրենց իշխանանիստ Ոստանը և զորքի հետ միասին ամրանում Աղթամարում։ Աղթամարն իր զորակայանն էր դարձրել նաև VII դ. հայրենասեր իշխան, սպարապետ Թեոդորոս Ռշտունին։ Կղզում մեծ կառուցումներ են կատարվում X դարում՝ Վասպուրականի թագավոր Արծրունի Գագիկ I-ի ժամանակ։ Կղզին վերածվում է մի փոքրիկ, բոլոր կողմերից պարիսպներով շրջափակված ամուր քաղաքի։ Կղզու կենտրոնում դուրս ցցված ժայռը պատում են այգիներով ու ծաղկանոցներով։ Կառուցվում են շքեղ շենքեր, հարմարավետ նավահանգիստ, ամբարտակ և այլն։ Սակայն Աղթամարի կառույցների պսակը կազմում էին Գագիկ Արծրունու օրոք կառուցված ս. Խաչ տաճարն ու արքայական պալատը։ Աղթամարի այդ տաճարը, որ կառուցել է անվանի ճարտարապետ Մանվելը, հայկական ճարտարապետության գլուխգործոցներից է և ժամանակին եղել է մշակույթի մեծ կենտրոն։ XII դարի սկզբում այն դարձել է կաթողիկոսանիստ վանք։ Աղթամարի քաղաքացիական ու պաշտպանական բնույթի կառուցվածքներից գրեթե ոչինչ չի պահպանվել։ Միայն ս. Խաչ տաճարն է, որ խարխլված վիճակում մինչև այժմ էլ կանգուն է և այդ վիճակում անգամ հիացմունք է պատճառում օտար այցելուներին։ Ներսի ճոխ որմնանկարները, արտաքին բարձրաքանդակները, կառուցվածքի ճարտարապետական լուծումները, վեհությունը այն դարձնում են մեր միջնադարյան ճարտարապետության պսակներից մեկը, որի նշանակությունը դուրս է գալիս ազգային արվեստի շրջանակներից։

Տոսպ

Տոսպ անունը կապված է ուրարտական Տուշպա մայրաքաղաքի անվան հետ։ Տարածվում էր Վան քաղաքի շրջակայքում և համապատասխան հետ։ Տարածվում էր Վան քաղաքի շրջակայքում և համապատասխանում էր ուրարտական Բիաինա երկրի կենտրոնական շրջանին։ Ունի մարգավանդ հողեր, որոնք հիմնականում ոռոգվում են Շամիրամի (Մենուայի) ջրանցքով։ Գավառի պատմական վայրերից կարելի է նշել հետևյալները.

Վան.— Հայաստանի և աշխարհի հնագույն քաղաքներից է։ Հիմնադրվել է IX դարում (մ. թ. ա.)։ Ուրարտական— հնագույն հայկական պետության գոյության ամբողջ ընթացքում (IX—VI դդ. մ. թ. ա.) եղել է նրա մայրաքաղաքը։ Ուրարտացիներն այն կոչում էին Տուշպա, իսկ հետագայում այն կոչվեց Վան։ Գտնվում է Վանա լճի արևելյան ափին և այժմ էլ գոյություն ունի։

Վանը Ուրարտական հնագույն հայկական պետության տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի խոշորագույն կենտրոնն էր։ Նրա քարակտուր բերդը հռչակված էր իր անմատչելիությամբ։ Հետագայում

Նկ. 20

Վան քաղաքի համայնապատկերը

էլ այն պահպանեց իր նշանակությունը և հաճախ կոչվել է Ամրական Քարանձավ, իսկ երբեմն էլ՝ ուղղակի Անձավ։ Քաղաքի շուրջը փորված փոսը արտաքին հարձակումների ժամանակ լցնում էին Մենուայի ջրանցքի ջրով։ Իրենց մայրաքաղաքում ուրարտական թագավորները կառուցել էին արքունական հոյակապ ապարանքներ, տաճարներ, ժայռափոր ընդարձակ սրահներ, գանձարաններ և այլն։ Քաղաքի համար առանձնահատուկ նշանակություն ուներ Մենուայի ջրանցքը։

Հայկական ավանդության համաձայն Վան քաղաքի հիմնադիրը եղել է ասորեստանյան առասպելական Շամիրամ թագուհին և դրա հիման վրա էլ մեր պատմագիրներից ոմանք այն կոչում են «Քաղաք Շամիրամայ», իսկ երբեմն էլ «Շամիրամակերտ»։

Վանը առևտրի ու արհեստագործության խոշոր կենտրոն էր։ Առանձնապես մեծ զարգացման էին հասել զինագործությունը, դարբնությունը, ոսկերչությունը, բրուտագործությունը, շինարարական արհեստները, բորակի ու աղի հանույթը, ձկնորսությունը։

Ուրարտական պետության անկման հետ միասին Վանը կորցրեց իր նախկին նշանակությունը, սակայն հետագայում մի քանի անգամ նորից ապրել է զարգացման շրջան։ Վանն առանձնապես մեծ զարգացում է ապրել հելլենիստական դարաշրջանում (III—I դդ. մ. թ. ա.) և X—XIII դարերում։

Իբրև հնագույն քաղաք Վանը ականատես է եղել մեր ժողովրդի բազմադարյան պատմության բոլոր կարևոր իրադարձություններին և առնչվել է դրանց հետ։ 1915 թվականին Թուրքական ցեղասպանների դեմ առաջինը ոտքի կանգնեցին Վանի և նրա շրջակայքի տասնյակ գյուղերի



Նկ. 21

Վանա բերդը

բնակիչները։ Նրանք կենաց ու մահու կռվի միջոցով կարողացան ջարդարարներին

փին, այժմյան նույնանուն խշճուկ գյուղի տեղում։ Ամբողջ ավանը թաղված է եղել պտղատու այգիների մեջ։ Արտամետը հռչակված է եղել հատկապես իր անուշահոտ խնձորով։ Հեթանոսական շրջանում այստեղ գտնվում էր Անահիտ աստվածուհուն նվիրված մեհյան և անունը կապված է այդ աստվածուհու հունական անվան՝ Արտեմիդայի հետ։ Ավանդության համաձայն Արտամետը հիմնադրել է Արտաշես I-ը։ Արտաշեսյանների ժամանակ եղել է թագավորական ամառանոց։ Արտամետի միջով է անցնում Մենուայի ջրանցքը։ Այստեղ գերմանացի գիտնական Քեքը հայտնաբերել է ուրարտական սեպագիր չորս արձանագրություն։ XX դարի սկզբներին ուներ 500 հայկական տուն, եկեղեցի։ Այստեղ պահպանվել էին մի քանի հին եկեղեցիների, մատուռների և այլ շենքերի ավերակներ։

Առեստ.— Ավան էր և ուղղակի կոչվել է նաև Առեստավան։ Գտնվում էր Վանա լճի հյուսիս-արևելյան ափին, Բերկրի գետի գետաբերանում։ Արշակունիների թագավորության շրջանում այստեղ էր գտնվում արքայական ձկնորսարանը, որի որսած տառեխի մի մասը չորացված, աղ դրած կամ ծխեցրած վիճակում արտահանվում էր զանազան երկրներ։ Այս ավանում 337 թվականին տեղի է ունեցել ճակատամարտ մի կողմից հայոց խոսրով Կոտակ թագավորի զորքերի, իսկ մյուս կողմից՝ պարսկական բանակի միջև։ Ճակատամարտում հաղթանակում են հայկական զորքերը։

Վարագա վանք.— Հնում այս վանքի տեղում եղել է հեթանոսական մեհյան։ Վանքը կառուցվել է IX դ. վերջերին կամ X դ. սկզբներին։ Դրանից կից կային դպրոց և հարուստ մատենադարան։ 1021 թ. Վասպուրականի վերջին թագավոր Սենեքերիմը իր հետ Սեբաստիա է տանում նաև Վարագի հոգևորականներին, նրա ամբողջ հարստություններն ու հարուստ մատենադարանը։ Սակայն հետագայում Վարագա վանքը շարունակում է գոյություն ունենալ և նշանավոր դեր խաղալ հայ մշակույթի պատմության մեջ։ Այստեղ ընդօրինակվել են տասնյակ ձեռագրեր, գրվել են նոր երկեր։ XIX դ. սկզբներին Վարագի մատենադարանն ուներ մոտ 400 ձեռագիր և մոտ 1000 կտոր տպագիր մատյաններ։ Վարագի նոր ժամանակների դպրոցը բացվել էր կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի ջանքերով և կոչվում էր ժառանգավորաց դպրոց։ Նույն կաթողիկոսի խմբագրությամբ այստեղ հրատարակվում էր «Արծվի Վասպուրականի» ամսագիրը։ Արևմտյան Հայաստանի մշակույթի մյուս կենտրոնների նման Վարագն էլ ավերվեց ու կողոպտվեց թուրք ցեղասպանն-



Նկ. 22

Վարագավանքը

ության կողմից առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ։ Մինչև օրս էլ նշմարվում են նրա յոթ տաճարների, պաշտպանական պարսպի և օժանդակ շենքերի ավերակները։ Իսկ վերին Վարագ լեռնագագաթի վրա՝ Աստղկաբերդի ավերակները։ Վարագում հայտնաբերված են նաև ուրարտական սեպագիր արձանագրություններ։

Առբերանի գավառ

Տարածվում էր Վանա լճի հյուսիսային կողմում, Բերկրի (Բենդիմահի) գետի հովտում, որ համապատասխանում է Արաղայի գաշտին։ Գավառի նշանավոր վայրը Բերկրի փոքրիկ քաղաքն էր, որ այժմ իրեն մի անշուք բնակավայր գոյություն ունի և գտնվում է Բերկրի գետի ստորին հոսանքում։ Հավանաբար այս գավառում էր գտնվում նաև Ամյուկ

բերդը, որը տեղադրված էր Վանա լճի հյուսիս-արևելյան ափին և երբեմն ժամանակ համանուն հայկական իշխանության կենտրոնն էր։ Ամրոցը հիմնադրել է Գագիկ Արծրունի I թագավորը։ XX դ. սկզբներին պահպանվում էին դրա ավերակները։ Ոմանք այն նույնացնում են Համոկ կամ Ամիկ գյուղի հետ, որը գտնվում է Լիմ կղզուց հարավ-արևմուտք, Վանա լճի ափին, մի փոքրիկ հրվանդանի վրա։

Անձևացիք (կամ Անձավացիք)

Գտնվում էր Արևելյան Տիգրիսի (Բոհտանսու) վերնագավառում։ Լեռնային անտառապատ գավառ էր, որ տեղացիները սովորաբար կոչել են Քարզահ։ Անձևացիքում հիշատակված պատմաաշխարհագրական վայրերից են Կանգուր կամ Կանգուտա ամուր բերդը (այժմյան Կանգուվա գյուղաքաղաքի տեղում) և Հոգյաց վանքը (Արևելյան Տիգրիսի բարձրադիր ափին)։ Ըստ ավանդության, Հոգյաց վանքը, որ կոչվել է նաև Դարբնաց քար, կառուցել է Բարթողիմեոս առաքյալը։ Եղել է գրչության կենտրոն։ Հեթանոսական շրջանում այստեղ կար Անահիտ աստվածուհուն նվիրված տաճար։

Արտազ

Իր տարածքով համապատասխանում է այժմյան Մակուի շրջանին, որ փռված է Մասիսից հարավ-արևելք։ Պատկանում էր Ամատունիներին, իսկ հետագայում անցավ Արծրունյաց իշխանական տանը։ Արտազն ավելի հին ժամանակներում կոչվում էր Շավարշան կամ Շավարշական։

Արտազի մի շարք վայրեր (Ավարայրի դաշտը, Ներսեհապատ ու Եղինդ գյուղերը) նշանավոր դարձան հայանյան Պարսկաստանի դեմ V դ. բռնկված ժողովրդազատագրական պատերազմների ժամանակ։

Ավարայրը փոքրիկ դաշտ էր, Մակուի դաշտի արևմտյան մի հատվածը, որը տարածվում էր Տղմուտ գետի վերին հոսանքի հովտում (հավանաբար համապատասխանում էր այժմյան Ավաջիղին)։ Այստեղ 451 թ. մայիսի 26-ին տեղի ունեցավ ճակատամարտ հայկական ազատագրական բանակի, որը գլխավորում էր քաջ սպարապետ Վարդան Մամիկոնյանը, և պարսկական ստվարաթիվ զորքերի միջև, որոնք Մուշկան Նիսալավուրտ զորավարի հրամանատարությամբ արշավել էին Հայաստան հայ ժողովրդի ազատագրական պայքարն արյան մեջ խեղդելու

համար։ Ճակատամարտի ելքի բնութագիրը տվել է հենց ինքը՝ սկանդինավացի պատմագիր Եղիշեն, ըստ որի դրանում կողմերից ոչ մեկը «չի տես պատմագիր Եղիշեն, ըստ որի դրանում կողմերից ոչ մեկը «չի տես պարտվելը»։ Ճակատամարտից հետո հայ ազատագրական զորքերը շարունակեցին պարտիզանական կռիվները պարսկական բանակի դեմ։

451 թ. այս ճակատամարտը պատմության մեջ հայտնի դարձավ Ավարայրի ճակատամարտ (կամ Վարդանանց պատերազմ) անունով։ Ոմանք Ավարայրի դաշտը տեղադրում են ,պատմական Հայաստանի արևելյան սահմանագլխին՝ Պարսկահայքի Հեր (Խոյ) և Զարեվանդ (Սալմաստ)՝ զավառների կողմերում, որն անընդունելի է։ Ղազար Փարպեցին հիշատակում է նաև Ավարայր անունով գյուղ։

Ներսեհապատ.— Գյուղ։ Գտնվում էր Ավարայր գյուղի մոտերքում։ Այստեղ 482 թ. ապրիլ ամսին տեղի է ունեցել արյունահեղ ճակատամարտ։ Վահան Մամիկոնյանի գլխավորած հայկական ազատագրական բանակը մի ամբողջ օր տևած այդ դաժան կռվում կատարյալ հաղթանակ է տարել թվով մի քանի անգամ գերազանցող պարսկական բանակի դեմ, որը դիմել է փախուստի։

Եղինդ.— Գյուղ։ Գոյություն ունի հին ժամանակներից։ Եղինդում էր գտնվում Վահան Մամիկոնյանի ճամբարն այն ժամանակ, երբ նա Նիխորի հետ վարում էր Նվարսակի հաշտության նախնական բանակցությունները։ Այժմ էլ գոյություն ունի, գտնվում է Մակու քաղաքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա և կոչվում է Երինդ։

Մակու.— Քաղաք։ Հնում բերդաքաղաք էր և հավանաբար Ամատունիների աթոռանիստն էր։ Մակու անունը համեմատաբար նոր ժամանակների աթոռանիստն էր։ Մակու անունը համեմատաբար նոր ժամանակներից է հիշատակվում։ Այստեղ գտնվող ամուր բերդի կառուցումը վերագրում են VII—VIII դարերին։ Քաղաքում հին բերդի ավերակներից բացի նշմարվում են նաև եկեղեցիների և այլ կառուցվածքների փլատակներ։ Մակուի շրջանում է գտնվում ս. Թադեի հռչակավոր վանքը, որը այժմ էլ կանգուն է և ճարտարապետական առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ XVI դարից ի վեր Մակուն համանուն խանության կենտրոնն է։

Աղբակ (կամ Մեծ Աղբակ)

Տարածվում էր Տիգրիսի ձախակողմյան վտակ Մեծ Զաբ գետի վերնագավառում և համապատասխանում է այժմյան Բաշկալայի շրջանին։ Աղբակը Արծրունիների տոհմական գավառն էր։ Այստեղ էր գտնվում Արծրունիների իշխանանիստ Աղամակերտ (այժմ Բաշկալա) փոքրիկ

քաղաքը։ Ադամակերտ անունը սովորաբար կապում են ավանդական Ադամի անվան հետ։ Հնագույն սեպագիր արձանագրություններում հիշատակվում է Ադամմա (Adamma) ձևով։ Այստեղ կառուցված էր ամուր բերդ և Արծրունիների ֆեոդալական դղյակը։ Քաղաքն ունեցել է նաև վանք, որի անունը դժբախտաբար չի պահպանվել։ Ադամակերտ—Բաշկալայով էր անցնում Թավրիզ—Վան—Բիթլիս (Բաղեշ) տարանցիկ ճանապարհը։ Աղբակի մյուս հայտնի վայրը Բարդուղիմեոսի վանքն էր, որի ավերակները գտնվում են այժմյան Բաշկալա քաղաքի մոտակայքում։ Ըստ ավանդության, այս վանքը կառուցվել է IV դարում, եղել է եպիսկոպոսանիստ։ Կառուցված է մի անմատչելի բլրի վրա, որի ստորոտին մինչև XX դ. սկզբները գոյություն ուներ «Վանքի գյուղ» հայկական գյուղը։ Վանքի քանդակներով հարուստ և սյունազարդ տաճարը խարխուլ վիճակում պահպանվել էր մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Այն բավական մանրամասն նկարագրել է Բաֆֆին։

Անձախիձոր (կամ Անձահիձոր)

Տարածվում էր այժմյան Կոտուր գետի միջին հոսանքում, Խոյ քաղաքից արևմուտք։ Այս գավառի նշանավոր վայրը Կոտոր ամուր բերդն էր (այժմ Կոտուր, համանուն գետի ափին)։

Թոնդրավան (կամ Թոռնավան)

Տարածված էր Անձախիձոր գավառից արևմուտք, Կոտուր գետի վերնագավառում և հարակից տարածքներում։ Այս գավառը հայտնի էր Սևան և Նկան բերդերով։ Դրանցից առաջինը, որն այժմ կոչվում է Սեյվանկալա, գտնվում է Արճակ լճի մեջ ցցվող Մեհմեդիկ գետի ափին։ Պատմական Նկան բերդի տեղում ևս կա մի գյուղ, որը կոչվում է Նագան։

Գողթն

Մոտավորապես համապատասխանում է Նախիջևանի ԻԽՍՀ-ի Օրդուբադի և Ջուլֆայի շրջաններին։ Երբեմն մտել է Վասպուրականի, իսկ երբեմն էլ՝ Սյունիքի մեջ։ Հայտնի էր խաղողի և մրգատու այգիներով, գիներգործությամբ։ Գողթնը տվել է շատ գուսաններ։ Նրա պատմական

վայրերից են Ջուղա ավանը, որ XVII դ. սկզբներին առևտրական ծաղկած քաղաք էր և ամայացվեց Շահաբաս I-ի կողմից, Օրդվաթ (այժմ՝ Օրդուբադ քաղաքը Նախիջևանի ԻԽՍՀ-ում) և՝ Մարվանիս գյուղերը։ Ենթադրվում է, որ վերջինիս անունը կապված է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ, որը Գողթնում եղած ժամանակ ապրել ու գործել է այդտեղ։

Նախճավան

X դարից կոչվել է Նախիջևան։ Տարածվում էր համանուն քաղաքի շրջակայքում։ Գավառի նշանավոր վայրը Նախիջևան քաղաքն էր, որն այժմ Նախիջևանի ԻԽՍՀ մայրաքաղաքն է։ Հնում Նախիջևանը Մարզպետունի նախարարական տան աթոռանիստն էր, իսկ V դարից հետո, երբ վերացավ նախարարական այդ տոհմը, քաղաքը փոխնփոխ անցել է մերթ Արծրունիների, մերթ էլ Սյունյաց իշխանների ձեռքը։ Միջին դարերում երբեմն ենթարկվել է Գողթնի էմիրությանը։ XVI—XIX դդ. Նախիջևանը համանուն խանության կենտրոնն էր և պարսկական լծից ազատագրվեց Երևանի խանության հետ միասին՝ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով։

4. ՍՅՈՒՆԻՔ ԿԱՄ ՍԻՍԱԿԱՆ

Սյունիքը սահմանագծված է Այրարատ, Վասպուրական, Արցախ, Ուտիք և Գուգարք աշխարհներով՝ գրավելով Սևանա լճի ավազանը, Արփա գետի վերին ու միջին հոսանքների շրջանը, այժմյան Զանգեզուրը և վերջինիս հարակից մի քանի շրջաններ։ Լեռնային երկիր է, զգալի մասը անտառապատ։ Ջրառատ է։ Այստեղ կան բազմաթիվ արագահոս գետեր և մի շարք լճեր, որոնց թվում Գեղամա (Սևանա) լիճը։ Սյունիքի մի մասը ապառաժոտ տարածություն է, գյուղատնտեսության համար նավորապես, անասնապահության համար նպաստավոր պայմաններ ունեցող ընդարձակ տարածություններ։ Սյունիքի տարբեր տեղերում հնագույն ժամանակներից ի վեր շահագործվել են գունավոր մետաղների (հատկապես պղնձի) մի շարք «բույ»-եր։ Սյունիքը հայտնի է եղել նաև ընկուզենու փայտով, ձկով, հանքային բազմաթիվ աղբյուրներով։

IV դարից Սյունիքը հիշատակվում է որպես մի հզոր նախարարություն, որի հեծյալ զորքի քանակը հասնում էր 19400-ի։ Բագրատունիների և Արծրունիների նման Սյունյաց իշխանները նույնպես արտաքսվեցին



Նկ. 23

Հայրավանք. IX—XIII դդ. (վերականգնումից հետո)

տիրապետության շրջանում կարողացան ոչ միայն պահպանել իրենց գոյությունը, այլև ավելի ընդարձակեցին Սյունյաց իշխանության սահմանները։ Սակայն Բագրատունիների թագավորության հաստատումից հետո, X դ. հենց սկզբներից Գեղամա երկիրը (Գեղարքունիք և Սոդք գավառները) միացվում է Բագրատունյաց թագավորությանը։ Նրա տարածքը կրճատվում է նաև հարավային մասում. Սյունիքից դուրս է մնում Երնջակ գավառը։

970 թ. Սյունիքում կազմավորվում է ֆեոդալական մի թագավորություն, որն սկզբնական շրջանում իր ձեջ ընդգրկում էր Սյունիք աշխարհի X դ. սկզբներին ունեցած ամբողջ տարածքը։ Սակայն XI դ. սկզբին նա կորցնում է իր տարածքի զգալի մասը։ Բագրատունի Դավիթ Ա թագավորը 1003 թ. Սյունիքի թագավորությունից գրավում և Անի—Շիրակին է միացնում վայոց ձորն ու նրա շրջակայքի մի քանի գավառները։

Դրանից հետո Սյունիքի թագավորությունը, որն իր մայրաքաղաքի անունով կոչվել է նաև Կապանի թագավորություն, ընդգրկում էր նախկին Սյունիքի տարածքի մոտավորապես կեսը՝ նրա հարավ-արևելյան մասի 6 գավառները (Բաղք, Կապան, Արևիք և այլն)։ Ֆեոդալական այդ թագավորությունն ուներ 43 բերդ ու ամրոց, 48 վանք և 1008 (1400) գյուղ։ Նա իր հզորության գագաթնակետին հասավ XI դարի երկրորդ կեսին, սակայն նույն դարի վերջից սկսած ստիպված էր համառ մարտեր մղել սելջուկյան նվաճողների դեմ։ Սելջուկներին, այնուամենայնիվ, հաջողվում է 1103 թ. ավերել թագավորության մայրաքաղաք Կապանը, ապամեկը մյուսի ետևից գրավել նրա գավառները։ 1170 թ. սելջուկները գրավում են Սյունիքի թագավորության վերջին բերդը՝ Բաղաբերդը։ Սյունիքի թագավորությունը վերանում է պատմական ասպարեզից։ Սյունյաց իշխանները, գլխավորապես Օրբելյաններն ու Գռուշյանները, շատ շանցած, Զաքարյանների օժանդակությամբ երկրում հաստատում են իրենց իշխանությունը։ Սակայն շուտով վրա են հասնում մոնգոլական և թուրք թաթարական ավերիչ արշավանքների, թալանի ու բռնությունների ժամանակները։

Սյունիքն իբրև լեռնային երկիր հին և միջին դարերում բարեկարգ ճանապարհներ չուներ։ Երկրի համար էական նշանակություն ունեցող Դվին—Նախճավան—Փայտակարան—Կասպից ծով ճանապարհը անցնում էր նրա կողքով և երկրի հետ միանում էր միայն երկրորդական նշանակություն ունեցող Նախճավան—Շաղատ (այժմյան Սիսիանի շրջանում) ճանապարհով։ Մյուս գլխավոր ճանապարհը Դվին—Բերդկունք—Գարառավ ճանապարհն էր, որն արդեն անցնում էր երկրամասի բուն տարածքով։ Բացառությամբ այդ տարանցիկ ուղիների, Սյունիքի մյուս ճանապարհները ձմռան ամիսներին փակվում էին։

Սյունիքը բաղկացած էր 12 գավառներից։

Զորք (կամ Կապան)

Զորքը Սյունիքի ամենալեռնոտ շրջաններից էր։ Նրա մի զգալի մասը այժմ էլ ծածկված է անտառով։ Իր տարածքով համապատասխանում էր այժմյան Ղափանի շրջանի արևմտյան մասին։ Հայտնի է դարձել հատկապես Սյունիքի թագավորության շրջանում։ Այստեղ կային պատմաաշխարհագրական մի շարք վայրեր։ Դրանցից են.

Բաղաբերդ.— Հայաստանի հնագույն և անմատույց բերդերից մեկն

էր։ Նրա դերն ավելի է մեծանում հատկապես թագավորության ժամանակներում, երբ քաղաքական աննպաստ պայմանների պատճառով այստեղ էին կենտրոնացվել Տաթևի և Սյունիքի մյուս վանքերի հոկայական հարստություններն ու բազմահազար ձեռագրերը։ 1103 թ. Կապան քաղաքի ավերումից հետո Բաղաբերդը, որ նրա միջնաբերդն էր և գտնվում էր քաղաքի արևմտյան ծայրամասում, գառնում է Սյունիքի թագավորության մայրաքաղաքը։ Դեռևս IV դարից հիշատակվող այս բերդը անմատույց էր մնացել դարեր շարունակ։ Այն պատված էր կրկնակի պարիսպներով, որոնք ունեին բազմաթիվ բուրգեր։ Բերդն ուներ խմելու ջուր, որը մոտակա սարերի աղբյուրներից բերված էր կավե խողովակներով, ընդարձակ գաղտնարաններ ու ելքեր դեպի Ողջի գետը։ Բայց և այնպես 1170 թ. սելջուկները կարողանում են գրավել Բաղաբերդը, այստեղ ամբարված հոկայական հարստությունները ենթարկել ավարի և աշնչացնել ավելի քան 10 հազար ձեռագիր։ Դրանից հետո Բաղաբերդն այլևս չի վերականգնվում։ Նրա ավերակները գտնվում են Ողջի գետի ձախ կողմում, այժմյան Քաջարան քաղաքից մոտ 16 կիլոմետր արևելք, Դավիթ-բեկ փոքրիկ ավանի մոտ։

Վահանավանք.— Գտնվում է այժմյան Ղափանի շրջանի Շիհարջիկ գյուղի դիմաց, Ողջի գետի աջ կողմում, մի անտառապատ գեղեցիկ ձորում։ Վանքը կառուցել է Վահան իշխանը 911 թ.։ XI դ. երկրորդ կեսին գլխավոր տաճարից 25—30 մ հեռավորության վրա կառուցվում է մի ավելի փոքր եկեղեցի, որն այժմ պահպանվել է կիսականգուն վիճակում։ Մեծ եկեղեցուց պահպանվել են մի քանի կամարներ և պատերի ներքևի մասերը։ Վանքի մոտ եղել է համանուն բնակավայր։ Այժմ այստեղ կատարվում են հնագիտական պեղումներ և վերականգնման աշխատանքներ, ամբողջովին բացված է մեծ տաճարի հատակագիծը, մաքրված ու կարգի է բերված շրջակայքը, ամրացված են տաճարի քանդման ենթակա մասերը, հիմքի տարբեր հատվածներում վերականգնվել են պատերի շարվածքները։ Վահանավանքը Ղափանի շրջանի կարևոր տեսարժան վայրերից է և այժմ բավական բարեկարգ ճանապարհով կապված է Ղափան քաղաքի հետ։

Կապան.— Քաղաք։ Գտնվում էր այժմյան Ղափան քաղաքից մոտավորապես 14 կմ արևմուտք, Ողջի գետի բարձրադիր աջ ափին, որը տեղացիներն անվանում են «Տանձուլենջ»։ Հիշատակվում է V դարից։ X դարում Կապանն արդեն քաղաք էր, իսկ նույն դարի վերջերում գտնում է Սյունիքի թագավորության մայրաքաղաքը։ Դիրքն ամուր էր, նրա հյուսիսային կողմում Ողջի գետի զառիվեր ձորն է, հարավային կողմում՝ Մեղրու զառիթափ լանջերով լեռնաշղթան, իսկ արևմուտքում թաղակու քար ամրոցն էր և հուսալի բաղաբերդը, որը պատած էր կրկնակի պարիսպներով։ Քաղաքը դյուրին էր մտնել միայն արևելյան կողմից, որը սակայն պաշտպանվում էր ամրակուռ պարիսպներով։ Կապանը փոքր քաղաք էր։ Նրա բնակչության թիվը հավանաբար 10—15 հազարից չի գերազանցել։ Կապանը միջնադարյան Սյունիքի միակ քաղաքն էր։ Նրա բնակչության զբաղմունքի մեջ առևտրից ու արհեստագործությունից բացի, կարևոր տեղ էր գրավում նետի գործը։ 1103 թ. Կապանն ավերվում է սելջուկների հանդեպ ապստամբությունն ու մշակումը։ Կապանն ավերվում է սելջուկների կողմից և այնուհետև մի քանի դար իբրև սովորական բնակավայր գոյություն ունենալուց հետո վերանում է պատմական ասպարեզից։ Ավերակները հազիվ են նշմարվում, իսկ անունը պահպանվել է Ղափան աղավաղված ձևով։

Զորքի տարածքում էր գտնվում XVIII դ. առաջին քառորդի ազատագրական շարժումների ժամանակ հայտնի դարձած Զեյվայի (կամ Զեվա) բերդը։ Այս բերդը Ասլամազ Ղուլի խանի ձեռքից հանկարծակի հարձակմամբ գրավել են Դավիթ-Բեկի զորքերը։ Այն գտնվում էր Ողջի գետի և նրա ձախակողմյան Գեղի վտակի միախառնման վայրում։ Ավերակները գրեթե չեն պահպանվել։ Այժմ գոյություն ունեն նրա պաշտպանական պարսպի մի փոքր հատվածի ծնացորդները, Գեղիի վրա կառուցված միաթռիչք կամրջի ավերակները և նույն գետի աջ ափին եղած վաղեմի անշուք շենքերի հազիվ նշմարվող հետքերը։

Կովսական

Սյունիքի ամենալեռնային գավառներից էր և գրավում էր այժմյան Ղափանի շրջանի հարավային և հարավ-արևմտյան մասը։ Այս գավառի տարածքում էր գտնվում նոր ժամանակներում առաջացած Ղափան բանվորական ավանը (այժմ նույնանուն քաղաք)։ Կովսականի գլխավոր բերդը Գրեամն էր, որի անունով էլ երբեմն կոչվում էր նաև գավառը։ Այս գավառում էր գտնվում XVIII դ. սկզբների ազատագրական շարժումների ժամանակ հայտնի դարձած Հալիձոր բերդը, ազատագրական պատերազմների զեկավար Դավիթ-Բեկի աթոռանիստը։ Հալիձորի բերդի ավերակները գտնվում են այժմյան Ղափան քաղաքի արևմտյան կողմում, Ողջի գետի բարձրադիր աջ ափին, անտառներով շրջապատված գեղատեսիլ լեռնալանջի վրա։ Փոքր ու անշուք է եղել այս բերդը։

Պաշտպանական պարիսպը շրջված է եղել անմշակ քարերից, ունեցել է միայն մեկ դուռ և մեկ աշտարակ։ Վաղեմի բերդի պարիսպների ավերակներից բացի, մեզ են հասել նրա անշուք եկեղեցու, մի քանի այլ կառույցների մնացորդները և գերեզմանոցը, որտեղ թաղված է նաև Դավիթ-Բեկը։ Հալիձոր աննշան բերդը սակայն մեր ժողովրդի պատմության մեջ հայտնի դարձավ 1727 թ. այդտեղ տեղի ունեցած ճակատամարտով, որը մղվեց է թուրքական մեծ բանակի և Դավիթ-Բեկի փոքրիկ ջոկատի միջև։ Անակնկալ հարձակումով Դավիթ-Բեկը շախշախում է թուրքական բանակին և փախուստի մատնում նրան։ Հալիձորի այդ հաղթական ճակատամարտից հետո Դավիթ-Բեկի ջոկատները մեկը մյուսի հետևից ազատագրում են Մեծ Ղափանի գավառներն ու շրջանները։

Բաղք

Բաղքն իր տարածքով համապատասխանում էր այժմյան Ղափանի շրջանի արևելյան մեծագույն մասին։ Տաթևի հին հարկացուցակում հիշատակված նրա 93 գյուղերի մի զգալի մասը (Կավարտ, Խոտանան, Նորաշենիկ, Ազարակ, Երիցավանք) այժմ նույնպես գոյություն ունեն։ Բաղք գավառը հայտնի էր իր պղնձահանքերով, որոնք շահագործման են ենթարկվել հնագույն ժամանակներից։ Այստեղ էին գտնվում Երիցավանք վանքը, որը կառուցվել է IV—V դարերում և որի ավերակները գտնվում են այժմյան Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղի մոտ, և Անդոկաբերդ, Բարկուշատ, Քաշաթաղ, Պանու և այլ բերդեր ու ամրոցներ։

Երիցավանքի ավերակները գտնվում են բարձրադիր ու իշխող վայրում, որի մի կողմը դեպի Արծվանիկ գյուղն իջնող զառիվեր լանջ է։ Նրան պարսպապատ, որի առանձին հատվածները պահպանված են մինչև օրս։ Եկեղեցին բազիլիկա է, շրջված անմշակ քարերով, որոնք ժամանակի ընթացքում կրաշաղախի հետ կազմել են գրեթե համասեռ ամուր զանգված։ Պահպանված են եկեղեցու պատերի ներքևի մասերը և խարխուլ վիճակում գտնվող պայտաձև կամարները։

Բաղք գավառը սերտորեն առնչվել է Սյունիքում XVIII դարում բռնկված ազատագրական պատերազմների հետ։ Դրա արևելյան մասում՝ այժմյան Ղափանի շրջանի Եղվարդ գյուղի մոտ, Շուշանների (Նաբգիզների) կոչված Դաշտում, 1724 թվականին տեղի է ունեցել արջունահեղ ճակատամարտ Դավիթ-Բեկի զինակից Թորոս իշխանի փոքրիկ ջոկատի և Բարձուշատի Ցաթալի խանի զորքերի միջև։ Չնայած մեծ հերոսությանը, Մելիք Ֆրանգուլի դավաճանության պատճառով, հայկական

ջոկատը պարտություն է կրում։ Սպանվածների թվում էր նաև Թորոս իշխանը, որի գերեզմանը գտնվում է Եղվարդ գյուղում։

Սղուկ (կամ Սյունիք)

Մինչև IX դարը Սղուկը Սյունիքի ամենանշանավոր գավառն էր։ Իր տարածքով համապատասխանում էր այժմյան Սիսիանի շրջանին և նրա հյուսիսային շարունակությանը՝ մինչև Նար գավառը։ Պատմաաշխարհագրական շատ վայրեր կային Սղուկքում։

Շաղատ.— Գյուղաքաղաք։ Մինչև IX դարը Սյունյաց իշխանների և եպիսկոպոսների աթոռանիստն էր։ Գտնվում էր այժմյան Սիսիանի շրջանի Շաղատ գյուղի մոտ։ Պատմական Շաղատն ունեցել է նաև բերդ, որի մնացորդներն այժմ էլ նշմարվում են։ Շաղատի դպրոցից (վարդապետարան) էին դուրս եկել Սյունյաց Պետրոս եպիսկոպոսը՝ Քերթող մականվանված (V դ. վերջ), Ստեփանոս Իմաստասերը և ուրիշներ։ X դարի վերջերից Շաղատն աստիճանաբար անշուքանում է և վերանում պատմական ասպարեզից։ Պատմական Շաղատի տեղում դաշտային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են զանազան երկրների տարբեր ժամանակներին վերաբերող մեծ քանակությամբ դրամներ։

Այժմյան Սիսիան քաղաքից մոտ 7 կմ արևելք, Որոտան գետի բարձրադիր ձախ ափին, աղբյուրաշատ ու գեղատեսիլ վայրում տեղավորված է Աղուդի գյուղը։ Գյուղում գտնվում է VII դարին վերագրված մի սքանչելի մահարձան՝ 10—11 մետր բարձրությամբ։ Այն իր հիմքի մասում ունի խոյակներ և զանազան քանդակներ, իսկ դեպի վեր բարձրանում է երկու պատերով, որոնց միջև դարձյալ վեր բարձրացող քանդակազարդ սյուներ են և որոնք երկու տեղ իրար են միանում կամարներով։ Ըստ երևույթին վերևի կամարի կանգուն եղած ժամանակ հուշարձանի բարձրությունը 15 մետրից անցել է։ Հուշարձանը ունեցել է շրջապարիսպ, որի հիմքերը մինչև այժմ նշմարվում են։

Որոտն.— Գյուղ, բերդ և վանք։ Որոտան գետի ձախակողմյան վտակ Կորաձորի գետաբերանի և Աղուդի գյուղի միջև, Որոտան գետի ձախ ափին, գեղատեսիլ լեռնաճյուղի վրա գտնվում են Սյունյաց աշխարհի հայտնի վանքերից մեկի՝ Որոտն վանքի, իսկ նրանից քիչ ներքև, գետի բարձրադիր աջ ափին, ժայռի վրա Որոտն բերդի ավերակները։ Որոտն բերդը հիշատակվում է V դարից։ Այն Սյունիքի թագավորության հայտնի բերդերից էր։ 1104 թ. սելջուկները գրավում են այս բերդը, իսկ 1211—1219 թթ. Զաքարե և Իվանե եղբայրներն ազատագրում են այն։ Որոտն,



Նկ. 24

Տաթևի վանքի համալիրակերը, IX—XIII դդ.

իբրև բերդ պահպանվեց նաև հետագա 2—3 դարերի ընթացքում։ Այժմ պահպանված են միայն պաշտպանական պարսպի և բուրգերի մնացորդները։ Վաղեմի բերդի ավերակները գտնվում են խիստ զառիվեր լանջեր ունեցող լեռան կատարին։ Դեպի բերդի տեղադրավայրը կարելի է բարձրանալ միայն լեռան հարավային կողմից, որտեղ նրա լանջը համեմատաբար մեղմաթեք է։

Բերդի ստորոտին Մելիք Թանգու կառուցած կամրջից (Որոտանի վրա) քիչ վերև, Որոտան գետի ձախ ափին են գտնվում պատմական Որոտն գյուղի ավերակները, իսկ դրանց կից էլ այժմյան Սիսիանի շրջանի Ուռուտ գյուղն է։ Որոտն վանքը գյուղից գտնվում է վերև։ Այն պարբսպապատ է, հատակն ամբողջապես ծածկված է տապանաքարերով։ Վանքի հարավային կողմում բարձրացող սյուն-գավազանն այժմ ընկած է։ Վանքի տաճարները կիսակործան են։ Դրանք առանձնապես շատ են տուժել 1931 և 1967 թվականներին Զանգեզուրում տեղի ունեցած երկրաշարժերից։ Վանքի բակում կա գերեզմանոց։ Այժմ այստեղ կատարվում են վերականգնման աշխատանքներ։

Տաթև.— Այժմ Տաթևը և դրանից ներքև ընկած Որոտանի ձորահովտան ամբողջությամբ մտնում է Գորիսի շրջանի մեջ։ Տաթևի վանքի տեղում հնագույն ժամանակներում եղել է հեթանոսական մեհյան, քրիստոնեությունն ընդունվելուց հետո այստեղ կառուցած փոքրիկ եկեղեցին գոյություն է ունեցել մի քանի դար։ Վանքի մեծ տաճարը, որ կոչվում է Պողոս-Պետրոս, կառուցվել է 895—906 թվականներին, իսկ մյուս եկեղեցին՝ ս. Աստվածածինը կառուցվել է XI դ. երկրորդ կեսում։ Տաթևի վանքը մեծ կալվածքներ ուներ։ Այն հսկայական եկամուտներ էր ստանում նաև Սյունիքի հարյուրավոր գյուղերից եկեղեցական հարկեր հավաքելով։

Պողոս-Պետրոս կաթողիկե տաճարին կից կառուցվել են գործատներ (արհեստանոցներ), գրատներ, հոգևորականների համար խուցեր, ուսումնարան, ձիթհանք և այլն։ Վանքի բակում, Պողոս-Պետրոս տաճարի առաջ, կանգնեցվել է Տաթևի հայտնի ճոճվող սյունը, որը միջնադարյան հայ ճարտարապետության եզակի հուշարձաններից է։ Այնպես որ այս վանքը ճարտարապետական բարդ համալիր է, միջնադարյան Հայաստանի ճարտարապետական նշանավոր կոթողներից մեկը։ Առանձնապես սքանչելի են Պողոս-Պետրոս տաճարի գլխավոր մուտքի կամարը, որ զարդարված է բազմաբովանդակ ու նրբաճաշակ քանդակներով։

Տաթևը մշակույթի մեծ կենտրոն էր։ Այն ուներ բարձրագույն դպրոց՝ վարդապետարան, բազմահազար ձեռագրեր ունեցող մատենադարան։

Տաթևի վանքը առանձնապես շատ է տուժել 1931 և 1967 թ. Զանգեզուրում տեղի ունեցած երկրաշարժերից։ Այժմ այն խարխուլ վիճակում է։ Վանքի օժանդակ շենքերից մեկում կազմակերպված է թանգարան։ Վանքի գլխավոր մասը և համալիրը իբրև անցյալի ճարտարապետական կարևոր կոթող պահպանվում է պետական մարմինների կողմից։ Այստեղ կատարվում են **վերականգնման աշխատանքներ**։ Առանձնապես հոգ է տարվում գլխավոր տաճարի մուտքի կամարը այժմյան դրությամբ պահպանելու համար։

Մեծ Անապատ և Թանահատի վանք.— Այժմ միանգամայն բարվոք վիճակում գտնվող Մեծ կամ Հարանց Անապատը կառուցվել է XVII դարում և գտնվում է Տաթևի վանքից ներքև, Որոտանի աջ ափին՝ «Սարում» 300—400 մետր ցած։ Սա մի հսկայական տաճար է, կառուցված սրբատաշ քարից, առջևում ունի գավիթ և շրջափակված է պարսպապատերով։ Անապատն ուներ բարձր տիպի դպրոց։ Նրա շրջանավարտներն ստանում էին վարդապետի կոչում, որոնցից շատերը

տերը կարևոր դեր են խաղացել հայկական մշակույթի զարգացման գործում։ Այս վանքը իր բոլոր շինություններով հանդերձ միջնադարյան կանգուն և բարվոք վիճակում հասել է մեր օրերը։ Մեծ Անապատի գիմաց, Ոռոտան գետի ձախ ափին, գտնվում էր Յաֆուտի եկեղեցին (մատուռը), որը հիշատակել է Ստեփանոս Օրբելյանը և որը խարխուլ վիճակում հասել է մինչև մեր օրերը։ Իսկ վերջինից 200—300 մետր հեռավորության վրա Ոռոտանի հայտնի «Սատանի կամուրջն» է, որի «կամուրջողը» այդտեղ բխող ծծմբային-հանքային տաք աղբյուրներն են իրենց նստվածքներով։

Թանահատի վանքի ավերակները գտնվում են Տաթևից հյուսիս-արևելք, բարձրադիր վայրում, Հնում այստեղ եղել է հեթանոսական մեհյան։ Վանքը, որ հավանաբար կառուցվել է IV դարի վերջերին, նշանավոր է դարձել ավելի ուշ՝ VIII դ. առաջին կեսում։ Այս վանքը նույնպես ունեցել է իր դպրոցը և եղել մատենագրության կենտրոններից մեկը։ Խարխուլ վիճակում պահպանվել են քառանկյունի հատակագծով այդ մոնումենտալ շինության պատերը, որոնք շարված են կարմրավուն մշակված քարերով։ Վանքի տեղը շրջակայքի նկատմամբ բարձրադիր է, գեղատեսիլ։

Սյունիքի վանք և բերդ.— Երկուսն էլ գտնվում են այժմյան Սիսիանի շրջկենտրոնում։ Բերդի ավերակները հազիվ են նշմարվում, իսկ վանքը կառուցվել է հավանաբար VI դ. վերջերին և հարուստ նման է նշանավոր Հռիփսիմեին, առայսօր կանգուն է և գտնվում է բարվոք վիճակում։ Տաճարը կառուցված է տեղական սրբատաշ բազալտով։ Ունի գեղեցիկ կամարներ, դռնակներ և քանդակազարդ է։ Բակում կա ընդարձակ գերեզմանոց, որտեղ թաղումներ են կատարվել դարեր շարունակ։ Տաճարի հարավային պատի վրա քանդակված է արևի ժամացույցը, որը սովորական էր միջնադարյան Հայաստանի եկեղեցիների համար։

Սղուկը գավառի հայտնի վանքերից մեկն էլ Բղենո վանքն էր (կամ Բղենո Նորավանքն), որը գտնվում է Գորիսի շրջանի Բարձրավան (Երիցյաթումբ) գյուղից մոտ 3-կմ հեռավորության վրա՝ խիտ անտառներով պատած լեռնային վայրում։ Կառուցվել է 936 թվականին և լրացվել նոր շինություններով 1062 թվականին։ Հարատևությունն համարյա է, պարապարտ։ Տաճարը բազալտակերտ է և ամբողջովին վերականգնված է մեր օրերում։ Ունի գեղեցիկ կամարներ, խաչակներ, գյուտակներ։ Եղել է գրչության կենտրոն։ Այստեղ գրված ձեռագրերից մեկը «Էջմիածնի ավետարանը» պահպանվում է Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում։ Վանքի մոտ կան բնակավայրի և ամրոցի ավերակներ։ Վերջինս հավանաբար Բղենո բերդի ավերակներն են, որ ոմանք տեղադրում են Բաղք գավառում։

Սիսիան քաղաքի մոտ, ընդամենը 2 կմ հեռավորության վրա գտնվում է մեգալիթյան ժամանակաշրջանի մի մեծ բնակատեղի և գերեզմանոց, որը տեղի բնակիչները կոչում են Ղոշուն-դաշ («զորքերի քար»)։ Հիմնադրվել է II հազարամյակում (մ. թ. ա.) և գրավում է ընդարձակ տարածություն։ Այն վաղագույն ժամանակներում ունեցել է շրջապարիսպ և ներսում ցից-ցից քարերով պատած քարակույտեր։ Այս հնավայրում կան նախնադարյան «բնակարաններ»՝ դոլմեններ, կրոմլեխներ, մենհիրներ։ Այդպիսի կառուցվածքներ են նշմարվում նաև նույն շրջանի Ուղ, Յուլջի և այլ գյուղերի մոտակայքում։

Հարանդ (կամ Զագեձոր)

Իր տարածքով մոտավորապես համապատասխանում է այժմյան Գորիսի շրջանի արևելյան մեծագույն մասին։ Տաթևի հին հարկացուցակում այս գավառի տակ հիշատակված բնակավայրերի զգալի մասը (Շինուհայր, Խոտ, Տեղ և այլն) մինչև օրս էլ գոյություն ունեն և գտնվում են Գորիսի շրջանում։ Հարանդի գլխավոր բերդը Զագեձորի բերդն էր, որի անունը ավանդաբար կապում են Զագիկ նահապետի անվան հետ։ Նրա ճշգրտագրական դիրքը չի ճշտված։ Հավանաբար գտնվում էր այժմյան Վերին գյուղի մոտակայքում, Գորիս քաղաքից ոչ հեռու։

Հարանդ— Զագեձոր—Զանգեզուրի գյուղերից շատերը (Տեղ, Երնձորեսկ, Խոտ և այլն) նշանավոր են դարձել մեր ժողովրդի նոր պատմության հետ կապված գեպքերի շնորհիվ։ Առաջնապես հայտնի է հին Ենձորեսկը իր քարացրացին տներով և այլ կառույցներով։ Այստեղ է Ենձորեսկը իր քարացրացին տներով և այլ կառույցներով։ Այստեղ է գտնվում Դավիթ-Բեկի հերոս զինակցի՝ Մխիթար սպարապետի գերեզմանը։ Դավիթ-Բեկի հերոս զինակցի՝ Մխիթար սպարապետի գերեզմանը։ Այժմ Ենձորեսկը լիովին լքված է։ Գյուղը հիմնովին կառուցվել է հին գյուղի վերևում փռված սարալանջի վրա և քաղաքատիպ բնակավայրերից ոչնչով չի տարբերվում։

Երնջակ

Տարածված էր Արաքսի ձախակողմյան վտակ Երնջակ (այժմ Ալինջաչայ) գետի ավազանում։ Սյունյաց տան պատմիչ Ստ. Օրբելյանը (XIII դ.) գավառի անունը կապում է Սյունյաց տիկիններից մեկի՝ Երն-



Նկ. 25

Գնդեվանք. վերականգնումից հետո

չիկի անվան հետ։ Գավառի գլխավոր բերդը Նորատուսն էր, որի ավերակները գտնվում են նույնանուն գեղի մոտ։ Հարավ-արևելյան կողմից վեր խոյացած մի ռազմաժայռ ժայռի գագաթին։ Հանձնված

վել է Սյունիքի «անմատույց» բերդերից։ Երնջակը հավանաբար Սյունիքի իշխանների բերդ-զանձարաններից մեկն էր։ Այս բերդն առանձնապես նշանավոր դարձավ 913 թ. հերոսական դիմադրությամբ, երբ Ատրպատականի Յուսուֆ էմիրը մեծ բանակով պաշարել էր այն։

Վայոց ձոր

Վայոց ձորը Սյունիքի ամենանշանավոր և ընդարձակ գավառներից մեկն-էր։ Ընդգրկում էր Արփա գետի վերին և միջին հոսանքների ավազանները, որ համապատասխանում է այժմյան Եղեգնաձորի ու Ազիզբեկովի շրջաններին։ Կոչված է նաև Եղեգնյաց ձոր։ Ունի արդավանդ հողեր, առատորակ աղբյուրներ և հանքային ջրեր (այժմյան Ջերմուկը)։ Հիշատակվում են կապարի, արծաթի և պղնձի մի քանի «գովեր» երկրներ, որոնք շահագործման են ենթարկվել հին ժամանակներից։

Սյունյաց իշխանությունը IX դ. վերջերին դառնում է Վայոց ձորի Եղեգիս գյուղաքաղաքը։ XI դ. երկրորդ կեսից Վայոց ձորի իշխանները ստանձնաբար կորցնում են իրենց քաղաքական ազդեցությունը, իսկ XIII դարից մինչև XV դ. վերջերը գավառի տերերն էին Օրբելյան և Զաքարյան իշխանները։

Վայոց ձորում միջին դարերում հիշատակվում են 100-ից ավելի տարբեր կարգի բնակավայրեր։ Այժմ նրա տարածքը իրականում ճարտարապետական տանջակ հուշարձանների մի թանգարան է բաց երկնքի տակ։ Նշենք դրանցից մի քանիսը.

Գնդեվանք.— Գտնվում է Արփա գետի բարձրադիր ձախ ափին, այժմյան Ազիզբեկովի շրջանի Գնդեվազ գյուղի մոտ։ Կառուցվել է X դ. 30—40-ական թվականներին։ Սյունյաց Սմբատ իշխանի կին Սոփին տաճարի վրա թողել է ընդարձակ արձանագրություն, որը վերջանում է հետևյալ պատկերավոր խոսքերով. «Մատանի էր անուն Վայոց ձոր, շինեցի զսա (Գնդեվանքը, Թ. Հ.) եւ եդի ակն ի վերայ»։ Գնդեվանքը Սյունիքի գրչության կենտրոններից էր։ Վերջին անգամ վերանորոգվել ու վերականգնվել է մեր օրերում և այժմ կանգուն է։

Թանատի վանք.— Գտնվում է այժմյան Եղեգնաձորի շրջանի Վերին Հաղբատ գյուղի հանդամասում, կանգուն է, պատերին քանդակված են կենդանիներ, թռչուններ, հեծյալի և առյուծի կռվի տեսարաններ։ Հարավային պատի վրա քանդակված է արևի ժամացույց։ Կան բազմաթիվ արձանագրություններ։ Ենթադրվում է, որ Դլաձորի համալսարանը



Նկ. 22

Թանատի վանք. XIII դ.

գտնվել է այս վանքի մոտակայքում։ Վանքի շրջակայքում փռված են մի մեծ բնակավայրի ավերակները։

Մեզ — Ավան։ Գտնվում էր այժմյան Մալիշկա գյուղի մոտ։ Խոպան կոչնանվել է 735 թ. տեղի ունեցած աղետաբեր երկրաշարժից։ Նրա բնակիչները, որոնց թիվն ըստ պատմիչի հասնում էր 10000

մարդու, ոչնչացել են նույն երկրաշարժից։ Այժմ ավերակների միայն աղքատիկ հետքերն են նշմարվում։

Գլաձոր (կամ Գայլնձոր). — Կոչվել է նաև Աղբերց։ Միջնադարյան բարձրագույն դպրոց էր։ Գլաձորի համալսարանը հայտնի է եղել հատկապես XIII դ. կեսերից մինչև XIV դ. կեսը։ Ժամանակակիցները այն կոչել են «Երկրորդ Աթենք», «Իմաստության մայրաքաղաք» և այլն։ Գլաձորի բարձրագույն դպրոցը լիովին համապատասխանում էր միջնադարյան համալսարաններին և ուներ երեք բաժին՝ երաժշտության, գրչության արվեստի և բնական գիտությունների։ Շրջանավարտները ստացել են վարդապետի կոչում և հոգևոր գործերի հետ միասին զբաղվել դիտությամբ ու մատենագրությամբ։ Այստեղ կար նաև երկրում հռչակված նկարչական դպրոց։ Գլաձորում գրվել են պատմական, բանաստեղծական բազմաթիվ աշխատություններ, կատարվել են թարգմանություններ, մեկնություններ, ընդօրինակություններ։ Այստեղ են լավարտել մշակույթի աշնպիսի գործիչներ, ինչպիսիք են Նրսայի Նլեցին (որը զբաղվել ու ժողովրդական կենդանիներ խաչատուր Կեչառեցին, Մխիթար Գոշը (1314 թ.), Ներսես Սանդցին (1320), իր ուսուցչից ավելի Ցազմանցին (1314 թ.), Ներսես Սանդցին (1320), իր ուսուցչից ավելի նշանավոր Հովհաննես Որոտնեցին և շատ շատերը։

Նղեգիք. — Ավան և բերդ։ Գտնվում էր այժմյան Նղեգնաձորի շրջանի Ալայազ գյուղի մոտակայքում, Նղեգիք գետի աջ կողմում, լեռնալանջի վրա։ Ավերակները բավական մեծ տարածություն են գրավում։ Պահպանված են պաշտպանական պարիսպները, աշտարակները, կիսակործան որոշ կառույցներ, քարամաթիվ խաչքարեր, եկեղեցիներ, որոնց թիվը գերազանցում է ավանում հանդիպող չորսի։ IX դարից Նղեգիքը Սյունյաց իշխանների ոստանն էր։ Հնագույնում, երբ Սյունիքում գոյություն ունեցող



Նկ. 27

Սմբատաձոր

էր։ Եղել է նաև եպիսկոպոսանիստ։ Այստեղ է գործել Սյունյաց իշխանական տան նշանավոր պատմագիր Ստեփանոս Օրբելյանը, որը 1299 թ. այս նույն վանքում ավարտել է «Պատմութիւն նահանգին Սիսական» վերնագիրը կրող իր հայտնի աշխատությունը։ Ստ. Օրբելյանը թաղված է (մահացել է 1304 թ.) վանքի բակում։ Վանքն ունի երկու տաճար, որոնցից մեկը, որ կոչվում է Բուրթելաշեն և երկհարկանի է, ավելի լավ է պահպանվել։ Եկեղեցիների պատերին կան մի շարք վիմագիր արձանագրություններ։ Այժմ մեծ տաճարը վերականգնվում է։

Վայոց ձորում եղել են պատմական և այլ նշանավոր վայրեր՝ Սոլեմա բերդը և Իշևաբը (Վայոց ձորի լեռնանցքում), Առփա (Արենի) գյուղը, Խոտակերաց կամ Քարակոփ վանքը (Խաչիկ գյուղի մոտ), Հերհերի վանքը (Վայքի շրջանի Հերհեր գյուղի հանդամասում), Պռոշ իշխանի բերդը (Վերնաշեն գյուղից 7—8 կմ հեռավորության վրա), Սպիտակավոր տաճարը, որ վերականգնվել է մեր օրերում և գտնվում է Պռոշա բերդի մոտ, Առատեսի վանքը (Եղեգիս գետի ակունքի շրջանում), Հերմոնի վանքը, Ջերմուկ բնակավայրը, հին կամուրջներ և այլն։

Սոլեման (հետագայում՝ Սելիմ) քարավանատուն և բերդ էր։ Առանձնապես հայտնի է եղել IX—XIII դարերում, որպես Դվինից Պարսավ տանող սալանցիկ ճանապարհի կարևոր կայաններից մեկը։ Բուն քարավանատունը բաղկացած է երկու սրահից, որոնք կառուցված են սրբատաշ քարերով և սալահատակված են։ Պատերին կան արձանագրություններ։ Քարավանատան մոտ նշմարվում են նույնանուն բերդի և բնակավայրի ավերակները։ Քարավանատունը լիովին վերականգնվել է մեր օրերում։ Քարավանատնից ոչ հեռու գտնվում է մի հնագարյան սատղադիտարան։

Առփա գյուղը (հետագայում՝ Արփա, իսկ այժմ՝ Արենի) գտնվում է Արփա գետի և նրա ձախակողմյան Եղեգիս վտակի միախառնման վայրում։ Այն մի ժամանակ եղել է Օրբելյանների իշխանանիստը։ Մինչև XX դ. սկզբները այստեղ պահպանվել էին Արփայի մի հին կամուրջի մնացորդները։ Գյուղի մոտ գտնվում է նրաբնդարձակ գերեզմանոցը, որտեղ թաղումներ են կատարվել վաղ միջնադարից։ Գերեզմանոցում խարխուլ վիճակում պահպանվել էր մի գեղեցիկ մատուռ, որը լիովին վերականգնվել է վերջին տասնամյակում։

Քարակոփի վանքը գտնվում է սարավանդի վրա, Խաչիկ գյուղից Արենի տանող խզուճու մոտ, հին բնակավայրի ընդարձակ ավերակների մեջ։ Դմբեթը փլված է, իսկ պատերը գտնվում են խարխուլ վիճակում։ Կան մի քանի արձանագրություններ, որոնցից մեկի համաձայն այն կառուցվել է 910 թվականին, Սյունյաց Շուշանիկ տիկնոջ կողմից։ Եկեղեցին կառուցված է դորշ, վատ մշակված որձաքարից։

Հերհերի վանքը (կամ ս. Սիոն, Ղոշավանք) գտնվում է երկու կողմից խոր ձորերով ակոսված անմատչելի ժայռի վրա և բաղկացած է երկու փոքր, կրաշաղախ պատերով եկեղեցիներից, որոնք կառուցվել են XIII դարում և մի քանի վերանորոգումներից հետո կանգուն, բայց խարխուլ վիճակում հասել են մինչև մեր օրերը։ Եկեղեցիների պատերին կան

արձանագրություններ, իսկ ջուրջը նախքարեր ու հատարակ տապանաքարեր։

Գոռոշ իշխանի բերդը (Գոռշաբերդ կամ Բոլորաբերդ) կառուցվել է XIII դարում։ Ավերակները վատ են պահպանվել։ Բերդի դիրքը անմատույց է։ Այն գտնվում է խիստ զառիվեր լանջերով լեռան կատարին։

Արատեսի վանքի տաճարը չափերով փոքր է, բայց շատ գեղեցիկ։ Նրա պատերի մեծ մասը փլված է, իսկ պատերը գտնվում են խարխուլ վիճակում։ Ժողովրդական ստեղծագործության համաձայն անունը առաջացել է «արի» և «տեսա» բառերի զուգորդությունից։

Ջերմուկ բնակավայրը իր տեղադրությամբ համապատասխանում է այժմյան Ջերմուկ առողջարանային քաղաքին, որի մասին խոսք կլինի առանձին։

Հերմոնի վանքը միջնադարյան Հայաստանի մշակույթի հայտնի կենտրոններից էր և փոխարինել էր Գլաձորի համալսարանին։

Այժմյան Եղեգնաձորի շրջանում է գտնվում միջնադարյան Հայաստանի կամուրջներից մեկը՝ Աղարակաձորի կամուրջը (Եղեգնաձոր քաղաքատիպ ավանի մոտ), որը ձգվում է Արփա գետի վրայով, միաթռիչք է, կառուցված քար ու կրով, կանգուն է և բանուկ։

Գեղարքունիք (կամ Գեղամունիք)

Գեղարքունիքը գրավում էր Սևանա լճի ավազանի հյուսիս-արևմտյան մեծ մասը։ Անանունը կապում են ավանդական Գեղամի անվան հետ։ Գեղարքունիքը իր հարևան Սոդքի հետ միասին մտնում էր Բագրատունիների թագավորությանը։ Սելջուկների տիրապետությունն այստեղ կարճատև եղավ։ XII դ. վերջերին Զաքարյանները Գեղարքունիքն ու Սոդքը մաքրում են սելջուկներից։ Գավառի նշանավոր վայրերն են.

Կոթ.— Ավանի Երբեմն կոչվել է նաև գյուղաքաղաք։ Գտնվում էր այժմյան Մարտունու շրջանի ներքին Գեղաշեն գյուղի տեղում և շրջակայքում։ Դվին—Գարտավ քարավանային ճանապարհի նշանավոր կայաններից մեկն էր և այդ պատճառով էլ IX—X դարերում դարձել էր առևտրի կարևոր կետ։ Նրա զարգացմանը նպաստում էր նաև ձկնորսությունը։ Ենթադրվում է, որ Կոթը կոչվել է նաև Գեղարքունիք և եղել է Գեղամա երկրի Հայկազուն իշխանների աթոռանիստը։ Ավերակների մեջ ուշադրության արժանի է հատկապես պատմական Կոթավանք կամ ս. Աստվածածին փլված եկեղեցին։ Այս եկեղեցին կառուցել է տվել



Նկ. 28

Սևանի վանք, IX դ.

Սյունիքի Գրիգոր Սոփան իշխանը X դ. սկզբներին։ Շարված է մշակված քարերով, իսկ անկյունաքարերը սրբատաշ են։ Հատակագիծը խաչաձև է, ունեցել է ստորգետնյա գաղտնի անցքեր։ Փլված է, մնում են միայն պատերը։ Տաճարի մոտ կան ընդարձակ բնակավայրի և պարսպի ավերակներ, տարբեր ժամանակների խաչքարեր։

Բերդկունք.— Ճանապարհային կայան և վաճառատեղի Դվին—Գարտավ տարանցիկ ճանապարհի վրա։ Գտնվում էր Կոթից հյուսիս-արևմուտք։ Ավերակները պահպանվում են։ Բերդկունքը ունեցել է կրպակներ, խանութներ, իջևանատներ, պահեստներ։ Այստեղ գործել են առևտրական քարավանները սպասարկող արհեստներ (պայտարություն,

ֆամբագործություն և այլն)։ Պահպանված ավերակների մեջ սակայն որոշակի տարբերվում են միայն եկեղեցիները, կան տապանաքար ունեցող շատ խաչքարեր։

Սևան.— Կղզի (այժմ Թերակղզի), վանք և ամրոց։ Ավանդությունն համաձայն այստեղ եղել է հեթանոսական մեհյան, որը կործանել է Գրիգոր Լուսավորիչը։ Սևանա ամրոցը անմատույց է դառնում հատկապես Աշոտ II-ի օրոք (914—928)։ IX դ. վերջին այստեղ կառուցվում են երեք եկեղեցիներ, որոնցից երկուսը կանգուն են, իսկ երրորդը կիսավեր։ Կղզու անունով է, որ Գեղամա լիճը կոչվեց Սևանա լիճ։

Գեղարքունիք գավառում էին գտնվում նաև Հավուց Թառ (այժմյան Աբովյանի շրջանի Գողթ գյուղի դիմաց, Ազատ գետի ձախ կողմում), Այրիվանք (Կամոյի շրջանի Այրիվան գյուղի մոտ), Շողագա և Մաքենիս (Սևանա լճի հարավ-արևելյան կողմում) վանքերը, որոնք բոլորն էլ կանգուն են։ Իրրև մշակութային կենտրոն, առավելապես աչքի էր ընկնում Ձավուց Թառը (կամ Ամենափրկիչ)։ Այստեղ կար դպրոց, ընդօրինակվել են մի շարք ձեռագրեր, XIII դ. կազմակերպված էր երգեցիկ խումբ։ Այժմ պահպանված են տաճարի պատերը։ Շրջակայքում կան տարբեր կարգի շենքերի ավերակներ, գերեզմանոց։ Այրիվանքի տաճարը տիպիկ կենտրոնագմբեթ է, չափերով ոչ մեծ և գտնվում է լճի ափին։ Մինչև Սևանա լճի մակարդակի իջեցումը նրա հյուսիսային պատի ներքևի մասերը ուղղակի ողողվում էր լճի ջրերով։ Պատերը կանգուն են, նրա մոտակայքում փռված են բնակավայրի ավերակներ։ Այս վանքը կոչվել է նաև Հայրավանք։ Շողագա վանքի ավերակները գտնվում են Մարտունու շրջանի Զորագյուղ գյուղում։ Բլրի վրա։ Կառուցել է Բագրատունի Աբաս թագավորի քույրը՝ Սյունյաց Մարիամ տիկինը (X դարում)։ Ավերակները վատ են պահպանված։ Գլխավոր տաճարը կոչվել է ս. Պետրոս, որի շրջակայքում եղել են մատուռներ և այլ կարգի շենքեր։ Կանգուն է եղել մինչև 1670 թվականը։ Դրշության կենտրոններից էր։

Մաքենիսը (կամ Մաքենացվոց վանք) Սյունիքի հայտնի վանքերից է, միջնադարյան Հայաստանի դրշության նշանավոր կենտրոններից մեկը։ Ճարտարապետական համալիր է՝ բաղկացած ս. Աստվածածին գլխավոր տաճարից, գավիթից, պաշտպանական պարսպից, դանդաղ խուցերից ու շինություններից և պարիսպներից դուրս դանվող եղկու ավերակ եկեղեցիներից։ Պատերին կան արձանագրություններ։ Գտնվում է Վարդենիսի շրջանի Ձիշակի գյուղում։

5. ԲԱՐՁՐ ՀԱՅՔ ԿԱՄ ԿԱՐՆՈ ԱՇԽԱՐՀ

Տարածվում էր Արևմտյան Եփրատի վերին ու միջին հոսանքների ավազաններում և Ճորոխ գետի վերնագավառում։ Համապատասխանում է այժմյան Էրզրումի վիլայեթի հիմնական մասին։ Ընդհանուր առմամբ հարթավայրային է և ունի մի շարք ընդարձակ ու արգավանդ դաշտեր։ Կան քարածխի, նավթի, երկաթի, պղնձի և քարաղի մի շարք հանքավայրեր, հանքային հորդաբուխ տաք աղբյուրներ (հատկապես՝ Երզնկա, Էրզրումի շրջաններում)։ Հայտնի է եղել վայրի թռչուններով։ Հնագույն ժամանակներում Բարձր Հայքի տարածքն ամբողջությամբ մտնում էր Հայասա-Ազզի ցեղային միության մեջ։ Հետագայում, երբ վերջնականապես կազմավորվեց հայ ժողովուրդը և ստեղծեց իր երեք պետական միավորումները (Մեծ Հայք, Փոքր Հայք և Սոփք), Բարձր Հայքի տարածքի մեծ մասը մտնում էր Փոքր Հայքի մեջ։ Այդ տարածքը վերջնականապես Մեծ Հայքի թագավորությանն է միացվում Արտաշես I-ի (189—160 թթ. մ. թ. ա.) և Տիգրան II-ի օրոք (95—56 թթ. մ. թ. ա.)։ Հաթաստանի բոլոր բաժանումների ժամանակ Բարձր Հայքի տարածքը մտնում էր Արևմտյան Հայաստանի մեջ։ Այստեղի հայկական իշխանությունները վերացվեցին տակավին Հուստինիանոս կայսեր ժամանակներում (527—565)։ Սակայն բնակչության մեծագույն մասը ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմը շարունակում էին կազմել հայերը։

Բարձր Հայքում կարևոր նշանակություն ունեին Կարին (Էրզրում)—Տրապիզոն, Կարին—Դվին և Կարին—Բագարիճ—Սատաղ—Սեբաստիա Տրապիզոն, Կարին—Դվին և Կարին—Բագարիճ—Սատաղ—Սեբաստիա ճանապարհները, որոնք ճյուղավորվելով ձգվում էին դեպի տարբեր ծոցեր։ Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ում Բարձր Հայքի տակ հիշատակված է 9 գավառ։

Դարանաղի

Իր տարածքով համապատասխանում էր այժմյան Կամախի շրջանին, որ գտնվում է Երզնկայից հարավ-արևմուտք։ Հրաբխային սարաշարք է։ Ունի սառնորակ աղբյուրներ, հարուստ է հանքային ջրերով։ Պատմաաշխարհագրական վայրերից նշանավոր են Թորդան գյուղը և Անի ամրոցը։

Թորդան.— Ոմանք համարել են ավան, ոմանք էլ գյուղ։ Հեթանո-

սական շրջանում այստեղ կար մեհյան, քրիստոնեությունը ընդունելուց հետո վերածվեց եկեղեցու, որը տեր դարձավ նախկին մեհենապատկան կալվածքներին։ IV—V դդ. Թորդանը պատկանում էր կաթողիկոսական աթոռին։ Այստեղ են թաղվել Գրիգոր Լուսավորչի տոհմին պատկանող մի քանի կաթողիկոսներ։

Անի.— Ամրոց և ավան։ Գտնվում էր Եփրատի ձախ ափին։ Հեթանոսական շրջանում այստեղ էր գտնվում հայ հեթանոսական գլխավոր աստծու՝ Արամազդի մեհյանը։ Արտաշեսյան և Արշակունի հարստությունների օրոք այստեղ էր պահվում արքունական գանձերի մի մասը։ Քրիստոնեությունը ընդունելուց հետո Անիի մեհյանը կործանվեց կամ ուղղակի վերածվեց քրիստոնեական եկեղեցու։ Անին IV դ. 60-ական թվականներին կողոպտվեց Հայաստան արշաված պարսկական զորքերի կողմից։ Շապուհ II-ի զորքերն ավերեցին նաև Անիում գտնվող Արշակունի թագավորների պանթեոնը։ XII—XIII դդ. Անին արդեն հիշատակվում է Կամախ անունով, որն այժմ էլ գոյություն ունի և գտնվում է հին Անիից ոչ հեռու։ Կամախ անունը երբեմն նույնացնում են Հայաստան երկրի Կումախա կենտրոնի անվան հետ։

Եկեղյաց գավառ

Իր տարածքով համապատասխանում է նոր ժամանակների Երզնկայի գավառին (սանջակին)։ Անտիկ հեղինակները հիշատակում են Եկեղեանն կամ Ակիլիսենե անունով, որն ավելի ընդարձակ տարածք ուներ։ Գավառի պատմական վայրերից ուշադրության արժանի են Երիզան և Թիլը։

Երիզա (կամ Երիզ).— Համապատասխանում է այժմյան Երզնկա քաղաքին։ Գոյություն ունի հին ժամանակներից. քաղաքի է վերածվել XI—XII դարերից։ Երիզան հեթանոսության շրջանում Հայաստանի կրոնական խոշոր կենտրոններից էր։ Այստեղ էր գտնվում Անահիտ աստվածուհու գլխավոր տաճարը, որտեղ դրված էր նրա ոսկեձույլ արձանը։ Հռոմեացի զորավար Անտոնիոսը 34 թ. (մ. թ. ա.) Հայաստան կատարած արշավանքի ժամանակ կողոպտում է Անահիտի տաճարը և ավարի ենթարկում նաև նրա ոսկեձույլ արձանը։ Քրիստոնեությունն ընդունելուց հետո Անահիտի տաճարը ավերվեց, նրա տեղում կառուցվեց քրիստոնեական եկեղեցի։ IX—X դդ-ից Երիզան հիշատակվում է Երզնկա անունով, որն արդեն քաղաք էր և չնայած XIII դ. առաջին կեսին երկու անգամ խիստ ավերվել էր (1224—1242 թթ.), սակայն Լենկ-

թեմուրի արշավանքների նախորդ շրջանում այն դարձել էր բավական հարուստ, բարեկարգ ու մարդաշատ քաղաք։ Այստեղ զարգացել էին հարուստ, բարեկարգ ու մարդաշատ քաղաք։ Այստեղ զարգացել էին առևտուրն ու արհեստները։ Երզնկան առանձնապես հայտնի էր իր բամբակյա ընտիր գործվածքներով։ Մարկո Պոլոն, որ Չինաստան ճանապարհորդության ընթացքում անցել էր Երզնկայով, մեծ գովեստով է խոսում նրա մասին, նշելով, որ հայկական բազմամարդ քաղաք է, և այստեղ արտադրում են աշխարհի բամբակյա ամենալավ կտորները։

Լենկթեմուրը իր 1394—1395 թթ. արշավանքների ընթացքում գրաված ու ավերել է նաև Երզնկան։ Այստեղ տեղի են ունեցել (և այժմ էլ տեղի են ունենում) աղետաբեր երկրաշարժեր, որոնք մեծ վնասներ են հասցրել նրա բնակչությանն ու կառուցվածքներին։ Այժմ էլ գոյություն ունի։

Թիլ.— Գյուղ կամ ավան։ Հեթանոսության շրջանում այստեղ էր գտնվում մայրության աստվածուհի Նանեի տաճարը, որը կործանվեց Երիզայի Անահիտի տաճարի հետ միասին և նրա տեղում կառուցվեց եկեղեցի։ Մովսես Խորենացին վկայում է, որ այստեղ են թաղված Ներսես I կաթողիկոսը և Պապ թագավորը (368—374)։

Մանանդի գավառ

Տարածվում էր Եկեղյաց գավառից հարավ-արևելք, Արևմտյան Եփրատի ձախ կողմում, գրավելով վերջինիս ձախակողմյան Դերջան (այժմ Թուզլու) վտակի ավազանի մի մասը։ Ընդհանուր առմամբ հարթավայրային է։ Ունի արդավանդ հողեր և մի քանի աղահանքեր։ Գավառում հիշատակված Շիրի բերդաքաղաքը, Կաշե և Աղյուս գյուղերն ու Բազմաղբյուր ավանը, որտեղ կար մեծ ուխտատեղի, XI դ. սկզբում Թոնդրակյան շարժման կենտրոններ էին։

Դերջան

Գտնվում էր Եկեղյաց (արևմուտքից) և Կարին (արևելքից) գավառների միջև՝ գրավելով այժմյան Աշկալայի և Դերջանի (կամ Մամախատուն) դաշտերը։ Ընդհանուր առմամբ դաշտային է և ունի արդավանդ հողեր։ Պատմական վայրերից են՝ Բազարին (Բազարինջ) ավանը և

Խլաձորի (կամ ս. Գրիգոր) վանքը։ Դրանցից առաջինը ճանապարհային կարևոր կայան էր Կարին—Տրապիզոն ուղու վրա և դարձել էր առևտրական նշանակալի կետ։ Հնում այստեղ էր գտնվում Միհր աստծուն նվիրված մեհյանը։ Խլաձորի վանքը կառուցվել է X դարում։ XI դ. կեսերին այն կողոպտվում և ավերման է ենթարկվում սելջուկների կողմից, սակայն հետագայում նորից է վերականգնվում և ապրում բարգավաճման շրջան։

Սպեր

Տարածվում էր Ճորոխ գետի վերնագավառում։ Մինչև IX դար պատկանում էր Բագրատունիներին։ Գավառի միակ քաղաքը Սպերն (Թուրքերը կոչում են Իսպիր), որն այժմ էլ գոյություն ունի։ Սպերը հնագույն ժամանակներից հայտնի է ոսկու հարուստ հանքավայրերով։ Այստեղ ոսկին արդյունահանվել է տակավին V—IV դդ. (մ. թ. ա.)։ Ալեքսանդր Մակեդոնացին (336—323 թթ. մ. թ. ա.) լսելով այդ հարուստագույն ոսկեհանքերի մասին, հատուկ ջոկատ է ուղարկում արդյունահանված ոսկին ավարի ենթարկելու համար։ Սակայն մակեդոնական ջոկատը պարտվում է տեղացիների հետ ունեցած ընդհարման ժամանակ։ Ջոկատի զինվորների մեծ մասը խեղդամահ է արվում Ճորոխ գետում։

Գավառի մյուս նշանավոր վայրը Սմբատավան (կամ Նեն Սմբատավան) ավանն էր, որն ուներ նաև բերդ։

Կարին

Բարձր Հայքի ամենանշանավոր գավառն էր։ Անունը հնագույն ժամանակներում ունի և կապված է Քսենոփոնի հիշատակած կարինիտների ցեղախմբի անվան հետ։ Տարածվում էր Ծիրառ գետի վերին հոսանքում և իր տարածքով միանգամայն համապատասխանում է այժմյան Էրզրումի շրջանին։ Հարթավայրային է, տեղ-տեղ ճահճապատ։ Հարուստ նավթով, քարածխով, երկաթով և ջերմուկներով։

Գավառի նշանավոր պատմաճարտարապետական վայրերից են.

Կարին.— Քաղաք։ Կոչվել է նաև Թեոդոսուպոլիս, Թեոդոսիոպոլիս։ Արզրում, իսկ այժմ Էրզրում։ Հայկական հին քաղաքներից է։ Լինելով պարսկահռոմեական սահմանագծին՝ IV դ. վերջերին յուվին վերակառուցվում է։ Նրա շուրջը պաշտպանական նպատակներով փորում են խոր ու լայն փոս, կառուցում են կրկնակի պարիսպ՝ բարձր աշտարակներով, ավելի է ամրացվում միջնաբերդը, որը կրում էր Օգոստոս կայսրի անունը։ Այստեղ պաշտպանական նոր կառուցումներ են կատարվում նաև Հուստինիանոս կայսեր ժամանակ (VI դ.)։ Կարինով էր անցնում Արևմուտքն Արևելքի հետ կապող քարավանային հին ճանապարհներից մեկը։ Քաղաքը մեծ զարգացում է ապրում հատկապես XI—XIII դդ.։ Դարեր շարունակ Կարինը Արևմտյան Հայաստանի մեծագույն քաղաքն էր, երբ վարչական կարևոր կենտրոնը։ Իսկ այժմ Էրզրումի ընդարձակ վիլայեթի կենտրոնն է, Թուրքիայի խոշոր քաղաքներից մեկը։

Արծն.— Քաղաք։ Պատկանում է միջնադարյան Հայաստանի խոշոր բազմաբնակ քաղաքների թվին։ Արծնը զարգացում է ապրել IX դ. վերջերից և իր զարգացման գագաթնակետին է հասել XI դ. առաջին կեսին։ Գտնվում էր Կարինից 7—8 կմ հյուսիս-արևմուտք, Ծիրառի աջ ափին, հարթավայրում։ Պարսպապատ չէր, այլ ազատ քաղաք էր՝ առևտրի ու արհեստագործության խոշոր կենտրոն, ավելի քան 100 հազար բնակիչներով։ Սակայն կարճատև պատմություն է ունեցել։ Սելջուկներն իրենց երկրորդ արշավանքի ընթացքում, 1049 թ. մի շարք այլ բնակավայրերի հետ միասին, գրավում և հիմնահատակ ավերում են այն։ Դրանից հետո Արծնը այլևս չի վերականգնվում և իսպառ վերանում է պատմական ասպարեզից։

Կարինում հիշատակված պատմական վայրերից են նաև Արծաբ ու Բլուրս գյուղերը և X դարում կառուցված Հնձուց վանքը։ Վերջինս գտնվում էր Կարին (Էրզրում) քաղաքից հյուսիս-արևելք, Հնձիք գյուղի մոտ։ Մովսես Խորենացու վկայությամբ այն կառուցվել է IV դարում՝ Ներսես կաթողիկոսի կողմից։ Հակոբ Կարնեցու ասելով այդ վանքը, որ իր ժամանակներում կոչվում էր Կարմիր վանք, ունեցել է մի շարք կառուցվածքներ և կանգուն է եղել։

6. ՉՈՐՐՈՐԴ ՀԱՅՔ

Հնում կոչվում էր Սոփք, հետագայում ֆեոդալական տների միջև մասնատվելու հետևանքով, հայտնի դարձավ Նախարարական կամ Սատրապական Հայաստան անունով։ Չորրորդ Հայք անունն այս երկրամասի համար գործածության մեջ մտավ 536 թ. Հուստինիանոս կայսրի

րի կատարած վարչական վերակազմությունից հետո, երբ այն վերածվեց բյուզանդական պրովինցիայի։ Տարածվում էր Արևմտյան Տիգրիսի վերին և Աբածանիի ստորին հոսանքների ավազաններում։ Այստեղ կան և՛ բարձր լեռնաշղթաներ, և՛ սարահարթեր, դաշտեր ու գետահովիտներ։ Առանձնապես արգավանդ հողեր ունեն Խարբերդի և Բալահովիտի դաշտերը։ Չորրորդ Հայքը հայտնի էր նավթի, պղնձի, կապարի և արծաթի հանքավայրերով, որոնք գտնվում են Արևմտյան Տիգրիսի վտակներից մեկի՝ Արզանայի հովտում, Արղանա (Արզանամադեն) քաղաքի շրջակայքում և շահագործման են ենթարկվել հնագույն ժամանակներից։

Հնագույն ժամանակներում Չորրորդ Հայքի տարածքը մտնում էր Նաիրյան երկրների կազմի մեջ և հայտնի էր Շուպանի (կամ Շուպրիա) անունով, որը ուրարտական պետության անկման շրջանում միացել էր արմենների ցեղային միությանը։ Աքեմենյանների տիրապետության շրջանում (VI—IV դդ. մ. թ. ա.) կազմում էր Պարսից աշխարհակալության XIII satrapության հիմնական մասը, իսկ սելևկյանների օրոք (IV—II դդ. մ. թ. ա.) հայտնի էր Սոփքի satrapություն անունով, որը Մագնեզիայի ճակատամարտից հետո (190 թ. մ. թ. ա.) դարձավ ինքնուրույն հայկական պետություն, իսկ Տիգրան II-ի օրոք (1 դ. մ. թ. ա.) ընդմիշտ միացվեց Մեծ Հայքի հայկական պետությանը։

IV դ. (մ. թ.) Սոփքը մասնատված էր 6 նախարարությունների (Անձիտ, Բալահովիտ, Հաշտյանք, Անգեղտուն և այլն)։ 363—368 թվականներին գրավվեց Հռոմի կողմից, բայց մինչև Հուստինիանոս կայսեր վարչական ռեֆորմը (536 թ.) պահպանեց իր ներքին ինքնուրույնությունը։ Դրանից հետո այն դարձավ Բյուզանդական կայսրության սոսկ պրովինցիա՝ Չորրորդ Հայք անունով։

Սոփքը հին Հայաստանի ամենավաղ զարգացած մասերից էր։ Այստեղով էր անցնում Դարեհ I-ի ժամանակ (522—484 թթ. մ. թ. ա.) կառուցված Պարսից «Արքայական» կոչվող ճանապարհի Ամիդ (Դիարբեքիր)— Խարբերդ—Միլիտինե (Մալաթիա) հատվածը։ Կային նաև տեղական մի քանի ճանապարհներ, որոնք քայլորն էր արաբա-բյուզանդական երկարատև պատերազմների հետևանքով VII—IX դդ. կորցրել էին իրենց առևտրա-տնտեսական նշանակությունը։

Անանիա Շիրակացին Չորրորդ Հայքի կազմում հիշատակում է 10 գավառ.

Անձիտ (կամ Անձիր, Հանձիր)

Տարածվում էր Արածանիի ստորին հոսանքում և համապատասխանում է Խարբերդի շրջանին։ Գավառում հիշատակվում են ուշադրության արժանի մի քանի վայրեր։

Մազաբա.— Քաղաք. հավանաբար գտնվում էր Պարսից «Արքայական ճանապարհի վրա, Սոփք լճից արևելք։ Մազաբան այդ ճանապարհի կարևոր կայաններից էր և ուներ ամուր բերդ։

Խարբերդ (կամ **Քարբերդ**).— Քաղաք։ Այժմ Թուրքերը կոչում են Էլյազիզ (Էլյազըզ)։ Գտնվում է Արածանիի ստորին հոսանքի ձախ կողմում, սարափանդի վրա։ X—XIII դարերում բավական աշխույժ առևտրի կենտրոն էր, տարանցիկ ճանապարհի կարևոր կայան։ Ուներ ամուր բերդ։ Այժմ համանուն վիլայեթի կենտրոնն է։

Ռանդիա (կամ **Հռանդեա**).— Վայր։ Գտնվում է Արածանիի ձախ ափին, Խարբերդից հյուսիս-արևելք։ Այստեղ 62 թ. տեղի է ունեցել մեծ ժողովրդի պատմության մեջ հայտնի դարձած ճակատամարտ՝ մի կողմից հայ պարթևական միացյալ զորքերի, իսկ մյուս կողմից՝ հռոմեական մեծաթիվ բանակի միջև։ Հռոմեական բանակը խայտառակ պարտություն է կրում, և նրա զորավար Պետրոսը ստիպված է լինում հաշտություն խնդրել։ Նույն վայրում 63 թ. երկու կողմերի միջև կնքվում է դաշնագիր, որով փաստորեն Հայաստանում սկսվում է Արշակունիների թագավորության շրջանը։

Չորրորդ Հայքում էր գտնվում նաև Արշամաշատ նշանավոր քաղաքը, որը հայտնի չէ, թե որ գավառի մեջ էր մտնում։ Հավանաբար գտնվում էր հենց Անձիտ գավառում, տարանցիկ ճանապարհի վրա։ Հելլենիստական տիպի քաղաք էր, առևտրի և արհեստագործության խոշոր կենտրոն։ Այն իր ծաղկման շրջանն է ապրել II դ. (մ. թ. ա.)։

Մեծ Սոփք

Տարածվում էր Արղանա գետի ավազանում, հարավում իր մեջ ընդգրկելով նաև Ամիդի (Դիարբեքիրի) շրջանը։ Սակայն VI դ. վերջերին Մորիկ կայսրը Ամիդի շրջանը Չորրորդ Հայքից բաժանում և միացնում է Հյուսիսային Միջագետքի պրովինցիային։ Հավանաբար հենց այդ ժամանակ Մեծ Սոփքի մյուս մասն էլ միացվում է Աղձնիքի Նփրկերտ գավառին։ Մեծ Սոփքում հիշատակվում են մի քանի կարևոր վայրեր.

Բնաբեզ.— IV դարի ամուր բերդերից մեկն էր։ Պատկանում էր Արշակունյաց արքունիքին և արքունական բերդ-գանձարաններից էր։ Հավանաբար գտնվում էր Արղանա գետի ակունքների շրջանում։

Արկաթիոկերտ.— Քաղաք։ Կոչվել է նաև Կարկաթիոկերտ։ Հայաստանի հնագույն քաղաքներից էր, հելլենիստական տիպի մի քաղաք, որը մ. թ. ա. III դարի վերջերին և II դարի սկզբներին արդեն դարձել էր առևտրի ու արհեստագործության հայտնի կենտրոն։

Արղանա (կամ Արղնի).— Քաղաք և գունավոր մետաղների հանքավայր։ Այժմ էլ գոյություն ունի, կոչվում է Արղանամաղեն և գտնվում է Արղանա գետի ափին՝ Դիարբեքիրից հյուսիս։ Արղանայի հանքավայրերը, որոնց պաշարները տակավին չեն սպառվել, շահագործման են ենթարկվում հնագույն ժամանակներից։

Ամիդ.— Քաղաք։ Այժմյան Դիարբեքիրն է, որ գտնվում է Արևմտյան Տիգրիսի աջ ափին։ Գոյություն ունի հին ժամանակներից։ Այժմ Դիարբեքիրի վիլայեթի կենտրոնն է։ Շատ հեղինակներ Ամիդ-Դիարբեքիրը նույնացնում են Տիգրանակերտ—Մարտիրուպոլսի հետ, մինչդեռ վերջինիս ավերակները գտնվում են Դիարբեքիրից հյուսիս-արևելք՝ Բաթման (հնում՝ Քաղրիդ) գետի աջակողմյան վտակ Ֆարկինի աջ ափին։

Անգեղտուն

Տարածվում էին Մեծ Սոփքից արևելք, Զիբենե գետի ձախնոտ ավազանում, Հայկական Տավրոսի հարավհայաց լանջերին։ Ավանդության համաձայն այս գավառից էր Տորք Անգեղը։ Անգեղատունը, նույնանուն նախարարության սահմանական գավառն էր՝ Անգեղ կամ Անգղ գլխավոր բերդով, որը նախարարության աթոռանիստն էր։ Ենթադրվում է, որ Անգղ բերդը հնագույն ժամանակների արմենական ցեղային միության կենտրոնն էր։

Հաշտյանք

Տարածվում էր Արածանիի աջ կողմում և համապատասխանում է այժմյան Ճապաղջրի շրջանին։ Գավառի գլխավոր բերդը Կրաղինն էր (կամ Կիբարիզոն), որը հիմնովին վերակառուցվեց, ամրացվեց և բյուզանդական մեծ կայազորի կայան դարձավ VI դարում՝ Հուստինիանոս կայսրի ժամանակ։ Հետագայում բերդի շուրջն առաջացավ նույնանուն քաղաք, որի խմելու ջուրը բերվելու էր բավական հեռվից։

Հեղեղումներից պաշտպանվելու համար այս գավառի բնակավայրերի զգալի մասը հին ժամանակներից ի վեր պարսպապատել են։

Խորձյան

Անտառապատ էր, գրավում էր այժմյան Դերսիմի մի մասը։ Հայտնի էր իր Արտալես (կամ Արտալեսոն) բերդով, որը գտնվում էր Հայաստանի 387 թ. բաժանման սահմանի վրա, հռոմեական մասում և պարսպանական նոր կառույցներով ավելի էր ամրացվել Հուստինիանոս կայսրի ժամանակ՝ VI դարում։

Պաղնատուն

Փռված էր Արածանիի աջ կողմում։ Գավառի նշանավոր բերդը Պաղինն էր, որը գտնվում էր այժմյան Պաղին ավերակ գյուղի տեղում։ Պաղին գավառից էր Հովսեփը, որը Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի կողմից արտաքսման դրվելուց հետո «առաջին թարգմանիչներ»-ից էր։

Բալահովիտ

Իր տարածքով համապատասխանում է այժմյան Բալուի շրջանին՝ Արածանիի հովտում, Ճապաղջրի և Խարբերդի միջև։ Գավառային է։ Գավառի նշանավոր վայրը Բալու քերդն էր, որն այժմ էլ գոյություն ունի իբրև փոքր քաղաք։

7. ԱՂՁՆԻՔ

Ուրարտական ժամանակներում գոյություն էր Աղձի, որից էլ առաջացել է Աղձնիք անունը։ Շրջապատված էր Միջագետքով, Մոկքով, Տուրուբերանով և Ցորոորդ Հայքով՝ տարածվելով Արածանի Տիգրիսի միջին

և ստորին հոսանքների ավազանում։ Հյուսիսային մասը լեռնային է՝ զաժան կլիմայով, իսկ հարավայինը՝ հարթավայրային է, տաք կլիմայով։ Հարուստ է գետերով և աղբյուրներով։ Հիշատակվում է նավթ, երկաթ և կապար։ Աղձնիքը հայկական հնագույն երկրամասերից էր։ Նրա դերն ու նշանակությունը հատկապես մեծացավ Տիգրան II-ի օրոք, երբ այստեղ կառուցվեց Տիգրանակերտ մայրաքաղաքը, որը միաժամանակ Աղձնիքի բդեշխության կենտրոնն էր։ Հայաստանի առաջին բաժանման ժամանակ (387 թ.) Աղձնիքը մտավ Արևելյան Հայաստանի մեջ, իսկ երկրորդ բաժանմամբ (591 թ.) այն անցավ Բյուզանդական կայսրությանը։ VII դարում արաբները գրավեցին Աղձնիքը, որը VIII դ. վերջերից ,երբ խալիֆայությունը մասնատվեց առանձին իշխանությունների՝ Աղձնիքն իր շրջակայքի գավառների հետ միասին կազմեց կիսանկախ էմիրություն, իսկ վերջինս սելջուկյան տիրապետության շրջանում մտնում էր էյուբյանների պետության մեջ։ Աղձնիքում հայերից բացի տարբեր ժամանակներում ապրել են նաև այլ ժողովուրդներ, սակայն մեծամասնությունը կազմում էին հայերը։ VII դ. «Աշխարհացույց»-ում Աղձնիքի տակ հիշատակված է 10 գավառ։

Նփրկերտ

Տարածվում է Քաղրիդ (այժմ Բաթմանու) գետի միջին և ստորին հոսանքների ավազաններում։ Հարթավայրային գավառ է, չոր ու տաք կլիմայով։ Նրա պատմական վայրերից ուշադրություն արժանի են հետևյալները.

Տիգրանակերտ.— Հայաստանի այս բարեկարգ մայրաքաղաքը կառուցվել է Տիգրան II-ի օրոք մ. թ. ա. I դարի 70-ական թվականներին և նրա անունով էլ կոչվել է Տիգրանակերտ։ Հետագայում քաղաքը անվանվել է նաև Մարտիրոպոլիս, Նփրկերտ, Մուսֆարկին և այլն։ Տիգրանակերտը նրա հիմնադիր Տիգրան II-ի օրոք գտնվում էր հայկական պետության կենտրոնական մասում, բարեկարգ ճանապարհներով միացած էր Հայաստանի մյուս հայտնի մայրաքաղաք Արտաշատի և Միջագետքի կենտրոնների հետ։ Նրա դիրքը նպաստավոր էր նաև ռազմավարական առումով, որովհետև հյուսիսից պաշտպանված էր Ալիջայի լեռներով և Միջագետքի նկատմամբ իշխող դիրք ուներ։ Հելլենիստական տիպի քաղաք էր, մշակույթի, արհեստագործության և առևտրի խոշոր կենտրոն։ Նրա բնակչության թիվը Տիգրան II-ի օրոք հավանաբար 100

հազար մարդուց անցնում էր։ Այստեղ հայերից բացի բնակվում էին նաև հույներ, հրեաներ և ասորիներ, որոնք իբրև ռազմագերիներ բերված էին Տիգրան II-ի (և մասամբ նրա որդի Արտավազդ II-ի) օրոք։ Շրջափակված էր բարձր ու լայն պարիսպով։ Քաղաքի ներսում գտնվում էր նրա մեծությունը, իսկ դարպասներից դուրս Տիգրանը կառուցել էր ավել իր փառահեղ պալատը, որը շրջապատված էր պարտեզներով, զբոսարաններով, որսատեղիներով և ձկնավազաններով։ Տիգրանակերտն ունեցել է իր մշտական թատրոնը՝ շքեղ շենքով, որի հետքերը պահպանվել են մինչև մեր օրերը։ Տիգրան II-ից հետո Տիգրանակերտը այլևս բուռն զարգացման շրջան չի ունենում։ Կորցնելով իր տնտեսական նշանակությունը այն վերածվում է տեղական բերդաքաղաքի։ Արաբական տիրապետության շրջանում մի փոքր աշխուժանում է, բայց այդ զարգացումն անցողիկ էր և երբեք չհասավ իր վաղեմի փառքին։ XI դ. սկսած աստիճանաբար անկում ապրելով այն վերածվեց անշուք մի գյուղաքաղաքի՝ Ֆարքին անունով։ Տիգրանակերտի ավերակները գտնվում են հենց այս գյուղաքաղաքի մոտ՝ Բաթման գետի աջակողմյան վտակի՝ Ֆարկինի ստորին հոսանքում՝ Ալիջայի լեռների լանջերին։ Պահպանված են հնաբույն այդ քաղաքի ավերակները, նրա խարխլված պարիսպներն ու աշտարակները և առանձին խոշոր շինությունների հետքերը։

Թուխ.— Գետ։ 896 թ. այս գետի ափին տեղի է ունեցել ճակատամարտ հայկական զորքերի և Հյուսիսային Միջագետքի ու Աղձնիքի արաբական էմիր Ահմեդի բանակի միջև։ Ճակատամարտը մեր ժողովրդի պատմության մեջ հայտնի է դարձել Թուխի ճակատամարտ անունով։ Այժմյան աշխարհագրությանն անծանոթ է Թուխ անունը։ Հավանաբար նա Բիթլիս գետի աջակողմյան վտակներից մեկն էր։

Կլեսուր.— Լեռնանցք և ամրոց հայկական Տավրոսի արևմտյան հատվածում, Զիրենի գետի ակունքի մոտ։ Գտնվում էր Հայաստանի 387 թ. բաժանման գծի վրա և ամրացված էր հռոմեացիների կողմից։ Նոր շրջանի ճանապարհորդների վկայությամբ այստեղ մինչև մեր ժամանակները պահպանվել էին հին ամրոցների հետքերը։

Արզն (կամ Արզանան)

Արգավանդ դաշտային գավառ էր, տարածվում էր Նփրկերտից հարավ-արևելք՝ Արևմտյան Տիգրիսի ձախ կողմում։ Երկար ժամանակ (հավանաբար մ. թ. IV դարում) դարձել էր կռվածաղիկ Հռոմի ու Պարսկաստանի միջև։

կաստանի միջև։ Բազմիցս անցել է ձեռքից ձեռք և ավերվել։ Գավառի պատմական նշանավոր վայրը Աբզն ել մեծ քաղաքն էր, որն այժմ էլ գոյություն ունի և կոչվում է Հազրու։ Սասունցիները սովորաբար այն համարել են իրենց քաղաքը։

Սասուն (կամ Սաճասուն)

Ըստ ավանդության, այս գավառն իր անունը ստացել է Ասորեստանի Սեննեքերիմ թագավորի որդու՝ Սանասարի անունից, որը, ավանդության համաձայն, իր եղբոր հետ փախչելով այստեղ, կառուցել է բերդ և հավաքել բազմաթիվ բնակիչներ։ Գավառը գտնվում էր Հայկական Տավրոսի միջին հատվածում (հիմնականում Բաթման գետի վերին հոսանքում)։ Մեր մատենագիրները նրա բնակիչներին ուղղակի կոչում են «բնակիչք Թորոս լերին»։ Սասունից արևելք նույն գավառն էր, որը դարեր շարունակ Սասունի հետ միասին կազմում էր հայկական մի իշխանություն։ Սասունը լեռնային է, խիստ կլիմայով և ժլատ բնությամբ։ Բնակչության հիմնական զբաղմունքները եղել են անասնապահությունը, որսորդությունը և երկրագործությունը։ Սասունցիները լավ էին տիրապետում ռազմական արվեստին։ Նրանք, թիկունք դարձնելով իրենց ամրոցները, լեռները ու վիրճերը, դարեր շարունակ զինված պայքար են մղել իրենց գավառի և ամբողջ երկրի անկախության համար։ Սասունցիները Հայրենիքի անկախության համար մղվող պայքարի հոյակապ օրինակ ցույց տվեցին արաբական լծի դեմ ծագած 850—855 թթ. ժողովրդական ապստամբության ժամանակ։ Նրանք 850 թ. վաղ գարնանը Դավթի և Խութեցի Հովնանի գլխավորությամբ իջնում են Մուշի դաշտ և հանկարծակի հարձակմամբ գլխովին ջախջախում արաբական Յուսուֆ զորավարի մեծ բանակը։ Այս ապստամբությունն իր վառ արտացոլումն է գտել «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսում։ X—XI դդ. Սասունը Խութի հետ միասին ռազմագիտական հզոր իշխանություն էր, որն իր գոյությունը պահպանեց նաև սելջուկյան տիրապետության շրջանում։ Սասունցիները հերոսական կռիվներ են մղել նաև XIX դարի հայ ազատագրական շարժումների ժամանակ։

8. ՄՈԿՔ

Մեծ Հայքի ամենափոքր «աշխարհ»-ն էր։ Տարածվում էր Արևելյան Տիգրիսի և Հայկական Տավրոսի արևելյան հատվածի միջև։ Խիստ լեռնային է, միայն տեղ-տեղ կան նեղ ու երկար գետահովիտներ։ Մեծ մասը պատած է թանձրախիտ անտառներով։ Ունի գունավոր մետաղների հանքավայրեր։ IV դարից ի վեր Մոկքն առանձին նախարարություն էր։ Այստեղ իշխում էին Մոկաց նախարարները։ Արաբական տիրապետության շրջանում Մոկաց իշխանությունը բավական թուլացել էր և X դ. սկզբներին ենթարկվում է Վասպուրականի Արծրունիներին։ Մոկքի բազմաթիվ գյուղերի հայ բնակչությունը ևս մասնակցել է առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ բռնկված ինքնապաշտպանական կռիվներին և դրանց մի մասը՝ Վանի ու նրա շրջակայքի բնակիչների հետ միասին կարողանում է փրկվել թուրքական յաթաղանից ու ապաստան գտնել Արևելյան Հայաստանում։ Մոկքում հիշատակվում է 9 գավառ, որոնցից պատմական տեսակետից համեմատաբար նշանավոր էին Առանձնակ Մոկքն ու Ջերմաձորը։ Առանձնակ Մոկքը գտնվում էր Որբ (այժմ Մոկուս-սու) գետի ավազանում, իսկ Ջերմաձորը, որը Մոկքի ամենաարևելյան գավառն էր, համապատասխանում էր այժմյան համանուն շրջանին։ Ջերմաձորում էր գտնվում Զրել ամրոցը (այժմյան Մոկուս գյուղաքաղաքից արևելք)։ Իսկ Առանձնակ Մոկքը հայտնի էր իր Մոկի բերդով և Ամենափրկիչ վանքով։ Մոկք բերդը գտնվում էր այժմյան Մոկուս քաղաքի տեղում և Մոկաց իշխանների ոստանն էր։

Ամենափրկիչ վանքի (այս անունով բազմաթիվ վանքեր կային) տաճարը կենտրոնագմբեթ էր, սրբատաշ քարով շարված հոյակապ կառուցվածք է եղել, որ XX դ. սկզբներին դեռևս կանգուն էր։ Այդ վանքի հետ կապված պահպանվել են ավանդություններ։

9. ԿՈՐՃԵՔ ԿԱՄ ԿՈՐՃԱՅՔ

Հաճախ կոչված է նաև գլխավոր գավառի՝ Կորդուքի անունով։ Տարածվում էր Մոկքից և Վասպուրականից հարավ։ Իր տարածքով մոտավորապես համապատասխանում է այժմյան Քրդստանի մի մասին, որը լեռնոտ և անտառներով հարուստ երկիր է։ Կորճեքի կենտրոնական մասով էր հոսում Տիգրիսի ձախակողմյան վտակ Մեծ Զաբը։ Հիշատակվում է հետագայն ժամանակներից իբրև մի բարեբեր երկիր, որի հին բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով և առևտրով։ Երկրում եղել են մի քանի քաղաքներ ու բերդեր։ Տիգրան II-ի օրոք կարճ ժամանակով Կորճեքը միացված էր Հայկական պետությանը։ I—IV դդ. այն հարևան Միջագետքի հետ միասին

կովածաղիկ էր դարձել Հռոմի և Պարսկաստանի միջև՝ մի քանի անգամ անցնելով ձեռքից ձեռք։ Նրա որոշ մասերն էլ մտել են Հայկական պետության մեջ։ Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ում Կորճեքի կազմում հիշատակված են 10 գավառներ, որոնք թվարկված են արևմուտքից արևելք ուղղությամբ։ Նրա Կորգուք, Կորդրիք, Որսիրանք ու Փոքր Աղբակ գավառները Հայաստանի անմիջական հարևաններն էին և Արտաշեսյանների ու Արշակունիների թագավորության շրջանում մեծ մասամբ միացած էին Հայկական պետությանը։ Դրանք IX—X դդ. մտնում էին Վասպուրականի Արծրունյաց իշխանության (908 թվականից թագավորության) մեջ։

Կորգուքը Կորճեքի ամենանշանավոր գավառն էր և տարածվում էր Մակքից հաթավ, Արևելյան Տիգրիսի ձախ կողմում։ Կորգուքից արևելք գտնվում էր Կորդրիք ընդարձակ գավառը, որը ավելի հայտնի էր Տմորիք անունով։ Որսիրանքը ընկած էր Մեծ Զաբ գետի վրա։ Այս գավառում էին գտնվում Թվայ գյուղը և Արյան լիճը։ Սրանց մոտ Վասպուրականի զորքերը IX դ. կեսին մեծ դիմադրություն են ցույց տվել Բուղայի բանակին, որը խալիֆայության կողմից ուղարկված էր Անդրկովկասի ժողովրդաազատագրական ապստամբություններն արյան մեջ խեղդելու համար։ Փոքր Աղբակը Կորճեքի ամենաարևելյան գավառն էր և հարևան էր Վասպուրականի Մեծ Աղբակ գավառին։ Այժմյան Զուլամերկի շրջանը հնում մտնում էր այս գավառի մեջ։ Փոքր Աղբակի գլխավոր բերդերն էին Զլմարը և Սրինգը։

10. ՊԱՐՍԿԱՀԱՅՔ

Պարսկահայք անունն առաջին անգամ հիշատակվում է VII դարի «Աշխարհացույց»-ում։ Տարածվում է Ուրմիա լճի արևմտյան և հյուսիսային առափնյա շրջաններում։ Թե՛ Արտաշեսյանների և թե՛ Արշակունիների թագավորության շրջանում միացված էր Հայկական պետությանը։ Հայաստանի առաջին բաժանման ժամանակ (387 թ.) այն միացվեց Արևելյանին և նրա կազմում էլ մնաց մինչև վերջ։ Բացառությամբ հյուսիսային մասում գտնվող Հեր ու Զարևանդ գավառների և մի քանի այլ շրջանների, որոնք IX—XI դդ. մտնում էին Վասպուրականի մեջ։ Պարսկահայքում թվարկված 10 գավառներից հայ ժողովրդի պատմության տարբեր դեպքերի առիթով ավելի հաճախ հիշատակվում են Հերը և Զարևանդը։

Իր տարածքով համապատասխանում էր այժմյան Խոյի շրջանին (Ուրմիա լճից հյուսիս)։ Այստեղ էին գտնվում Հեր քաղաքն ու Նվարսակ գյուղը։

Հեր քաղաքն այժմ էլ գոյություն ունի և կոչվում է Խոյ։ Գտնվում է Կոստուր գետի ափին՝ փոքրիկ դաշտի կենտրոնում, որը քաղաքի անունով կոչվել է Հերական (կամ Խերական) դաշտ։ Հերը պատած էր պաշտպանական ամուր պարսպով։ Նոր ժամանակներում քաղաքի պարսպապատ մասը՝ միջնաբերդը, գտնվում էր արևելյան մասում, իսկ արևմտյան մասը առանց պարսպի էր և կոչվում էր Փոքր Թաղ (Փոքր մահլա)։ XIX դ. սկզբներին Խոյի հայ բնակչությունը մի քանի հազար մարդու էր հասնում, որոնց մեծագույն մասը 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով գաղթեց Արևելյան Հայաստան։ Հայերն այդտեղ ունեին երկու եկեղեցի և վարժարան։

Նվարսակ փոքրիկ գյուղը Հեր քաղաքի մոտ էր և V—VII դարերում սահմանային կետ էր Արևելյան Հայաստանի ու Ատրպատականի միջև։ V դ. Նվարսակը նշանավորվեց որպես հաշտության պայմանագրի կնքման վայր։ Նվարսակի հաշտության այդ պայմանագիրը կնքվել է 484 թ. Վահան Մամիկոնյանի և պարսկական արքունիքի ներկայացուցիչ Նիխոր շրավարի միջև՝ իբրև հետևանք հայերի 481—484 թթ. ազատագրական հաղթական ապստամբության։ Նվարսակի հաշտությամբ Հայաստանը ներքին կյանքում ձեռք բերեց ինքնուրույնություն։ Այդ պայմանագրից հետո Հայաստանը Մարզպանականի փոխարեն կոչվեց Տանուտերական երկիր, իսկ դրա գլխավոր կառավարիչ Վահան Մամիկոնյանը դարձավ Հայոց տանուտեր։

Զարևանդ (կամ Զարավանդ)

Համապատասխանում է այժմյան Սալմաստի շրջանին, որի կենտրոնը Դիլման փոքրիկ գյուղաքաղաքն է։ Դավառի պատմական վայրերից էր Սալմաստ քաղաքը, որն իբրև բնակավայր հիշատակված է դեռևս Փավստոս Բյուզանդի մոտ։ Սալմաստը IX դարում վերածվում է քաղաքի և դարեր շարունակ մնում որպես համանուն գավառի կենտրոն։ Այժմ նրա տեղում մի փոքրիկ բնակավայր է։ Մինչև օրս էլ Խոյի և Սալմաստի շրջաններում պահպանվել են հայկական գյուղեր, թեպետև սկսած Արե-

վելյան Հայաստանը Ռուսաստանին միակցնելու ժամանակներից մինչև մեր օրերը այս շրջաններից հազարավոր հայեր են ներգաղթել Արևելյան Հայաստան և Խորհրդային Հայաստան։

11. ՓԱՅՏԱԿԱՐԱՆ

Կոչվել է նաև Կապեք (կապեր ժողովրդի անունով), Կապիտան և երբեմն էլ՝ Բաղասական։ Տարածվում էր Արաքսի ստորին հոսանքից հարավ ընկած շրջաններում։ Հայտնի էր իր բամբակով։ Այստեղ, Ադրբեջանական ԽՍՀ-ի հարավ-արևելյան շրջաններում մինչև օրս էլ նշմարվում են հնագույն ժամանակների ջրանցքների և արհեստական ամբարտակների հետքերը։ Մինչև մոնղոլների տիրապետությունը Մուղանի դպալի մասը ծաղկուն շրջան էր։ Արտաշեսյանների և Արշակունիների թագավորության ժամանակաշրջանում Փայտակարանը որոշ ընդհատումներով կազմում էր Հայկական պետության ենթակա շրջան։ Հայաստանի 387 թ. բաժանումից հետո՝ այն ընդմիշտ դուրս եկավ նրա պետական կազմից։ Փայտակարանի բնակիչների հիմնական զբաղմունքը կազմում էին ստրպատականցիները։ «Աշխարհացույց»-ում Փայտակարանի տակ հիշատակված է 14 գավառ։ Հին Հայաստանի քաղաքական պատմության հետ սերտորեն առնչվելու շնորհիվ Փայտակարանի Փայտակարան քաղաքն ու Վարդանակերտ ավանը հաճախ են հիշատակված մեր մատենագրության մեջ։ Փայտակարան քաղաքը գտնվում էր Կասպից ծովից արևմուտք, Կուր և Արաքս գետերի աջմկան գետախառնուրդի շրջանում։ Այս քաղաքում էին հատվում Դերբենդից, Պարսկաստանից և Հայաստանից (Արաքսի հովտով) եկող տարանցիկ երեք կարևորագույն ճանապարհները։ Այնպես որ Փայտակարանը առևտրի կարևոր կետ էր և ուներ նպաստավոր դիրք։ Ոմանք այս քաղաքը սխալմամբ նույնացրել են Թփխիսի (Թբիլիսի) հետ։ Վարդանակերտ ավանը գտնվում էր Կուր և Արաքս գետերի գետախառնուրդից մի փոքր հարավ-արևմուտք, Արաքսի ձախ ափին։

12. ԱՐՑԱԽ ԿԱՄ ԱՐԶԱԽ

Երբեմն կոչվել է Փոքր Սյունիք, իսկ ավելի ուշ՝ Խաչեն կամ Խաչենք, որը Արցախի միայն մի գավառն էր։ Տարածվում էր Սյունիքից արևելք։ Իր տարածքով համապատասխանում է Լեռնային Ղարաբաղին

Նկ. 29

Գանձասար

և դրանից արևելք գտնվող Մելիքի տափաստանին։ Անմատույց երկիր էր Արցախը, լեռնային և անտառապատ։ Ուներ փարթամ արոտավայրեր։ Հռչակված է եղել ձիաբուծությամբ։ Արցախի ձիերն իրենց գիմացկունությամբ գերազանցում էին արաբականին, իսկ արագավազությամբ նրանից ետ չէին մնում։ Արցախը այգեվետ երկիր էր, այստեղ մշակում էին նաև բամբակ։ Ունի մետաղի հանքավայրեր, բնական այլևայլ հանքեր ու հանքային ջրեր։ Բնությունը գեղատեսիլ է՝ սուր հակադրություններով լի։ Բնակչության մեծագույն մասը կազմում են հայերը։

Քրտաշեսյանների և Արշակունիների թագավորության շրջանում Ար-

ցախը մտնում էր Հայկական պետության մեջ։ 428 թվականից Սասանյաններն այն ժամանակավորապես միացրեցին Աղվանքի մարզպանությանը։ IX—XIII դարերում, Արցախում, որն այդ շրջանում ավելի հայտնի էր Խաչեն անունով, կային հայկական մի քանի իշխանություններ, որոնց զգալի մասը Դավիթ I-ը (989—1020) միացրեց Անի—Շիրակի թագավորությանը։ Հետագա դարերում ևս այստեղ պահպանվեցին հայկական իշխանությունների մնացորդները՝ ընդհուպ մինչև Անդրկովկասի միացումը Ռուսաստանին։ Ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ի Արցախը մասնատված էր 13 գավառի, որոնցից յուրաքանչյուրում տարբեր ժամանակներում հիշատակվում են բերդեր, վանքեր և այլ վայրեր։ Նրա հայտնի վանքերից է Ամարասը (կամ Ամարազ), որը հիշատակվում է IV—V դարերից։ Այն մի քանի անգամ վերանորոգվել է։ Գտնվում է ՀՂԻՄ-ի Մարտունու շրջանի Սոս գյուղի հանդամասում։ Ամարասը եպիսկոպոսանիստ էր և հայտնի էր ամբողջ երկրում։ Այժմ կանգուն է։ Մյուս վանքերից հայտնի էին՝ ա) Գանձասարը, որը նույնպես կանգուն է և գտնվում է բարձրադիր ու անտառապատ վայրում, Խաչեն գետի միջին հոսանքի շրջանում։ Գանձասարը XVIII դ. սկզբներին խոշոր դեր է խաղացել ազատագրական շարժման մեջ։ Ճարտարապետական բարդ համալիր է և պահպանվում է պետության կողմից. բ) Դադի վանքը, որի ավերակները գտնվում են Թարթառ գետի ձախ ափին, նույնպես բարդ համալիր է, բայց վատ է պահպանված։ Հայտնի է հատկապես իր խաչքարերով։ Մյուս վանքերից են Ամենափրկիչը, Թուխմանուկը և այլ վանքեր, բազմաթիվ բերդեր (Խաչեն, Սար, Շուշի, Խոխանաբերդ և այլն)։

13. ՈՒՏԻՔ

Հիշատակվում է նաև Ուտի ձևով։ Անունը հնագույն ծագում ունի և կապված է նույնանուն ցեղանվան հետ։ Տարածվում էր Գուգարքի, Սյունիքի և Կուր գետի միջև։ Փոքր Կովկասի վրա ընկած քրջանները անտառապատ են։ Հայտնի էր իր պղնձի և երկաթի հանքերով։ Արտաշեսյանների ու Արշակունիների թագավորությունների շրջանում Ուտիքը Հայկական պետության բաղկացուցիչ մասն էր կազմում, նրա հարավ-արևմտյան լեռնային գավառները՝ Տավուշը, Գարդմանը և այլն, Բագրատունիների թագավորության շրջանում նույնպես միացված էին Հայկական պետությանը։ Ուտիքում ըստ VII դարի «Աշխարհացույց»-ի կար 9 գավառ։ Դրանցից ուշագրության արժանի են.

Ուտի Առաջնակ

Տարածվում էր Թարթառ գետի միջին ու ստորին հոսանքների ավազաններում։ Հարթավայրային է, արգավանդ հողերով։ Ուտիի ամենանշանավոր գավառն էր։ Այստեղ էին գտնվում Պարտավ քաղաքը և Ճաղանկատու ավանը։

Պարտավը (արաբական աղբյուրներում՝ Բերդա) Հայոց Աղվանքի մայրաքաղաքն էր, որը IX—XI դարերում Մերձավոր Արևելքի խոշորագույն քաղաքներից մեկն էր, առևտրի ու արհեստագործության խոշոր կենտրոն։ Նա բարեկարգ ճանապարհներով կապված էր Դվինի, Թբիլիսիի և Կասպից ծովի արևմտյան առափնյա շրջանների ու Ատրպատականի քաղաքների հետ։ XII դարից Պարտավն իր տեղը զիջում է նորակառույց Գանձակին (այժմ՝ Կիրովաբադ)։ Պարտավի ավերակները գտնվում են Թարթառ գետի ստորին հոսանքի ափին՝ Ադրբեջանական ԽՍՀ-ի Բարդա շրջկենտրոնի մոտ։

Թարթառ գետի միջին հոսանքի շրջանում, գետափին էր գտնվում Կաղանկատու ավանը, որը Դվին—Պարտավ ճանապարհի կայաններից մեկն էր։ Այս ավանում էր ծնվել Հայոց Աղվանքի պատմության հեղինակ, X դարի հայ պատմագիր Մովսես Կաղանկատվացին։

Գարդման (կամ Գարդմանաձոր)

Տարածվում էր Կուրի աջակողմյան վտակ Շամքորչայի վերին հոսանքի շրջանում։ Լեռնային է, զգալի մասը անտառապատ։ Այստեղ կար Գարդման անունով ավան, որի ավերակները գտնվում են այժմյան Դրմանիկում (Շամքորչայի աջակողմյան վտակներից մեկի ափին)։ Գավառի մյուս նշանավոր վայրերից է հայ մատենագիրների կողմից հիշատակվող Գետարակի բերդը և պղնձահանքը (այժմյան Գետաբեկը), որի շահագործումն ունի հնագույն պատմություն։

Շիկաշեն (կամ Շակաշեն)

Գավառի անվան առաջացումը ենթադրաբար կապում են սակերի (սկյութների) անվան հետ։ Իր տարածքով համընկնում է Ադրբեջանական ԽՍՀ-ի Գյանջայի շրջանին։ Հարթավայրային է։ Գավառի ամենա-

նշանավոր վայրը Գանձակ քաղաքն է (Գյանջա, Ելիզավետպոլ), որը կառուցվել է XII դարում և կարճ ժամանակում պարձել է խոշորագույն քաղաք։ Այժմ Գյանջան իր նշանակությամբ Ադրբեջանական ԽՍՀ-ի երկրորդ քաղաքն է։

Տավուշ

Այս գավառը իր մեջ մոտավորապես ընդգրկում էր Ադրբեջանական ԽՍՀ-ի Թովուզ ու Ղազախ և Հայկական ԽՍՀ-ի Շամշադինի շրջանները միասին վերցրած։ Զգալի մասը անտառապատ է։ Տավուշի պատմական վայրերից նշանավոր էին Խաղխաղ (կամ Խալխալ) ավանը և Տավուշ բերդը։ Խաղխաղ ավանը գտնվում էր այժմյան Ղազախ քաղաքի (Ադրբեջանական ԽՍՀ) մոտակայքում։ Այն հիշատակվում է իբրև Հայկական Ազվանքի թագավորների ու իշխանների ձմեռային սիրուանիստ։ Մ. Բարխուդարյանի վկայությամբ վաղուց պատմական ապարեզից վերացած այդ ավանի ավերակները XIX դ. վերջերին նկատվում էին բավական ընդարձակ տարածության վրա։ Պահպանվել են եկեղեցիների, շրմաղի, հանգստավայր դղյակների և այլ կառուցվածքների փլատակները։

Տավուշ բերդն իր ամրությամբ հռչակված էր մանավանդ IX—X դարերում։ Բագրատունի առաջին թագավորների օրոք Տավուշում նստող իշխանները ապստամբել էին նրանց դեմ և ամեն միջոց գործադրում էին իրենց ֆեոդալական ինքնուրույնությունը պահպանելու համար։ Սակայն Աշոտ II-ը (914—928) զենքի ուժով կոտրում է նրանց դիմադրությունը և Բագրատունիների թագավորությանը միացնում Տավուշ գավառը համանուն բերդի հետ միասին։ XI դարում Տավուշ բերդը գրավեցին Տաշիր—Զորագետի Կյուրիկյան թագավորները, իսկ XII դարում՝ Զաքարյան իշխանները։ Բերդի ավերակները գտնվում են ՀԽՍՀ Շամշադինի շրջկենտրոն Բերդում, մի բարձր ու զառիթափ լեռան վրա։ Ավերակները շատ վատ են պահպանվել, դրանց մեծ մասն անցել է հողի հաստ շերտի տակ։ Այստեղ հնագիտական կանոնավոր պեղումներ չեն կատարվել։

14. ԳՈՒԳԱՐՔ

Գուգարք անունը հիշատակվում է հնագույն ժամանակներից։ Ոմանք այն կապում են նույնանուն ցեղախմբի հետ։ Ընդարձակ երկիր էր, տարածվում էր Աղստև գետի հովտից մինչև Տայքի արևելյան սահմանները։

Շրջապատված էր հյուսիսից Վիրքով (Վրաստան), հարավից՝ Այրարատով, արևմուտքից՝ Տայքով, իսկ արևելքից՝ Ուտիքով։ Գուգարքն ալքի էր բնկնում վայրի մրգերի առատությամբ և անտառներով։ Ուներ արգավանդ դաշտեր, հարուստ էր գետերով, լճերով և սառնորակ աղբյուրներով։ Գուգարքում կային պղնձահանքերի մի շարք ելքեր, որոնք շահագործվել են հնագույն ժամանակներից ի վեր։

Գուգարքն ամբողջությամբ Հայկական պետության կազմի մեջ էր մտնում՝ Արտաշեսյանների ու Արշակունիների թագավորության շրջանում կազմելով նրա հյուսիսային սահմանակալ իշխանությունը՝ Գուգարքի բդեշխությունը։ Արշակունիների թագավորության անկումից հետո Սասանյանները Գուգարքը միացրին Արևելյան Վրաստանի մարզպանությանը։ Հետագայում նրա մեծագույն մասը՝ Տաշիրն ու նրան հարակից մյուս գավառները Բագրատունիների թագավորության շրջանում միացվեցին հայկական պետությանը, իսկ X դարի 70-ական թվականներին այդ տարածքում ստեղծվեց Բագրատունիներին ենթակա ֆեոդալական առանձին թագավորություն՝ Տաշիր-Զորագետի թագավորությունը։ Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ում ու Գուգարքի տակ հիշատակած է 9 գավառ՝ Զորափոր, Կողբափոր, Սոբափոր, Տաշիր, Արտահան (կամ Արդահան), Զավախք և այլն, որոնց դիրքը որոշված է բավական ճշտությամբ։

Զորափոր

Ավելի հին աղբյուրներում ուշդակի կոչված է Զոր։ Տարածքով մոտավորապես համընկնում էր ՀԽՍՀ-ի Կարմիրի և Իջևանի շրջաններին։ Գավառի պատմական նշանավոր վայրերից էին Կայան բերդը և Գետիկի, Նոր Գետիկի, Հաղարծնի, Մակարա ու Կիրանց վանքերը և այլն։

Կայան բերդը գտնվում էր Սևանա լճից հյուսիս, Արջանոց կոչվող լեռների վրա, այժմյան Իջևան քաղաքից հարավ։ Պատկանում էր Զաքարյան իշխաններին։ 1236 թվականին մոնղոլները գրավում են այն և հիմնահատակ ավերում։ Հիշատակություններից երևում է, որ Զորափորն այս բերդի անունով կոչվել է նաև Կայանի գավառ։ Ոմանք այս բերդը տեղադրում են Հաղպատ և Սանահին գյուղերի միջև՝ Զորափոր գավառն էլ համարելով ոչ թե Աղստևի, այլ Դեբեդի հովիտը։ Սակայն այդ կարծիքն անընդունելի է։ Հաղպատ և Սանահին վանքերի միջև գտնվող հին բերդի ավերակները, ինչպես պարզ երևում է XIII դարի պատմագիրների

Նկ. 30

Գետիկի վանք, XIII դ.

հիշատակություններից, շպետք է շփոթել այս Կայանի հետ։ Այս վերջինը գտնվում էր Սևանա լճից հյուսիս, Աղստև գետի ձախ կողմում։

Գետիկի վանքը (այժմ տեղացիները կոչում են Գոշավանք), որտեղ բավական ժամանակ ապրել ու գործել է միջնադարյան հայ մատենագրության հայտնի դեմքերից մեկը՝ Մխիթար Գոշը (1130—1213), գտնվում է Դիլիջան քաղաքից ոչ հեռու։ Երկրաշարժի հետևանքով այս վանքը քանդվում է, բայց նրա միաբանները Գոշի խորհրդով Իվանե Աթաբեկից խնդրում են նոր վանք կառուցելու համար տալ Տանձուտ կոչվող վայրը։ Իվանեն նրանց խնդիրքը բավարարում է, և միաբանները Տանձուտում հիմնում են մի նոր վանք՝ Նոր Գետիկը։ Նոր Գետիկը այժմ վերականգնված է։ Այն գտնվում է դեղատեսիլ ու անտառապատ ձորում, Իջևանի շրջանի Գոշ գյուղում։ Այս վանքը հաճախ Մխիթար Գոշի անունով կոչվում է Գոշավանք։ Նոր Գետիկը ճարտարապետական ամբողջական համալիր է՝ բաղկացած գլխավոր տաճարից (ս. Աստվածածին, կառուցված 1191 թ.) և ս. Գրիգոր եկեղեցուց (XIII դ.), սեղանատնից, գավիթից, պաշտպանական պարիսպներից, մատուռներից։ Ունի նրբաճաշակ քանդակներ, պատերի վրա՝ մի շարք արձանագրություններ։ Այստեղ էր գտնվում նաև Մխիթար Գոշի խաչքարը, որը բերված է Երևանի պետական պատմության թանգարան։ Նոր Գետիկի վանքի տաճարը վերականգնվել և վերանորոգվել է մեր օրերում։

Հաղարծնի վանքը կառուցվել է XI դարում։ Այժմ էլ կանգուն է, գտնվում է Դիլիջանից Իջևան տանող խճուղու ձախ կողմում, մի գեղատեսիլ վայրում, որը բարեկարգ ճանապարհով միացած է գլխավոր խճուղու հետ։ Ոչ պակաս հայտնի են նաև Մակարավանքը (այժմյան Աչաջուր գյուղի մոտ), որն ունեցել է դպրոց և հռչակված է եղել իր բարձր գիտությամբ, և Կիրանց վանքը, որի ավերակները գտնվում են Սևաքանդակներով, և Կիրանց գյուղի անտառամշակման ավանից ոչ հեռու, անտառապատ վայրում։

Հաղարծինը Խորհրդային Հայաստանի տարածքի պատմական ամենանշանավոր հուշարձաններից է՝ ճարտարապետական մի ամբողջական համալիր, որը բաղկացած է երեք եկեղեցիներից (ս. Գրիգոր, կառուցված X—XI դդ., ս. Ստեփանոս, կառուցված 1241 թ., ս. Աստվածածին գլխավոր եկեղեցին՝ կառուցված 1281 թ.), գավթից (կառուցված XII դ. վերջերին) և սեղանատնից, որը կառուցվել է 1248 թվականին ճարտարապետ Մինասի կողմից։ Վանքի համալիրի մեջ մտնող այդ շինությունները քանդակազարդ են և մեծ մասն ունի վիմագիր արձանագրություններ։ Առանձնապես հայտնի է գավթի արևմտյան մուտքի շրջանակին Զաքարե և Իվանե եղբայրների կողմից XIII դ. սկզբին փորագրել տված ընդարձակ արձանագրությունը։ Վանքի համալիրի շրջակայքում նշմարվում են նաև մի շարք այլ հուշարձաններ (խաչքարեր, աղբյուրհուշարձաններ)։ Հաղարծինում է գործել խաչատուր Տարոնացի վարդապետը՝ միջնադարյան Հայաստանի խոշորագույն երաժշտագետներից մեկը, որը մեծ հռչակ է ձեռք բերել խազագրության (նոտագրության) ստեղծման բնագավառում։ Ենթադրվում է, որ այստեղ են թաղված Բագրատունի Սմբատ և Գագիկ թագավորները։

Մակարավանքը նույնպես ճարտարապետական համալիր է և բաղկացած է երեք եկեղեցուց, որոնք կառուցված են իրար կից, ժամատնից, զանգակատնից, երկու մատուռից և բնակելի զանազան շինություններից։ Համալիրը պարսպապատ է։ Պարսպից դուրս բնակավայրի ավերակներն են, բազմաթիվ խաչքարեր ու տապանաքարեր ունեցող գերեզմանոցով հանդերձ։ Նրա եկեղեցիները կառուցված են սրբատաշ կարմրավուն

Նկ. 31
Խաչքար Գոշավանքում

բավուն քարերից։ Դրսից դռների և պատերի վրա կան արձանագրություններ ու բարձրարվեստ զարդաքանդակներ։ Հարավային կողմի տաճարի բեմը կտրված է քարակոփ որմով, որի վրա քանդակված են բազմատեսակ կենդանիներ։ Այս գլխավոր տաճարի գմբեթի մեծ մասը փլված է և շենքն ունի ճեղքվածքներ։ Սակայն և՛ այդ և՛ մյուս կարևոր շինությունները կարելի է առանց դժվարության վերականգնել։ Մակաբավանքը կոչվել է նաև Ագռավավանք, որի ծագումը ժողովուրդը կապում է ավանդության հետ։ Այժմ այստեղ կատարվում են վերականգնման աշխատանքներ։

Կիրանց վանքը բաղկացած է երեք եկեղեցուց, մեկ սեղանատնից և մի շարք օժանդակ շենքերից։ Այս համալիրը ստեղծվել է XII—XIV դարերում։ Ծղել է պարսպապատ, որի հետքերը մինչև օրս նշմարվում են։ Գլխավոր տաճարը կանգուն մեծ շինություն է, բայց գտնվում է խարխուլ վիճակում։ Ունի սրածայր գմբեթ, որի չորս կողմերում խաչաձև խորաններ են։ Տաճարի ներսը ծածկված է որմնանկարներով։ Պատերը շարված են աղյուսից՝ կրաշաղախով, որից էլ ծագել է անունը։

Կիրանց վանքից հարավ-արևելք, անտառապատ լեռնալանջի վրա գտնվում է Դեղձնուտի (կամ Դեղձկուտ) վանքը, որի տաճարը կառուցված է սրբատաշ քարերով և ունի մեծ գավիթ։ Կառուցման ժամանակը հայտնի չէ։ Խաչքարերից մեկի վրա կա 1275 թ. արձանագրություն։ Տաճարի դուռը զարդարված է բարձրաքանդակներով։

Տաշիր (կամ Տաշիրք, Տաշրատափ)

Իր տարածքով մոտավորապես համընկնում է այժմյան Լոռուն։ Գուգարքի ամենաընդարձակ գավառն էր։ Այստեղ IX դարից իշխում էր Բագրատունիների մի ճյուղը, որը շրջակա մի շարք գավառներ միացնելով Տաշիրին, ընդարձակեց իր իշխանության սահմանները։ Բագրատունիների այս ճյուղի ներկայացուցիչ Գուրգենը 978 թ. իրեն հռչակեց Տաշիր—Զորագետի (կամ Լոռու) թագավորություն։ Ֆեոդալական այդ նոր թագավորությունը կոչվեց Տաշիր—Զորագետի թագավորություն, որը ենթակա էր Անի—Շիրակի թագավորությանը։

Տաշիրում հիշատակված պատմական վայրերից նշանավոր էին.

Լոռի.— Քաղաք։ Կառուցվել է X դ. երկրորդ կեսին և զարգացման շրջան է ապրել XI դարում։ Տաշիր—Զորագետի թագավորության մայրաքաղաքն էր։ Լոռիի հիմնադրումը վերագրում են Տաշիր—Զորագետի



Նկ. 32

Օձունի տաճարը, VI—VII դդ.

Թագավոր Դավիթ Անհողինին (989—1048)։ Զարգացման բուռն շրջան է ապրել XII դ. վերջերին և XIII դ. սկզբներին։ Բնակչության թիվը հավանաբար հասել է 20—25 հազար մարդու։ Արհեստագործության, առևտրի հետ միասին այստեղ հավանաբար զբաղվել են նաև պղնձահումքի հանույթով ու մշակմամբ։ Լոռին հայտնի էր իր ամրությամբ. երեք կողմերում Զորագետ և նրա ձախակողմյան վտակ Միսխան գետերի խիստ զառիվեր ու անմատչելի ձորերն են, իսկ սարահարթի կողմից պատած էր աշտարակավոր կրկնակի պարիսպով, որից դուրս փորված էր խոր ու լայն փոս և վտանգի դեպքում լցնում էին Միսխան գետի ջրով։ Քաղաքի շուրջ կային մի քանի տասնյակ քարայրներ, որոնք նույնպես բնակեցված էին։ 1236 թ. մոնղոլները գրավեցին և հիմնահատակ ավերեցին Լոռի քաղաքը, որը այդ ժամանակ Զաքարյան իշխաններից մեկի սեփականությունն էր։ Քաղաքի ավերակները գտնվում են ՀԽՍՀ-ի Ստեփանավան քաղաքից 2—3 կմ հարավ-արևելք։ Զորագետի բարձրադիր ձախ ափին,



Նկ. 33

Սանահնի վանքը։ Գրիգոր Մագիստրոսի հեմարանը, XI դ.

սարահարթի վրա։ Համեմատաբար լավ են պահպանվել նրա քաղաքային պարսպի և քաղաքացիական բնույթի մի շենքի մնացորդները։

Սանահին, Հաղպատ և Օձուն վանքերը միջնադարյան Հայաստանի մշակույթի կարևոր կենտրոններից էին։ Սանահինում և Հաղպատում գտնվում է ՀԽՍՀ Թումանյանի շրջանի Սանահին գյուղում, իսկ Հաղպատը նույն շրջանի Հաղպատ գյուղում։ Երկուսն էլ կանգուն վիճակում հասել են մինչև մեր օրերը։ Հաղպատը միջնադարյան Հայաստանի ճարտարապետական խոշոր ու հայտնի կոթողներից է։ Նրա հիասքանչ դակները մինչև օրս էլ լավագույն աղբյուր են մեր ճարտարապետական մշակույթի զարգացման համար։ Թե՛ Հաղպատը, և թե՛ Սանահինը ամ-

բողջական համալիրներ են, որոնց մեջ մտնում են տաճարներ, զանգակատներ, գավիթներ, աղբյուր-հուշարձաններ, պաշտպանական պարիսպներ և այլն։ Օձունի վանքը, որը նույնպես կանգուն է և գտնվում է նույն շրջանի Օձուն (Ուղունլար) գյուղում, ավելի հին է և իր կառուցվածքով ոչնչով չի զիջում Հաղպատին ու Սանահինին։ Օձունի տաճարը կառուցվել է VII դարում։ Այն սյունազարդ է՝ իր կառուցվածքով նման է Երերույքին։ Կոչվում է ս. Հովհաննես։ Վանքն ունեցել է ընդարձակ կալվածքներ և մի շարք սեփական գյուղեր։ Եղել է գրչության կենտրոն։ Այստեղից է Հովհան Օձնեցի կաթողիկոսը (VIII դ.)։ Եկեղեցու մոտ, նրա պարիսպներից ներս, գտնվում է մի հրաշալի մահարձան, որը վերագրում են Բագրատունի Սմբատ I թագավորին (890—914)։ Օձունի վանքից բացի գյուղում կան նաև մի քանի ուրիշ եկեղեցիներ։ Այստեղ հայտնաբերվել են ավելի քան երեք հազար տարվա հնություն ունեցող նյութական մշակույթի մնացորդներ։

Տաշիրի պատմական հայտնի հուշարձաններից են նաև Ախթալայի վանքն ու բերդը, որոնք գտնվում են Թումանյանի շրջանի Ախթալա քաղաքատիպ ավանում, Ալավերդի քաղաքից 3 կմ հեռավորության վրա։ Այստեղ Ժ. դը Մորգանը 1887 թ. պեղել է VIII—VI դդ. (մ. թ. ա.) վերաբերող ավելի քան 200 քարակերտ դամբարաններ, որոնցում հայտնաբերվել են խեցեղեն, երկաթե ու բրոնզե զենքեր ու իրեր։ Ախթալայի վանքը կառուցվել է XIII դ. և բաղկացած է ս. Երրորդության ու Առաքելոց (կամ ս. Գևորգ) եկեղեցիներից ու ավելի արևմուտք գտնվող երկու այլ, ավելի փոքր եկեղեցիներից։ Պարսպապատ է և բավական լավ է պահպանվել։ Նրա ամրոցը նույնպես կառուցվել է XIII դ. և հետագայում մի քանի անգամ ենթարկվել վերանորոգման։

Գուգարքի Կողբափոր գավառն իր տարածքով մոտավորապես համընկնում է ՀԽՍՀ-ի Նոյեմբերյանի շրջանին։ Սրա նշանավոր վայրերն են Կողբ ավանը (այժմ նույնանուն գյուղ Նոյեմբերյանի շրջանում), Գագ բերդը և Մշկավանքը։ Կողբը գտնվում էր ճանապարհի վրա և բավական աշխույժ կենտրոն էր։ Մշկավանքը այժմ կանգուն է և ճարտարապետական տեսակետից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում։ Գագ բերդը հայտնի է դարձել Բագրատունիների թագավորության ժամանակներից։ Զաքարյանների օրոք՝ XII դ. վերջերին և XIII դ. սկզբներին պատկանում էր նրանց ժառանգորդներին։ Այս բերդը երկար ժամանակ պաշտպանվել է օտար նվաճողներից։ Առանձնապես հայտնի է 1235 թ. հերոսական պաշտպանությունը մոնղոլական զորքերից։ Բերդի

Նկ. 34

Հաղպատի վանքի ընդհանուր տեսքը

ավերակները գտնվում են այժմյան Նոյեմբերյանի շրջանում, բարձր լեռան վրա։ Այժմ վաղեմի բերդի պարիսպները կանգուն են։ Բերդի մեջ անձրևաջրերը հավաքելու համար կերտել են վիմափոր ավազաններ, շրջակայքում կան բազմաթիվ քարայրներ, որոնք ժամանակին օգտագործվել են որպես զորանոցներ և զինանոցներ։

Մշկավանքը գտնվում է Կողբ գյուղի հարավային կողմում, անտառապատ լեռան վրա։ Անունը վերցված է տաճարի (ս. Աստվածածին) արձանագրությունից։ Սակայն սովորաբար այն կոչվում է Կողբավանք։ Կառուցված է սպիտակ սրբատաշ քարերով, երկարությունը մոտ 12 մ է, լայնությունը՝ 8 մ, քանդակազարդ է, պատերին կան արձանագրություններ։

Նկ. 35

Հաղպատի վանք. Ս. Նշան եկեղեցու գավթի ներքին տեսքը

Ջավախք

Այս գավառը համապատասխանում էր Վրացական ԽՍՀ-ի Ախալքալաքի, Բոգդանովկայի շրջաններին և հարակից տարածքներին։ Գավառի պատմական նշանավոր վայրերն էին Ախալքալաքը (հնում Քաջաց քաղաք) և Խերթվիս ու Թմկա բերդերը։

Ախալքալաքը (վրացերեն «նոր քաղաք») XI—XIII դարերում բավական զարգացած առևտրաարհեստավորական կենտրոն էր։ Սակայն հետագայում մոնղոլական և թուրք-թաթարական տիրապետության մռայլ ժամանակներում այն կորցնում է իր նշանակությունը։ Ավերված քաղաքի տեղում 1829 թ. Ադրիանապոլսի պայմանագրով Էրզրումի շրջանից ներգաղթած հայերը 1831 թ. հիմնադրել են ներկայիս քաղաքը, որը 1860 թվականից դարձել է նույնանուն գավառի կենտրոնը։ Քաղաքում պահպանվել են միջնադարյան ամրոցի ավերակները։ Ախալքալաքը փոքր, բայց բարեկարգ քաղաք է։ Այստեղ է ծնվել հայ մեծ գրող Դերենիկ Դեմիրճյանը։

Խերթվիս բերդի ավերակները գտնվում են Ախալքալաք գետի գետաբերանում և բավական լավ են պահպանվել, իսկ Թմկաբերդի ավերակները, որ ավելի վատ են պահպանվել, գտնվում են Ախալքալաք գետի գետաբերանից վերև, Կուրի բարձրադիր ձախ ափին, անմատչելի ու գեղատեսիլ վայրում։ Կուրի ձախ ափին, Թմկաբերդից վերև գտնվում է վրաց Թամար թագուհու օրոք իր ամրությամբ հռչակված Վարձիան, որը ժայռափոր (զգալի մասը բնական քարայրներ են) բազմահարկ ամրություններով մի համալիր է և գրավում է ամբողջ լեռնալանջը։

Գուգարքի այս գավառը տարածվում էր Ջավախքից հարավ-արևմուտք, Կուրի երկու ափերին։ Հարթավայրային է։ Հայտնի էր Արտահան կենտրոնով, որն այժմ էլ գոյություն ունի։

15. ՏԱՅՔ

Տայք անունը ծագել է հնագույն ժամանակներում այստեղ բնակվող տաոխներ կամ տայեր ցեղախմբի անունից։ Տարածվում էր Ճորոխի միջին հոսանքի ավազանում։ Խիստ լեռնային և անտառապատ երկիր է, անմատույց մի երկիր, որը քաղաքական աննպաստ պահերին հաճախ դառնում էր հայ թագավորների ու իշխանների ապաստարանը։ Հիշատակվում է դեռևս Քսենոփոնի ժամանակներից (V դ. մ. թ. ա.)։ Արտաշեսյան

ու Արշակունիների Բագավորների օրոք Տայքը հայկական պետության բաղկացուցիչ մասն էր, իսկ V—VII դարերում մտնում էր Հայաստանի մարզպանության մեջ։ Բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմում էին հայերը։

IV—VIII դարերում Տայքում իշխում էին Մամիկոնյանները։ Իսկ երբ VIII դարի վերջերից Մամիկոնյաններն աստիճանաբար կորցրեցին իրենց քաղաքական հզորությունը և դադարեցին երկրի կյանքում կարևոր դեր խաղալուց, Տայքի նրանց կալվածքներն անցան Բագրատունիներին։ X դարում այստեղ հիմնադրվեց Բյուզանդիային ենթակա հայ-վրացական մի իշխանություն, Տայքի (Տաո-Կլարջեթի) կյուրոպաղատությունը, որի գոյությանը կայսրությունը ընդմիշտ վերջ տվեց 1000 թվականին։ Սակայն շուտով այս երկրամասը միացվեց Վրացական պետությանը և XI—XIII դդ. ապրեց զարգացման շրջան։

Տայքում հիշատակվում են 8—9 գավառ, որոնք «Աշխարհացույց»-ում հիշատակված են արևելքից արևմուտք ուղղությամբ։ Նրա գավառներից էին Կողը, Բերդաց փորը, Պարտիզաց փորը, Ազորդաց փորը և այլն։ Առանձնապես նշանավոր էր Ոճաղե կամ Ոլխքիմ գավառը, որը տարածվում էր Ճորոխի աջակողմյան վտակ Օլթի գետի միջին ավազանում։ Այս գավառում էր գտնվում Ոլխքիմ բերդաքաղաքը, որը համապատասխանում է այժմյան Օլթի փոքրիկ քաղաքին։ Տայքում հիշատակված մի քանի պատմական վայրերի՝ Առահեղ, Իշխանաց ու Ոռնջաղ գյուղերի և Երախանի, Թուխարք ու Հավաքիշ բերդերի գավառներն անհայտ են։ Սակայն, ինչպես երևում է, Երախանի բերդը IV դարում Տայքի Մամիկոնյանների աթոռանիստն էր։

IV ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՑ

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի մի մասում հաստատվեց խորհրդային կարգեր։

Առաջին համաշխարհային պատերազմի և դաշնակցականների կարճատև տիրապետության տարիներին (1914—1920 թթ.) լիովին քայքայվել էր Հայաստանի առանց այդ էլ թույլ զարգացած տնտեսությունը։

Անկան եզրին էին գտնվում գինու-կոնյակի գործարանները, պահածոների, բամբակազտիչ ոչ մեծ ձեռնարկությունները, Ղափանի ու Ալավերդու պղնձահանքերը և շատ թե քիչ նշանակալի արդյունաբերական մյուս ձեռնարկությունները։ Առավել վատթար վիճակում էր գտնվում գյուղատնտեսությունը։ Չկար արհեստական ոռոգման ցանց, եղած մանր առուների մեծագույն մասը դուրս էր եկել շարքից, չկար բավարար քանակությամբ հացահատիկային կուլտուրաների սերմացու, խիստ պակասում էր քաշող անասունների գլխաքանակը, անասնապահության անկումը ահավոր չափերի էր հասել։ Խախտվել էր երկաթուղու աշխատանքը, ճանապարհները գտնվում էին միանգամայն անբարեկարգ վիճակում։ Անբերրիությունը, սովը ուղեկցվում էին տարափոխիկ հիվանդություններով։ Առանձնապես մեծ զոհեր էին խլում պարբերաբար կրկնվող խոլերան ու որովայնային տիֆը։ Չկային համապատասխան բուժաշխատողներ, բժիշկներ, բժշկական-առողջապահական հիմնարկներ։ Ողբերգական էր մանավանդ Հայաստանում ապաստանած տասնյակ հազար արևմտահայերի վիճակը, որոնց մեծագույն մասը կազմում էին ծերունիները, երեխաներն ու կանայք։ Դպրոցների մեծ մասը՝ վերածվել էր որբանոցների ու մանկատների։ Լիովին խախտված էր երկրի մշակութային կյանքը։ Նախանձելի ոչինչ չկար երկրի հատուկենտ քաղաքներում, որոնք, ներառյալ Երևանը, գտնվում էին գավառական քաղաքի մակարդակի վրա։ Էլ ավելի աննախանձելի էր մյուս բնակավայրերի վիճակը։

Ահա թե ինչ «ժառանգություն» ստացավ նորաստեղծ Խորհրդային Հայաստանը։ Գերմարդկային ջանքեր և հսկայական միջոցներ էին անհրաժեշտ երկրի տնտեսական ու մշակութային կյանքը նախ բնականոն ընթացքի մեջ դնելու, ապա սոցիալիզմի դարաշրջանին համապատասխան զարգացնելու համար։ Այդ դժվարագույն պրոբլեմների լուծման գործում Խորհրդային Հայաստանին օգնության ձեռք մեկնեց Խորհրդային Ռուսաստանը։ 1921 թվականին հանրապետությունը թևակոխեց տնտեսության վերականգնման շրջանը։ 1925 թ. հիմնականում ավարտվեց Հայաստանի գյուղատնտեսության վերականգնումը և նրա արտադրանքն արդեն հասավ 1913 թ. մակարդակի։ Վերականգնման աշխատանքները հաջողությամբ էին ընթանում նաև արդյունաբերության բնագավառում։ 1925—26 թթ. նախկին ձեռնարկությունների վերականգնման հետ միասին շարք մտան նորերը՝ Երևանի ծխախոտի ֆաբրիկան, Ջեթ-օճառի գործարանը, սկսվեց Երևանի և Լենինականի հիդրոէլեկտրակայանների կառուցումը։ 1928 թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքն արդեն հասավ 1913 թ. մակարդակին։ Ամնաբերության

բողջ երկրի հետ միասին խորհրդային Հայաստանը նույնպես թևակոխեց տնտեսության ինդուստրացման ժամանակաշրջանը։ Մինչպատերազմյան հնգամյակների տարիներին Հայաստանում ստեղծվեցին արդյունաբերական նոր ճյուղեր՝ գործարկվեցին քիմիական, մեքենաշինական, տեքստիլ արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ, որոնց թվում՝ Երևանի Ս. Կիրովի և Կիրովականի Ա. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատները, Լենինականի մսի կոմբինատը, Արարատի ցեմենտի գործարանը և այլն։ Գործարկվեցին խոշոր հիդրոէլեկտրակայաններ (Քանաքեռի, Զորագեսի) և մի շարք շրջանային էլեկտրակայաններ։ 1940 թ. Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրությունը 1913 թ. համեմատությամբ աճել էր 77 անգամ, իսկ արդյունաբերության արտադրանքը 1919 թ. համեմատությամբ՝ 32 անգամ։ 1940 թ. ժողովրդական տնտեսության մեջ գերակշռում էր արդյունաբերական արտադրանքի բաժինը։ 1929 թ. արդեն կոլեկտիվացվել էր գյուղացիական տնտեսությունների մոտ 92 տոկոսը, 1940 թ. ավելի քան 98 տոկոսը, ընդգրկելով հանրապետության բոլոր ցանքատարածությունների 99,9 տոկոսը։ Կոլեկտիվ խոշոր տնտեսությունները հսկայական առավելություններ ունեն գյուղացիական մանր՝ փոշիացած տնտեսությունների նկատմամբ։ Կոլտնտեսություններում կիրառվող լայն մասշտաբի մեքենայացումը, բնական և արհեստական պարարտանյութերի օգտագործումը, արհեստական ոռոգման ցանցի ընդլայնումը, ճիշտ ցանքաշրջանառությունը, անասունների ցեղերի բարելավումը, ագրոտեխնիկական կանոնների կիրառումը, սոցիալիստական մրցության ծավալումը մեծ չափով ավելացրին գյուղատնտեսական արտադրության ծավալը, մթերքների արտադրությունը։ 30-ական թվականների վերջերին ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ խորհրդային Հայաստանում ավարտվել էր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի սոցիալիստական վերակառուցումը։

Տնտեսության զարգացմանը համաքայլ ընթացավ նաև մշակութային կյանքը։ Այս բնագավառում առաջին քայլերը ձեռնարկեցին աշխատավորների անգրագիտության վերացման, հանրակրթական դպրոցների լայն ցանց ստեղծելու ուղղությամբ։ 1930 թ. խորհրդային Հայաստանն արդեն համատարած գրագիտության հանրապետություն էր։ 1940—41 ուս. տարում խորհրդային Հայաստանում գործում էին 1155 տարրական, 7-ամյա և միջնակարգ դպրոցներ, որոնցում սովորողների թիվը հասնում էր ավելի քան 326 հազարի, իսկ ուսուցիչներինը՝ 1120-ի, այսինքն՝ 10 անգամ ավելի, քան նախախորհրդային Հայաստանում։ 1920 թ. դեկտեմբերին սկսեց գործել խորհրդային Հայաստանի առաջին բարձրագույն դպրոցը՝ Երևանի պետական համալսարանը, 20-ական թվականների վերջերին անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտը, 30-ական թվականների սկզբներին համալսարանի համապատասխան ֆակուլտետների հիման վրա ստեղծվեցին գյուղատնտեսական, պոլիտեխնիկական, բժշկական և մանկավարժական ինստիտուտները։ Ապա հիմնադրվեց կոնսերվատորիան և բարձրագույն այլ դպրոցներ։ Հանրապետության քաղաքներում բացվեցին միջնակարգ մասնագիտական բազմաթիվ դպրոցներ՝ տեխնիկումներ, ուսումնարաններ։ 1940—41 ուս. տարում հանրապետությունում կար 9 բուհ 11120 ուսանողներով և 62 տեխնիկում հանրապետությունում կար 9 բուհ 11120 ուսանողներով և 62 տեխնիկում ու ուսումնարան՝ 9000 սովորողներով։ 20-ական թվականների կեսերից գիտության զարգացման հիմքը դրվեց։ Հիշատակության արժանի գիտական աշխատանքներ են կատարում բժիշկները (Վ. Արծրունի, Հ. Քեչեկ), քիմիկոսները (Հ. Հովհաննիսյան, Լ. Ռոտինյան, Ս. Ղամբ[illegible]ան), պատմաբանները (Հ. Մանանդյան, Լեո), լեզվաբանները (Հր. Աճառյան, Գր. Ղափանցյան), գրականագետները (Մ. Աբեղյան, Ա. Տերտերյան), երկրաբանները (Հ. Կարապետյան, Տ. Ջրբաշյան), էներգետիկները (Ի. Տեր-Աստվածատրյան) և ուրիշներ։ Գրական գործունեություն ծավալեցին Եղիշե Չարենցը, Դեմիրճյանը։ Արվեստի բնագավառում հանդես եկան ականավոր ներկայացուցիչներ՝ նկարիչ Մարտիրոս Սարյան, կոմպոզիտորներ Ալեքսանդր Սպենդիարյան, Ռոմանոս Մելիքյան և ուրիշներ։ 30-ական թվականների սկզբին խորհրդային Հայաստանի գիտական հիմնարկությունների թիվը հասնում է 38-ի։ 1935 թ. կազմակերպվում է ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղը, որը բարձրագույն դպրոցների տասնյակ ամբիոնների հետ միասին գիտական աշխատանք է ծավալում բազմաթիվ ուղղություններով։ 1920—30-ական թթ. Եղիշե Չարենցի, Դեմիրճյանի հետ միասին հանդես են գալիս մի շարք տաղանդավոր բանաստեղծներ և արձակագիրներ (Գ. Մահարի, Գ. Սարյան, Ն. Զարյան, Ա. Բակունց, Ստ. Զորյան, Հր. Քոչար, Գ. Սևունց և ուրիշներ)։ 1936 թ. ընդմիշտ խորհրդային Հայաստան վերադարձավ հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը։ Զարգացավ գեղանկարչությունը (Մ. Սարյան, Ստ. Աղաջանյան, Ե. Թադևոսյան, Հ. Կոջոյան և ուրիշներ), քանդակագործությունը (Ա. Սարգսյան, Ս. Ստեփանյան), երաժշտությունը (Ալ. Սպենդիարյան, Ն. Տիգրանյան, Ս. Տիգրանյան, Ռ. Մելիքյան, Ա. Տեր-Ղևոնդյան և ուրիշներ)։ 1922 թ. հիմնադրվեց հայ նորագույն շրջանի թատրոնի առաջին օջախը՝ Սունդուկյանի անվան պետական

դրամատիկական թատրոնը, որտեղ իրենց գործունեությունը ծավալեցին խորհրդահայ բեմի մեծահռչակ վարպետները (Հ. Աբելյան, Հասմիկ, Ա. Ոսկանյան, Մ. Մանվելյան, Վ. Փափազյան, ապա՝ Հ. Ներսիսյան, Ա. Ավետիսյան, Վ. Վաղարշյան և ուրիշներ)։

Հայ երաժշտության և օպերայի կուլտուրայի զարգացման բնագավառում անգնահատելի ծառայություն ունի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնը, որի բեմն առաջին անգամ բացվեց 1933 թ.։ 1924 թ. հիմնադրվեց հայ կինեմատոգրաֆիան։ Նրա նկարահանած կինոնկարները («Նամուս», «Զարե», «Զար ոգի», «Պեպո», «Զանգեզուր» և այլն) լայն ճանաչում են գտել հանրապետությունում և նրա սահմաններից դուրս։

Հայ ճարտարապետության զարգացման, նրա անցյալի կոթողների ուսումնասիրության բնագավառում անգնահատելի ծառայություն են մատուցում Ա. Թամանյանն (1885—1936) ու Թ. Թորամանյանը (1864—1934)։

Այնպես որ խորհրդային Հայաստանն իր գոյության առաջին 20-ամյակում դարձել էր ինդուստրիալ-ագրարային երկիր և մշակույթի ճանաչված օրրան։

1941 թ. հունիսի 22-ին հիտլերյան Գերմանիան ուխտադրժորեն հարձակվեց մեր հայրենիքի վրա։ Մոտ չորս տարի խորհրդային ժողովուրդը մարտնչեց ահեղ թշնամու դեմ։ Խորհրդային ողջ ժողովրդի հետ միասին Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում հերոսություն ու արիություն ցուցաբերեցին նաև բյուրավոր հայ զինվորներ, հրամանատարներ ու զորավարներ։ Խորհրդային բանակ մեկնեցին տասնյակ հազարավոր հայ կամավորներ։ Ապահովվեց հանրապետության տնտեսության՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի անխափան աշխատանքը՝ ռազմաճակատ մեկնածներին փոխարինեցին կանայք, ծերունիներն ու պատանիները։ Ռազմաճակատում փառաբանվեցին տասնյակ հայ զորավարներ՝ մարշալներ Հ. Բաղրամյան, Հ. Բաբաջանյան, նավատորմի ծովակալ Հ. Իսակով, ավիացիայի մարշալ Ա. Խամփերյանց (Խոդյակով), Խորհրդային Միության կրկնակի հերոս Ն. Ստեփանյան, գեներալներ՝ Մ. Բարսեղով, Բ. Առուշանյան, Ք. Ալավերդյան, Հ. Գալստյան, Ն. Սաֆարյան, Ս. Մարտիրոսյան, Ս. Կարապետյան, Ա. Կարապետյան, Ա. Ղազարյան, Գ. Մալխասյան և ուրիշներ։ Հերոսի կոչում ստացան տասնյակ հայ զինվորներ ու հրամանատարներ։ Հայրենական պատերազմի տարեգրության մեջ ոսկե տառերով գրվեց Հունան Ավետիսյանի սխրանքը։ Խորհրդային Միության շքանշաններով պարգևատրվեցին տասնյակ հազարավոր հայ մարտիկներ։

Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները վերակառուցվեցին. դրանք սկսեցին զենք ու ռազմամթերք տալ ռազմաճակատին, ավելացվեց ռազմական հումքի արտադրությունը (պղինձ, կաուչուկ և այլն), կառուցվեցին զանազան նշանակության գործարաններ, որոշ չափով զարգացան մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունը։ Չխախտվեց նաև գյուղատնտեսական աշխատանքների ռիթմը։ Մեծ զրկանքների գնով գյուղի աշխատավորները՝ ծերունիները, կանայք ու պատանիները կարողացան կատարել պետական մթերումների պլանները և անձնվիրաբար օգնել ռազմաճակատին։ Իրենց բնականոն ընթացքը շարունակեցին հանրակրթական, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն դպրոցները, ստեղծվեցին նոր բուհեր (Երևանում ռուսական մանկավարժական, ֆիզիկական կուլտուրայի, գեղարվեստաթատերական ինստիտուտները, իսկ Լենինականում՝ հայկական մանկավարժական ինստիտուտը)։ Պատերազմի ահեղ օրերին ԽՍՀՄ կառավարության հատուկ որոշմամբ ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի հիման վրա Երևանում ստեղծվեց (1943 թ. նոյեմբերին) ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիան, որի գիտնականները հսկայական ներդրումներ կատարեցին գիտության զարգացման և երկրի պաշտպանության բնագավառներում։ Զգալի աշխատանքներ կատարվեցին նաև մշակույթի այլ մարզերում։ Հայրենական մեծ պատերազմին իրենց օգնությունն ու օժանդակությունը ցույց տվեցին նաև ռուսաստանահայ հազարավոր աշխատավորներ ու առաջադեմ ներկայացուցիչներ։

1945 թ. մայիսի 9-ին ֆաշիստական Գերմանիան անձնատուր եղավ։ Նուտով չախչախվեց նաև միլիտարիստական Ճապոնիան։ Խորհրդային Միությունը պատմական մեծ հաղթանակից հետո թևակոխեց սոցիալական, տնտեսական ու մշակութային զարգացման նոր շրջանը։ Ամբողջ երկրի հետ միասին զարգացման նոր փուլ սկսվեց նաև մեր հանրապետությունում։ Հետպատերազմյան շուրջ 40 տարիների ընթացքում բուռն թափով զարգացան արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, մշակութային կյանքը։ 1948 թ. հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքը գերազանցեց 1940 թ. մակարդակը, վերականգնվեց խաղաղ ժամանակներին համապատասխանող արդյունաբերական ճյուղերի համամասնությունը։ Չորրորդ հնգամյակի ընթացքում հանրապետությունում կառուցվեցին մի քանի տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ՝ էլեկտրամեքենաշինական, կաբելի, ալյումինի,

ավտոդողերի, հեծանվի գործարաններ, սննդի ու թեթև արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ, իսկ 5-րդ հնգամյակում (1951—1955 թթ.)՝ խորհրդային Հայաստանում գործարկվեցին մոտ 50 նոր գործարաններ՝ էլեկտրալամպերի, ավտոպահեստամասերի, սննդարդյունաբերության, մետալուրգիական, մեքենաշինական, քիմիական խոշոր ձեռնարկություններ։ Հանրապետության արդյունաբերության առաջատար ճյուղեր դարձան մեքենաշինությունը, գունավոր մետալուրգիան և քիմիական արդյունաբերությունը։ Երևանից բացի արդյունաբերական կենտրոններ դարձան Լենինականը, Կիրովականը, Ղափանը, Ալավերդին, Հրազդանը, Արթիկը և այլ քաղաքներ։ Խորհրդային Հայաստանի արդյունաբերության բուռն զարգացումը շարունակվում է։ 1959—1980 թթ. ընթացքում հանրապետությունում գործարկվել են հարյուրավոր ձեռնարկություններ ու արտադրամասեր։ Միայն 1965—1970 թվականներին հանրապետությունում բոլոր էլեկտրակայանների հզորությունը ավելացավ ավելի քան մեկ և կես անգամ՝ 995 հազար կիլովատից հասնելով ավելի քան 1500 հազար կիլովատի։ Մեքենաշինությունը դարձավ հանրապետության արդյունաբերության առաջատար ճյուղ։ Այժմ նրա մեքենաշինական ձեռնարկությունների թիվը հասնում է մոտ 145-ի։ Հայաստանի արդյունաբերական տասնյակ տեսակի արտադրանքները՝ էլեկտրաշարժիչները, շարժական էլեկտրակայանները, մետաղահատ մեքենաները, ճշգրիտ սարքերը, ջրհան պոմպերը, ժամացույցները, կաբելները ու էլեկտրալամպերը և մետալուրգիական արտադրանքները հայտնի են ամբողջ երկրով մեկ, իսկ դրանցից շատերը արտահանվում են արտասահմանյան տասնյակ երկրներ։ 60-ական թվականներից հիմք դրվեց ավտոմոբիլաշինությանը, սկսեցին զարգանալ սարքաշինությունը, էլեկտրոնիկան, ռադիոտեխնիկան։ Լայն թափով զարգացավ շինանյութերի արդյունաբերությունը։ Հանրապետությունում առաջացան արդյունաբերական նոր կենտրոններ (Աբովյան, Զարենցավան, Կամո, Գորիս, Իջևան, Քաջարան, Ճգարակ, Ապարան, Ստեփանավան և այլն)։ 9-րդ հնգամյակի սկզբում խորհրդային Հայաստանում կար արդյունաբերական 700 ձեռնարկություն։ Այժմ հանրապետության տնտեսության համախառն արտադրանքի ավելի քան 63 տոկոսը բաժին է ընկնում արդյունաբերությանը։ Խորհրդային Հայաստանի արդյունաբերության հետագա զարգացման համար նոր հորիզոններ բացվեցին 10 և 11-րդ հնգամյակների ընթացքում։ 1976—1985 թթ. շարք են մտել մեկ տասնյակից ավելի արդյունաբերական նոր ձեռնարկություններ, սկսեցին լրիվ օգտագործել գոյություն ունեցող ձեռնարկությունների հզորությունները, ստեղծվեցին

նոր, խոշոր արտադրամասեր, վերակառուցվեցին և վերաշինվեցին տասնյակ գործարաններ, վերացվեցին օդը, ջուրը և միջավայրը կեղտոտող մի քանի արտադրամասեր, միջոցներ ձեռնարկվեցին թունավոր գազերի, առողջապահության համար վտանգավոր թափոնների ու կեղտաջրերի օգտագործման ու վնասազերծման ուղղությամբ։ Ավելի ընդլայնվեց հանրապետության արդյունաբերության աշխարհագրության շրջանակները։

Հսկայական աշխատանքներ են կատարվել ճանապարհաշինության և կապի բնագավառում։ Նախախորհրդային շրջանում ներկայիս խորհրդային Հայաստանի տարածքով անցնում էին միայն Թիֆլիս—Երևան ու Երևան—Բաշնորաշեն երկաթուղիները, մի քանի սայլային ճանապարհներ (Երևան-Ալեքսանդրապոլ, Երևան—Ելենովկա—Աղստաֆա, Երևան—Ապարան—Ղարաքիլիսա և այլն) և Հայաստանը Ռուսաստանի հետ միացնող մի հեռախոսագիծ։ Տնտեսության մյուս ճյուղերի հետ զուգընթաց խորհրդային տարիներին կառուցվեցին մի քանի նոր երկաթուղիներ (Մինջևան—Ղափան, Արթիկ—Լենինական, Երևան—Սևան, Աղստաֆա—Իջևան, Սևան—Զոդ, Երևան—Նուռնուս)։ 1975 թ. վերջերին հանրապետության երկաթուղիների ընդհանուր երկարությունը հասնում էր շուրջ 800 կմ-ի։ Անցած տասնամյակների ընթացքում հանրապետության տարածքը ծածկվել է ժամանակակից խճուղիների բավական խիտ ցանցով։ Հայաստանի գրեթե բոլոր բնակավայրերը շրջկենտրոնների հետ կապված են ավտոմոբիլային ճանապարհներով։ Առանձնապես հայտնի են Երևան-Երասխավան-Եղեգնաձոր-Սիսիան-Գորիս-Ղափան, Երևան—Սևան-Իջևան-Ղազախ, Երևան-Էջմիածին-Հոկտեմբերյան-Լենինական, Երևան-Աշտարակ-Թալին-Լենինական և այլ մայրուղիները։ Խորհրդային Հայաստանի շրջկենտրոնների և քաղաքների մեծ մասը օդային գծով կապված է Երևանի հետ, իսկ վերջինս օդային հաղորդակցություն ունի Միության բազմաթիվ քաղաքների, Մերձավոր Արևելքի և Եվրոպայի մի քանի երկրների հետ։

60-ական թվականներից ամբողջ երկրի հետ միասին մեր հանրապետությունում ևս արմատական միջոցներ ձեռնարկվեցին գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ։ Այդ տարիներին ստեղծվեցին մի շարք ոռոգիչ ջրանցքներ (Արզնի-Շամիրամի, Նոյեմբերյանի և այլն), ջրամբարներ (Ապարանի, Մանթաշի և այլն) և ջրհան կայաններ (Մրջանի, Եղեգնաձորի և այլն)։ 1970 թ. հանրապետության ոռոգվող հողատարածությունը հասավ 255 հազար հեկտարի, որը 1920 թ. համե-

մատությամբ չորս անգամ ավելի է, իսկ 1980-ին 360 հազարի է հասել։ Այդ նույն թվականին խորհրդային Հայաստանի գյուղատնտեսության մեջ աշխատում էին մոտ 10 հազար տրակտոր, 1750 կոմբայն, 9 հազարից ավելի ավտոմոբիլներ։ Ներկայումս գյուղատնտեսությունը զարգանում է ավելի արագ թափով։

Տնտեսական կյանքի արագընթաց զարգացմանը համաքայլ առաջադիմել է նաև հանրապետության մշակույթը՝ հանրակրթական դպրոցը, բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթության գործը, գիտությունը, արվեստը։

Հետպատերազմյան տասնամյակներում մեծապես առաջադիմեց ժողովրդական կրթությունը։ 50-ական թվականների վերջերից հանրակրթական դպրոցն ավելի ամուր կապվեց կյանքի, արտադրության հետ։ Դպրոցական ծրագրերում մտցվեցին մի շարք գործնական ու մասնագիտական առարկաներ։ Դպրոցական կյանքն էլ ավելի արմատական փոփոխություններ է կրում նոր ռեֆորմով։

1970 թ. հանրապետության հանրակրթական դպրոցների թիվը անցնում էր 1500-ից, որոնցում սովորում էին ավելի քան 630 հազար աշակերտներ։ Այժմ հանրապետության յուրաքանչյուր երեք բնակչից մեկը սովորում է դպրոցում, իսկ ընդհանրապես բոլոր կարգի ուսումնական հաստատություններում սովորողների թիվը 1980 թ. հասնում էր շուրջ մեկ միլիոնի։

Արմատական փոփոխություններ տեղի ունեցան բարձրագույն դպրոցի կյանքում։ Ընդլայնվեց բարձրագույն դպրոցների նյութատեխնիկական բազան, դրանք ապահովվեցին ժամանակակից լաբորատոր սարքավորումներով, հարմարավետ ուսումնական ու հանրակացարանային շենքերով, փորձակայաններով ու փորձադաշտերով։ Բացվեցին նոր ֆակուլտետներ ու բաժիններ, որոնք անմիջապես կապված են ժամանակակից տեխնիկայի ու տնտեսական զարգացման հետ (էլեկտրոնիկա, կիբեռնետիկա, կիրառական մաթեմատիկա, ավտոմատիկա, ռադիոֆիզիկա և այլն)։ 1973 թ. հանրապետությունն ուներ 12 բուհ, ավելի քան 53 հազար ուսանողներով, 60 տեխնիկում՝ 51 հազար սովորողներով, պրոֆտեխնիկական տասնյակ ուսումնարաններ՝ ավելի քան 22 հազար սովորողներով։ 1975-ին բացվեց մի նոր բուհ՝ ժողովրդական տնտեսության ինստիտուտը, որը կադրեր է պատրաստում տասնյակ մասնագիտությունների գծով։ Բարձրագույն դպրոցի կյանքում մեծ փոփոխություններ են տեղի ունենալու նոր ռեֆորմով։

Գիտության զարգացումը խորհրդային Հայաստանում նոր փուլ

թևակոխեց հանրապետության Գիտությունների ակադեմիայի հիմնադրմամբ։ Հայ գիտնականները հիշատակության արժանի գործեր են կատարել ֆիզիկամաթեմատիկական, քիմիական, երկրաբանական, կենսաբանական, հայագիտական և այլ գիտությունների բնագավառում։ Համաշխարհային ճանաչում են գտել աստղաֆիզիկայի գծով կատարվող ուսումնասիրությունները ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի գլխավորությամբ։ Կիրառական խոշոր նշանակություն ունեն ֆիզիկայի (էլեկտրոնային արագացուցիչի հիմունքների մշակում, ռադիոֆիզիկա, կարծր մարմինների ֆիզիկա, օպտիկա և այլն), մաթեմատիկայի (տեսական ու կիրառական մաթեմատիկա, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ստեղծում), մեխանիկայի, տեխնիկական ու քիմիական գիտությունների, երկրաբանության, կենսաբանության, բժշկական գիտության տարբեր բնագավառներում կատարված ուսումնասիրությունները։ Տեսական և գործնական նշանակություն ունեն մասնավորապես մաթեմատիկոսներ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Շահինյանի, Մ. Ջրբաշյանի, Ս. Մերգելյանի, ակադեմիկոս-մեխանիկներ Ն. Հարությունյանի, Ս. Համբարձումյանի, ակադեմիկոս-քիմիկոս Ա. Մնջոյանի, Ա. Նալբանդյանի, Ա. Բաբայանի, ակադեմիկոս-երկրաբաններ Կ. Զայլախյանի, Ա. Թախտաջյանի, Գ. Դավթյանի, Վ. Ղազարյանի, բժշկական գիտությունների ակադեմիկոս ներկայացուցիչներ՝ ակադեմիկոսներ Լ. Հովհաննիսյանի, Ե. Կոջոյանցի, Է. Հասրաթյանի, Հ. Բունիաթյանի և այլոց հետազոտությունները։

Մնայուն շատ գործեր են ստեղծվել հայ ժողովրդի պատմության, հնագիտության, գրականագիտության ու լեզվաբանության, իրավագիտության, տնտեսագիտության, փիլիսոփայության, արվեստագիտության, աշխարհագրության և այլ բնագավառներում։ Առանձնապես նշելի են պատմաբան-ակադեմիկոսներ Աշ. Հովհաննիսյանի, Աբ. Հովհաննիսյանի, Մ. Ներսիսյանի, Ս. Աղայանի, հնագետ ակադեմիկոս Բ. Առաքելյանի, լեզվաբան-ակադեմիկոսներ Ա. Ղարիբյանի, Գ. Սևակի, Գ. Ջահուկյանի, Է. Աղայանի և ուրիշների ուսումնասիրությունների արդյունքները։ ՀԽՍՀ ԳԱ պատմության և գրականության ինստիտուտները ստեղծել են մեր ժողովրդի բազմադարյան պատմությունն ու գրականությունն ամփոփող բազմահատոր աշխատություններ, որոնք զգալի ներդրում են հայագիտության բնագավառում։

Հայրենական մեծ պատերազմին հաջորդած տասնամյակներում հսկայական զարգացում են ունեցել նաև հայ գրականությունը, արվեստը, պոեզիան (Ն. Զարյան, Գ. Սարյան, Հ. Շիրազ, Գ. Սևակ, Հ. Սահյան, Հր. Հովհաննիսյան, Ս. Կապուտիկյան, Գ. Էմին, Վ. Դավ[illegible]ան և

ուրիշներ), արձակը (Ստ. Զորյան, Հր. Քոչար, Ս. Խանզադյան, Հ. Մաթևոսյան և այլք), գեղանկարչությունը (Մ. Սարյան, Մ. Աբեղյան, Հ. Զարդարյան, Գ. Խանջյան, Մ. Ավետիսյան), քանդակագործությունը (Ե. Քոչար, Ղ. Զուբարյան, Ս. Բաղդասարյան և ուրիշներ), երաժշտությունը (Առնո Բաբաջանյան, Ալ. Հարությունյան, Էդ. Միրզոյան, Էդ. Հովհաննիսյան, Հ. Հակոբյան, Հ. Շարամբեյան և ուրիշներ), կատարողական արվեստը (Գ. Գասպարյան, Զ. Դոլուխանյան, Լ. Զաքարյան, հայկական երգի ու պարի անսամբլ, երգչախումբ, Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոն և այլն), կինոարվեստը, ճարտարապետությունը (Ս. Սաֆարյան, Հ. Մարգարյան, Մ. Մազմանյան, Մ. Գրիգորյան, Ռ. Իսրայելյան, Է. Սարափյան, Զ. Թորոսյան և ուրիշներ)։

Այսպիսով, Խորհրդային Հայաստանը Խորհրդային Միության մեծ ընտանիքում դարձել է զարգացած արդյունաբերական երկիր, մեքենայացված ու անընդհատ առաջադիմող գյուղատնտեսությամբ, գիտության ու արվեստի կենտրոն։

2. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ

ՀԽՍՀ-ի գրաված տարածքում 1897 թ. մարդահամարի տվյալներով ապրում էր 798 հազար մարդ, 1913 թ. տվյալներով՝ մեկ միլիոն։ Սակայն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և Հայկական հանրապետության կարճատև շրջանում սովի, համաճարակների, բռնությունների ու կոտորածների հետևանքով՝ 5—6 տարվա ընթացքում երկրի բնակչության թիվը կրճատվում է ավելի քան 28 տոկոսով՝ Խորհրդային կարգերի հաստատման պահին (1920 թ.) կազմելով ընդամենը 720 հազար մարդ։

Խորհրդային ժամանակաշրջանում տնտեսական կյանքի բուռն զարգացումը, իսկ 1/I 1985 թ. տվյալներով՝ մոտ 3,5 միլիոնի։ Այլ կերպ ասած, 65 տարվա ընթացքում (1920—1985 թթ.) հանրապետության բնակչության թիվն աճել է ավելի քան չորս անգամ։ Դա զգալի չափով բարձր է Միության բնակչության ընդհանուր աճի տեմպերից։ Հայրենական մեծ պատերազմում Խորհրդային Միությունը տվեց միլիոնավոր զոհեր։ Պատերազմը մեր ժողովրդից նույնպես խլեց մեծ թվով զոհեր, որն անշուշտ իր ազդեցությունն է թողել նրա բնական աճի վրա։

Խորհրդային Հայաստանի բնակչության աճի աղբյուրը բնական աճից և Խորհրդային Միության մյուս հանրապետություններից եկող հարյուրավոր բնակիչներից բացի հայրենադարձությունն է։ Մոտ 200 հազարի է հասնում խորհրդային ժամանակաշրջանում Եգիպտոսից, Հունաստանից, Ֆրանսիայից, Լիբանանից, Սիրիայից, Իրանից և այլ երկրներից Խորհրդային Հայաստան ներգաղթած հայերի թիվը։ Ներգաղթողները ապահովվել են բնակարաններով, աշխատանքով և, որպես համահավասար քաղաքացիներ, մասնակցում են մեր հանրապետության ու ամբողջ երկրի տնտեսության, մշակութային կյանքի առաջադիմությանը։ Ներգաղթողները բնակեցվել են ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում։ Նրանք հաճախ բնակեցվել են առանձին զանգվածներով և ստեղծել են իրենց ավաններն ու գյուղերը, որոնք հիմնականում կրում են Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայկական պատմական քաղաքների, շրջանների կամ գավառների անունները (Նոր Մարաթիա, Նոր Զեյթուն, Նոր Արաբկիր և այլն)։

Բավական մեծ թիվ են կազմում նաև ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից Խորհրդային Հայաստանում վերաբնակվողները։ Այսպես, ԽՍՀՄ տարբեր մասերից հանրապետության քաղաքային բնակավայրեր են եկել 1970 թ. 24225 մարդ, 1971 թ.՝ 23580 և այլն։ Իսկ հանրապետությունից դուրս գնացողների թիվն ավելի փոքր է։ Այդ տարիներին ՀԽՍՀ քաղաքային բնակավայրերի բնակչության տարեկան մեխանիկական աճը կազմել է ավելի քան 23 հազար մարդ, որի մոտավորապես կեսը կազմում են հանրապետության գյուղական վայրերից եկածները։

Խորհրդային Հայաստանի բնակչության բնական աճը բավական մեծ է։ Սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման և ընդհանուր առաջադիմության շնորհիվ մեծ է բնակչության ծննդաբերությունը։ 1971 թ. հանրապետությունում յուրաքանչյուր 1000 մարդուն ընկնող բնակչության բնական աճը կազմել է 17,7 մարդ, զգալի չափով գերազանցելով ԽՍՀՄ բնակչության բնական աճին (9,6 մարդ)։ Այդ նույն տարում Ավստրիայի բնակչության բնական աճը կազմել է 1,5 մարդ, Անգլիայինը՝ 4,6, Բելգիայինը՝ 2,1, ԳՖՀ-ը՝ 1,1 մարդ և այլն։

Հայկական ԽՍՀ բնակչության ավելի քան 88 տոկոսը կազմում են հայերը, որոնց թիվը հասնում է ավելի քան 2 միլիոն 500 հազարի։ Այստեղ ապրում են նաև ռուսներ, քրդեր, ադրբեջանցիներ, ուկրաինացիներ և այլ ժողովուրդներ։ Բնակչության ընդհանուր թվով մեր հանրապետությունը ԽՍՀՄ միութենական 15 հանրապետությունների մեջ գրավում է 12-րդ տեղը։ ՀԽՍՀ-ն ԽՍՀՄ-ի ամենախիտ բնակեցված հանրա-

պետություններից է, յուրաքանչյուր 1 քառ. կմ տարածքին բաժին է ընկնում ավելի քան 100 մարդ։ Բնակչության խտությամբ մեր հանրապետությունը Միությունում գրավում է երկրորդ տեղը՝ Մոլդավական ԽՍՀ-ից հետո։ Խորհրդային Հայաստանի ամենախիտ բնակեցված շրջանները Արարատյան և Շիրակի դաշտերն են, որոնք ոչ միայն քաղաքաշատ են, այլև ամենազարգացած գյուղատնտեսական շրջաններն են։

Կյանքի միջին տևողությունը բավական բարձր է՝ 73 տարի։

Երկրի և հանրապետության հասարակական-տնտեսական կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխությունների հետևանքով մեծ փոփոխություններ են կատարվել նաև բնակչության դասակարգային կառուցվածքում։ Այսպես, եթե 1939 թ. բանվորներն ու ծառայողները (իրենց ընտանիքի անդամների հետ միասին) կազմում էին ամբողջ բնակչության 32,2 տոկոսը, ապա 1970 թ.՝ 82,3 տոկոս։

Հանրապետությունում գոյություն ունեն տարբեր մեծության ու բնույթի բնակավայրեր՝ հանրապետության ենթակայության քաղաքներ, շրջանային ենթակայության քաղաքներ, քաղաքատիպ ավաններ, բանվորական ավաններ, գյուղեր, զանազան կայաններին, ձեռնարկություններին ու տնտեսություններին կից ավաններ, ժամանակավոր բնակավայրեր։

Արդյունաբերության, տրանսպորտի, գիտության ու մշակույթի զարգացման շնորհիվ աննախընթաց վերելք է ապրել քաղաքային կյանքը, և բնակչության ընդհանուր կազմում կտրուկ կերպով աճել է քաղաքային բնակչության թիվը։ 1970 թ. մարդահամարի տվյալներով քաղաքային բնակչությունը կազմում էր ամբողջ բնակչության 59,5 տոկոսը (1913 թ. 10,4 տոկոս, 1939 թ.՝ 28,6 տոկոս), 1985-ին՝ 63 տոկոս։ Քաղաքային կյանքն առանձնապես բուռն զարգացում է ունեցել Հայրենական մեծ պատերազմից հետո։ Եթե 1946 թվականին հանրապետությունն ուներ ընդամենը 12 քաղաք, որից միայն 2-ը հանրապետական ենթակայության և 10 քաղաքատիպ ավան, ապա 1985 թ. սկզբներին դրանց թիվը հասավ 26-ի (որից 21-ը հանրապետական ենթակայության քաղաքներ են), իսկ քաղաքատիպ ավաններինը՝ 33-ի։

Հանրապետական ենթակայության քաղաքների բնակչության թիվը խիստ կերպով աճել է հատկապես 1939 թվականից հետո։ Դրանց մեծագույն մասը (Արթիկ, Աբարան, Սևան, Ջերմուկ, Իջևան, Սպիտակ, Աշտարակ, Ալավերդի, Հրազդան, Դափան, Կիրովական և այլն) ստեղծել կամ իրեն քաղաք ձևավորվել են խորհրդային տարիներին։ Խորհրդային Հայաստանի քաղաքները կառուցվում են ժամանակակից քաղաքաշինության համապատասխան։ Դրանք բոլորն էլ (մանավանդ մայրաքաղաք Երևանը և Լենինական ու Կիրովական քաղաքները) ունեն ճարտարապետական սքանչելի անսամբլներ, լայն պողոտաներ ու փողոցներ, դպրոցական ու վարչական, հիվանդանոցային ու բնակելի հարմարավետ շենքեր, կինոթատրոններ, մշակույթի պալատներ, գրադարաններ, մարզադաշտեր, շրմուղ-կոյուղի, կանաչ ու ջրային տարածություններ, հանգստավայրեր և այլն։

Հանրապետության քաղաքային մյուս կարգի բնակավայրերի թվին են պատկանում շրջանային ենթակայության Սիսիան, Քաջարան, Մեղրի ու Ծաղկաձոր քաղաքները և 33-ի հասնող քաղաքատիպ ավանները (Ագարակ, Վայք, Արզնի, Անի—Պեմզա, Ախթալա, Բերդ, Դաստակերտ, Կրասնոսելսկ, Նոյեմբերյան, Պեմզաշեն և այլն), որոնք նույնպես բարեկարգ ու խոշոր բնակավայրեր են և հիմնականում ծնունդ են խորհրդային ժամանակաշրջանի։

Հանրապետական ենթակայության քաղաքների բնակչության թիվը, 1897—1985 թթ. անել է նեռելյալ տեմպերով (առաջնայնված հազ.-ով)

	1897	1926	1939	1959	1970	1/I 1985
Աբովյան	—	—	—	2,30	18,70	48,70
Ալավերդի	—	2,1	10,00	17,36	22,12	24,90
Աշտարակ	3,57	—	—	7,56	12,14	19,00
Արարատ	—	—	2,38	5,41	8,55	17,00
Արթիկ	—	—	5,76	9,07	13,82	19,00
Արտաշատ	—	2,50	4,15	7,28	13,92	20,800
Գորիս	—	2,69	—	10,38	14,71	20,00
Դիլիջան	—	6,64	5,20	15,85	20,96	28,90
Երևան	29,00	64,61	204,21	493,50	767,81	1118,0
Էջմիածին	—	8,44	9,78	19,70	31,82	50,70
Իջևան	—	2,26	—	7,64	13,62	17,20
Լենինական	30,62	42,31	67,73	108,45	164,24	223,30
Կապան	—	8,45	8,45	14,99	19,97	26,90
Կիրովական	—	8,64	17,61	49,42	106,70	164,80
Հոկտեմբերյան	—	0,53	3,41	14,93	25,97	35,00
Հրազդան	—	—	—	7,77	26,88	51,90
Ղափան	—	1,51	8,51	19,32	30,04	37,70
Չարենցավան	—	—	—	—	—	29,70
Ջերմուկ	—	—	—	2,62	4,25	7,50
Սևան	—	1,03	2,67	6,42	12,35	24,40
Սպիտակ	—	—	—	8,67	11,91	17,00
Ստեփանավան	—	4,97	6,06	9,80	13,52	19,00

Խորհրդային ժամանակաշրջանում միանգամայն նոր տեսք են ստացել նաև գյուղերը. երբեմնի խարխուլ քսենոփոբյան խրճիթներով հետամնաց գյուղերը խորհրդային տարիներին արմատապես վերակառուցվել են։ Ավելի ճիշտ՝ նոր են կառուցվել և իրենց արտաքին տեսքով, տների դասավորությամբ ու կառուցվածքով գրեթե ոչնչով չեն տարբերվում քաղաքատիպ բնակավայրերից։ Խորհրդային Հայաստանի արդի գյուղերի տները քարաշեղեր են (մեծ մասամբ տուֆաշեն), մեկուկես, երկու հարկանի, հարմարավետ, բաղկացած մի քանի սենյակներից ու օժանդակ հարմարություններից, ունեն խմելու առաջնակարգ ջուր, թաղված են

մրգատու և դեկորատիվ ծառերի մեջ։ Բոլոր գյուղերը էլեկտրական լուսավորություն են ստացել տասնվեցին 40-ական թվականների երկրորդ կեսին, օգտվում են հեղուկ (կամ բնական) այրվող գազից, ունեն հեռախոսային կապ, ռադիո, մշտական կինոթատրոն, մշակույթի տներ, գրադարաններ, հիվանդանոց կամ բուժկետ, բաղնիք, խանութներ, հեռուստացույց և ավտոմոբիլային ճանապարհներով կապված են շրջկենտրոնների հետ։ Գյուղերում ստեղծված են հարյուրավոր աղբյուր-հուշարձաններ, հուշասյուներ, հուշարձաններ, որոնց մեծ մասը նվիրված է 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին։

Խորհրդային տարիներին արմատապես փոխվել է բնակչության կրթական մակարդակը։ Ինչպես ասվեց, 30-ական թվականների սկզբներին մեր հանրապետությունն արդեն համատարած գրագիտության երկիր էր։ Բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցողների թիվը 1970 թ. հասնում էր 382 հազարի, 10 և ավելի տարեկան յուրաքանչյուր 1000 մարդուց 516-ը ուներ բարձրագույն կամ միջնակարգ կրթություն, այս տեսակետից Միության մեջ գրավելով ամենաառաջնակարգ տեղերից մեկը։

Իր անցյալի բազմաթիվ ճարտարապետական կոթողների, բնական գեղեցիկ տեսարժան վայրերի, ժամանակակից ծաղկող քաղաքների և մյուս բարեփոխված բնակավայրերի, բարեկարգ ճանապարհների և հյուրանոցային տնտեսության շնորհիվ խորհրդային Հայաստանը դարձել է Միության տուրիստական հանրապետություններից մեկը։ Ներկայումս այն ունի միջազգային 2, համամիութենական 16 և տեղական 47 տուրիստական երթուղիներ։ Կիրովականում, Դիլիջանում, Իջևանում, Ղափանում, Գորիսում, Սևանում, Թումանյանում և այլուր ստեղծված են տուրիստական հանգրվաններ, բազմաթիվ զբոսաշրջիկներ կարող են ընդունել Երևանի «Նաիրի», Ստեփանավանի «Լալվար» տուրիստական հյուրանոցները։ Շարք են մտել Երևանի «Էրեբունի» տուրիստական հյուրանոցն իր օժանդակ հարմարություններով, Սևանի 1000 տեղանոց տուրիստական նոր հանգրվանը, Իջևանի 300 տեղանոց «Աղստև» տուրիստական հյուրանոցը, Ջերմուկի, Ծաղկաձորի հանգրվանները, Երևանի 500 տեղանոց ավտոքեմպինգը և այլն։

3. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Ադրբեջանում (1920 թ.), Հայաստանում (1920 թ.) և Վրաստանում (1921 թ.) խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ստեղծվեց այդ երեք հանրապետություններից բաղկացած Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն։ Խորհրդային Հայաստանը իբրև այդ ֆեդերացիայի համահավասար անդամ մնաց 1922 թ. մարտի 12-ից մինչև ԽՍՀՄ նոր Սահմանադրության ընդունումը՝ 1936 թ. դեկտեմբերի 5-ը, երբ այն ֆեդերացիայի մյուս անդամների՝ Ադրբեջանի ու Խորհրդային Վրաստանի նման իբրև ինքնուրույն միութենական հանրապետություն մտավ ԽՍՀՄ-ի կազմի մեջ։

ՀԽՍՀ տարածքը 29800 քառ. կմ է, բնակչությունը՝ 3,5 մլն մարդ (1/1.1985 թ.), մայրաքաղաքը Երևանն է։

Այն Խորհրդային Միության 15 իրավահավասար հանրապետություններից մեկն է։ Գտնվում է ԽՍՀՄ հարավ-արևմուտքում՝ իր մեջ ընդգրկելով Արաքսի միջին հոսանքի ձախափնյա մասը և դրան հարակցվող Փոքր Կովկասի կենտրոնական ու հարավային հատվածները։ ՀԽՍՀ-ն սահմանակից է՝ ԽՍՀՄ միութենական հանրապետություններից Վրացական ԽՍՀ-ին (հյուսիսից) և Ադրբեջանական ԽՍՀ-ին (արևելքից ու հարավից), արտասահմանյան երկրներից՝ Թուրքիային (արևմուտքից և հարավ-արևմուտքից) և Իրանին (հարավից)։ ՀԽՍՀ-ն կազմավորվել է նախկին Երևանի նահանգի մեծ մասից և Թբիլիսի ու Ելիզավետպոլի նահանգների որոշ տարածքներից։

Իր գոյության առաջին տասնամյակում ՀԽՍՀ-ն մասնատված էր 9 վարչատարածքային համեմատաբար մեծ միավորների՝ գավառների (Ալավերդու, Ալեքսանդրապոլի (1924 թ. Լենինականի), Նոր Բայազետի, Զանգեզուրի, Երևանի և այլն), որոնք իրենց հերթին բաժանվում էին վարչական շրջանների։ Թե՛ գավառաբաժանման և թե՛ շրջանների մասնատման հիմքում ընկած էին հանրապետության ու նրա առանձին մասերի բնապատմական առանձնահատկությունները, տնտեսական պայմանները, կապի ու հաղորդակցության ճանապարհների վիճակը։ Սակայն այդ «ներկաստիճան» վարչատարածքային բաժանման համակարգը լրացուցիչ դժվարություններ էր ստեղծում շրջանների (մանավանդ հեռավոր ու բավական մեկուսացված շրջանների) վարչական ու կուսակցական ղեկավարման գործում։ Շրջանի, գյուղի անմիջական ու օպերատիվ ղեկավարման կարիքը խիստ կերպով զգացվեց մանավանդ կոլեկտիվացման շրջանում։ Հիմնականում այդ նպատակով, ինչպես և վարչական ապարատն ու ծախսերը կրճատելու անհրաժեշտությունից ելնելով, 30-ական թվականների սկզբից հանրապետությունում գավառները ու դրանց խորհրդային վարչական օրգանները վերացվեցին և վարչատարածքային առումով հանրապետությունն ուղղակի մասնատվեց շրջանների։ 50-ական թթ. երկրորդ կեսին կարճ ժամանակով ՀԽՍՀ-ում կազմվեցին վարչական ավելի խոշոր 3 միավորներ՝ օկրուգներ, որոնք սակայն շուտով վերացվեցին։ Այնպես որ հանրապետության վարչատարածքային միավորներ մնացին միայն շրջանները, որոնց թիվը ժամանակի ընթացքում կրել է որոշ փոփոխություններ։ Ներկայումս դրանց թիվը 37 է։ Շրջկենտրոններում են գտնվում շրջանային գործադիր կոմիտեները, կուսակցության շրջկոմները և շրջանային մյուս մարմինները, իսկ գյուղերում՝ գյուղական սովետները։

4. ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՎ ՄՅՈՒՍ ՀԻՇԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԸ

Խորհրդային Հայաստանում սփռված են քարեդարյան ժամանակաշրջանից մինչև նոր ժամանակների հարյուրավոր հուշարձաններ՝ բնակավայրերի հետքեր, կիկլոպյան ամրոցներ, ավերված քաղաքներ ու առանձին կառույցներ, տարբեր բնույթի քարակոթողներ, սեպագիր և վիմագիր արձանագրություններ, մեր ժողովրդի պատմության մեջ զգալի դեր խաղացած պատմական վայրեր, խորհրդային ժամանակաշրջանում հայտնի դարձած քաղաքներ, քաղաքատիպ ավաններ, արդյունաբերական կենտրոններ, գյուղական խոշոր բնակավայրեր ու շրջկենտրոններ, միութենական ու հանրապետական կարգի առողջարաններ, հանգստյան տներ ու ճամբարներ, հանքավայրեր և այլն։ Փորձենք դրանցից առավել նշանավորները ընթերցողին ծանոթացնել ըստ հանրապետության բնապատմական ու տնտեսական շրջանների այժմ ընդունված ցանցի։ Անցանկալի կրկնություններից խուսափելու համար իբրև կանոն հին և միջնադարյան հուշարձաններն ըստ նշված տարածքային միավորների միայն կհիշատակվեն, իսկ ժամանակակից քաղաքները կբնութագրվեն աշխատության բնույթին ու ծավալին համապատասխան։

ա. Արարատյան կամ Կենտրոնական շրջան

Հանրապետության ամենաընդարձակ շրջանն է։ Ընդգրկում է Արարատյան դաշտը՝ հարակից նախալեռնային շրջանների հետ միասին։ Ֆա-

բածվում է Ախուրյանի ստորին հոսանքից (արևմուտքում) մինչև Գեղամա լեռները (արևելքում), հյուսիսից սահմանագծվելով Արագած ու Արայի լեռնազանգվածներով, իսկ հարավից՝ Արաքս գետով։ Հանրապետության ամենազարգացած շրջանն է։ Այստեղ են գտնվում խաղողի, ծիրանի ու դեղձի այգիների մեծ մասը, բանջարաբոստանային մշակույթների հիմնական տարածությունները։ Զարգացած է անասնաբուծությունը։ Այստեղ է կենտրոնացած հանրապետության ծանր արդյունաբերության գլխավոր ճյուղերի մեծագույն մասը։ Միայն շրջանի գլխավոր քաղաք (հանրապետության մայրաքաղաք) Երևանը տալիս է Խորհրդային Հայաստանի արդյունաբերական արտադրանքի կեսից ավելին։ Արդյունաբերության զարգացման շնորհիվ այստեղ առաջացել են մի շարք նոր քաղաքներ՝ Հոկտեմբերյան, Արտաշատ, Արարատ, Աշտարակ, Արովյան, Հրազդան, որոնք նախկինում սովորական բնակավայրեր էին։

Արովյանը Խորհրդային Հայաստանի ամենաերիտասարդ քաղաքներից է, Արովյանի վարչական շրջանի կենտրոնը։ Ձևավորվել է նախկին էլար գյուղի տեղում՝ 60-ական թթ. սկզբներին։ Նրա բնակչության թիվը 1959 թ. մարդահամարի տվյալներով հասնում էր 2300-ի, 1970 թ.՝ 18785-ի, իսկ 1/I 1985 թ.՝ 48700 մարդու։ Արովյանն ունի մեքենաշինական մի քանի գործարաններ։ Ժամանակակից քաղաք է՝ փռված գեղատեսիլ սարահարթի վրա։ Հատակագիծը շախմատաձև է, շենքերը բազմահարկ են, տուֆակերտ, փողոցները լայն և ծառազարդ։ Ունի առաջնակարգ կոմունալ պայմաններ, խմելու բարձրորակ ջուր, դպրոցական, առողջապահական ու կուլտուր-լուսավորական հիմնարկների լայն ցանց։ Գտնվում է Երևան—Սևան ավտոմոբիլային մայրուղու վրա, Երևանից ուղիղ գծով 10 կմ հյուսիս, կայարան է նույն ուղղությամբ ձգվող էլեկտրիֆիկացված երկաթուղու վրա։ Փաստորեն նա Երևանի արբանյակ քաղաքներից մեկն է և արտադրական սերտ կապեր ունի մայրաքաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների հետ։ Ունի հետագա զարգացման մեծ հեռանկարներ։

Արովյանի տեղում բնակավայր է եղել հնագույն ժամանակներից։ Այստեղ մինչև մեր օրերը պահպանվել է ուրարտական սեպագիր արձանագրություն, որ վերաբերում է VIII դարին (մ. թ. ա.)։ Քաղաքի տարածքում նշմարվում են III—II հազարամյակներին (մ. թ. ա.) վերաբերող բնակատեղիների և գերեզմանոցի մնացորդներ։ Խարխուլ վիճակում մեզ է հասել նախկին գյուղի սրբատաշ քարերով կառուցված հին եկեղեցին։

Արարատը նույնպես նոր քաղաք է, խորհրդային ժամանակաշրջանի

ծնունդ։ Արարատյան դաշտի արդյունաբերական նշանավոր կենտրոններից է։ Այստեղ է գտնվում հանրապետության առաջին ցեմենտի խոշոր գործարանը, որը գործարկվել է 1933 թ.։ Հետագայում գործարկվեց նաև շիֆերի գործարանը և այդ երկուսի միացմամբ ստեղծվեց այժմյան ցեմենտ-շիֆերի խոշոր կոմբինատը։ Այստեղ կան նաև սննդի ու թեթև արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ։ 1939 թ. մարդահամարի տվյալներով Արարատն ուներ 2329 բնակիչ, 1970 թ.՝ 8554, իսկ 1/1. 1985-ին՝ 17 հազար բնակիչ։ Փոքրիկ, բայց գեղեցիկ ու բարեկարգ քաղաք է։ Ունի հանրակրթական, հեղափոխային, երկարօրյա, ապերտ և երաժշտական դպրոցներ, ինդուստրիալ-տեխնոլոգիական տեխնիկում, կուլտուր-լուսավորական հիմնարկներ։ Փողոցները լայն են, ծառազարդ, շենքերը՝ տուֆակերտ ու մեծ մասամբ բազմահարկ։ Քաղաքն ամբողջապես թաղված է մրգատու այգիների և դեկորատիվ ծառերի կանաչ ծովի մեջ։ Արարատը Երևան—Բաքու երկաթուղու կայարաններից է և բարեկարգ խճուղով կապված է Երևանի հետ։ Նրա արտադրած ցեմենտի մի մասը առաքվում է Միության տարբեր կողմեր։ Այստեղ բխում է հանքային տաք ջուր, որի մոտ աշխատավորության հանգստի համար ստեղծված են համապատասխան պայմաններ՝ սննդի կետեր, լոգանքի ջրավազան, պրոֆիլակտորիում և այլն։ Արարատում (Դավալուում) են ծնվել գյուղագիր Բաբկենը (Գաբրիել Մնացականյան, մահացած 1917-ին), ականավոր տնտեսագետ, Կազանի համալսարանի պրոֆեսոր Ս. Եղիազարովը և ուրիշներ։

Հոկտեմբերյան քաղաքի տեղում մի սովորական բնակավայր էր։ 1926 թ. ուներ 533 բնակիչ, 1939 թ.՝ 3437, 1970 թ.՝ 25966 բնակիչ, իսկ 1/1. 1985-ին՝ 35 հազ. բնակիչ։ Լինելով զարգացած ու մեծ ապրանքայնություն ունեցող գյուղատնտեսական շրջանի կենտրոն՝ այստեղ կառուցվել են կոնյակի, գինու, պահածոների գործարաններ, եթերայուղի արտադրության կոմբինատ, որը նույնպես մշակում է տեղական հումքը՝ խորդենին, ունի հաստոցաշինական գործարան, որն արտադրում է մետաղահատ դաղգահներ, ապակյա տարայի գործարան։ Հոկտեմբերյանի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի մի մասը առաքվում է Միության տարբեր քաղաքներ ու հանրապետություններ։ Արտադրական ու այլ կապերով Երևանի հետ կապված այս քաղաքը նույնպես ունի զարգացման լայն հեռանկարներ։ Քաղաքը փռված է ընդարձակ հարթության վրա և ունի կանոնավոր հատակագիծ։ Հոկտեմբերյանը ծառազարդ է, շենքերի մեծագույն մասը բազմահարկ, կառուցված Արթիկի վարդագույն տուֆից։ Քաղաքն ունի ջրմուղ-կոյուղի, խմելու առաջ-

նակարգ ջուր, առողջապահական ու կուլտուր-լուսավորական հիմնարկների լայն ցանց, մարզադաշտ, մթերային և արդյունաբերական ապրանքների ժամանակակից խանութներ։ Հոկտեմբերյանը Երևան—Թբիլիսի երկաթուղու կայարաններից է։ Երևանի և Լենինականի հետ կապված է նաև ավտոմոբիլային բարեկարգ ճանապարհով։

Բուն Հոկտեմբերյանում առանձին հնություններ ու պատմական հուշարձաններ չկան։ Երկրի երեսից իսպառ վերացել է խանական ծանր լուծը հիշեցնող Սարդարապատի բերդն իր կավակերտ պարսպով ու մյուս կառույցներով։ Սակայն քաղաքից ոչ հեռու 1968 թ. կերտված է Սարդարապատի հերոսամարտին նվիրված (26/5.1918 թ.) հուշարձան-համալիրը՝ իր զբոսայգիով, ռեստորանով և լողավազանով։ Ճարտարապետական ու քանդակագործական առումով միանգամայն ինքնատիպ այդ հուշարձանը կարող է զարդ լինել յուրաքանչյուր խոշոր քաղաքի համար։ Առանձնապես հաջող են ստացվել նրա բարձրաքանդակները, «զանգակատունը» և արծիվների շարքը։ Այստեղ է գտնվում նաև ՀԽՍՀ ազգագրական թանգարանը իր հարուստ ցուցանմուշներով և ինքնատիպ շենքով (ճարտարապետ Ռ. Իսրայելյան)։

Արտաշատ.— Գտնվում է պատմական Արտաշատ մայրաքաղաքի տեղից ոչ հեռու, նախկին Ղամարլու գյուղի տեղում, որ 1945 թ. կոչվեց Արտաշատ։ 1926 թ. այն ուներ 2505, 1939 թ.՝ 4148, 1959 թ.՝ 7277, 1970 թ.՝ 13924, իսկ 1/1.1985-ին՝ 20,8 հազար բնակիչ։ Արտաշատը գտնվում է հանրապետության ամենաշարդացած գյուղատնտեսական շրջաններից մեկում և նրա վարչական կենտրոնն է։ Նախախորհրդային շրջանում այստեղ գինու-կոնյակի փոքր գործարանից բացի արդյունաբերական այլ ձեռնարկություն չկար։ Խորհրդային ժամանակաշրջանում բուռն թափով զարգացել է քաղաքի արդյունաբերությունը։ Քաղաքում այժմ գործում են գինու, պահածոների գործարաններ, մանվածքային ֆաբրիկա, կահույքի ու կենցաղ-սպասարկման կոմբինատներ, մետաղամշակման փորձնական գործարան։ Քաղաքն ամբողջապես թաղված է մրգատու այգիների, դեկորատիվ ծառերի մեջ։ Տների զգալի մասը 3—5 հարկանի է, տուֆակերտ ու հարմարվետ։ Ունի ջրմուղ-կոյուղի և կոմունալ այլ պայմաններ։ Քաղաքն ունի 6 միջնակարգ դպրոց, հիվանդանոց, ժողովրդական թատրոն, կինոթատրոն, երաժշտական դպրոց, 4 գրադարան և մարզադաշտ։ Արտաշատի կոլտնտեսությունն ունի խաղողի և պտղատու ընդարձակ այգիներ, բանջարանոցներ, զարգացած անասնաբուծություն։

1930 թվականից այստեղ հրատարակվում է շրջանային «Արտաշատ» լրագիրը։ Երևան—Բաքու երկաթուղային կայարաններից է։ Ավտոմոբիլային մայրուղով կապված է Երևանի հետ։

Աշտարակ.— Հանրապետական ենթակայության այս քաղաքը Հայաստանի հնագույն բնակավայրերից է և մինչև խորհրդային ժամանակաշրջանը սովորական այգեգործական և երկրագործական գյուղ էր։ Քաղաքի կոչում է տրվել 1963 թ.։ 1897 թ. ուներ 3571, 1959 թ.՝ 7563, 1970 թ.՝ 12137, իսկ 1/1.1985-ին՝ 19 հազար բնակիչ։ Այստեղ գերազանցապես զարգանում է սննդի արդյունաբերությունը։ Խորհրդային տարիներին կառուցվել են գինու և պանրի գործարաններ։ Քաղաքի պետական տնտեսությունն ունի խաղողագործական և պտղագործական ուղղություն։ Եթե մինչև Հայրենական մեծ պատերազմը Աշտարակը ամփոփվում էր միայն Քասախ գետի աջ ափում, ապա այժմ տարածվել է նաև գետի ձախ կողմում՝ գրավելով բավական մեծ տարածք։ Շենքերի մեծ մասը բազմահարկ է ու հարմարավետ՝ կառուցված Արթիկի վարդագույն տուֆով։ Աշտարակը նույնանուն վարչական շրջանի կենտրոնն է։ Ունի գիտահետազոտական հիմնարկներ։ Այստեղ են գտնվում ֆիզիկայի ու էլեկտրոնիկայի և ֆիզիկական երևույթների հետազոտման ինստիտուտները։ Քաղաքն ունի 6 հանրակրթական դպրոց, սպորտ և երաժշտական դպրոցներ։ Այստեղ է գտնվում Պ. Պռոշյանի տուն-թանգարանը։ Աշտարակում են ծնվել նաև Ներսես Աշտարակեցին, Ս. Շահազիզը, ակադեմիկոս Ն. Սիսակյանը, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Գր. Ղափանցյանը և ականավոր այլ անձինք։ Կոմունալ պայմանները ժամանակակից են։ Ունի ջրմուղ-կոյուղի, հյուրանոց, ժողթատրոն, մշակույթի պալատ, գրադարաններ և այլն։ Հնություններով հարուստ է Աշտարակը։ Այստեղ են գտնվում Սպիտակավոր եկեղեցին (V դ.), Կարմրավոր ս. Աստվածածինը (VII դ.), X—XI դարերի բերդի մնացորդներ, Մարինե եկեղեցին (XIII դ.), Քասախի XVII դ. կամուրջը, մահարձաններ, բազմաթիվ խաչքարեր։ Աշտարակը Երևանից գտնվում է 20 կմ հեռավորության վրա և նրա, Էջմիածնի ու Լենինականի հետ կապված է առաջնակարգ ճանապարհներով։

Էջմիածին.— Հայաստանի հին քաղաքներից է, մայրաքաղաքի է վերածվել Վաղարշակ I-ի օրոք (117—140 թթ.), հայտնի է եղել Վաղարշապատ, Նոր քաղաք, Քաղաքամայր և այլ անուններով։

Սակայն XIV—XV դարերից հետադիմելով վերածվել էր սովորական գյուղական բնակավայրի։

Վաղարշապատը զարգացման միանգամայն նոր շրջան է ապրում խորհրդային ժամանակաշրջանում։ Քաղաքի կոչում է ստացել 1938 թվա-

կանին, իսկ 1945 թ. վերանվանվել է Էջմիածին։ 1926 թ. Էջմիածինն ուներ 8436, 1939 թ.՝ 9783, 1959 թ.՝ 19699, 1970 թ.՝ 31819, 1/1. 1985-ին՝ 50,7 հազար բնակիչ։ Քաղաքն ունի զարգացած ու բազմաճյուղ գյուղատնտեսություն։ Բուռն զարգացում է ապրում նրա արդյունաբերությունը։ Այստեղ գործում են պլաստմասսաների և գինու խոշոր գործարաններ։ Արդյունաբերական ձեռնարկությունների մի մասի արտադրանքները (պոմպերը, հաստոցները և այլն) լայն սպառում են գտնում ոչ միայն ՀԽՍՀ-ում, այլև Միության տարբեր հանրապետություններում։ Էջմիածինը վերածնված քաղաք է։ 1939 թ. հաստատված նոր հատակագծի հիման վրա այն դարձել է ժամանակակից քաղաք, ճարտարապետական համալիրների, կանաչազարդ փողոցների, տուֆակերտ բազմահարկ շենքերի քաղաք։ Ներկայումս այն վերածվում է տուրիստական մի կենտրոնի։ Էջմիածինն ունի առաջնակարգ կոմունալ պայմաններ՝ ջրմուղ-կոյուղի, հանգստավայրեր, հյուրանոց, հասարակական սննդի օբյեկտներ, հիվանդանոց ու բուժարաններ։ Այն ապահովված է հանրակրթական դպրոցների լայն ցանցով, երաժշտական ուսումնարանով, գրադարաններով, մարզադաշտով։ Էջմիածինը Խորհրդային Հայաստանի առաջին գիտական կենտրոններից է։ Այստեղ 1921 թ. փետրվարին ՀԽՍՀ Հեղկոմի դեկրետով մատենադարանին և թանգարանին կից կազմակերպվեց հանրապետության առաջին գիտահետազոտական հիմնարկը՝ կուլտուրայի և պատմության գիտահետազոտական ինստիտուտը։ Էջմիածնի վանքն ուներ հարուստ մատենադարան ու թանգարան։ Այդ ձեռագրատան հիմքի վրա է ստեղծվել Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հանրահայտ Մատենադարանը։ Էջմիածնում հրատարակվել են մի շարք թերթեր ու ամսագրեր, որոնց թվում և «Արարատ» ամսագիրը (այժմ «Էջմիածին»)։ Այդ համանուն վարչական շրջանի կենտրոնն է, ինչպես և Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռանիստը։ Հարուստ է պատմական հուշարձաններով։ Այստեղ են գտնվում Էջմիածնի հայտնի Մայր տաճարը (IV դ.), Հռիփսիմեն (VII դ.), Գայանեն, Շողակաթը, հին գերեզմանոցներ և այլն։

Քաղաքի շրջակայքում հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերվել են տարբեր ժամանակների հնություններ՝ ուրարտական սեպագիր արձանագրություն (Զվարթնոցում), նախնադարյան ժամանակների նյութական մշակույթի մնացորդներ (Մոխրաբլուրում), նախաքրիստոնեական ժամանակաշրջանի պաշտամունքային կառուցվածքի մնացորդներ (Էջմիածնում) և այլ հնություններ, որոնց մի մասը զետեղված է համապատասխան թանգարաններում։

Էջմիածինը Երևանից գտնվում է 18 կմ, իսկ «Էջմիածին» կայարանից 15 կմ հեռավորության վրա։ Այն լայն ու բարեկարգ խճուղով կապված է Երևանի և շրջակայքի քաղաքների հետ։ Մեծ են նրա զարգացման հեռանկարները։

Հրազդանը նախկինում սովորական գյուղ էր, խորհրդային տարիներին նախ վերածվեց ավանի, որ մինչև 1950 թ. կոչվում էր Ներքին Ախտա, իսկ 1959 թվականից արդեն քաղաք է։ Հեռավորությունը Երևանից մոտ 40—42 կմ է, գտնվում է Երևան—Սևան խճուղու ձախ կողմում։ Փռված է մեծ տարածության վրա՝ նախկին Ներքին Ախտա գյուղից բացի իր մեջ ընդգրկելով նաև Աթաբեկյան (Քարվանսարա) ու Ջրառատ (Ռնդամալ) գյուղերը և արդյունաբերական միկրոշրջանը՝ բանավանը։ Այնպես որ Աթաբեկյանի ու Ջրառատի պետական տնտեսություններին կից եղած ավանները կազմում են քաղաքի բաղկացուցիչ մասերը։ Այդ տնտեսությունների հիմնական ճյուղերը անասնաբուծությունը, պտղաբուծությունը, դաշտավարությունը, թռչնաբուծությունը և մեղվաբուծությունը, դարձյալ ճաշակով կառուցված առանձնատների հետ։ Հրազդանին առանձին գեղեցկություն է տալիս ՀԷԿ-ի կանոնավորիչ լիճը։ Քաղաքն ունի ջրմուղ-կոյուղի, հասարակական սննդի ժամանակակից օբյեկտներ, մշակույթի տուն, կինոթատրոն, 6 քաղաքային և մեկ մանկական գրադարան, 7 ակումբ, պիոներ տուն, բուժհիմնարկներ, 2 հյուրանոց, մարզադաշտ։ Քաղաքի հանրակրթական դպրոցների թիվը հասնում է 10-ի։ Ունի երաժշտական դպրոց, շինարարական տեխնիկում, պրոֆտեխնիկական ուսումնարան, մի շարք մանկապարտեզներ ու մանկամսուրներ։ Հրազդանը Երևան—Սևան երկաթուղու կայարաններից մեկն է։ Այն ունի զարգացման լայն հեռանկարներ։

Քաղաքում գոյություն ունեն նոր շրջանի երկու անշուք, բայց կանգուն եկեղեցիներ, որոնցից մեկը գտնվում է նախկին Ներքին Ախտա գյուղում, իսկ մյուսը՝ Աթաբեկյանում։ Քաղաքի թաղերից մեկում է գտնվում Մաքրավանքի տաճարը։

Ջարենցավան.— Հիմնադրվել է 1947 թ. (մինչև 1961 թ. կոչվում էր

Լուսավան)։ Երևանից գտնվում է 38 կմ հեռավորության վրա, Հրազդան գետի աջ կողմում։ Արդյունաբերական քաղաք է, ունի ներտաշ հաստոցների, գործիքաշինական, երկաթբետոնե կոնստրուկցիաների, քիմիական պարարտանյութերի գործարաններ և այլն։ Քաղաքն ամբողջովին թաղված է մրգատու և դեկորատիվ ծառերի մեջ, տները տուֆակերտ են, բազմահարկ, ունի ջրմուղ-կոյուղի։ Սակայն բարեկարգումը բավական ետ է մնում ժամանակակից պահանջներից։ Քաղաքում կան հանրակրթական երեք միջնակարգ և մեկ երեկոյան դպրոց, հաստոցագործիքային տեխնիկում, պրոֆտեխնիկական ուսումնարան, գրադարաններ, կինոթատրոն, ակումբներ, կուլտուրայի տուն, հյուրանոց, առողջապահական հիմնարկներ։ Հանրապետության ամենաարագ աճող քաղաքներից է։ Նրա բնակչության թիվը 1959 թ. հասնում էր 2350-ի, 1970 թ.՝ 16455-ի, իսկ 1/1 1985-ին՝ 29,7 հազար բնակչի։

***

Հանրապետության Արարատյան կամ կենտրոնական շրջանում նշված քաղաքներից բացի կան հիշատակության արժանի շատ վայրեր՝ քաղաքատիպ ավաններ (Լուսակերտ, Գագարինավան, Նոր-Հաճըն, Նոր-Խարբերդ, Սովետաշեն, Ծաղկաձոր, Թալին), առողջարաններ, հանգստի տներ ու ճամբարներ (Արզնի, Հանիավան, Բյուրական, Ծաղկաձոր և այլն), տարբեր ժամանակների հուշարձաններ ու բնակավայրերի ավերակներ (Կեչառուտ, Մամրավանք, Թշնի, Տեղեր, Մուղնի, Հովհաննավանք, Սաղմոսավանք, Կոշ, Մաստարա, Թալին, Թալիշ, Ավան, Պտղնի, Կարբի և այլն), հուշակոթողներ (Սարդարապատ, Օշական, Ջանֆիդա), աղբյուր-հուշարձաններ և այլն։

բ. Ջանգեզուր կամ Սյունիք

Ժամանակակից աշխարհագրության մեջ Ջանգեզուր կամ Սյունիք են անվանում Խորհրդային Հայաստանի հարավ-արևելյան այն հատվածը, որն իր մեջ ընդգրկում է Հանրապետության Մեղրու, Ղափանի, Գորիսի և Սիսիանի վարչական շրջանները։ Այս բնապատմական աշխարհը լեռնային է, զգալի մասը՝ անտառապատ։ Արդավանդ հողեր համեմատաբար քիչ ունի, հայտնի է պղնձամոլիբդենային հանքավայրերով։ Հայտնաբերված են երկաթահանքի զգալի պաշարներ (Գորիսի շրջանի Սվարանց գյուղում)։ Հնում կազմում էր Մեծ Հայքի Սյունիք աշխարհի մի մասը, իսկ նախախորհրդային շրջանում՝ Ելիզավետպոլի նահանգի Ջանգեզուրի գավառը։

Նրա տնտեսության գլխավոր ճյուղերը կազմում են լեռնահանքային արդյունաբերությունը, սննդի ու թեթև արդյունաբերությունը, շինանյութերի արտադրությունը և այլն։ Ունի զարգացած գյուղատնտեսություն՝ դաշտավարություն, անասնապահություն, մրգաբուծություն, թռչնաբուծություն և մասամբ մեղվաբուծություն։

Պատմական հուշարձաններով ու ժամանակակից հիշարժան վայրերով հարուստ շրջան է։ Այստեղ են գտնվում Ղափան, Գորիս, Քաջարան և Սիսիան քաղաքները։

Ղափան.— Գտնվում է Ողջի գետի միջին հոսանքում, մայրաքաղաք Երևանից 320 կմ հեռավորության վրա։ Հանրապետական ենթակայության քաղաք է, համանուն վարչական շրջանի կենտրոնը։ Մինչև խորհրդային կարգերի հաստատումը սովորական բանվորական ավան էր, հետագայում քաղաքատիպ ավան, իսկ 1938 թվականից ստացել է քաղաքի կոչում։ Ղափանը հանրապետության արդյունաբերական նշանավոր կենտրոններից է։ Այստեղի պղնձահանքերը հայտնի են տակավին միջնադարից։ Դարեր առաջ պարզունակ եղանակներով արդյունահանվել և վերամշակման են ենթարկվել գետնի երես դուրս եկած երակներն ու առանձին օջախներ։ XIX դ. երկրորդ կեսի սկզբներից Ղափանի պղնձաարդյունաբերության մեջ մուտք է գործում արտասահմանյան կապիտալը, որը գիշատիչ շահագործման է ենթարկում շրջանի հարստությունը։ Ղափանն ու Ալավերդին միասին վերցրած պղնձի արդյունահանմամբ ցարական Ռուսաստանում գրավում էին երկրորդ տեղը։ Դրանց ձուլարանների թողարկած այսպես կոչված սև պղինձը հետագա մշակման էր ենթարկվում Ռուսաստանի այլ քաղաքներում։ Հանքերում ու ձուլարաններում իշխում էր ձեռքի աշխատանքը։ Խորհրդային ժամանակաշրջանում վերացվել է Ղափանի պղնձաձուլարանը, որպես իր դարն ապրած հնամենի ձեռնարկություն։ Ստեղծվել է խոշոր կոմբինատ, հարստացուցիչ խոշոր ֆաբրիկայով հանդերձ (30-ական թվականներին), որի թողարկած պղնձի խտանյութը ձուլման է ուղարկվում Ալավերդու պղնձաձուլարանը։ Հետագայում կառուցվեց ավելի խոշոր ու հզոր հարստացուցիչ ֆաբրիկա։ Ներկայումս Ղափանի և Քաջարանի կոմբինատները միացվել են և այդ խոշոր ձեռնարկությունը կոչվում է Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ։ Սակայն պղնձարդյունաբերությունը Ղափանի արդյունաբերության միակ ճյուղը չէ։ Խորհրդային տարիներին այստեղ ստեղծվել են մեխանիկական, աղյուսակղմինդրային, պահա-

ծոների, լիմոնադի, հացի գործարաններ, մսի կոմբինատ, երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան, թռչնաբուծական ֆաբրիկա և այլն։ Ղափանն իր բանվորական ավաններով ու արվարձաններով (Լենինանքեր, Կավարտ, Բարաբաթում, Արփիկ, Բեխ, Վաչագան, Շահումյանի Գանքեր) զբաղվում է ընդարձակ տարածություն՝ փռվելով Ողջի գետի երկու ափերին, Կավարտի ձորի, Վաչագանի գետի ձորափերին ու դրանց հարող զառիթափ լանջերի վրա։ Քաղաքի շենքերը կառուցվել են ինչպես հարթություններում, այնպես էլ զառիթափ սարալանջերին ու խոր ձորերում։ Նախատեսվում է քաղաքի շրջակայքի լեռնալանջերի ուղղությամբ կառուցել «մաղլցող» բազմահարկ շենքեր (որոնցից մի քանիսը արդեն շահագործման են հանձնվել), մարդկանց երթևեկության համար նույն ուղղությամբ անցկացնելով շարժասանդուղքներ կամ ճոպանուղիներ։ Ղափանի շենքերը տուֆակերտ են, բազմահարկ ու հարմարավետ։ Առանձնապես նշելի են «Զանգեզուր» հյուրանոցի շենքը, կուսակցական շրջկոմի, շրջգործկոմի շենքերը և այլն։ Փողոցները ծառաղարդ են, շրջակայքում կան անտառներ։ Քաղաքն ունի մի քանի փոքրիկ զբոսայգիներ ու պուրակներ, որոնցից մեկում կանգնեցված է Խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյանի հուշարձանը։ Ղափանն իր արդյունաբերությամբ, մեծությամբ, նշանակությամբ ու կոմունալ պայմաններով հանրապետության նշանավոր քաղաքներից է։ Ունի հանրակրթական մի շարք միջնակարգ, ութամյա և տարրական դպրոցներ, օրինակելի ու հարմարավետ գիշերօթիկ դպրոց, լեռնային տեխնիկում, արհեստագործական ուսումնարան, մշակույթի շքեղ պալատ ու տներ, ակումբներ, կինոթատրոններ, ուսուցչի տուն, մոտ 10 գրադարան, հարուստ թանգարան, որն ունի նաև պատկերասրահի բաժին, հյուրանոց, բուժհիմնարկներ, մարզադաշտ և սպորտային խաղադաշտեր, ռեստորաններ, ճաշարաններ և զանազան կարգի տասնյակ խանութներ ու կրպակներ։ Ղափանը 1926 թ. ուներ ընդամենը 1511, 1939 թ.՝ 8511, 1959 թ.՝ 19315, 1970 թ.՝ 30040, իսկ 1/I 1985-ին՝ 37,7 հազար բնակիչ։ Ինտերնացիոնալ քաղաք է։ Բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող հայերից բացի այստեղ բնակվում են նաև ռուսներ ,ուկրաինացիներ և այլ ժողովուրդների ներկայացուցիչներ։ Մեծ են Ղափանի զարգացման հեռանկարները։ Ղափանը հատուկ երկաթուղով կապված է Բաքու—Երևան գծի հետ։ Այն ունի իր օդանավակայանը և օդային մշտական կապ՝ Երևանի հետ։ Ղափանից դուրս են գալիս մի քանի բարեկարգ ճանապարհներ, որոնցից առանձնապես նշանավոր են դեպի Գորիս և Քաջարան ձգվողները։

Բ.ն քաղաքի հնությունները, որոնք ամբողջապես կապված են նրա պղնձարդյունաբերության հետ, վերաբերում են նոր ժամանակներին՝ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին։ Դրանց թվին են պատկանում ֆրանսիացիների կառուցած փոքրիկ ու պարզունակ հարստացուցիչ ֆաբրիկան, պղնձաձուլարանը և ՀԷԿ-ն ու նրա ջրանցքը, որոնք իբրև հնություն լքվել են մեր դարի 30-ական թվականներին և որոնց ավերակներն ու հետքերը հիշեցնում

ջուղի արևելյան կողմում։ Ջրառատ է Քաջարանը։ Ողջիից բացի նրա միջով է հոսում Հանքավանի գետը։ Չնայած տեղանքի անհարմարություններին, այն կառուցված է մի ընդհանուր գլխավոր հատակագծով։ Շենքերը տուֆակերտ են, բազմահարկ։ Իրենց վեհությամբ ու ճարտարապետական կառուցվածքով աչքի են ընկնում մշակույթի սյունազարդ պալատը, միջնակարգ դպրոցների շենքերը, նորակերտ բնակելի տները։ Քաջարանը Միության (և աշխարհի) այն հազվագյուտ քաղաքներից է, որտեղ բնակարանային հարցը լիովին լուծված է։ Սակայն բարեկարգման ու կանաչապատման աշխատանքներն այստեղ ետ են մնում շինարարականից։ Քաջարանն ունի հանրակրթական մի քանի միջնակարգ և մեկ 8-ամյա դպրոց, շինարարական տեխնիկում, երաժշտական դպրոց, մշակույթի պալատ, 4 գրադարան, կինոթատրոն, բուժհիմնարկներ, հյուրանոց և այլն։ 1970 թ. մարդահամարի տվյալներով քաղաքի բնակչության թիվը հասնում էր 10744 մարդու։

Քաջարանում ու նրա շրջակայքի գյուղերում՝ Վերին Հանդում, Լեռնաձորում, Նախկին Կաթնառատում և այլուր պահպանված են պղնձի հին հանքավայրերի շահագործման հետքերը՝ խարամ, լքված հանքախորշեր, արտադրական շենքերի մնացորդներ։ Նախկին Քաջարանց գյուղում պահպանվել է XVII դ. անշուք եկեղեցին, որը թաղակապ տանիքով փոքր շինվածք է, պատերը շարված անմշակ քարերից։ Քաղաքի արևմտյան կողմում նախկին Փիրդովդան ավերակ գյուղատեղին է, որտեղ մինչև XX դ. 20-ական թվականները պահպանվում էր Փիրդովդան կոչված վանքը՝ բաղկացած երկու փոքրիկ եկեղեցիներից։ Դրանց ավերակները իսպառ վերացան նախկին գյուղի տեղում Հանքավան կոչված բանվորական ավան կառուցելու հետևանքով։ Այժմ այդ ավանը նույնպես լքված է։ Նրա հին՝ Փիրդովդան անունը կապված է Դավիթ-Բեկի անվան հետ. Փիրդովդան նշանակում է՝ «Դավթի սուրբ»։

Գորիս.— Հանրապետական ենթակայության քաղաք է, Գորիսի վարչական շրջանի կենտրոնը։ Փռված է Գորիս գետի հովտում, հիմնականում նրա աջ կողմում, երկու կողմից սահմանագծված է կանաչապատ լեռներով։ Գեղատեսիլ բնությունը, բարենպաստ կլիմայական պայմանները, սառնորակ ջրերը Գորիսը դարձնում են հանրապետության հայտնի ամառանոցավայրերից մեկը։ Գորիսի տեղում, Գորիս գետի ձախ ափին մի անշուք բնակավայր է եղել տակավին հնագույն ժամանակներից։ Քաղաքը սակայն հիմնադրվել է անցյալ դարի 70-ական թվականներին և դարձել Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի կենտրոնը։ Նախախորհրդային շրջանում Գորիսը խաղուկ վիճակում էր,



Նկ. 36

Գորիս. Հին Կյորեսի կամ «Քրատակերտի» համայնապատկերը

նրա տնտեսական կյանքի մասնակի աշխուժացումը գրեթե բացառապես կապված էր Ղափանի ու Սիսիանի կողմերից դեպի Շուշի ու Եվլախ տանող ճանապարհի հետ։ Արդյունաբերական որևէ ձեռնարկություն չուներ, իսկ արհեստավորներն էլ այնքան փոքրաթիվ էին, որ կարելի էր մատների վրա հաշվել։ Գորիսը մեծացել ու գեղեցկացել է խորհրդային ժամանակաշրջանում, որի հիմքում ընկած է նրա տնտեսական կյանքի բուռն զարգացումը։ Գյուղատնտեսության ճյուղերին զուգընթաց (դաշտավարություն, անասնաբուծություն, այգեգործություն) այստեղ Հայրենական մեծ պատերազմից հետո ստեղծվել են արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ՝ միկրոէլեկտրաշարժիչների (1960 թ.), ավտովերանորոգման (1958 թ.), գարեջրի, պանրի, կրի (1959), լիմոնադի, փայտամշակման գործարաններ, գորգագործական ֆաբրիկա։ Գորիսը հանրապետության ամենագեղեցիկ շրջկենտրոններից է։ Նրա փողոցները իրար հետ ուղղանկյան տակ հատվելով քաղաքը վեր են ածում քառանկյուն թաղամասերի։ Առանձնատները մեկ ու կես, երկու հարկանի են, կամարակապ մուտքերով և իրենց բակերում ունեն պարտեզ-

ներ ու բանջարանոցներ։ Պետական շենքերը տուֆակերտ են ու բազմահարկ։ Մոնումենտալ են հատկապես կինոթատրոնի, թատրոնի, կուլտուրայի շենքերը։ Ամբողջ քաղաքը թաղված է մրգատու այգիների և դեկորատիվ ծառերի կանաչ ծովի մեջ։ Այն այգի-քաղաք է։ Ամռանը հովհեկների ու զբոսաշրջիկների ներհոսքի հետևանքով բնակչությունը գրեթե կրկնապատկվում է, և ավելի է աշխուժանում քաղաքի եռուզեռը։ Գորիսն ունի ջրմուղ-կոյուղի, ծառախիտ զբոսայգի, որի մոտ, քաղաքի կենտրոնում, գտնվում է Հայրենական պատերազմում զոհվածներին նվիրված հրաշալի աղբյուր-հուշարձանը, կերտված սրբատաշ բազալտից և զարդարված մանրաքանդակներով։ Քաղաքում գործում են Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղը, գյուղատնտեսական տեխնիկում, մանկավարժական, բժշկական-քույրական ուսումնարաններ, միջնակարգ և 8-ամյա հանրակրթական դպրոցներ, թատրոն, կինոթատրոն, կուլտուրայի պալատ, 8 գրադարան։ Այստեղ սկզբում հրատարակվել են «Գավառ» (1910 թ.), «Խորհրդային Զանգեզուր» (1921 թ.), «Երիտասարդ ռանչպար» (1922—23 թթ.), որոնցից զատ 1930 թվականից մշտապես հրատարակվել է «Մաճկալ», որ հետո կոչվեց «Կարմիր ռանչպար», «Կարմիր Զանգեզուր» թերթը, որը 1957 թվականից լույս է տեսնում «Որոտան» անունով։ Բազմապիսի և հետաքրքիր շատ ցուցանմուշներ ունի Գորիսի գավառագիտական-պատմական թանգարանը։ Այստեղ կարելի է տեսնել հին ու նոր Զանգեզուրի բնակչության կենցաղին, տնտեսական ու մշակութային կյանքին, գավառի բնական պայմաններին ու հումքերին վերաբերող շատ նյութեր։ Իր ծննդավայր Գորիսում է գտնվում նաև ականավոր արձակագիր Ա. Բակունցի տուն-թանգարանը։ Գորիսը բանուկ և բարեկարգ խճուղիներով կապված է Ղափանի (որից գտնվում է 66 կմ հեռավորության վրա), Երևանի և Ստեփանակերտի հետ։ Նա օդային մշտական կապ ունի Երևանի հետ։ Գորիսը 1926 թ. ուներ 3690 բնակիչ, 1970-ին՝ 14713, 1/I 1985-ին՝ 20 հազ.։ Նրա բնակչությունը միատարր է՝ բաղկացած է հայերից։

Բուն Գորիսն ու նրա շրջակայքը անցյալից ճարտարապետական գլուխգործոցներ չեն ժառանգել։ Սակայն այստեղ էլ կան այնպիսի կառուցվածքներ ու հնություններ, որոնց պահպանումը անհրաժեշտություն է։ Դրանցից են հին Գորիսի քարայր-բնակարանները, նույն տեղում խարխուլ վիճակում գտնվող երկու փոքրիկ ու անշուք եկեղեցիները, լավ պահպանված բայց տարիներ առաջ լքված ձիթահանքը և ամայի գյուղի շրջակայքում՝ փոքրիկ լեռնակատարների վրա պահպանված ամրոցների մնացորդները։ Ճարտարապետական առումով անցյալի ուշադրության արժանի միակ շենքը քաղաքի նոր եկեղեցին է՝ կառուցված 1880—1900 թթ.։ Այն կերտված է տեղական մուգ գույնի սրբատաշ բազալտից, ունի բարձր գմբեթ և ներսից սյունազարդ է։ Պահպանվել է լավ վիճակում։ Այստեղ է տեղադրված քաղաքի գավառագիտական-պատմական թանգարանը։

Սիսիան.— Ներկայումս համանուն վարչական շրջանի կենտրոն այս քաղաքի տեղում բնակավայր է եղել հնագույն ժամանակներից։ Նախկինում կոչվել է Ղարաքիլիսա, որը սովորական գյուղ էր։ Փռված է Որոտանի երկու ափերին, գեղատեսիլ հարթավայրում, որի հարավային հորիզոնը փակում են Բարկուշատի լեռները, իսկ հյուսիսայինը՝ Իշխանասար ու Եռակատար լեռնագագաթները։ Քաղաքն ամբողջովին խորհրդային ժամանակաշրջանի ծնունդ է։ Այստեղ ստեղծված են արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ՝ «Հայէլեկտրալույս» միավորման մասնաճյուղ, շինարարական իրերի և նյութերի կոմբինատ, երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան, պանրագործարան և այլն։ Կազմակերպված է Սիսիանի կաթնաանասնաբուծական պետական տնտեսություն, որն իր մեջ միավորում է նաև Ուզ, Աղուդի և Տոլորս գյուղերը։ Քաղաքն առայժմ ընդարձակվում և բարեկարգվում է 1963 թ. մշակված հատակագծի հիման վրա։ Նրա փողոցները լայն են և իրար հետ հատվում են ուղղանկյան տակ։ Շենքերը բազմահարկ են, կառուցված վարդագույն տուֆից և Շաքիի երկնագույն բազալտից։ Առանձնապես նշելի են Լենինի անվան հրապարակի շուրջը եղած կառույցները։ Քաղաքը ծառազարդ է։

Այստեղ գործում են միջնակարգ, ութամյա, գիշերօթիկ, նկարչական, երաժշտական, սպորտային դպրոցներ, արհեստագործական ուսումնարան, շինարարական տեխնիկում, կուլտուրայի երկու տուն, 6 գրադարան, ժողովրդական թատրոն, հյուրանոց, մարզադաշտ։ Ունի ջրմուղ-կոյուղի։ Բարեկարգ խճուղով կապված է Գորիսի, Երևանի և Նախիջևանի հետ։ Սիսիանն ունի իր օդանավակայանը։ 1959 թ. մարդահամարի տվյալներով Սիսիանի բնակչության թիվը հասնում էր 3838-ի, իսկ 1970 թ.՝ 7426-ի։ Քաղաքի 10 հուշարձաններից առանձնապես ուշադրության արժանին «Մայր Սիսիան»-ն է, որը նվիրված է Զանգեզուրում խորհրդային կարգերի համար մղված մարտերում զոհվածներին։ Այստեղ է գտնվում VI—VII դդ. կառուցված հայ ճարտարապետության նշանավոր կոթողներից մեկը՝ Սյունիքի վանքը։ Քաղաքի մոտ կան հին բնակավայ-

բերի մնացորդներ, իսկ 2 կմ հեռավորության վրա՝ հայտնի «Ղոշուն դաշ» հնավայրն է։

Մեր ժողովրդի ազատագրական շարժման պատմության մեջ հայտնի է դարձել Սիսիանի շրջանի գյուղերից մեկը՝ Անգեղակոթը, որը գտնվում է Նախիջևանից և Եղեգնաձորից եկող խճուղիների խաչմերուկում։ Հայկական այս հին գյուղը XIX դ. սկզբներին խսպառ զրկվել էր իր հայ բնակչությունից և նորից շենացվել է Թուրքմենչայի պայմանագրով 1828—29 թթ. Իրանից եկած հայ բնակիչներով։ Այստեղ 1699 թ., Մելիք Սաֆրազի մոտ, Իսրայել Օրու գլխավորությամբ տեղի է ունեցել Սյունիքի 9—10 տանուտեր-մելիքների ժողով, որը քննարկել է Հայաստանի ազատագրության խնդիրը և դրանով զբաղվող Իսրայել Օրուն համապատասխան օգնություն ցույց տալու հարցը։

***

Զանգեզուրում կան մի շարք քաղաքատիպ և բանվորական ավաններ (Ագարակը՝ Մեղրու շրջանում, Լենինաձոր, Շահումյանի հանքերը, Դավիթբեկը՝ Ղափանի շրջանում, Դաստակերտը՝ Սիսիանի շրջանում, Տաթև Հիկ-ը Գորիսի շրջանում և այլն), Մեղրին, որն այժմ շրջանային ենթակայության քաղաք է, հին ու միջնադարյան տասնյակ հուշարձաններ՝ բերդերի, վանքերի և պատմական այլ շինությունների ավերակներ (Հալիձոր, Բաղաբերդ, Բաղակու քար, Տաթև, Մեծ Անապատ, Վահանավանք, Որոտն վանք և բերդ, Երիցավանք և այլն), արհեստական լճակներ, ճակատամարտերի վայրեր (Շուշանների դաշտը Ղափանի շրջանի Եղվարդ գյուղի մոտ, Ջեյվայի բերդը Ողջի և Գեղի գետերի միախառնման վայրում և այլն)։

գ. Վայք

Տարածվում է Արփա գետի վերին ու միջին հոսանքների ավազաններում և իր տարածքով համապատասխանում է հին Վայոց ձորին։ Այն բոլոր կողմերից լեռներով պատած մի շրջանաձև գոգավորություն է, որի արևելյան մասը կազմում է այժմյան Ազիզբեկովի վարչական շրջանը, իսկ արևմտյանը՝ Եղեգնաձորի շրջանը։ Նրա տնտեսության հիմնական ճյուղերը կազմում են այգեգործությունը, դաշտավարությունը, անասնաբուծությունը, սննդի ու թեթև արդյունաբերությունը, շինանյութերի արտադրությունը և այլն։ Բնապատմական ու տնտեսական այս շրջանում միակ քաղաքը Ջերմուկն է։

Ջերմուկ հանրապետական ենթակայության այս քաղաքը գտնվում է Արփա գետի վերին հոսանքում, ծովի մակերևույթից ունենալով ավելի քան 2000 մ բարձրություն։ Հիշատակվում է IX—X դարերից։ Մինչև 1951 թ. սովորական գյուղ էր, որից հետո նախ դարձավ. ավան, ապա՝ քաղաք։ Համամիութենական կարգի առողջարան է, որ ամբողջովին ստեղծվել է խորհրդային շրջանում՝ տեղում բխող հանքային տասնյակ տաք աղբյուրների հիմքի վրա։ Քաղաքում կան մի շարք ձեռնարկություններ՝ ջերմուկի գործարան (հիմնադրված 1956 թ.), որը տարեկան բաց է թողնում տասնյակ միլիոնավոր շիշ ջերմուկ, մեխանիկական, հացի գործարաններ, քարի ու խարամի հանքեր և այլն։ Ջերմուկը բարեկարգ և ծառազարդ քաղաք է, դիրքը՝գեղատեսիլ։ Բուժիչ հատկություններով օժտված հանքային ջուրը, մաքուր օդն ու արևոտ օրերը այն նախադրյալներն են, որ Ջերմուկը դարձնում են առաջնակարգ առողջարան։ Աշխատավորների հանգստի և բուժման համար այն ունի անհրաժեշտ պայմաններ՝ հասարակական սննդի օբյեկտներ, զբոսավայրեր, հանքային ջրի տաղավար և այլն։ Քաղաքն ունի ջրմուղ-կոյուղի (1960 թ.), կենտրոնական ջեռուցում (1959 թ.)։ Քաղաքում գործում են մի քանի հանրակրթական դպրոցներ, բուժհիմնարկներ, կինոթատրոն, ակումբ, գրադարան, հյուրանոց։ Ջերմուկ առողջարանը օդային և ավտոխճուղային ուղիներով կապված է Երևանի հետ։ 1959 թ. մարդահամարի տվյալներով Ջերմուկն ուներ 2062 բնակիչ, 1970 թ.՝ 4153, 1/I 1985-ին՝ 7,5 հազար։ Առողջարանային այս քաղաքն ունի զարգացման շատ հնարավորություններ։

Անցյալում Ջերմուկի տարածքում կային հին գյուղատեղի, եկեղեցիների ու բերդի ավերակներ, գերեզմանատների մնացորդներ, խաչքարերի բեկորներ։ Քաղաքի կառուցապատման հետևանքով դրանց մեծ մասը ապպարեղից վերացել է։ Այնուամենայնիվ մինչև օրս նշմարվում են XIII դ. մի քանի խաչքարերի մնացորդներ, հին եկեղեցու հետքեր և «Պրիստավի գյոլ» կոչված քարաշեն ջրավազանը, որը գոյություն ունի հավանաբար XIII դարից և նորից վերականգնվել ու կարգի է բերվել շատ ուշ՝ XIX դ. երկրորդ կեսին, Երևանի նահանգի Շարուր—Դարալագյազի գավառապետներից մեկի անմիջական միջամտությամբ։

Շրջանի մյուս խոշոր բնակավայրը Եղեգնաձոր շրջկենտրոնն է, որն առայժմ քաղաքատիպ ավան է։

Բազմաթիվ են Վայքի հնություններն ու հուշարձանները՝ վանքերը,

եկեղեցիները, բերդերը, քարավանատները, կամուրջները, ավերված գյուղաքաղաքներն ու քաղաքները, առայսօր գոյություն ունեցող հին բնակավայրերը և այլն։ Դրանցից են՝ Քարկոփի (Խոտակերաց), Նորավան (Ամաղուի Նորավանք), Հերհերի, Արատեսի, Թանահատի վանքերը, Գնդեվանքը, Ցախաց քարը, Մարտիրոսի և Սպիտակավոր եկեղեցիները, հայտնի Գլաձորը, Սուլեմա (Սելիմի) և Մարտիրոսի քարավանատները, Ագարակաձորի կամուրջը, վաղեմի Մոզ քաղաքի ավերակները, Պոռշի բերդը, Եղեգիս գյուղաքաղաքի (Սմբատաբերդ) ավերակները և այլն։

դ. Սևանա լճի ավազան

Ուրույն բնապատմական աշխարհ է Սևանա լճի շրջակայքը՝ հին Գեղամա երկիրը, որն իր տարածքով համապատասխանում է այժմյան Սևանի, Կամոյի, Մարտունու և Վարդենիսի վարչական շրջաններին։

Սևանա լճի ավազանը բարձրադիր է, հիմնականում հարթավայրային, ցուրտ կլիմայով, բայց արևոտ օրերի առատությամբ։ Ունի բազմաթիվ գետակներ, սառնորակ ու հանքային հորդաբուխ աղբյուրներ։ Տնտեսության հիմնական ճյուղերն են լեռնահանքային, էլեկտրատեխնիկական, սննդի ու թեթև արդյունաբերությունը, մեքենաշինությունը և գյուղատնտեսությունն իր մի շարք ճյուղերով հանդերձ (դաշտավարություն, անասնաբուծություն, բանջարաբուծություն, ծխախոտագործություն, թռչնաբուծություն)։ Այստեղ են գտնվում Սևան ու Կամո քաղաքները, Վարդենիս, Վարդենիկ ու Մարտունի քաղաքատիպ ավանները, Զոդ բանվորական ավանը և այլն։

Սևան.— Հանրապետական ենթակայության Սևան քաղաքը, որ նույնանուն վարչական շրջանի կենտրոնն է, գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին, ծովի մակարդակից մոտ 1925 մ բարձրության վրա։ Նախկինում սովորական գյուղ էր և կոչվում էր Նլենովկա։ Քաղաքի կոչում է տրվել 1961 թ.։ Խորհրդային տարիներին այստեղ ստեղծվել են արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ՝ գործադիր սարքերի գործարան, որն արտադրում է ավտոմատ կառավարող բարդ սարքավորումներ, ապակե էլեկտրամեկուսիչների, երկաթբետոնե կառույցների, կաթի, ծխախոտի ֆերմենտացիոն գործարաններ, գորգագործական ֆաբրիկա, ձուկկոմբինատ։ Այստեղ է գտնվում լճային ստորգետնյա հիդրոէլեկտրակայանը՝ տեխնիկական և ճարտարապետական մի կառույց, որ գրավում է մասնագետների ուշադրությունը։ Ունի զարգացած գյուղատնտեսություն՝ անասնաբուծություն, դաշտավարություն, ծխախոտագործություն, բանջարաբուծություն։ Քաղաքը փռված է մեծ տարածության վրա։ Այն հիմնականում ընդարձակվում է լճից ազատված տարածքի հաշվին։ Փողոցները լայն են, ծառազարդ, շենքերը՝ բազմահարկ ու տուֆակերտ։ Ունի ջրմուղ-կոյուղի։ Սևանում գործում են 3 միջնակարգ, մեկ ութամյա, մեկ երաժշտական, մեկ բանբերիտ դպրոցներ, մշակույթի տուն, կինոթատրոն, առողջապահական հիմնարկներ, հյուրանոց։ Սևանը երկաթուղային կայարան է, դեպի Դիլիջան, Երևան և Կամո ձգվող ավտոխճուղային հանգույց։ 1926 թ. այն ուներ 1032 բնակիչ, 1939 թ.՝ 2668, 1959 թ.՝ 6415, 1970 թ.՝ 12353, 1/I 1985-ին՝ 24,4 հազար բնակիչ։

Սևան քաղաքի շրջակայքը հարուստ է հնություններով։ Քաղաքի մոտ, նրա հարավային կողմում գտնվող Լճաշեն (նախկինում՝ Օրգակլու) գյուղում, լճից ազատված տարածքում հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերվել են մի քանի հազար տարվա հնություն ունեցող նյութական մշակույթի զանազան մնացորդներ, ճանապարհների ու բնակավայրերի հետքեր։ Հնություններով ու հուշարձաններով պակաս հայտնի չէ նաև Սևանա թերակղզին։ Պատմական գրականությունից որոշակի երևում է, որ այստեղ միջին դարերում գոյություն է ունեցել ամրոց, որը VIII դարում արաբների կողմից ավերվելուց հետո IX դարում վերականգնվել է Սյունյաց Սահակ և Վասակ իշխանների կողմից։ Այստեղ, ամրոցի դիմաց, լճափին Աշոտ II-ն իր փոքրաթիվ զորքով 921 թ. պարտության է մատնել արաբական Բեշիր զորավարի մեծ բանակին։ Ամրոցից այժմ ոչինչ չի պահպանվել։ Հակառակ դրան, լավ են պահպանվել Սևվանա վանքի երկու տաճարները։

Կամո.— Գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան առափնյա շրջանում, ընդարձակ հարթության վրա, որի միջով հոսում է Գավառագետը։ Միջին դարերում Կամոյի տեղում գտնվում էր Գավառ ավանը (որ տեղացիներն աղավաղելով դարեր շարունակ կոչել են Քյավառ)։

Ռուս-թուրքական 1828—29 թթ. պատերազմից հետո այստեղ բնակություն հաստատեցին Բայազետից ներգաղթած բազմաթիվ հայեր, ավանը աստիճանաբար վերածվեց փոքրիկ գյուղաքաղաքի և կոչվեց Նոր Բայազետ, որը Երևանի նահանգի Նոր Բայազետ գավառի կենտրոնն էր, կիրակնօրյա աշխույժ առևտրի կետ։ Սակայն խակական քաղաքի է վերածվել խորհրդային շրջանում և 1959 թ. վերանվանվել է Կամո, լեգենդար հեղափոխական Կամոյի անունով։

Կամոն վերջին տասնամյակների ընթացքում վերածվել է արդյունաբերական նշանավոր կենտրոնի։ Այստեղ ներկայումս գործում են արդ-

գյուղատնտեսական մի ամբողջ շարք ձեռնարկություններ՝ կաբելի, մեխանիկական, «Սևան» հանքային ջրի, յուղի ու պանրի գործարաններ, տրիկոտաժի, գորգագործական, կոշիկի ֆաբրիկաներ և այլն։ Կամոն ունի նաև զարգացած և բազմաճյուղ գյուղատնտեսություն (դաշտավարություն, անասնաբուծություն, բանջարաբուծություն)։ Քաղաքում գործում են տասնյակի հասնող հանրակրթական դպրոցներ, գիշերօթիկ միջնակարգ օրինակելի դպրոց, երաժշտական ուսումնարան, տեխնիկում։ Ունի երկու հյուրանոց, առողջապահական հիմնարկներ, գրադարաններ, կինոթատրոն, ակումբներ, մշակույթի տուն, գավառագիտական թանգարան։ Քաղաքում պետական բազմահարկ ու խոշոր շենքերը զուգորդվում են հարմարավետ հարյուրավոր առանձնատների հետ։ Ջրառատ է Կամոն, Ունի ջրմուղ-կոյուղի։ Երևանից հեռավորությունը 98 կմ է։ Բարեկարգ խճուղով կապված է Երևանի ու Վարդենիսի հետ։ Ունի օդանավակայան։ Կամոն հանրապետության բազմամարդ շրջկենտրոններից է։ 1939 թ. մարդահամարի տվյալներով քաղաքն ուներ 8447, 1959 թ.՝ 14985, 1970 թ.՝ 19967 բնակիչ, իսկ 1/I 1985-ին՝ 26,9 հազար։ Կամոյում պահպանվել է ուրարտական Ռուսա I թագավորի սեպագիր արձանագրություններից մեկը, որն ազդարարում է նրա կողմից Ուելիկուխի երկրի գրավման և Խալդի քաղաքի կառուցման մասին։ Քաղաքում կա երկու եկեղեցի, մեկը հին, իսկ մյուսը՝ նոր, կառուցված 1848 թ.։

***

Սևանա լճի ավազանը հարուստ է հնություններով։ Այստեղ են գտնվում Սևանի, Մաքենիսի և Այրի վանքերը, հին Կոր ու Բեղկունք, գյուղաքաղաքների ավերակները, հարյուրավոր խաչքարեր (հատկապես՝ Նորատուսում), Լճաշենի հնագիտական վայրը և այլն։

Ե. Հյուսիս-արևելյան Հայաստան

Ժամանակակից տնտեսական աշխարհագրության մեջ սովորաբար Հյուսիս-արևելյան Հայաստան ասելով հասկանում են Խորհրդային Հայաստանի Շամշադինի, Իջևանի, Նոյեմբերյանի վարչական շրջաններն ու Կարմիրի շրջանի մեծագույն մասը միասին վերցրած։ Այս բնաշխարհի կեսից ավելին անտառապատ է։ Լեռնային գեղատեսիլ երկրամաս է, որը ոռոգվում է մի շարք գետերով (Գետիկ, Աղստև, Տավուշ և այլն)։

Շրջանի տնտեսությունը բազմաճյուղ է։ Նրա արդյունաբերության

ճյուղերից են՝ թեթև ու սննդի արդյունաբերությունը, շինանյութերի արտադրությունը, մեքենաշինությունն, իսկ գյուղատնտեսությունն արտահայտվում է դաշտավարությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ, ծխախոտագործությամբ, խոշոր ու մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ և այլ ճյուղերով։

Հիշարժան վայրերից կարելի է նշել Կրասնոսելսկ, Բերդ ու Նոյեմբերյան քաղաքատիպ ավանները, որոնք շրջկենտրոններ են և Դիլիջան ու Իջևան հանրապետական ենթակայության քաղաքները։

Դիլիջան.— Հնում կոչվում էր Փոքր Դիլի։ Քաղաքի է վերածվել 1951 թ.։ Հեռավորությունը Երևանից 106 կմ է, իսկ «Կիրովական» երկաթուղային կայարանից՝ 42 կմ։ Բարեկարգ խճուղիներով կապված է Կիրովականի, Իջևանի և Երևանի հետ։ Քաղաքի մոտ, Բլդան գետի հովտում բխում են հանքային բուժիչ աղբյուրներ, որոնք հայտնի են «Դիլիջան» անունով։ Դիլիջանը կանաչի, արևի և մաքուր օդի քաղաք է, առողջարանային մի քաղաք, որի համբավը տարածվել է ողջ Միությունում։ Այստեղ 1921 թ. հիմնվել է հանրապետության առաջին առողջարանը։ Իսկ այժմ քաղաքում գործում են մի ամբողջ շարք առողջարաններ և հանգստյան տներ։ Ամառը Դիլիջանի բնակչությունը գրեթե կրկնապատկվում է։ Հանրապետությունից և այլ տեղերից այստեղ են գալիս հազարավոր հովվեկներ։ Քաղաքն ունի ավելի քան 13 արդյունաբերական ձեռնարկություններ՝ կահույքի ֆաբրիկա, կարի ֆաբրիկայի մասնաճյուղ, կաթի ու հացի գործարաններ, կենցաղսպասարկման կոմբինատ, «Դիլիջան» հանքային ջրի գործարան և այլ ձեռնարկություններ, որոնցից առանձնապես աչքի է ընկնում «Իմպուլս» գործարանը՝ քաղաքի արդյունաբերական հսկան։ Քաղաքամերձ պետական երկու տնտեսությունները, որոնք հիմնականում ունեն կաթնա-անասնաբուծական ուղղություն, անհրաժեշտ մթերքներ են մատակարարում առողջարաններին ու հանգստյան տներին։ Քաղաքում գործում են հանրակրթական 12 դպրոց, սպորտ և երաժշտական դպրոցներ, ռադիոտեխնիկում, բժշկական և պրոֆտեխնիկական ուսումնարաններ, գրադարաններ, գավառագիտական հարուստ թանգարան՝ պատկերասրահի բաժնով, կինոթատրոն, մշակույթի պալատ, բուժհիմնարկներ, հյուրանոց և այլն։ Քաղաքը տեղադրված է անտառապատ լեռնալանջերի վրա և ամբողջապես կանաչապատ է։ Պետական խոշոր ու հարմարավետ բազմահարկ շենքերը զուգավորված են ճաշակով կառուցված հազարավոր առանձնատների հետ։ Դիլիջանն ունի ջրմուղ-կոյուղի, ավտոբուսային երթևեկություն։ Քաղաքին առանձին հմայք է տալիս արհեստական լիճն իր շրջ-

չակայքով։ 1959 թ. քաղաքն ուներ 15835, 1970 թ.՝ 20961, իսկ 1/I 1985-ին՝ 28,9 հազ. բնակիչ։

Դիլիջանում և նրա շրջակայքում կան ուշադրության արժանի հնություններ և ճարտարապետական արժեք ներկայացնող հուշարձաններ։ Հայ ճարտարապետության պատմության խոշորագույն երախտավոր Թ. Թորամանյանը նշում է, որ այստեղ առկա են և՛ նախաքրիստոնեական, և՛ քրիստոնեական շրջանի հնություններ։ Քաղաքի շրջակայքում նշմարվում են մի քանի բնակավայրերի մնացորդներ, նրանից 6 կմ արևմուտք Ջուխտակ հայտնի վանքն է, որ կառուցվել է XI—XII դդ. և մեզ է հասել կանգուն վիճակում (XIX դ. երկրորդ կեսին վերանորոգելուց հետո), Մաթոսավանքը՝ Կիրովական տանող ճանապարհի վրա, իսկ քաղաքից 10—12 կմ հյուսիս, Աղստև գետի ձախ կողմում Հաղարծնի հայտնի վանքն է։

Իջևան.— Նախկին Քարվանսարան է, որի միջով էր անցնում XIX դ. 30—40-ական թվականներին կառուցված Երևան—Թբիլիսի խճուղին։ Քաղաքի է վերածվել խորհրդային շրջանում, վերջին 3—4 տասնամյակների ընթացքում։ Գտնվում է Աղստև գետի միջին հոսանքի շրջանում։ Գրավում է գետի նեղ հովիտը և դրան հարակից անտառապատ լեռնալանջերը։ Հրաշալի ամառանոցավայր է։ Դիլիջանի նման Իջևանն էլ ամռանն ավելի մարդաշատ է դառնում։ Քաղաքի տնտեսական կյանքի մեջ գլխավոր դերը խաղում է արդյունաբերությունը։ Քաղաքում կան փայտամշակման, գորգագործական և կենցաղսպասարկման կոմբինատներ, գարեջրի գործարան, կահույքի, կոշիկի ձեռնարկություններ։ Քաղաքից ոչ հեռու արդյունահանվում է զանազան բնագավառներում լայն կիրառում գտած բետոնիտային կավ։ Իջևանն ունի նաև զարգացած գյուղատնտեսություն։ Նրա պետական տնտեսության հիմնական մասնագիտացումն անասնաբուծությունն է։ Իջևանը գեղեցիկ քաղաք է, վարդագույն տոֆից կառուցված բազմահարկ շենքերի և ընդարձակ կանաչապատ տարածքների քաղաք։ Քաղաքում գործում են 4 միջնակարգ, մեկ ութամյա, մեկ երաժշտական դպրոցներ, մշակույթի տուն, շրջանային գրադարան ու ակումբ, կինոթատրոն, բազմահարկ ու հարմարավետ հյուրանոց, բուժհիմնարկներ, հեղափոխության թանգարան։ 1922 թվականից այստեղ նախ հրատարակվել է «Մուրճ ու մաճ», ապա՝ «Հարվածային կոլտնտեսական» լրագիրը, որն այժմ կրում է «Լենինյան ուղիով» անունը։ Քաղաքում պահպանված է IX—X դարերի մի եկեղեցի։ Այստեղ կան խաչքարեր, հին գերեզմանոց, մատուռների ավերակներ և

այլ հնություններ։ Իջևանից մոտ 12 կմ հարավ գտնվում են միջնադարյան հայտնի Կայան (կամ Կայեն) բերդի (Կըզկալա) ավերակները։ Իջևանը երկաթուղով միացած է Աղստաֆա կայարանի ու Դիլիջանի, իսկ վանը երկաթուղով՝ Դիլիջանի ու Ղազախի հետ։ Հեռավորությունը Երևանից 142 կմ խճուղով՝ Դիլիջանի ու Ղազախի հետ։ Հեռավորությունը Երևանից 142 կմ է։ 1926 թ. քաղաքի բնակչության թիվը հասնում էր ընդամենը 2261-ի, 1970 թ.՝ 13615-ի, իսկ 1/I 1895-ին՝ 17,2 հազար մարդու։

Իջևանի շրջանում, Իջևան քաղաքից 6 կմ հյուսիս-արևելք, գեղադիր սարալանջի վրա է գտնվում Ենոքավան գյուղը, որտեղ 1920 թ. նոյեմբերի 29-ին հայտարարվեց Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման մասին։

***

Հյուսիս-արևելյան Հայաստանը հնություններ ու հուշարձաններ շատ ունի։ Այստեղ են գտնվում Հաղարծնի, Գետիկի, Նոր Գետիկի (կամ Գոշի), Մակարա և Կիրանց, Մշակ, Մաթոսա հայտնի վանքերը, Տավուշ ու Կայան բերդերը, հին քարավանատների ու բազմաթիվ բնակավայրերի ավերակներ։

գ. Լոռի կամ Գուգարք

Հանրապետության Լոռի (կամ Գուգարք) բնապատմական և տնտեսական շրջանն իր մեջ ընդգրկում է այժմյան Սպիտակի, Գուգարքի, Թումանյանի, Ստեփանավանի և Կալինինոյի վարչական շրջանները միասին վերցրած։ Հնում այն կազմում էր Մեծ Հայքի Գուգարք աշխարհի կենտրոնական մասը։ Ունի գունավոր մետաղների հանքավայրեր։ Շրջանի զգալի մասը անտառապատ է։ Նրա բազմաճյուղ տնտեսության մեջ առանձնապես կարևոր դեր են խաղում քիմիական ու լեռնահանքային արդյունաբերությունը, մեքենաշինությունը, շինանյութերի արտադրությունը, սննդի և թեթև արդյունաբերությունը, դաշտավարությունը, անասնաբուծությունը, բանջարաբուծությունը, ծխախոտագործությունը, պրոշաբուծությունը և այլն։ Նախախորհրդային տարիներին Լոռին ոչ մի քաղաք չուներ։ Իսկ այժմ այն իր քաղաքներով ու քաղաքատիպ ավաններով խորհրդային Հայաստանի աշքի ընկնող մասերից է։ Այստեղ են գտնվում Ախթալա, Կալինինո, Քոլագիրան, Թումանյան, Շամլուղ քաղաքատիպ ավանները և Կիրովական, Ալավերդի, Ստեփանավան, Սպիտակ հանրապետական ենթակայության քաղաքները։

Ալավերդի.— Հնում կոչվում էր Մանից Գոմ, իսկ հետագայում՝ Մաես, որը հայտնի էր իր պղնձահանքերով։ Թումանյանի վարչական ըջանի կենտրոնն է, քաղաքի կոչում է ստացել 1938 թ.։ Տարածվում է Դեբեդ գետի ձորում և դրան հարակցող զառիթափ լեռնալանջերի վրա։ Քաղաքի գոյությունն առաջին հերթին պայմանավորված է շրջակայքի հարուստ պղնձահանքի հանույթով և մշակմամբ։ Այստեղ պղինձ արդյունահանվել է հնագույն ժամանակներից, բայց առաջին շատ թե քիչ նշանակալի ձեռնարկությունը հիմնադրվել է XVIII դ. 70-ական թթ. և այդ պատճառով էլ 1970 թ. հանդիսավոր պայմաններում տոնվեց լեռնամետալուրգիական կոմբինատի 200-ամյակը։ Լեռնամետալուրգիական կոմբինատը Ալավերդու արդյունաբերության հսկան է։ Այն բաղկացած է մի շարք արտադրամասերից։ 1970 թ. շահագործման ենթարկվեց կոմբինատի էլեկտրաձուլարանը։ Քաղաքում կան նաև արդյունաբերական այլ ձեռնարկություններ՝ կաթի գործարան, մսի կոմբինատ, կարի մեծ ֆաբրիկա և այլն։ Այստեղ հաջողությամբ լուծվում է բնակարանային շինարարության պրոբլեմը։ Ըստ հաստատված նախագծի, քաղաքի ընդարձակումը կատարվում է Սանահինի սարահարթի հաշվին, որն այժմ արդեն կառուցապատվում է և բարեկարգ ու լայնահուն ճանապարհով ու ճոպանուղիով կապված է բուն քաղաքի հետ։ Ալավերդին բարեկարգ քաղաք է, խոշոր, բազմահարկ ու հարմարավետ շենքերով, բայց տեղանքի կտրտվածության պատճառով կառուցումները երբեմն կատարվել են անկանոն՝ գլխավոր հատակագծի խախտումով։ Ալավերդին ունի ժամանակակից կոմունալ պայմաններ, շրմուղ-կոյուղի, ավտոբուսային երթևեկություն։ Այստեղ գործում են հանրակրթական 7 միջնակարգ, երկու 8-ամյա և մեկ երաժշտական դպրոց, գրադարաններ, կինոթատրոն, մշակույթի պալատ, մարզական համակառույց, զբոսայգի, ծածկած շուկա, հասարակական սննդի բազմաթիվ օբյեկտներ և այլն։ Ալավերդին Երևանից գտնվում է 191 կմ հեռավորության վրա։ Երևան—Թբիլիսի երկաթուղու կայարաններից է, բարեկարգ խճուղով կապված է Կիրովականի հետ։ Արդյունաբերության բուռն զարգացման հետ կապված նրա ոնակչությունը ավելացել է բավական արագ։ Այսպես, եթե 1926 թ. այն ուներ 2103 բնակիչ, 1970-ին՝ մոտ 22113, ապա 1/I 1985-ին ուներ 24,9 հազար բնակիչ։

Քաղաքի գրված տարածքում անցյալ դարում Ժ. դը Մորգանը պեղել է 3500 տարվա պատմություն ունեցող բազմաթիվ գամբարաններ։ Քաղաքում է գտնվում XIII դարում կառուցված Սանահինի հայտնի կամուրջը, որը մեկ թռիչքանի է և միանգամայն կանգուն է առայսօր։ Քաղաքում պահպանվել է XVII դ. եկեղեցին։

Ստեփանավան.— Նախկինում սովորական գյուղ էր և կոչվում էր Ջալալօղլի։ 1924 թ. վերանվանվեց Ստեփանավան՝ ի պատիվ ականավոր հեղափոխական Ստեփան Շահումյանի։ 1938 թ. տրվեց քաղաքի կոչում։ Գտնվում է Զորագետի բարձրադիր ափին, անտառապատ լեռնալանջերով շրջապատված գեղատեսիլ սարավանդի վրա։ Արևոտ օրերը, մեղմ, չափավոր խոնավ օդը, կանաչ տարածքների առկայությունը Ստեփանավանը դարձնում են հանրապետության հրաշալի ամառանոցներից մեկը։ Ամռանը Երևանից, Թբիլիսիից և այլ տեղերից հազարավոր հովվեկներ են գալիս այստեղ։ Խորհրդային տարիներին Ստեփանավանում ստեղծվել են արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ՝ բարձր հաճախականության էլեկտրաարքավորման գործարան, գուլպայի, գորգագործական և կահույքի ֆաբրիկաներ, պանրի գործարան, կենցաղապասարկման կոմբինատ։ Ստեփանավանն ունի զարգացած, բազմաճյուղ գյուղատնտեսություն։

Ստեփանավանի լայն ու ծառազարդ փողոցներն իրար հետ հատվում են ուղղանկյան տակ։ Տների մի մասը բազմահարկ է, իսկ մյուս մասը՝ հարյուրների հասնող առանձնատներ են, որոնք նույնպես ունեն կոմունալ հարմարություններ։ Քաղաքի խմելու ջուրը առաջնակարգ է։ Ունի շրմուղ-կոյուղի։ Շենքերն ամբողջովին թաղված են մրգատու և դեկորատիվ ծառերի մեջ։ Քաղաքում գործում են հանրակրթական 3 միջնակարգ, մեկ բանվորական, երկու ութամյա դպրոցներ, երաժշտական ութամյա դպրոց, անասնաբուժական-անասնաբուժական տեխնիկում, մշակույթի տուն, կինոթատրոն, ժողթատրոն, ակումբներ, գրադարաններ, Ստ. Շահումյանի տուն-թանգարանը, հյուրանոց, բուժհիմնարկներ, հանգստյան տուն, սպորտային համալիր, զբոսայգի և այլն։ Մարքսիստական առաջին խմբակը կազմակերպվել է Ստեփանավանում 1899 թ.՝ Ստ. Շահումյանի գլխավորությամբ։

Ստեփանավանի հեռավորությունը Երևանից 157 կմ է, Թումանյան երկաթուղային կայարանից՝ 30 կմ։ Երևանի և Թբիլիսիի հետ կապված է ժամանակակից ավտոխճուղով։ Ունի օդանավակայան։ 1926 թ. ուներ 4970 բնակիչ, 1939 թ.՝ 6057, 1959 թ.՝ 9798, 1970 թ.՝ 13518 բնակիչ, իսկ 1/I 1985-ին 19 հազար։ Քաղաքում պահպանված է X—XI դդ. եկեղեցին, նշմարվում են հին գամբարաններ, իսկ 2—3 կմ հեռավորության վրա միջնադարյան Լոռի քաղաքի ավերակներն են։

Սպիտակ.— Հանրապետական ենթակայության այս քաղաքը, որ

Սպիտակի վարչական շրջանի կենտրոնն է, գտնվում է Կիրովականից արևմուտք, Փամբակ գետի բարձրադիր ափերին։ Նախկինում այն կոչվում էր Համամլու։ 1949 թ. վերանվանվել է Սպիտակ, իսկ 1960-ին տրվել է քաղաքի կոչում։ Ստեփանավանի նման Սպիտակն էլ ամառանոց էր, որը դեպի իրեն էր գրավում հազարավոր հովեկների։ Սպիտակի արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում ստեղծվել են Հայրենական մեծ պատերազմից հետո։ Քաղաքում գործում էին վերելակների, շաքարի, պանրի գործարաններ, կենցաղսպասարկման կոմբինատ։ Նրա պետական տնտեսությունը մասնագիտացած էր ճակնդեղագործության գծով։ Քաղաքն ուներ գլխավոր հատակագիծ, որի հիման վրա էլ կատարվում էին նոր կառուցապատումները։ Ճարտարապետական տեսակետից զգալի հետաքրքրություն էին ներկայացնում Շահումյանի, Օրջոնիկիձեի և այլ փողոցներ։ Թե՛ պետական և թե՛ անհատական տները տուֆակերտ էին ու հարմարավետ։ Սպիտակում գործում էին երեք միջնակարգ և մեկական գիշերօթիկ, ութամյա ու երաժշտական դպրոցներ, բուժհիմնարկներ, մշակույթի պալատ, երկու կինոթատրոն, հյուրանոց։ Ուներ երկու զբոսայգի, մարզադաշտ և արհեստական լիճ։ Հրատարակվում էր շրջանային «Լուսարձակ» լրագիրը։ 1988 թ. դեկտեմբերի 7-ի ահավոր երկրաշարժը հիմնահատակ կործանեց քաղաքը՝ պատճառ դառնալով հազարավոր մարդկանց մահվան։ Սպիտակը փաստորեն հիմնովին նոր պետք է կառուցվի։

Կիրովական.— Բնակչության թվով և խաղացած դերով Կիրովականը հանրապետության երրորդ քաղաքն է։ Քաղաքը փռված է Փամբակ գետի միջին հոսանքի շրջանում, գետի աջ կողմում, անտառապատ լեռներով պատած ձորահովտում։ Նախախորհրդային շրջանում կոչվում էր Մեծ Ղարաքիլիսա (Կիրովական է վերանվանվել 1935 թ.՝ Ս. Մ. Կիրովի անունով), որը սովորական գյուղից ոչնչով չէր տարբերվում։ 1924 թ. վերածվում է քաղաքի, բայց նրա արագ զարգացումը սկսվում է 30-ական թվականներից՝ Հայրենական մեծ պատերազմին հաջորդած տասնամյակում դառնալով հանրապետության արդյունաբերական խոշորագույն կենտրոններից մեկը։ Այժմ այստեղ ստեղծվել է քիմիական, մեքենաշինական, թեթև և սննդի արդյունաբերության մի ամբողջ շարք ձեռնարկություններ, որոնցից շատերի նշանակությունը դուրս է գալիս հանրապետության սահմաններից։ Հայտնի է հատկապես Ալ. Մյասնիկյանի անվան կոմբինատը, որն արտադրում է կալցիումի ցիանամիդ, ազոտական պարարտանյութեր, արհեստական կորունդ, մելամին, պլաստմասսաների ու ազոտական պարարտանյութերի համար հումք հանդիսացող կարբամիդ և այլն։ 1958 թ. շահագործման հանձնվեց քաղաքի քիմիական արդյունաբերության մյուս խոշոր ձեռնարկությունը՝ արհեստական մանրաթելի գործարանը, որի արտադրանքը հումք է ծառայում հանրապետության տեքստիլ ձեռնարկությունների համար։ Մեքենաշինության զարգացումը քաղաքում բացառապես կապված է ետպատերազմյան տարիների հետ։ 1946 թ. շահագործման հանձնվեց Կիրովականի առաջին մեքենաշինական գործարանը, որը հիմնականում սարքեր է արտադրում անասնաբուծական մթերքների (կաթ, միս) վերամշակման համար, իսկ 1959 թ. գործարկվեց ճշգրիտ հաստոցաշինական գործարանը, որն արտադրում է մոտ 20 տեսակի տարբեր մեծության հաստոցներ։ Քաղաքի մեքենաշինական ամենաերիտասարդ, բայց միութենական նշանակություն ձեռք բերած ձեռնարկությունը «Ավտոմատիկա» գործարանն է, որը վերամշակման տարբեր ճյուղերի համար արտադրում է փոքրածավալ էլեկտրոնային սարքեր։ Քաղաքն ունի աղյուսի և կղմինդրի (1932 թ.), երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրության ձեռնարկություններ։ Կիրովականը նաև թեթև ու սննդարդյունաբերության նշանավոր կենտրոն է։ Քաղաքում գործում են մսի խոշոր կոմբինատ, կաթի գործարան, հրուշակեղենի ձեռնարկություններ, մորթու և մուշտակի, կահույքի, կոշիկի ֆաբրիկաներ, որոնց արտադրանքի մի մասը առաքվում է հանրապետության սահմաններից դուրս։ Քաղաքի շրջակայքում ստեղծված են անասնաբուծական, այգեգործական և բանջարաբուծական մասնագիտացված տնտեսություններ, որոնք անհրաժեշտ մթերքներ են մատակարարում բնակչությանը և հումք՝ նրա արդյունաբերական ձեռնարկություններին։ Բուն քաղաքում զգալի տարածություն են գրավում պտղատու-այգիները և տնամերձ բանջարանոցները։

Տնտեսական կյանքի զարգացմանը զուգընթաց քաղաքը մեծանում և գեղեցկանում է գլխավոր հատակագծի հիման վրա։ Կիրովականն աչքի է ընկնում ուշադրության արժանի ճարտարապետական համակառույցներով։ Դրանցից առանձնապես ուշագրավ են Կիրովի անվան հրապարակը, քաղաքի ճարտարապետական առանցքը կազմող Լենինի անվան պողոտան՝ իրենց շրջակա կառույցներով։ Կիրովականի փողոցները ծառազարդ են, կառուցապատված գեղեցիկ ու բազմահարկ շենքերով։

Կիրովականը միաժամանակ մեր հանրապետության մեծահամբավ առողջարանային քաղաքներից է, պիոներական ճամբարավայր, հրաշալի ամառանոց։ Այդ տեսակետից բնական պայմանների նախանձելի բարմասնություններով է օժտված մանավանդ Վանաձորի անտառապատ,

աղբյուրաշատ և գեղատեսիլ հովիտը։ Այստեղ զետեղված են պիոներական մի շարք ճամբարներ (որոնց թվում և «Հայկական Արտեկը»), «Հայաստան» առողջարանն իր մասնաշենքերով և այլն։ Քաղաքում գործում են մի շարք բուժհիմնարկներ։

Կիրովականն իր կոմունալ պայմաններով միանգամայն ժամանակակից քաղաք է։ Ունի ցանցավորված ջրմուղ-կոյուղի, ավտոբուսային երթևեկություն, ընդարձակ կանաչ զանգվածներ, ջրավազաններ, զբոսայգիներ (թվով 5), երկու առաջնակարգ հյուրանոց, ռեստորաններ (4), խորտկարաններ ու ճաշարաններ, տարբեր կարգի տասնյակ խանութներ, լվացքատներ ու քիմիական մաքրման կետեր։

Կիրովականը հանրապետության մշակույթի խոշորագույն կենտրոններից է։ Հանրակրթական ցերեկային և երեկոյան դպրոցների թիվը հասնում է 25-ի։ Քաղաքն ունի 6 տեխնիկում (սարքաշինական, քիմիական, շինարարական և այլն), պրոֆտեխնիկական ուսումնարաններ, Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղ, Հայկական մանկավարժական ինստիտուտ, ութ կինոթատրոն, 19 գրադարան, պիոներ պալատ և այլն։ Այստեղ հրատարակվում են «Կայծ» լրագիրը և «Քիմիագործ» բազմատիրաժ թերթը։ Տարիներ առաջ, երբ Կիրովականը Գուգարքի վարչական շրջանի կենտրոնն էր, այստեղ հրատարակվում էր նաև «Գուգարք» շրջանային թերթը (այժմ վարչական շրջանի կենտրոնը Կիրովականից արևելք գտնվող Մեղրուտ գյուղն է)։ Կիրովականում են ծնվել հայկական մշակույթի մի շարք երախտավորներ (գրաքննադատ, թարգմանիչ Յոլակ Խանդաղյանը, արձակագիր Ստեփան Զորյանը, քաղաքական գործիչ ու գիտնական Հայկ Ազատյանը և ուրիշներ)։

Կիրովականը ավտոճանապարհների հանգույց է, ունի երկաթուղային կայարան և օդանավակայան։ Նա մշտական կապ ունի Երևանի (որից գտնվում է 145 կմ հեռավորության վրա), Թբիլիսիի, Լենինականի, Ստեփանավանի և Ալավերդու հետ։ Քաղաքի արդյունաբերության անխախտելի արագացմանը զուգընթաց կտրուկ կերպով աճել է նրա բնակչությունը։ 1926 թ. Կիրովականն ուներ 8640 բնակիչ, 1939 թ. 17607, 1959 թ.՝ 49423, 1970 թ.՝ 106691, 1975 թ. սկզբին՝ 126278 բնակիչ, 1/I 1985-ին՝ 164,8 հազար բնակիչ։ Այլ կերպ ասած, քաղաքի բնակչությունը 1926—1974 թթ. ընթացքում աճել է ավելի քան 16 անգամ։ Կիրովականն ամենաարագ աճող քաղաքներից մեկն է և՛ հանրապետությունում, և՛ Միության մասշտաբով։ Մեծ տոկոս է կազմում մանավանդ մեխանիկական աճը, որը հիմնականում կատարվում է գյուղա-

կան բնակավայրերից, հարևան հանրապետություններից եկողների և հայրենադարձների հաշվին։ Աճի հետ միասին Կիրովականի բնակչությունը կրել է նաև սոցիալական ու որակական հսկայական փոփոխություններ։ Քաղաքի բնակչության մեջ բավական մեծ տոկոս են կազմում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողները, մտավորականության ներկայացուցիչները, տեխնիկական մտավորականությունը, իրենց գործը տիրապետող որակյալ բանվորները։ Կիրովականը ինտերնացիոնալ քաղաք է։ Բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող հայերից բացի այստեղ ապրում են նաև ռուսներ, ուկրաինացիներ և ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչներ։

1988 թ. դեկտեմբերի 7-ի կործանարար երկրաշարժից մեծապես տուժեց նաև Կիրովականը։ Խարխլվեցին կամ կործանվեցին հարյուրավոր բնակելի շենքեր, հիմնարկ-ձեռնարկություններ և այլ շինություններ։

Բրոնզեդարյան ժամանակաշրջանի նյութական մշակույթի հետքեր, միջնադարյան բնակավայրերի մնացորդներ և անցյալից մնացած երկու եկեղեցիներ. ահա այն հնություններն ու հուշարձանները, որ Կիրովականը ժառանգություն է ստացել անցյալից։ Եկեղեցիներից մեկը հայկական է և կառուցվել է XVII դարում՝ սև սրբատաշ տուֆից ու այժմ էլ կանգուն է։ Մյուս եկեղեցին, որ դարձյալ կանգուն է, ռուսական եկեղեցին է, կառուցված XIX դարում։

***

Լոռին Հայաստանի այն մասերից է, որտեղ հնությունները համեմատաբար լավ են պահպանվել։ Այստեղ նշմարվել են բրոնզեդարյան մշակույթի հետքեր, հայկական միջնադարյան ճարտարապետության բազմաթիվ կոթողներ (Սանահին, Հաղպատ, Օձուն, Ախթալա և այլն), բերդաքաղաքների ավերակներ (Լոռի) և այլ հուշարձաններ։

Է. Շիրակ

Հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում Շիրակը խաղացել է բացառիկ մեծ դեր։ IX—XI դարերում նա հայկական պետության օրրան էր, Անի—Շիրակի թագավորության կորիզը։ Այժմ Շիրակ բնաշխարհ (կամ տնտեսական շրջան) ասելով հասկանում ենք Շիրակի դաշտը հարակից տարածքների հետ միասին՝ Անիի, Ախուր-

յանի, Ղուկասյանի և Ամասիայի վարչական շրջանները միասին վերցրած։

Շիրակն իր հզոր արդյունաբերությամբ և զարգացած գյուղատնտեսությամբ կարևոր դեր է խաղում մեր հանրապետության մեջ։ Նրա տնտեսության կարևոր ճյուղերից են թեթև ու սննդի արդյունաբերությունը, մեքենաշինությունը, շինանյութերի արտադրությունը, դաշտավարությունը, շաքարի ճակնդեղի և հացահատիկային կուլտուրաների մշակությունը, անասնաբուծությունը և այլն։ Շիրակում են գտնվում Ամասիա, Անիպեմզա, Մարալիկ, Պեմզաշեն քաղաքատիպ ավանները և Լենինական ու Արթիկ քաղաքները։ Դրանցից Ամասիան համանուն վարչական շրջանի կենտրոնն է, իսկ Մարալիկը՝ Անիի վարչական շրջանի։

Արթիկ։— 1945 թ. հանրապետական ենթակայության կոչում ստացած այս քաղաքը գտնվում է Արագածի հյուսիս-արևմտյան ստորոտում։ Արթիկը համանուն վարչական շրջանի կենտրոնն է։ Քաղաքի շրջակայքում վարդագույն տուֆի հանքավայրերն են, որոնց պաշարները գործնականորեն համարում են անսպառ։ Արթիկը հանրապետության արդյունաբերության նշանակալի կենտրոններից է։ Այստեղ գործում են արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ՝ վակուումային էլեկտրավառարանների և տուֆաբլոկների գործարաններ, գուլպայի գործարանի մասնաճյուղ, գորգագործական ֆաբրիկա, տուֆի հանքավայր, պանրի գործարան և այլն։ Արթիկի վարդագույն տուֆը հայտնի է ոչ միայն հանրապետությունում, այլև Միությանմեջ և նրա սահմաններից դուրս։ Հանրապետության շատ թե քիչ նշանակալի բոլոր բնակավայրերի շենքերի զգալի մասը կառուցված է Արթիկի վարդագույն տուֆից։ Իսկ ինքը՝ Արթիկը ամբողջովին տուֆակերտ է։ Քաղաքն ունի հանրակրթական 6 դպրոց, մեկ տեխնիկում (ինդուստրիալ-շինարարական), երաժշտական և գիշերօթիկ դպրոց, երկու ակումբ, ժողովատրոն, երկու կինոթատրոն, գրադարաններ։ Հեռավորությունը Երևանից 121 կմ է։ Երկաթուղով կապված է Լենինականի, իսկ բարեկարգ ավտոճանապարհով՝ Լենինականի ու Երևանի հետ։

Արթիկը հնություններով հարուստ է։ Քաղաքի արևելյան կողմում (3—4 կմ հեռավորության վրա) հայտնաբերվել են հին ու նոր քարեդարյան նյութական մշակույթի մնացորդներ, քաղաքից 2 կմ հարավարևմուտք պահպանված է Լմբատավանքը, իսկ քաղաքում Արթիկի VII դ. հայտնի եկեղեցին է։

Լենինական.— Իր նշանակությամբ ու մարդաշատությամբ հանրապետության երկրորդ քաղաք Լենինականը գտնվում է Ախուրյան գետի

ձախ ափին, ծովի մակարդակից մոտ 1556 մ բարձրության հարթավայրում։ Տարվա եղանակներն այստեղ խիստ են արտահայտվում՝ ձմռանը ցուրտ է, իսկ ամռանը՝ համեմատաբար շոգ։ Օդը մաքուր է և առողջարար, խմելու ջուրը՝ առաջնակարգ։ Լենինականի տեղում բնակավայր է եղել հնագույն ժամանակներից։ Նրա հին՝ Կումայրի անունը (որ հետագայում ձևափոխվելով դարձել է Գյումրի) կապում են VIII դ. վերջերին (մ. թ. ա.) Հայկական լեռնաշխարհ ու Փոքր Ասիա արշաված կիմերների անվան հետ։ Հայ մատենագրության մեջ Կումայրի-Գյումրի անունը առաջին անգամ հիշատակվում է VIII դ. (մ. թ.)։ Այն դարեր շարունակ մնում էր իբրև սովորական բնակավայր։ 1804 թ. Շիրակի հետ միասին Գյումրին ևս միացվում է Ռուսաստանին և, իբրև ռազմական նշանակություն ունեցող սահմանային կետ, 30-ական թվականների երկրորդ կեսին այստեղ զետեղում են ռուսական կայազոր ու հիմք դնում նրա բերդին։ 1837 թ. Գյումրին Նիկոլայ I-ի կնոջ՝ Ալեքսանդրա Ֆեոդորովնայի անունով կոչում են Ալեքսանդրապոլ, 1840 թ. համարում են քաղաք, որը 1850 թ. դառնում է Երևանի նահանգի մեջ մտնող Ալեքսանդրապոլի գավառի կենտրոնը։ Մինչև 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմը Ալեքսանդրապոլը պարզապես սահմանային բերդաքաղաք էր, տնտեսական առումով կարևոր նշանակություն չուներ։ Սակայն պատերազմից հետո, երբ Կարսի մարզի միացման շնորհիվ Ալեքսանդրապոլը դադարեց սահմանային լինելուց և երկաթուղով կապվեց Թբիլիսիի հետ (1898 թ.), այն XIX դ. վերջերին արդեն դարձավ Անդրկովկասի արհեստագործության խոշոր կենտրոններից մեկը։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Ալեքսանդրապոլն ուներ 50 հազարից ավելի բնակիչ, որի մոտ 20 տոկոսը կազմում էին արհեստավորները։ Ալեքսանդրապոլի աշխատավորությունը և տեղի բոլշևիկյան կազմակերպությունը խորհրդային կարգերի համար մղված կռիվների դրոշակակիրներից են։ 1920 թ. մայիսին առաջինը նրանք պայքարի ելան Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու համար։

Խորհրդային իշխանության հաստատման պահին արհեստավորական Ալեքսանդրապոլը այնուամենայնիվ գավառական խղճուկ քաղաք էր, հիմնականում սև տուֆից կառուցված մեկ հարկանի մանր տների համադրություն և զուրկ կոմունալ տարրական պայմաններից։ Չուներ շատ թե քիչ խոշոր արդյունաբերական որևէ ձեռնարկություն, բնակչության մեծագույն մասը անգրագետ էր։

1924 թ. հունվարի 27-ին, քաղաքի աշխատավորների պահանջով Ալեքսանդրապոլը վերանվանվեց Լենինական։ Խորհրդային ժամանակա-

շրջանում Երևանի նման Լենինականը ևս հիմնովին վերափոխվեց, վերակառուցվեց։ Նրա բոլոր կարգի վերափոխությունների հիմքը արդյունաբերության զարգացումն էր, որ սկսվել էր խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո։ Իվանովոյի մարզի տեքստիլագործների օգնությամբ 1924 թ. այստեղ արդեն շահագործման հանձնվեց տեքստիլ գործարանը, որ հետագայում ընդարձակվելով, 1939 թ. վերածվեց Մայիսյան ապստամբության անունը կրող տեքստիլ խոշոր կոմբինատի, որը հանրապետության խոշորագույն ձեռնարկություններից էր։ Կառուցվեցին գուլպայի, արիկոտաժի ֆաբրիկաներ և այլ ձեռնարկություններ։ Լենինականը դարձավ հանրապետության տեքստիլ արդյունաբերության ամենախոշոր կենտրոնը։ Տեքստիլ արդյունաբերությանը զուգընթաց Լենինականում հիմք դրվեց նաև սննդի արդյունաբերությանը։ 1937 թ. գործարկվեց մսի-պահածոների կոմբինատը, որը հանրապետության այդ կարգի ամենախոշոր ձեռնարկությունն էր, Միության մսի արտադրության խոշորագույն օբյեկտներից մեկը։ Հետագայում Լենինականի արդյունաբերության կառուցվածքում տեղի ունեցան էական փոփոխություններ։ Քաղաքում ստեղծվեցին ծանր արդյունաբերության՝ առաջին հերթին մեքենաշինական մի շարք ձեռնարկություններ՝ դարբնամամլիչային, հղկող հաստոցների, միկրոշարժիչների, էլեկտրատեխնիկական, «Ստրոմմաշինա» և այլն։ Խոշորացվեցին և վերափոխվեցին նրա գարեջրի հայտնի գործարանը և ԴԵՊ-ոն, գործարկվեցին հեծանվի, մահճակալի, ապակու, կաթի գործարանները, կահույքի, կոշիկի, կարի, հրուշակեղենի ֆաբրիկաները։ Նրա մեքենաշինական, տեքստիլ, սննդի արդյունաբերության ձեռնարկությունների արտադրած հաստոցների, զանազան սարքերի, քարհատ մեքենաների, միկրոէլեկտրաշարժիչների, գործվածքների, մսի պահածոների, հեծանիվների և այլ ապրանքների կեսից ավելին առաքվում էր Միության զանազան կողմեր և մասամբ արտասահմանյան երկրներ։

Լենինականի վերակառուցումը սկսվել է 1926 թ. աղետաբեր երկրաշարժից անմիջապես հետո, երբ քաղաքի բնակելի տների մեծագույն մասը վերածվեց փլատակների։ Խորհրդային ժամանակաշրջանում վերաստեղծվել և գեղեցկացել էր հանրապետության երկրորդ քաղաքը։ Քաղաքում ստեղծվել էին ընդարձակ և գեղեցիկ հրապարակներ (Մայիսյան ապստամբության, Աստղի, Հայրենական պատերազմում զոհվածների և այլն), լայն պողոտաներ ու փողոցներ (Հաղթանակի, Ա. Շիրակացու, Վ. Տերյանի, Մ. Գորկու, Սայաթ-Նովայի, Արագած և այլն), զբոսայգիներ, արդյունաբերական ձեռնարկությունների նորակերտ շենքեր, բնակելի հարմարավետ տներ, վարչական ու մշակութային շենքեր, ամբողջական ավաններ (Անտառավան, Նորավան և այլն), հուշարձաններ (Վ. Ի. Լենինի, Ստ. Շահումյանի, Ավ. Իսահակյանի, Հայրենական մեծ պատերազմում զոհվածներին նվիրված «Աշխատանքի և փառքի» հուշարձանը և այլն), կանաչ գոտիներ և ջրային տարածություններ։ Ճարտարապետական առումով առանձնապես աչքի էին ընկնում քաղկոմի, գուլպայի ֆաբրիկայի, կապի գրասենյակի, կենտրոնական հանրախանութի շենքերը։ Քաղաքն ուներ կենցաղ-սպասարկման լայն ցանց, ջրմուղ-կոյուղի (1949 թ.), տրոլեյբուսային (1962 թ.) ու ավտոբուսային երթևեկություն, երկու հյուրանոց, նորակառույց 9 հարկանի տուրիստական հանգրվան, ռեստորաններ, ճաշարաններ, սրճարաններ և խանութներ։

Լենինականը մշակույթի խոշոր կենտրոն էր։ Այստեղ գործում էին 35 հանրակրթական դպրոց (որից 31-ը միջնակարգ), երաժշտական ուսումնարան, 3 երաժշտական դպրոց, նկարչական դպրոց, Ա. Մռավյանի անվան պետական դրամատիկական թատրոն, տիկնիկային թատրոն, ակումբ-գրադարաններ (որոնցից ամենահայտնին կրում է Սեյանի անունը), թանգարան, 4 կինոթատրոն, Անդրկովկասի ճանապարհաշինարարության ինստիտուտի հեռակա մասնաճյուղ, 5 տեխնիկում (շինարարական, տրանսպորտի, սարքաշինական, բժշկական, դաշտավարական), գեոֆիզիկայի և սեյսմոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտը, Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտը, Ս. Մարքսի անվան Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մասնաճյուղը և այլն։ Քաղաքն ուներ իր ֆիլհարմոնիան, լարային, փողային, երգի ու պարի բազմաթիվ խմբեր, անվանի երգիչներ, երաժիշտներ ու պարողներ։ Լենինականում են ծնվել հայ մշակույթի ու գիտության անվանի շատ ներկայացուցիչներ՝ Ավետիք Իսահակյան, Հովհաննես Շիրազ, Գուսան Շերամ, կոմպոզիտորներ՝ Արմեն և Նիկողայոս Տիգրանյաններ, Զաքարիա Դոլուխանյան, Շարա Տալյան, գիտնականներ՝ Ի. Կոշտոյանց, Ա. Շահինյան, Ս. Համբարձումյան, քանդակագործ՝ Մերկուրով և ուրիշներ։

Ճանապարհների խոշոր հանգույց է Լենինականը։ Այն երկաթուղով կապված է Թբիլիսիի, Երևանի և Արթիկի հետ։ Այստեղից է սկսվում դեպի Կարս ձգվող երկաթուղին։ Քաղաքը գտնվում է Երևան. Կիրովական և Ախալքալաք գնացող ասֆալտապատ ավտոճանապարհների հանգուցակետում։ Ունի օդանավակայան։ Լենինականը Շիրակի շրջանի արդյունաբերական գլխավոր հանգույցն էր և դեպի իրեն էր ձգում նրա արտադրական ու մշակութային կապերը։

Քաղաքի արդյունաբերության և մշակույթի զարգացումը պայմա-

նավորեց նաև նրա բնակչության աճը։ 1926—1985 թթ. ընթացքում Լենինականի բնակչությունը ավելանում է ավելի քան հինգ անգամ՝ 12313-ից (1926 թ.) հասնելով 223,3 հազար մարդու (1985 թ. սկզբին)։ Դրա մոտ մեկ երրորդը կազմում էին սովորողները, իսկ ավելի քան 55 հազարը՝ բանվոր-ծառայողները։ Հիմնովին բարեփոխվել էր բնակչության առողջապահական և կուլտուր-կենցաղային պայմանները։ Քաղաքում գործում էին բազմաթիվ բուժհիմնարկներ, մանկապարտեզներ ու մանկամսուրներ։ Մեծ զարգացում էին ստացել ֆիզկուլտուրան ու սպորտը։ Քաղաքն ուներ իր մարզադաշտը։ Լենինականը տվել է սպորտի շատ վարպետներ։

Սակայն 1988 թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժը գրեթե հիմնովին ավերեց ու փլատակների վերածեց ողջ քաղաքը։ Երկրաշարժին զոհ գնացին տասնյակ հազարավոր մարդիկ։ Սպիտակի պես Լենինականը ևս նոր պետք է կառուցվի։

Պատմաճարտարապետական հուշարձաններից առանձնապես հիշատակության արժանի էին քաղաքի 3 կանգուն եկեղեցիները՝ ս. Փրկիչը, Մ. Աստվածածինը, ս. Նշանը։ Ս. Փրկիչը հոյակապ տաճար էր, կառուցված Անիի Մայր եկեղեցու ոճով՝ 19-րդ դ. վերջերին։ 1926 թ. երկրաշարժի հետևանքով վնասվել էր նրա գմբեթը, իսկ 1988-ի դեկտեմբերի 7-ի աննախադեպ երկրաշարժի հետևանքով ավերվեց ամբողջ եկեղեցին։

* * *

Շիրակը հարուստ է պատմական հուշարձաններով։ Պատմական Շիրակ գավառի Խորհրդային Հայաստանի մեջ մտնող հատվածում են գտնվում Երերույքի տաճարը (Անիպեմզա քաղաքատիպ ավանում), Արթիկի եկեղեցիները, Մարմաշենի հայտնի տաճարը (Մարմաշեն գյուղի մոտ), Հառիճի վանքը (Հառիճ գյուղում, Արթիկից մի քանի կմ հարավարևելք), Վահրամաբերդի ավերակները և այլ հնություններ ու հուշարձաններ։

Մեր ժողովրդի պատմության հայտնի վայրերից է Շիրակի Խի-Ղարաբիլիսա գյուղը (կոչվել է նաև փոքր Ղարաբիլիսա, այժմ Ազատան)։ Այն Արևելյան Հայաստանի մի շարք այլ բնակավայրերի հետ միասին նշանավոր դարձավ ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ժամանակ։ Այստեղ 1826 թ. հուլիսին գյուղացիները միացած ռուս սահմանապահ զինվորների հետ հերոսական դիմադրություն են ցույց տվել դեպի Գյումրի արշավող Հասանխանի զորքերին։

Հինավուրց Երևանը 1920 թ. հռչակվում է նորաստեղծ Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք, և դրանով սկսվում է նրա պատմության նորագույն շրջանը, աննախընթաց վերելքի ժամանակաշրջանը։ Երևանի ընդհանուր առաջադիմության հիմքում առաջին հերթին ընկած է նրա արդյունաբերության բուռն, անհավատալի արագ զարգացումը։ Նախախորհրդային շրջանից ժառանգած անկում ապրող արդյունաբերական ձեռնարկությունները 1921—25 թթ. վերականգնելուց հետո հանրապետության կառավարությունն ու Երևանի աշխատավորությունը ձեռնամուխ եղան մայրաքաղաքի արդյունաբերության հետագա զարգացման դժվարին գործին։ Երևանը թույլ զարգացած գավառական քաղաքից վերածվեց արդյունաբերության խոշոր կենտրոնի ամբողջ Միության մասշտաբով։ Հանրապետության արդյունաբերական արտադրանքի կեսից ավելին բաժին է ընկնում մայրաքաղաք Երևանին։ Երկու հարյուր քսանից անցնող նրա մետաղաձուլական, քիմիական, մեքենաշինական, թեթև և սննդի արդյունաբերության խոշոր ձեռնարկությունների արտադրանքները՝ սինթետիկ կաուչուկը, ալյումինը, կաբելները, ավտոդողերը, մետաղահատ դազգահները, շարժական էլեկտրակայանները, ուժային տրանսֆորմատորները, գեներատորները, ջրհան պոմպերը, էլեկտրալամպերը, ճշգրիտ սարքերը, էլեկտրոնային հաշվիչ մեքենաները, կոմպրեսորները, ավտոամբարձիչները, «Երազ» մակնիշի ավտոմեքենաները, տարբեր տիպի ժամացույցները, ավտոպահեստամասերը, բրդյա գործվածքները, կոնյակները, քաղցր գինիները, պահածոներն ու կոմպոտները և հարյուրավոր այլ արտադրանքներ հայտնի են ոչ միայն հանրապետությունում, այլև նրա սահմաններից շատ հեռու։ Երևանի արդյունաբերական տասնյակ տեսակի արտադրանքները բարի համբավ են ձեռք բերել ոչ միայն Միության տարբեր հանրապետություններում, այլև արտասահմանյան շատ երկրներում։ Երևանում արտադրված արդյունաբերական շատ ապրանքներ կարելի է հանդիպել նույնիսկ հեռավոր Մեքսիկայում, Արգենտինայում, Ինդոնեզիայում, Պակիստանում, և կապիտալիստական զարգացած երկրներում։ Դրա հետ միասին անհավատալի թափով առաջադիմել է նաև նրա քաղաքային տնտեսությունը։

Երևանը Խորհրդային Միության և աշխարհի ամենաարագ զարգացող քաղաքներից է։ Դա ցայտուն կերպով երևում է նախ և առաջ նրա բնակչության հեքիաթային ավելացումից։ Այսպես, եթե Հայաստանում

խորհրդային կարգերի հաստատման պահին Երևանն ուներ ընդամենը 30 հազար բնակիչ, ապա 1985 թ.՝ 1 միլիոն 118 հազար բնակիչ։

Բնակչության թվի այդպիսի արագաթափ աճի հետ միասին ընդարձակվել է և քաղաքը։ Եթե մինչև 30-ական թվականները Երևանը հիմնականում ամփոփված էր Կոնդի, Քանաքեռի ու Սարիթաղի բարձրությունների կազմած ամֆիթատրոնում, որը հեռանկարային գլխավոր հատակագծման էր ենթարկված մեծահռչակ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի կողմից, ապա հետագայում քաղաքը խախտեց «բնական» այդ սահմանները և փռվեց մեծ տարածությունների վրա՝ ձգվելով դեպի Հրազդանի աջափնյա դաշտերը, դեպի Քանաքեռ և ավելի հյուսիս, դեպի Վարդաշեն ու Սովետաշեն, դեպի հարավ՝ Հրազդանի ստորին հոսանքը։ Այդ պատճառով 30-ական թվականների վերջերին հարկ եղավ նախկին 150—200 հազար բնակչության համար կազմած հեռանկարային հատակագծի փոխարեն կազմել նոր հատակագիծ, այս անգամ 400 հազար բնակչություն ունեցող քաղաքի համար։ Սակայն շատ չանցած այն ևս դադարեց աճող քաղաքի պահանջները բավարարելուց և Ա. Թամանյանի տաղանդավոր աշակերտների մի խումբ ձեռնամուխ եղավ նոր գլխավոր հատակագծի մշակման գործին, որը գործողության մեջ դրվեց 1967 թ.։ Այժմ կազմվում է մի նոր, խորհրդային շրջանում կազմված թվով 5-րդ «Մեծ Երևանի» հատակագիծը։

Երևանի ճարտարապետական համալիրների և լայն պողոտաների ու փողոցների քաղաք է։ Նրա կենտրոնը Լենինի անվան հրապարակն է։ Այստեղ իշխող դիրք ունի կառավարական շենքը (ճարտ. Ա. Թամանյան), որը մեր ժամանակների ճարտարապետական գլուխգործոցներից մեկն է ընդհանրապես։ Հրապարակի մյուս կողմերում բարձրանում են արհմիությունների շենքը, կուլտուրայի տունը, վարչական շենքը և «Արմենիա» շքեղ հյուրանոցը։ Հրապարակի հարավային մասում բարձրանում է Վ. Ի. Լենինի մոնումենտալ արձանը (քանդակագործ Մերկուրով)։ Հարավային մասում Լենինի հրապարակը պուրակով միանում է Ս. Շահումյանի անվան հրապարակին, որտեղ կանգնեցված է ականավոր հեղափոխականի հուշարձանը։ Երևանի մյուս համալիրներից են Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի հրապարակն իր շուրջը եղած կառույցներով, որոնց վրա իշխող դիրք ունի օպերայի մոնումենտալ շենքը (ճարտ. Ա. Թամանյան), Սպանդարյանի անվան հրապարակը քաղաքի արդյունաբերական թաղամասում, «Երևան» երկաթուղային կայարանի հրապարակը, որտեղ կանգնեցված է Սասունցի Դավթի հուշարձանը (քանդակագործ Ե. Քոչար) և

այլն։ Իրենց ճարտարապետությամբ առանձնապես հայտնի են Լենինի, Ազատության, Օրջոնիկիձեի, Հոկտեմբերյան պողոտաների, Աբովյան, Ամիրյան, Թումանյան, Թամանյան, Սայաթ-Նովայի, Կոմիտասի, Գայի, Բարեկամության և այլ փողոցների ուղղությամբ կառուցված հասարակական, դպրոցական, հիվանդանոցային, հյուրանոցային, վարչական շենքերը, բնակելի տները։ Այժմ քաղաքում կառուցվող շենքերը հիմնականում բազմահարկ են՝ 7—13 հարկանի։ Ակադեմիկոս Ա. Թամանյանը, նրա դպրոցի տաղանդավոր ներկայացուցիչներն ու հետևորդները, շինարարներն ու անզուգական վարպետները մայրաքաղաքում ստեղծել են ուշադրության արժանի ճարտարապետական հարյուրավոր կոթողներ։ Մեր մայրաքաղաքի ինքնատիպ շենքերի մեջ կան և՛ դպրոցական ու հիվանդանոցային, և՛ հասարակական ու վարչական, և՛ բնակելի ու արդյունաբերական ձեռնարկությունների, և՛ գիտական ու մշակութային բազմաթիվ շենքեր, որոնք այն դարձնում են ճարտարապետական մի հսկայական թանգարան։ Առանձնապես նշելի են կառավարական շենքը, օպերայի և բալետի թատրոնի, Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի, «Ռոսիա» և «Մոսկվա» կինոթատրոնների, Հայաստանի ԿԿ Կենտրոնական կոմիտեի, Մատենադարանի, 26 կոմիսարների ու Չարենցի անվան դպրոցների, Պետական համալսարանի ու Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի, հանրապետական հիվանդանոցի, կոնյակի գործարանի շենքերը, «Արարատ» գինու կոմբինատի շենքը, Ծիծեռնակարերդի մարդահամերգային համալիրը, «Հրազդան» և հանրապետական մարզադաշտերը, «Անի», «Արմենիա», «Դվին» հյուրանոցները, պետական պատկերասրահն ու երիտասարդական պալատը, մետրոպոլիտենի կայարանները և այլն, և այլն։ Մեր մայրաքաղաքի վերակառուցման գործի մեծագույն երախտավոր ակադեմիկոս Ա. Թամանյանը նրա ճարտարապետության հիմքում դրեց հայ ճարտարապետության լավագույն ավանդույթները, սովետական քաղաքաշինության սկզբունքները, ճարտարապետության համաշխարհային նվաճումները։ Բաց երկնքի տակ գտնվող ճարտարապետական այդ մեծ թանգարանում իշխողը հայկական ճարտարապետական ոճն է, հայկական կոլորիտը՝ բարձրացված խորհրդային և համաշխարհային ժամանակակից քաղաքաշինության մակարդակից։

Մեծ տարածության վրա փռված Երևանն ունի տրանսպորտային համապատասխան ցանց՝ տրամվայ, տրոլեյբուս, ավտոբուս, մետրոպոլիտեն, ճոպանուղի, տաքսիներ։ Երևանը հարևան հանրապետությունների և խորհրդային Միության բազմաթիվ քաղաքների հետ ունի օդա-

նավային մշտական կապ։ Այն ԽՍՀՄ-ի միջազգային նշանակության օդանավակայաններից մեկն է, որի միջոցով կապ է պահպանվում Մերձավոր Արևելքի երկրների հետ և Եվրոպական մի քանի քաղաքների հետ։ Երևանը երկաթուղիներով կապված է Բաքվի, Թբիլիսիի և Սևանի հետ։ Մայրաքաղաքից ճառագայթաձև դուրս են գալիս մի քանի ճանապարհներ (Երևան—Լենինական, Երևան—Սևան, Երևան—Արտաշատ—Եղեգնաձոր—Ջերմուկ և այլն), որոնք այն կապում են հանրապետության քաղաքների ու շրջկենտրոնների հետ։

Երևանը կանաչապատ քաղաք է։ Այստեղ ստեղծված են բազմաթիվ պուրակներ ու զբոսայգիներ (Կոմսոմոլի անվան, Հաղթանակ, Մանկական, Գ. Ղուկասյանի անվան, Կոմիտասի անվան և այլն), երկար տաբածության վրա ձգվող կանաչ գոտիներ, կանաչ տարածություններով զուգված փողոցներ ու պողոտաներ (Աբովյան փողոց, Լենինի պողոտա և այլն)։ Քաղաքն ունի բնակչության կենցաղսպասարկման լայն ցանց, աղբյուրի առաջնակարգ խմելու ջուր, հարյուրավոր ցայտաղբյուրներ։ Ամբողջ քաղաքն ընդգրկված է ավտոմատ հեռախոսային ցանցի մեջ։ Երևանն ունի միջքաղաքային հեռախոսային և հեռագրական, ֆոտոհեռագրական կապ։ Ավտոմատ հեռախոսային կապ ունի Մոսկվայի, Թբիլիսիի և այլ քաղաքների հետ։ 70-ական թթ. վերջերին շահագործման հանձնվեց «Օրբիտա—2» տիեզերական կապի Երևանի կայանը։

Քաղաքի հյուրանոցային ցանցն ամբողջովին ստեղծվել է խորհրդային շրջանում։ Ներկայումս Երևանում գործում են 20 հյուրանոց՝ «Արմենիա», «Անի», «Երևան», «Սևան», «Նաիրի», «Արաբկիր», «Սեբաստիա», «Մասիս», «Պրագա», «Ծիծեռնակ», «Դվին», «Էրեբունի» և այլն՝ 11908 մահճակալով (1985)։

Ժողովրդական տնտեսության զարգացումը նյութական հիմք ստեղծեց նաև քաղաքի բնակչության առողջապահությունն ու բուժօգնությունը ժամանակակից մակարդակով կազմակերպելու համար։ Քաղաքում ստեղծվել են նոր, ժամանակակից սարքավորումներով ու հարմարություններով զինված հիվանդանոցներ (հանրապետական հիվանդանոցը, առողջապահության մինիստրության 4-րդ վարչության հիվանդանոցը, Նորքի հիվանդանոցը և այլն), գիտահետազոտական ինստիտուտներ (սրտաբանության, ուռուցքաբանության և այլն), բուժարաններ, ծննդատներ, մոր ու մանկան հիվանդանոց, հիմնարկ-ձեռնարկային հարյուրավոր բուժկետեր, բժշկական տեղամասեր, մասնագիտական զանազան կայաններ, լաբորատորիաներ ու կաբինետներ, դեղատներ։

Բնակչության առողջությանը մեծապես նպաստում է սպորտը և

ֆիզկուլտուրան։ Այդ բնագավառում մեծ աշխատանքներ են կատարում սպորտային կամավոր ընկերությունները՝ «Սպարտակ», «Դինամո», «Աշխատանք», «Բուրևեստնիկ» և այլն։ Ամենուր կառուցված են տասնյակ մարզադաշտեր, բազմաթիվ խաղահրապարակներ, կորտեր, լողավազաններ, խաղադաշտեր։

1931 թ. Երևանն արդեն համատարած գրագիտության քաղաք էր։ 1940—41 ուս. տարում այն ուներ 45 հանրակրթական դպրոց, 1474 ուսուցիչ և 38295 աշակերտ, այսինքն մոտ 9,5 անգամ ավելի աշակերտ ուներ, քան 1914 թ.։ Այժմ Երևանում յուրաքանչյուր երեք բնակչից մեկը սովորող է։

XV դարից ի վեր Հայաստանում բարձր տիպի դպրոցներ իսպառ չկային։ Նրա դրչության, գիտության ու արվեստի կենտրոնները՝ միջնադարյան համալսարանները (Գլաձոր, Տաթև, Սանահին և այլն) մեկը մյուսին փոխարինող վայրագ ցեղերի կողմից իսպառ վերացվել էին երկրի երեսից։ Խորհրդային Հայաստանում առաջին բարձրագույն դպրոցը Երևանի ժողովրդական համալսարանն է, որ բացվել է 1920 թ. դեկտեմբերին և որը 1923 թ. կոչվել է Երևանի պետական համալսարան։ 1928 թ. Երևանում հիմնադրվեց անասնաբուժական ինստիտուտ, 1930 թ. համալսարանի առանձին ֆակուլտետների բազայի վրա ստեղծվեցին պոլիտեխնիկական, բժշկական, գյուղատնտեսական, իսկ այնուհետև հայկական մանկավարժական և հեռակա մանկավարժական ինստիտուտներ։ Հայրենական մեծ պատերազմից հետո քաղաքում բացվեցին բարձրագույն ուսումնական մի քանի նոր հաստատություններ՝ գեղարվեստա-թատերական, ֆիզկուլտուրայի, ուսաց և օտար լեզուների ինստիտուտները։ 1984—85 ուս. տարում մայրաքաղաքն ուներ 11 բարձրագույն դպրոց՝ շուրջ 56 հազար սովորողներով։ Երևանի բարձրագույն դպրոցները հանրապետության և երկրի համար մասնագետներ են պատրաստում ավելի քան 350 մասնագիտությունների գծով։ Դրանք ապահովված են բարձր որակավորում ունեցող դասախոսներով, նյութատեխնիկական բազայով, համապատասխան սարքավորումներով ու հարմարավետ շենքերով։ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի հիմքի վրա 1975-ին բացվել է նաև ժողովրդական տնտեսության ինստիտուտ։

Ժողովրդական տնտեսությունը հսկայական պահանջներ ունի նաև միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող մասնագետների՝ տեխնիկների, բուժակների և այլն։ Երևանում ներկայումս գործում են միջնակարգ մասնագիտական մոտ երկու տասնյակ հաստատություն։

Եռուն մշակութային կյանք ունի Երևանը, խոշոր քաղաքին հատուկ մշակութային կյանք։ Քաղաքը պատած է մասսայական ու պետական գրադարանների, մշակույթի պալատների ու տների, ակումբների, կինոթատրոնների, թանգարանների ու կուլտուր-լուսավորական այլ հաստատությունների ցանցով։ Մայրաքաղաքի տարբեր կարգի գրադարանների թիվը 300-ից անցնում է։ Դրանց թվին են պատկանում նաև այնպիսի հարուստ գրադարաններ, ինչպիսիք են՝ Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանը (միլիոնների հասնող գրքի ֆոնդով), ԳԱ-ի, Երևանի պետական համալսարանի, առողջապահության մինիստրության, Ավ. Իսահակյանի անվան քաղաքային կենտրոնական և այլ գրադարաններ, ինչպես նաև տասնյակ հաղարավոր անձնական բավական հարուստ գրադարաններ։ Մեր մայրաքաղաքի բնակչությունը գրասեր է։ Այստեղ գիրքը սպառվում է մեծ տպաքանակով։

Պիոներական պալատում և բազմաթիվ ձեռնարկությունների, Նոր-Արեշի, Զեյթունի, Արաբկիրի և այլ թաղամասերի ակումբներին կից ստեղծված ինքնագործունեության խմբերը (պար, երգ, սամունք, ինքնագործ թատերական խումբ), զբոսայգիներում կազմակերպվող ամենօրյա հանդեսները, համերգները, մասսայական ներկայացումները մեծապես նպաստում են երիտասարդ սերնդի գեղարվեստական ունակությունների զարգացմանը։ Բնակչության գեղարվեստական ինքնագործունեության ասպարեզում մեծ գործ է կատարում ժողովրդական ստեղծագործության տունը։

Երևանը թանգարանների քաղաք է։ Այստեղ են գտնվում հանրապետության պետական Պատմության թանգարանը, Պատկերասրահը, Հեղափոխության պետական թանգարանը, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը, որը միաժամանակ հին ձեռագրերի ուսումնասիրման գիտահետազոտական ինստիտուտ է, Երևանի պատմության, գրականության ու արվեստի թանգարանը, Խ. Աբովյանի, Ավ. Իսահակյանի, Հովհ. Թումանյանի, Մ. Սարյանի, Ալ. Սպենդիարյանի, Ե. Չարենցի, Ա. Խաչատրյանի տուն-թանգարանները, Էրեբունիի թանգարանը, բնության, երկրաբանության թանգարանները, պլանետարիան, կենդանաբանական ու բուսաբանական այգիները, մշտական գործող զանազան ցուցահանդեսներ՝ ժողովրդական տնտեսության ու մշակույթի նվաճումների, նկարիչների միության, ժողովրդական ստեղծագործության, մանուկների ստեղծագործության ցուցահանդեսները։

Խորհրդային տարիներին Երևանում ստեղծվել է տպագրության

հզոր բազա, ժամանակակից սարքավորումներով զինված մի շարք տպարաններ, որ տարեկան կարող են բաց թողնել հազարավոր գրքեր ու գրքույկներ։ Քաղաքում հրատարակվում են մի ամբողջ շարք թերթեր («Խորհրդային Հայաստան», «Коммунист», «Գրական թերթ» և այլն), տասնյակ հիմնարկային բազմատիրաժ թերթեր, մատրիցայից տպագրվում են «Правда», «Известия» և «Комсомольская правда» թերթերը, տպագրվում են տասնյակ ամսագրեր՝ «Լենինյան ուղիով», «Խորհրդային գրականություն», «Խորհրդային արվեստ», «Խորհրդային Հայաստան», «Литературная Армения», «Հայաստանի արդյունաբերություն» և այլն։

Երևանն ունի իր ռադիոկայանը, որ հաղորդումներ է տալիս մի քանի ալիքներով, մի շարք լեզուներով, հեռուստատեսային կայան։ Այստեղ է գտնվում Հայկական հեռագրական գործակալությունը։

Երևանը Խորհրդային Միության գիտության խոշորագույն կենտրոններից է։ Նրա գիտության զարգացումը բացառապես կապված է Խորհրդային շրջանի հետ։

Մեծապես ավելացել է գիտության ժամանակակից ճյուղերով, տեխնիկական, ֆիզիկամաթեմատիկական, կենսաբանական և բնական ու կիրառական մյուս գիտություններով զբաղվողների թիվը։ Հետք թողնող ժառանգություն է ստեղծված հատկապես աստղագիտության (ակադ. Վ. Համբարձումյանի գլխավորությամբ), ֆիզիկայի (ՀԽՍՀ ԳԱ ակադ. Ա. Ալիխանյան, Ն. Քոչարյան և ուրիշներ), մաթեմատիկայի (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Շահինյան, Մ. Զրբաշյան, Ս. Մերգելյան), մեխանիկայի (Կ. Զորանյան, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ն. Հարությունյան, Ս. Համբարձումյան), տեխնիկական գիտությունների (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ի. Եղիազարյան, Ա. Հակոբյան և ուրիշներ), երկրաբանական գիտությունների (ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Կ. Պաֆենգոլց, Ի. Մաղաքյան և ուրիշներ), կենսաբանության, քիմիայի, բժշկական գիտությունների, հայագիտության և բազմաթիվ այլ բնագավառներում, որոնց նույնիսկ սոսկ թվարկումն անհնար է նման աշխատություններում։

Երևանը արդի հայ գրականության խոշորագույն կենտրոնն է։ Խորհրդային տարիներին Երևանում են ապրել ու ստեղծագործել Ալ. Շիրվանզադեն, Ավ. Իսահակյանը, Ե. Չարենցը, Դ. Դեմիրճյանը, Ա. Բակունցը, Ստ. Զորյանը, Վ. Թոթովենցը, Գ. Սարյանը, Հր. Քոչարը, Գ. Մահարին, Ս. Տարոնցին, Ն. Զարյանը, Պ. Սևակը, Խ. Դաշտենցը, Քր. Թափալչյանը, Հ. Շիրազը և հայ գրականության ուրիշ երախտավորներ։

Երևանի գրողների բնատիպն այժմ նույնպես բաղմանդամ է՝ Հ. Սահյան, Հր. Հովհաննիսյան, Ս. Խանզադյան, Վ. Անանյան, Գ. Էմին, Զ. Դարյան, Հ. Մաթևոսյան, Վ. Գնարոսյան, Վ. Դավթյան, Ռ. Դավոյան և շատ ուրիշներ։

Առաջին պրոֆեսիոնալ թատրոնը Երևանում հիմնվել է խորհրդային իշխանության օրոք՝ 1921 թ., Սունդուկյանի անվան թատրոնի ստեղծմամբ։ Այն հայ ազգային պրոֆեսիոնալ թատրոնի առաջնեկն է, մայր թատրոնը։ Թատրոնն իր գոյության ընթացքում ունեցել է հարուստ խաղացանկ, ուր տեղ են գտել հայկական, ռուսական և արևմտաեվրոպական դասական ու ժամանակակից դրամատուրգների ընտիր ստեղծագործությունները։ Սունդուկյանի թատրոնի բեմում հանդես են եկել հայ թատրոնի այնպիսի վարպետներ, ինչպիսիք են՝ Գ. Ավետյանը, Մ. Մանվելյանը, Հովհ. Աբելյանը, Ա. Ոսկանյանը, Հասմիկը, Հ. Ներսիսյանը, Վ. Փափազյանը, Վ. Վաղարշյանը, Օ. Գուլազյանը, Գ. Գաբրիելյանը, Ա. Ավետիսյանը, Գ. Ջանիբեկյանը, Հ. Խաչանյանը, Դ. Մալյանը և ուրիշներ։ Թատրոնում իրենց բեղմնավոր գործունեությունն են շարունակում ԽՍՀՄ ժողովրդական դերասաններ Մ. Սիմոնյանը, Վ. Վարդերեսյանը, Ս. Սարգսյանը, Խ. Աբրահամյանը, Մ. Մկրտչյանը և ուրիշներ։

Երևանի թատերական կյանքի երկրորդ մեծ իրադարձությունը Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի ստեղծումն էր։ Ժամանակի ընթացքում ճոխացել ու հարստացել է նրա խաղացանկը հայ, ռուս և արևմտաեվրոպական կոմպոզիտորների օպերաներով ու բալետներով։ Օպերային բեմի ճանաչված վարպետներից են եղել Հ. Դանիելյանը, Պ. Լիսիցյանը, Զ. Դոլուխանյանը, Շ. Տալյանը, Տ. Սազանդարյանը։ Նրանց ստեղծած լավագույն տրադիցիաները շարունակում են Գ. Գասպարյանը, Նառ Հովհաննիսյանը և ուրիշներ։ Թատրոնի ականավոր դիրիժորներ Գ. Բուդաղյանը, Ս. Զաբելյանը, Մ. Թավրիզյանը, Դ. Շիկանյանը և երիտասարդ սերնդի մի քանի ներկայացուցիչներ հայտնի են երաժշտասեր հասարակայնությանը։

Երևանի պրոֆեսիոնալ մյուս թատրոններից են Դրամատիկական, Պատանի հանդիսատեսի, Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական, Երաժշտական կոմեդիայի թատրոնները, որոնք նույնպես զգալի աշխատանք են կատարում Երևանի բնակչության թատերական կուլտուրան բարձրացնելու ուղղությամբ։

Երևանը հայ երաժշտության մեծագույն կենտրոնն է։ Մայրաքաղաքի հարուստ երաժշտական կյանքի առաջընթացն իր հիմքում ունի հանրապետության Կոմիտասի, Տ. Չուխաջյանի, Կարա-Մուրզայի, Մ. Եկմալյանի անզուգական ստեղծագործությունները, Ալ. Սպենդիարյանի, Արմեն Տիգրանյանի, Անուշավան Տեր-Ղևոնդյանի և նրանց կրտսեր ժամանակակիցների՝ Հ. Ստեփանյանի, Ա. Սաթյանի, Ա. Այվազյանի, իսկ հետագայում՝ մեծ կոմպոզիտոր Ա. Խաչատրյանի, Ա. Բարաջանյանի, Հ. Հարությունյանի, Է. Միրզոյանի, Է. Հովհաննիսյանի, Դ. Եղիազարյանի, ավելի երիտասարդ սերնդի մի շարք կոմպոզիտորների գործերը։ Երևանում կան անվանի բազմաթիվ կոլեկտիվներ ու անհատ կատարողներ։ Առանձնապես մեծ համբավ ունեն Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի, Հայհամերգի և ռադիոյի ու հեռուստատեսության պետական կոմիտեի սիմֆոնիկ նվագախմբերը, Հայաստանի պետական երգչախումբը, Թ. Ալթունյանի անվան ժողովրդական երգի ու պարի պետական անսամբլը, պետական էստրադային նվագախումբը, պարի պետական անսամբլը և այլն։ Հանրահայտ են երևանցի բազմաթիվ երգիչ-երգչուհիներ, երաժիշտներ, որոնք հայ երգն ու երաժշտությունը հնչեցրել են խորհրդային Միության բազմաթիվ քաղաքներում ու արտասահմանյան տասնյակ երկրներում, ամենուրեք արժանանալով բարձր գնահատականի։ Հայկական երգի ու երաժշտության մեծ պրոպագանդիստներ են Գ. Գասպարյանը, Զ. Դոլուխանյանը, Լ. Զաքարյանը և տասնյակ այլ վարպետ կատարողներ, որոնցից շատերը միութենական և միջազգային մրցույթների դափնեկիրներ են։

Երևանը հայ կինոյի առաջին (և միակ) կենտրոնն է։ Այստեղ 1924 թ. ստեղծվեց «Հայֆիլմ» կինոստուդիան։ Տասնյակ կինոնկարներ է թողարկել «Հայֆիլմ»-ը, որոնցից շատերը ցուցադրվել են Միության և արտասահմանյան բազմաթիվ էկրանների վրա։ Կինոնկարներ է թողարկում նաև հեռուստատեսությունը։

Նորագույն շրջանի հայ գեղանկարչության կենտրոնը Երևանն է։ Այստեղ են ապրել ու ստեղծագործել խորհրդահայ կերպարվեստի ականավոր ներկայացուցիչներ Մ. Սարյանը, Ա. Աղաջանյանը, Փ. Թերլեմեզյանը, Հ. Կոջոյանը, Ա. Սարգսյանը, Ե. Քոչարը, վաղամեռիկ Մ. Ավետիսյանը, այստեղ են ապրում ու ստեղծագործում Գ. Գյուրջյանը, Է. Խաբեկյանը, Գ. Խանջյանը, Հ. Զարդարյանը, Հ. Հակոբյանը, Ղ. Զուբարը և ուրիշներ, որոնք ստեղծել են ինքնատիպ նկարչական մի աշխարհ և քանդակագործական բազմաթիվ կերտվածքներ, որոնք իրենց ուրույն տեղն ունեն խորհրդային բազմազգ արվեստի մեծահարուստ գանձարանում։ Մեր քանդակագործները ճարտարապետների ու շինարարների հետ միասին Երևանում ստեղծել են մնայուն շատ կերտվածքներ՝ Վ. Ի.

Լենինի հուշարձանը, 1915 թ. Մեծ եղեռնին և Հայրենական մեծ պատերազմին նվիրված «Մայր Հայաստան» հուշարձանները, Սա. Շահումյանի հուշարձանը, Սասունցի Դավթի, Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Վարդան զորավարի, Հովհ. Թումանյանի, Ալ. Սպենդիարյանի, Ալ. Թամանյանի և բազմաթիվ այլ հուշարձաններ։

Այս համառոտ ակնարկից անգամ երևում է, որ դարեր շարունակ դավառական փոքր քաղաքի մակարդակի վրա գոփող Երևանը, դառնալով 1920 թ. ստեղծված խորհրդային Հայաստանի մայրաքաղաքը, թևակոխել է իր պատմության ոսկեշող դարաշրջանը և ընդամենը 65 տարվա ընթացքում հիմնովին վերակառուցվել ու երիտասարդացել է, դարձել արդյունաբերական հզոր կենտրոն, մարդաշատ, ժամանակակից բարեկարգ քաղաք, ճարտարապետական կառույցների կատարյալ թանգարան, գիտության, դրականության, արվեստի մեծ կենտրոն։

Երևանն անցյալից ստացել է մի ամբողջ շարք հնություններ ու ճարտարապետական հուշարձաններ։ Դրանցից են՝ քարեղարյան կացարանների (Հրազդանի ափին), Շենգավիթի քարի-պղնձի դարի ամրացված բնակավայրի, Ծիծեռնակաբերդի և Բերդաձորի ամրոցների, Էրեբունի (Արին-բերդ) և Թեյշեբաինի (Կարմիր բլուր) բերդաքաղաքների մնացորդները, Կաթողիկե, ս. Հովհաննես, ս. Սարգիս, Զորավոր եկեղեցիները, որոնք կանգուն են, մի քանի մզկիթներ, որոնց թվում և Գյոյ-ջամին (այստեղ այժմ տեղավորված են Երևան քաղաքի պատմության և բնության պետական թանգարանները), երկու-երեք կամուրջներ Հրազդանի ու Գետառի վրա, որոնցից մեկը Հրազդանի հին կամուրջն է՝ Կարմիր կամուրջը, ջրմուղների, ջրանցքների, արհեստական ջրամբարների, վիմագիր արձանագրությունների հետքեր, որոնք ուրվագծում են մեր քաղաքի անցյալը և պետք է պահպանվեն սրբությամբ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3

I Հայկական լեռնաշխարհի բնությունը

1. Դիրքը, սահմանները, տարածքը և ռելիեֆը 5
2. Կլիմայական պայմանները 12
3. Ջրագրությունը 15
4. Բույսերն ու կենդանիները 21
5. Բնական հարստությունները 23

II Համառոտ ակնարկ Հայաստանի վարչական և քաղաքական բաժանման (ենթադրյալ ժամանակներից մինչև 1920 թ.)

1. Հայաստանի վարչական վիճակը VI—I դդ. (մ. թ. ա.) 27
2. Հայաստանի վարչական վիճակը I—VII դդ. 30
3. Հայաստանի վարչական վիճակը VII—IX դդ. 35
4. Հայաստանի վարչաքաղաքական վիճակը IX դ. կեսերից մինչև 1045 թ. . . 36
5. Հայաստանի վարչական վիճակը XI դ. կեսից մինչև XVI դարը . . 41
6. Հայաստանի վարչաքաղաքական վիճակը XVI—XVIII դարերում . . 47
7. Արևելյան Հայաստանի վարչական կարգը 1828—1920 թթ. . . . 54

III Պատմական Հայաստանի «Աշխարհ»-ները, նշանավոր գավառներն ու մյուս հիշարժան վայրերը

1. Այրարատյան աշխարհ 59
2. Տուրուբերան կամ Տարոնի աշխարհ 101
3. Վասպուրական 110
4. Սյունիք կամ Սիսական 121
5. Բարձր Հայք կամ Կարնո աշխարհ 141
6. Ծորբոդ Հայք 145
7. Աղձնիք 149
8. Մոկք 152
9. Կորճնք կամ Կորճայք 153

10. Պարսկահայք 154
11. Փայտակարան 156
12. Արցախ կամ Արձախ 156
13. Ուտիք 158
14. Գուգարք 160
15. Տայք 171

IV Խորհրդային Հայաստան

1. Ընդհանուր տեղեկություններ տնտեսական և մշակութային կյանքից . . 172
2. Բնակչությունն ու բնակավայրերը 182
3. Վարչական բաժանումը 188
4. Քաղաքները և մյուս հիշարժան վայրերը 189
ա) Արարատյան կամ Կենտրոնական շրջան 189
բ) Զանգեզուր կամ Սյունիք 196
գ) Վայք 204
դ) Սևանա լճի ավազան 206
ե) Հյուսիս-արևելյան Հայաստան 208
զ) Լոռի կամ Գուգարք 211
է) Շիրակ 217
ը) Երևան 223

Թադևոս Խաչատուրի Հակոբյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԸ

Խմբագիր՝ Ռ. Մ. Հովսեփյան
Նկարիչ՝ Վ. Ք. Մանդակունի
Գեղ. խմբագիր՝ Ա. Վ. Գոգոսյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Կ. Տոնոյան
Վերատեսուչ սրբագրիչ Ա. Մ. Համբարձումյան

ԼԲ — 2908

Հանձնված է շարվածքի 11.07. 1990 թ.։ Ստորագրված է տպագր. 05.09. 1990 թ.։ Չափը՝ 60×84 1/16։ Թուղթ՝ օֆսեթ։ Տառատեսակը՝ «Գրքի սովորական»։ Տպագրությունը՝ օֆսեթ։ Պայմ. տպ. 13,5 մամ., տպ. 13,7 գուն. թ. օտ., հրատ. 13,5 մամ.։ Տպաքանակ՝ 20000։ Պատվեր՝ 325։ Գինը՝ 1 ռուբ.։

«Լույս» հրատարակչություն, Երևան—9, Կիրովի 19 ա։

Издательство «Луйс», Ереван-9, ул. Кирова 19 а.

22 հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 6 տպարան։
Երևան, Թումանյան փող. № 23/1։

Типография № 6 Госкомитета Республики Армении по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван, ул. Туманяна, 23/1.